ՀԱՅ–ՓՐԴԱԿԱՆ

ՎԷՊԵՐ

Типографія Эчміадзинскаго монастыря.
Вагаршапатъ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի.
Վաղարշապատ

1903

1

ՌՕՍՏԱՄ ՈՒ ԶԱԼ

(Մոկաց Նորատւզայ Ցիմ գիւղի բարբառով *)



Զալ խնծաւ ուր ձին, դնաց կաֆկուֆայ սար ճհճիւ. տըսաւ ձիաւորմ՝ կեօ խնծե, սարիմ պէս ջոջ է, վրըսանց՝ էդ սարից իջաւ տակ, էկաւ մօ Զալ։

Զալին ասաց.—Դիւ ինչ մարդ իս էսա տեղ։

Զալ ուր ախուն չըկարցաւ առնը՝ ես Զալն իմ.—Ես մէ Ֆուղարայ մարդմեմ, ասաց. էկիր իմ, ճհճիւ կան կգնամ, բանիմ ընկեր եմ ձեռ, տանեմ եմ օղուլ ուտաղիճ, ուտենք։

Էդա ձիաւոր ինչ Զալին դէմ առաց, թողաց, գնաց։

Որ գնաց, Զալ ասաց.—Էսա երկիր յըմեն եմ ձեռն է. էսա մարդ էկաւ. առանց տիրել, առանց ապանել եմ ձեռնէն գնաց, պարի էրթամ իրա զաննեմ, ապաննեմ։

Էլան ընկեան իրա, գնաց մէ գեօղղուլ զարկնց ուր համառվ։

Ձիաւոր գըւրաւ,—Հայ մարդ, ասաց. քեր ինչ պարի, տամ քեր, թող գնի քու ճալին իչ ձընէ կուգաս։

Իլաւ, Զալ զատացաւ, ուր մընէ հեռու-գնաց։

Դի մէլ ասաց.—Հայ-հայ, ես Զալ ըլեմ, դրըպ մը չը զարկեմ, ես էմել գըւրեմ, էրթամ իննե, մէկ դրըպ էլ զարկեմ։

Գըւրաւ գնաց իննե, մէկ դրըպ էլ զարկնց իմար քեամկին.

Գըւրաւ էդ ձիաւոր ձիաւ քեամկի միջէն. Զալին բռնաց, դրնց ուր ճաան տակ։

---

* Պատմած է ժողովարար Պետրոս Վերօսեաց Խաւրովի բառց, որ երկու տարի է երեւանեաց ճեմարանը կապրի. իսկ սա սովորած է Զօլօ անուն մէկէն. որ նոյնպէս ժողովարար է։ Պետրոս գիտէ բազմաթիւ եէֆիաթներ եւ հրդեհաց վէպեր։ Թէեւ հիւ տարի է երկրէն դուրս եկած է. սակայն իւր հայրենի բարբառի տեղ տեղ փոխած է. գուցէ ժողովարարութեան պատճառաւ։

—Այ մարդ, ասաց. ես դիտեմ, դիւ էլար ձի տը'սալանիս, բալի դիւ տղայ իս, խեղճ մարդ իս. ես քե չեմ սալանի, քե կը թողիմ, ես լսեր իմ, Ռօստամ կայ Իրանցոց մէջ, քի դիւ բէրիս եմ ձեռ, դեայ եմ կռիւ, քե կը թողեմ:

Չալ ասաց.—Ես չըմ դիտի, դիւ իչ մարդ էս. քեօ անուն ինչ ի: Ասաց.—Եմ անուն Սալման Սնտի ի. Թիրանցի. ասա Ռօստամին դեայ եմ կռիւ:

Ասաց.—Թի ընձի թողնես, ահե ըլնի, եմ աչք ինի Ռօստամի աչից, ես քե խրմակ օրողկեմ, դեայ քիւ կռիւ:

Չալ դնաց, մտաւ յօտեն, դիւռ վըր ուր չիննէց, ասաց.—Ռօստամ մանուր, forփայ ի, չու հօթ-ուէթ տարի վրէն ընձի, զանմանայ, նոր կօրողկեմ, կկրթայ, ես ի տըսայ, իչ իմ աչք ընկեաւ Ռօստամի աչից, կօրողկեմ, կկրթայ:

Չալի հօթ տարին բրմրմաւ, Ռօստամ ջօջացաւ. էլաւ դիւս ընկեաւ, ասեմ իչ Ռօստամ նատեր ի դալաֆի դէմ ուր գէօխ կը խուզի, Չալի աչք ընկեաւ մըջ Ռօստամի իրխին, իլաց. ասաց մըջ ալը մտին.—Ես ինչի օրողկեմ էդ fեօրփաճ էրթայ էն fեաֆիրին կռիւ:

Չալ որ իլաց, Ռօստամի աչք ընկեաւ ուր խօր աչից մէջ, տըսաւ ուր խէր, ասաց.—Ընչի՛ կըլաս:

Ասաց.—Ես էսա հօթ տարի մտեր իմ յօտեն, որ քե չտըսնէր, ես ահե եմ արեր Սալման Սնտու խրմայ, որ ես եմ աչք ընկի քիւ աչից, քե օրողկեմ կռիւ. ես կըլամ որ դիւ fեօրփայ ի, չես կռնայ կռիւ անի:

Իչ խէր ասաց. ինոր ըռըկվեր (զայրոյթք) իլաւ կայնաւ, ինոր ճակտի փոնթեր իլաւ Սևայ ծարի դոլ ու նըհրըքեր, ճռռ ու մռռ, դամարեր կայնաւ, ասաց.—Որ դիւ ձի չասիր, որ ասիր, տ'եհամ Սալման Սնտու կռիւ:

Իլաւ խօր, մօր ասաց.—Ես տ'երթամ Սալման Սնտու կռիւ. ես խեծել-մարդ չըմ տանի կռիւ, մինակ տ'եհամ: Խօր ասաց.—Եմ Աչխալի բալաքի (ձին). վրէն ըշեար կաց, ես չըմ տանի խը ձի, եմ իչ ես նեղ տեղ ընկեայ. եմ ձին կը յիմնայ, սալընդքեր ձեռով կը քանդի, ինոր ակնջքեր սպիճնդարի (բաբտի) պէս կը խաստանայ, կը ցցուի. որ էրթաս, տըբնաս, յիմնաս որ ես նեղ տեղն իմ, եմ գէօրդեմ մչրքալ, եմ fելպեքան[1] կապես վեր եմ ձիու քեամկին, ձի խրմայ օղորկես, դեայ. փախից խանես դիւս, պիքուն կայնես վրէն, ուր դասցիւր տաս, էն կգնայ, խանի ձի:

---

1 Fելպեքան երկաթեայ կեռ է, որ նակատակոդին կը ձգե խոյս տալու միջոցին կը բռնե իրեն, կամ ձիուց կը ձգե գետին:

Իլաւ, ձեռ թալից, սպիճտար քաշկից, լըլից, դրից վըր ուր թևաց.—Ես տեհամ Սալման Սնտու կռիւ, ասաց.

Իլաւ գնաց. որ իլաւ, գնաց. խօր սիրտ դրեր չտուից, իլաւ ուր խօրգի Պէժան օրողկից Ռօստամի խոև: Զալ պատմանց իշկաց Ռօստամ ասաց Պէժանին.—Պէժան, ընչի կդնաս նմ խոև, դարձի, գնա յետ:

—Չէ, ասաց, դիւ դոր էրթաս. տ'դնամ:

Բնոի ու խօրգի յէլան, էրկուս պնացին. գնացին մըջ Իրանայ դաշտին մէկ աղբուր տըսան. նստան վըր աղբրին, լինոնց խաց, ջուր կելան։. դորիս Ռօստամ քնաւ. Պէժանին ասաց.

—Իշ, մարդ էսա տըղրանք կնուայ, կերևայ, ձի խաննս վեր:

Պէժան տըսաւ էրկու դև, մէկ գեոմշու տիկ բռնած կգնան որ էն աղբրէն ջուր տանէն. գնաց յառէջ, ասաց.

Է՛յ, աղէկ մարդկըր, էդա տիկ տուէք, հա էրթամ վըր աղբրին, լցեմ, ձև խըմակ բիրեմ. մէկ մարդմ վըր աղբրին կնօ քնիր ի, for-փայի, կը վախենայ, մի գնացէք:

Դևեր լանկնով թալին թըրս Պէժան.—Դէ, գնա դեն, ասին. ինչի կեղնի թըղ էղնի, վախենայ, թըղ վախենայ:

Պէժան ձեռ զարկեց մէկի փողպատ, մէկ մէկի վողպատ, էրկու դևերն էլ բռնեց, բիրեց զարկեց յիրար, ըսկուն իշ որ գիւ մէկ ճճղուկ զարկիս յիրար. զարկեց, ուր ձեռաց մէջ փլեըցուց։ Էն տըսաւ էրկու դև էլ էկան տակ, ասին.—Հանք, իշկանք, իշ դաւու մէջ ընկեան մեր աղբրքեր: Ջոջ սևուքներ, չորս կանթեև, բռնած՝ էկան ջրի: Պէժան էմել գնաց առէջ, ասաց.—Մե fեorփեն կեօ, վըր աղբրին քընէ, ձև տըսնայ, կը վախենայ. տուէք, լցեմ, բերեմ. տուէք, գնացէք:

Իլան մե մէկու յիշունց տուին.—Զեր fեorփեն կը վախենայ, դապլօտի, իշ կելնի թըղ էլնի, ասին:

Պէժանի ըռիկ իլաւ, բռնեց էրկու զանեց յիրար, էլմել սպանեց:

Էդ դևեր քեառասուն աղրեր էն, լինոնց մէկ քեօր կալ, էդ քեօր թողած էն տեղ ուրանց տան մէջ. քսան մնացած տան մէջ, քսան գնացած ևեհիր:

Էդոնք աւիրուէեհնի խըմայ դրած կաֆկուֆայ սալ:

Էդ տան մնացած քսան դիւուց Պէժան սպանեց չորս, տան մնացած տըսնըվից՝ տըսնըվեցից չորն էլ էկան ջրի:

—Էրթանք, իշկանք, մեր աղբէրքեր իշ էլան, ասին:

---

1. Համ բայ ընդհանրապէս գործածս իր fրդերէնի մէջ, նոյնպէս հայերենիս չէր գործածէր Պետրոս:

Էրկու տիկ էլ առան, էկան վըր աղբրին։

Պէժան յառէջ գնաց, ասաց.—Ադա տիկեր տուէք ընձի, մե մարդ վըր աղբրին քըներ ի, ձե տըսնայ, կը վախենայ։

Էդա դևեր տըսան, կեօ ուրանց աղբրքերաց ջանդակ մըջ գալտին, ասին.—Ը՛լի թի չըլնի մե աղբրքեր էս ի սպանե, էկան ինե-թըլա Պէժան, կուտան։ Էդա չորսին էլ սպանեց, թալեց էն տեղ։ Զորսն էլ էլան էկան, տըսան ուրանց աղբրքերաց լեբեր կեօ մանչ գալտին, էդա մէկ մարդ կայնե կեօ դայ։

Գաս էդա մարդուն արին, խասան յիրար, Պէժան յըմենի մէ տեղ տփեց գետին. էդա չորսն էլ սպանեց։

Խինգն էլ իլան էկան, տըսան ուրանց աղբրքերու լեբեր կեօ նահան էն էն տեղն ի թալի, նահան էն տեղ։

Էն քսանից տըսնըուէ սպանեց. մնաց էրկու։

Էն էրկու ջոջեր խին դումահիք իկան, տըսան տըսնըուէ աղբրքեր սպանած ի, կեօ ինոնք էրկսով խասան դըխ Պէժան։

Պէժան մէկ ձեռ թալեց մէկի վողպատ, մէկ ձեռ մէկի վըղպատ. ուլըրից. մէկ մէկի կը պիղնն, կը տանէն առեմ չու խալը, էն տեղէն կը պիղնն, կը բերեն կդնան էս տեղ։

Պէժան ննդն ընկնաւ, յետևանց գնաց դըխ Ռօստամ, որ Ռօստամ ակխաւ, գլուցաւ կեօ կռիւ ի. իլաւ վեր, էն էրկու դևեր զաննց գետին, սպանեց։ Իչկաց տըսնըուէ մարդ էլ կեօ սպանած ի, ասաց.—Պէժան, դիւ ձի ընչի չը խանիր վեր։

Ասաց.—Ինոնք ճնճղուկ էն, տփներիմ գետին, պլաւան, ամօթ էր խանի վեր։

Ռօստամ ու Պէժան էլան, գընացին Կաֆկուֆայ սար, տըսան կեօ մէկ տուն մըջ սարին, էդա տան բիւլոր զըւրան. դիւռ, բան չը տըսան։ Ռօստամ լսնկնամ՛ զարկեց պատին, պատ վլաւ. ինոնք գնացին մտան մըջ տան, տըսան դևերաց տունն ի։

Դևեր տըսան, ինոնց ֆուղալայ բռնին։

Ինոնք նստան դուան յետև. դևեր յեվարին լցուան տուն, խաց կերան, գինի խման, էյֆ ուրախութեն արին։

Ռօստամ ասաց Պէժանին.—Գնա էդա դևերաց մօտէն գինի, արաղ բեր, խմենք։

Պէժան որ գնաց, դևեր գինի չտուին, զըւրաւ էկաւ, ասաց.—Չը տուին։

Ասաց. Գնա, դի մէլ ուզի. ասա, եմ աղէն դայ ի, խաց, գինի տուէք, եմ աղէն ուտի, խմի։

Ասին.—Մենք կըլենք, ջաղաց ալուր ինչա կը մշրի, մենք էլ քիւ աղին տը մշրինք։

Ռօստամի ըռընկվեր իլաւ, գնաց քսան դևն էլ սպանեց, էն քեօր մընակ թողեց։

Պէժան ասաց.—Քեռէ, աղջիկ կենայ ընձի, ես անեմ կենիկ։

—Եա, Թըղ կենայ, ասաց.

Իլաւ վեր տնէն, էրթան ի կռիւ, դիւս ընկեան. աղջիկ մնաց մըջ տան. մէկ ջոջ քեալ Ռօստամ գլորեց, բերեց դէմ դռան զարկեց, դիւս բռնեց։ Ռօստամ ու Պէժան Թողին գնացին։

Շատ ու քիչ գնացին, գեղիմ ըռաւս էկան, գեղի եզը ղրին։

Պէժան գնաց մըջ գեղին որ խաց, ջիւր բերէ ուրանց։ Գնաց որ, Սալմանի Սնտին կէս խարճ ի թալի էն գեղի վրէն, չուրս խոգի օրողկեր ի, հա խարճ առնեն, գեանն։

Պէժան էկաւ տըսաւ, վոյվոյց իսկաց գեղական, էն լինոր կը տափի, էն լինոր կը չարչըրի, էն լինոր փողպատ բռնած, էն լինոր Թև կը քշէ դիւս. էն լինոր կը ջանջխի։ Զըւրաւ, գնաց մօ Ռօստամ։

Ռօստամ էկաւ մըջ էն գեղին, խարցուց.—Դիւ իչ մարդ էք։

Աւին.—Մենք Սալման Սնտու մարդքերնինք, էկերինք խարճ առնինք՝ տանենք Սալման Սնտու։

Ռօստամ էկաւ էրկըսի Թև քշեց, խանեց դիւս, սպանեց. մէկի լեզուն քշեց, մէկի ձեռ կտրեց, օրողկեց Սալմանի Սնտու՝ ասաց.—ջուաբ տարէք Սալմանի Սնտուն. իչ կանի, Թըղ չխնայէ, Թըղ գայ Ռօստամի կռիւ։

Ինոնք էլան գնացին, ջուաբ տարան Սալմանի Սնտուն։

Էդա գեղական ուրանց ախուն էլան յըմեն իւրոց դռները չինին, իննոց գեղ խողին, տներ կուրխացուցին, արին գետնի գեօն, ասին.—Սալմանի Սնտին մեր գեղ կը տընանայ, մե սպանի։ Ռօստամն ի արե, յինք գիտի, Սալմանի Սնտին։

Սալմանի Սնտին Թիրանցի խիծլիս առեց, էկաւ վըր Ռօստամի կռիւ։

Ռօստամ նստաւ ուր տեղ, Պէժան էլաւ, գնաց կռիւ։

Սալմանի Սնտու խօրտա աղջիկմ էլ կայ, ուր աղջիկն էլ բիրե կռիւ։ Սալմանի Սնտին ուր խեյվաք (սպիտակ վրան) ջոկ դրեց, աղջկայ խեյվաք ուր մընէ զատն դրեց։

Մէկ մէկ ա փայլեվանքեր էկան Թըղ Պէժան կռիւ, Պէժան որին իչ կը խասնի, կը զանի գետին կսպանի, որին իչ խասնի, կսպանի. որ իչ կգեայ մէյտան կսպանի։

Դորիս չորս փայլեվան էկան դրիս Պէժան կռիւ, բռնին Պէժանին, տը զանին գետին, սպանին։ Հալա Ռօստամ դինք յիրար չտար։ Փայլեվանքտեր Պէժանին դրին գետին, տ՛ըսպանին. Սալմանի Սնտու աղջիկ կանչեց.—Էդա մարդ մ՛ըսպանէք, ընձի խըմակ օրողկէք, գեայ, ես սպանիմ։

Տարան, գնացին, տուին աղջկայ ձեռ. աղջիկ տարաւ, գնաց ուր խեյվարի մէջ, որ սրսպանէր. աչք ընկեաւ Պէժան, սիրա կպաւ ինե, չսպանեց. ձեռ Թալին մէ մէկու վզով՝ Ֆերզքեր ասին.—Պէժան տանի, տսպանի։

Ինոնք մըտան մըջ էն կուտուն, մինք հանք (գնանք) մօ ձին։

Ձին փախին մէջ սալպընդքեր յըմեն քանդեց ձեռքերով.[1] Զալ գնաց, տրսաւ, տսաց.—Ութսամ նեղ տեղն ի իննկե, ձին օրդկենք էրթայ։

Իլան ձին փախից խանին. Թամք դնին վրէն, ինոր գեօրզ կապին վրէն, ինոր մարդալ կապին վրէն, ինոր խաճկալ, սուր կապին վրէն. ինոր Ֆեյպեքան, ինոր կապէն դրին վըր Աչխարի քեամկին, Թողին գնաց։

Աչխարի բալաք մըջ մէկ սաճաքուն գնաց, խոսաւ Ութսամին. խըտ ճամբէն ինչ գնաց, Ութսամի գեօրզ քեամկից պատաւ. Աչխարի բալաք իրան զարկեց, զգեօրզ վիրուց, առեց. գնաց, խոսաւ Ութսամին։

Ութսամ յէկաւ, սիլով զարկեց մըջ ձիու յերսին, քեամակ արաց ձին։ Ձին մէկ լաճկի զարկեց Ութսամին, լեզու էկաւ խըտ Ութսամին.—Չէ, դիւ կնօ կը տրսնաս, գեօրզ խը ճամբէն պատաւ, համ բերնով բռնի, բէրի, էկայ։

Էլաւ ուր ձիու իրես պագեց, էլաւ քիմար տուեց, իլաւ խեծաւ. ուր գեօրզ դրեց վըր ուր Թիւին, գնաց, կայնաւ մէյտան։

Սալմանու Սնտուս մարդքեր մէմէկա էկան ինե, որուն խոսննեց, սպանեց, սպանեց էդա Ֆերզքեր, չուս հուսուն քառսուն խոզի սպանեց. որ կը կայնի Ութսամի գեօրզի դէմ։

Մէկ Ֆերզքերաց մընէ ջուաբ տարաւ Սալմանու Սնտուն. Սալմանի Սնտին զաուամանց նատը. կիչկէր։ Գնաց, տսաց.—Աստուած քիօ տուն աւլրի, դիւ նստերնս դայ, մի յըմեն կտորեց Ութսամ։

Նոր Սալմանի Սնտին իկաւ Ութսամին կռիւ։
Էն խեծուկ ուր ձին, էն խեծուկ Աչխարի բալաք։
Ջուս յէվարին կուտան. մէկ մէկու զարկին գեօրզերով։
Ցէվարին էն գնաց ուր չատրին մէջ, էն ուր։
Ուտատուն էմէլ էկան կայնան, մէմէկու զարկին։
Ձին լեզու էկաւ խոս Ութսամին.—Ութսամ, ինչ կանես. դիւ էտա մարդուն ճար չըս տանի, ես ինչ կասեմ, դիւ էն սրաւ։

Ութսամ Սալմանի Սնտուն տսաց.—Մենք իշնինք վեր. մե սիրա տանք մէմէկու. քու չորի աննինք (զօտիմարտինք)։

1 Առաջի ոտներով։

Սալմանի Սնտին ասաց.—Չէ, չէս օր մենք գեօրզով տը կռիւ անենք։

Ինոնք իրենք օր կռիւ արին. ինոնք չէմալ դրոպ կը զարնէին, գեօրզեր բրին-ծակ կը բաներին, խաւք կընցներ միջէն, թիվքիներ չէր դպներ բրինքներաց կողրանք։

Ամէկ գնաց ուր խեվար։

Ռօստամ նօժդարի դեղ թալեց. եարէհ ժրաւ։

Մէկէկ օր էլչին գնացին մէյտան, կռիւ արին։

Աշխարի բալաք ասաց.—Ձեր ֆելպեթանքեր թալէք, մէ մէկէկ վակէք վրը ձիու քեամկին։

Էլան թալին, մէմէկէկ կափանճա արին։

Դորիս Աշխար ասաց.—Ձի քեշի մէյտընից դիւս։

Աշխար քեշեց Սալմանի Սնտուն մէյտընից դիւս։

Սալմանի Սնտին ասաց.—Նսա չէլաւ, դիւ ճիկա արիր, էսա լակոյ դիւ եմ վիզ տը կտուխ՝ մարիֆաթ քեօ ձիուն ի, մենք տըջնենք վե՛ մեր սիրտ տը զարնինք յիրար. քիւ Աշխար զախմ ի վրը եմ ձին։

Իջան վէր, ինոր սիրտ տուին մէմէկու. քուշդրրի բռնին մըջ մէյդրնին։ էն ինոր պևղեց, էն ինոր պևղեց։ ըսկուն արին, իշ դուքան թալին, խոզան քեակին, ըսկուն քեանդևցին։

Սալմանի Սնտու աղջկայ աչք վրը խօրն ի, վրը Ռօստամին ի։ Աղջիկ Պէժանին ասաց.—Նս մկայ եմ խօր տնուն տամ, քեօ քեռուն վիրուցի, տիւ գնտին։

Պէժան ինչ ասաց.—Չէ, ես մըկայ կանչիմ եմ քեռուն, եմ քևուին դիտի թի ես մեռուկ իմ. որ յիմնայ թի ես սաղ իմ. քեանէ ճարաֆեաթ կայ ուրին, ընցկուն քեռուսուն ճարաֆեաթ կգնայ։

Կանչեց Պէժան.—Քևռի. ինչ կանես, չես տիւ գնտին։

Ռօստամ գիտցաւ օր Պէժան սաղ ի. քեանիմ (որչափ որ) ճարաֆեաթ կէր, քեռուսուն Ֆէրզ փայլեվանի ճարաֆեաթ էկաւ վրը Ռօստամին, Սալմանի Սնտուն ասաց.—Դու կասիր սալաներ իմ Պէժանին, դիւ չես ասիր պուղտա եմ արեր, տարեր եմ մօ եմ աղջիկ։

Սալմանի Սնտու դաւսամքեր կոտրաւ. Ռօստամ վիրուց վրը ուր գլխուն, տիւեց գետին Սալմանի Սնտուն. իճկլիզի մկրատ թալեց, Սալմանի Սնտու վիզ կտրեց։ Որ Սալմանի Սնտու վիզ կտրեց, դուրիս ընկաւ էդա Ֆէրզքերաց մէջ, որ սալանեց, մէկէկ փախան, գնացին Թիրանցոց մէջ։

Էդա գեղական ինչ աներ հողեր էն, դևներ չիներ էն, պիքուն թալին, զհողեր տուին յետ, դևներ խանին դիւս։

Ռօստամ գնաց Սալմանի Սնտու աղջկայ մօտ. Պէժանին ասաց.—Էսա աղջիկ կենայ ձիկ, անեմ ձի կնիկ։

Դորիս խորհեն ասաց.—Շնորհաւոր ըլնի քե խըմակ։

Ռօստամ յետաւ, մէկ յօտայ տուեց չինել մըջ էդա գեղին. էդա կնիկ դրեց ինե, ինք, կնիկ մնացին մըջ դայ յօտին։

Ռօստամ էրկու ամիս մնաց մօ կնիկ։ Իդա գեղի ռէսին ասաց Ռօստամ.—Կնիկ մնայ դայ, ինչ պինայ, տուէք. ձե ամանաք։

Կնիկ էլաւ էրկու խոգեով, Ռօստամ ուր բազպանդքերաց մէկ տուեց կնկեան, ասաց.—Կնիկ. էտա բազպանդ կենայ մօ քե, թի որ ձի լաճ իլաւ, բազպանդ կապես ձեռ, անուն դնես Մհեր, ես կեօ գնացի եմ տեղն, եմ աչքը վրը քե ի։

Էլաւ. խեծաւ ուր Աչխար, Պէժան էլ խետ ընկեաւ. էկան մըջ Իրանցոց, Կաֆկուճայ սար, դևերաց տան մօտ. էդա դևերաց քեօր խանեց, պատկեց վրը Պէժանին. առին գնացին։

Ինոնք կենան դայ, մենք դառնանք վրը Ռօստամի կնկեան։ Ինը ամիս, ինը օր կըթմի կնկեան, Աստուած լաճ մը տուեց։

Բազպանդ կապեց ձեռ, անուն դրեց Մհեր։[1]

Էդ լաճ որ կըլնէր մէկ ամսըկան, մեկ տարեկան կը ջոջնէր. չուր իլաւ կրկու տարեկան, իլաւ տաս տարեկան։

Մըհեր մէջ տղեներաց ճան կը խաղէր, ինչ ըռըկվեր ընէր որ կը զանէր. որին վիզ քեշեր, որին թիվ քեշեր դիւս։

Էդա գեղի ճժեր ժողվըտան մօ մէ մէկ, ասին.—Դիւ հեթիմ իս, դիւ բիճ էս, մըջ մե մի խաղայ։

Մհեր գնաց մօ մեր, ասաց.—Նաճ եմ խօր սալդ տաս, եմ խօր անուն ինչ ի, ճժեր ձիկ կասեն «բիճ»։

—Գնօ խէր Ռօստամ ի, դիւ Ռօստամի լաճն իս։

—Որ Ռօստամի լաճն եմ, ես պտի խասնեմ Ռօստամին։

Իլաւ էդայ կնկուղի ձև ցիաղուճ քեշեց վրը ուր, գնաց. դասս արաւ ուր խօր խէրանին դեխ։

Գնաց, չխասաւ ուր խօր խէրանին. գնաց մէկ կուռւ մէջ ըռասս էկաւ, ով գիտի ինչ կռիւ էր։

Ցիւրիչ ազգ մը էկած էր վրը Ռօստամին կռիւ։

Մհեր գնաց, գինք տուեց դեխ էն ազգ, ինչ էկերբեր վրը Ռօստամին կռիւ. գինք տուեց ինե։

Էն մէկէլ՝ էկաւ կռիւ Ռօստամին։

Էլաւ Մհեր գնաց մօ թադաւոր, ասաց.—Մէկ ձի տու ընձիկ, խեծնեմ, ես էլ էրթամ կռիւ։

—Ձիմ տուեր եմ քե, հայտե, գնա, ասաց։

---

1 Մհեր անուն ընդհանրապէս թէ հայեր եւ թէ Իրդեր կը դնեն երախայոց վերայ։

Ձիմ առաց, գնաց, կայնաւ մըջ մեյտքին, կռիւ ուզեց։

Թագաւոր խապար ի, յըմա կռիւ արողքեր խապար չեն։

Ռօստամի մարդքեր ասին.—էն ձիաւոր մըզնէ ըլնէր, մենք Թագաւորին մօնացուցինք։

Թագաւորի մարդքեր ասին.—Թի որ էն ձիաւոր մըզնէ ըլնէր, մենք Ռօստամի ճուն յըմեն ապանինք։ Ձըն գիտի ձիաւոր վիր մէնէ ի, Թագաւոր կիմնայ. խեծնէլ չիմնայ։

Իլաւ Ռօստամ, իջաւ, գնաց մեյտան կռիւ։

Էն լաճ, Ռօստամ մէմէկու դարկին, չեն գիտի խէր ու լաճ էն։

Մհեր գնաց մօ Թագաւոր, Ռօստամ էկաւ ուր տուն։

Թագաւոր ուրախացաւ, ասաց։—Էսա ձիաւոր Ռօստամի ճունը փըճըցուցի, աղէկ Աստուած տուեց ձիկ։

Մնաց մէկէլ օր, էլմէլ էկան կռիւ։

Դորիս ձիանքներաց իջան վեր, ինանց սիրտ տուին մէմէկու, քուշդրի բռնին Մհեր ու խէր։

Զուր կէս օրին ինանք մէմէկու չյաղթին։

Կէս օրին Ռօստամ Աստըծու անուն տուեց, որ Աստըծու անուն տուեց, Մհերին օլըրեց, տուեց գնաին։

Ռօստամ իլաւ, Ինկլիզի մկրատ խանեց, ուր լաճու վիզ որ կտաէր, լաճ ասաց.—Ես պատի մարդու տղայ չեմ, որ դիւ ընձի ապանես, եմ իւօր ձեռնէն չես պրծնի։

Խարցնեց Թի.—Տղա, դիւ վիր լաճն էս։

Ասաց.—Ես Ռօստամի լաճն եմ։

Ասաց.—Որ դիւ Ռօստամի լաճն էս, բազպանդ չանց տու։

Բազպանդ չանց խոսուր խօր։

Մէմէկու ճանչցան, ասաց.—Կեսխան ի եմ տուն աւիրի, եմ լաճ սպանիր ի։

Ձեռ Թալեց վզնով. տուեց, գնաց մըջ խեծլիս։

Իլաւ Ռօստամ խեծաւ Աչխար, լաճն էլ խեծաւ ուր ձին. քեշեցին, Թառ ու մառ արեցին, գնաց։

Ինանք էլ զըւրան, գնացին ուրանց տուն։

Գնացին վըր Թագաւորի դօսունին յըմեն փախուցին։

Ճանպիլէ[1].— Ձէնոր լեռ խագիւստա, յըմեն պողվատ էր. զէնու աչքեր մընակ միս էր։

Էն, Ռօստամ կերթէն կռիւ. օրա՛լան իրիք խարիր վաթսուն ու վեց դիր (նետ) կը զանէր Ռօստամին. Ռօստամ պէ ճալ կընէր, կըհեր նոժդարի դեղ կը Թալեր ուր բրինքերաց, կը ժրեր։

1. Այս մի ընդունակ ճուղ է, ,ակայն Գեorոս միայն այս չափը գիտէր։

Մէկ օր Էկաւ, Նստաւ Ռօստամ, ուր ջոջեր դանչեց, ասաց.— Էկէք, իշկացէք, ինոր ջան յրմեն պողվատ ի, իմ դիր ասար չանի մըջ ինոր լեօին։

Իլան ուր կարդացողքեր Սողոմոնին իշկացին, տըսան ինոր ջաե յրմեն պողվատ ի, ասին.—Որ դիւ կհհատ կռիւ առաւտուն, էրկու ճեօղ դիր չինես, դնես քեօ անեղան վրէն. կանչես, լեվ տանես անեղան վրէն (հմայութիւն), ասես. «քեօ աչքեր ձի չանց տու, նոր կռիւ աննէք»։

Գնաց կռիւ. կանչեց Ճանպիլին.—Ճանպիլի՛ն[1], քեօ աչքեր ձի չանց տուր, նոր ձի զարկի։

Ցէլաւ, ուր աչքեր չանց տուեց։

Որ չանց տուեց, Ռօստամ դիւլպէն բռնեց, իշկաց. աչքեր տըսաւ. ղիր թալեց դրէս աչքեր, զանեց մըջ աչքերաց։

Պռաց ինե իլաւ, կանչեց.—Ամման. դիւ ընձի սպանիր։

Ասաց.—Ա՛յ էեաՃր, դիւ օրական իրեք խարիր վաՃառուն ու վեց դիր ձիկ կը զարկէր, ձընէ ձէն չէր ըլէր. ես մէկ դիր եմ զարկե։

Ռօստամի մահը.

Ձղալ ուր մէջ դուռման էր Ռօստամին, մէկ օր Ռօստամին ասաց.—Ա՛ֆ, Աստրծու մէկիկ բարին, մէկ օր խնծնէր Աչխալի բալաք, ձի խրմակ մէյտան մը տէր ղմայ, ես տըսնէր. իյ կըլէր, ըլէր։

Ձղալ իյ արեր էր. գետլտիկ մէյերցնի մէջ փուրիր էր քեառսուն կեազ լէնք, քեառսուն կեազ էրկէն խոր, քեառսուն կեազ խորանդր, վէտ բիրէր, ծածկեր էր, օր Ռօստամ գեայ, ինի ֆնե։

Ռօստամ ասաց.—Ձղալ, ես քեօ խադրի խրմակ մէյտան մի տամ։

Իլաւ խնծաւ Աչխար, գնաց մէյտան, մէյտան տուեց, էն գեախ ինչ մէյտան տուեց, ձին գնաց, խոսաւ ինչ խորի բերնին. ձին պիտցաւ թէ խոր էր, մէ րուեհ թալեց դրէս Աչխար, որ էլա խոր թռաւ։ Որ էդա խոր թռաւ, Աչխարի նալ թռաւ ոտնեն, էկաւ դիւս, դըլխուն ի վեր թռաւ, գնաց։

Ռօստամ գիտցաւ թի ձին ուր նալ թալեց։

Ձին ղէդ խոր խըլտցուց, գնաց մէյերցնի դլուխ, զըրաւ յետ, էմել էկաւ խորի վրէն, որ թռաւ, էսա գեախ չխլտցուց, ձիու առջի ոտքեր ընկեաւ խորի բերնին, յետի ոտքեր ընկեան մըջ խորին։ Զը խլտցուց, փրթընան, գնացին մըջ խորին։

---

1. Պետրոս Ճանպիլէն իբր միջանկեալ պատմած է, որ իբր գործ ունեցած է Ռօստամի հետ, սակայն շատ անգամ կը շփոթէր, Դաւթի անուն կտար. շատ անգամ եւ կասէր, «Դաւիթ ու Ռօստամ մէկ է, Ճարղ չկայ ինե»։

Դարբիս, էնտեղ դիրգեվան (նետ ու աղեղ) կէր մօ Ռօստամ. դիր թալից դրէք ձղալ, ձղալ դինք թալից դէմ, ճնարի ծառին. դիր դաննց, ճնարի ծառ ծակեց, զձղալն էլ ծակեց, ընցաւ. կաֆկուֆայ սարն էլ ծակեց, գնաց Թիրանցոց հողի մէջ։

Ռօստամ ու Աչխալի բալաք ընկեան մըջ խորուն, մըջ խորուն ձղալ բևեռքիր զարկած էր. չքուան էդա բեւեռքերուն։

Էկան պառաւաց վրը Ռօստամին, որ խորից խանեն դիւս, ինչ արին չկրցան խանէնս

Մէր էկաւ վրէն, Ռօստամ մօր ասաց.—Մէրիկ. ձիկ դիւ խաննիս, չէ րու մարդ չկռնայ խանի. քիւ ծամեր թալ տակ, ես ձի թալիմ քեօ ծամեր, ձի քեչե դիւս։

Մէր ուր ծամեր կախից տակ, Ռօստամ թռաւ, մօր ծամեր բռնեց. մէր ծընայ գլուխ զախմով զանեց, որ քեչեց. Ռօստամ խորու բերնից թռաւ կեօ կէս սահաթայ ճանբախ գնաց, ընկեաւ դիւս։

Ռօստամ էն գետե ուր գեօղանք արաց։

Համ ճցար, համ ձղալ, համ զցար.—Թէ չինարը, թէ ձղալը և թէ ժայռը

Չէ պու Ռօստամէ կօռէ Զալ,—Ինչպէս էր Ռօստամի Զալը

Ամբ կըր սէ սար շեշթ շաշ սալ.— Կեանք վարեց երէք հարիւր

վաթսուն և վեց տարի

Հեժ պչուկ ա թրծալ.—Դեռ փոքր է ինչպէս երեխայ

Դայե ճրմպես կըր բրա մալ։—Մայրը գրկեց, տարաւ տուն։

2

ՌՕՍՏԱՄ

ԵՒ

ԱՏԱՄԲԻ ՈՒ ԴԻՒՐՕ

(Նարտւզայ բարբառով *)

Ճամանակով Ռօստամ Զալ կըլլի, սարեր կերթայ ավկուս զարկել, ճգիր անել։

Մէ ժամանակ վրէն կըննայի, նեղութիւնի մէջ կըննկնի. կգեայ տուներ Աստուած հրաման կուտայ. էրազին մէջ կասի.—Ռօստամ. կեամ մը չինի, զարկ ծոլ, ձիւ, դիւս կգեայ։

Առաւօտ կելլի. կասի.—Էրազիս տեսե. էրթամ ծովու կուաղը. տեսնամ եմ էրազը կը կատարի թի չէ։

Կելլի վեր, կեամ կառնի. կերթայ ծովու կուաղը. կեամ կը զարկի ծովու մէջ. զարկելու բաւեցաւ հրեղեն ձիւ դիւս կգեայ. որ դիւս կուգեայ, հակատ կը պագի, խեծնի. կուգեայ տուն։

Էդ ձիու անուն Ռախշի բալաք կըլլի։

Էդ քաղքին մէջ Պամաթ չահ բեներսաց (անողորմ, անգութ) կըլլի, քեռասուն խատ կնիկ ունի։

Էդա քառասուն խատի պուճուր կնկեան մօտէն մէկ տղայ կըլլի, անուն Աֆռանտիյար։ 1

Էդ Պամաթ չահ իւր դիւնի մէջ կասի.—Ով էրթայ, Ռօստամի Զալի ձեռներ կտալի. ճգմեմ լիք խող անի. վրէց կախի, սար-քօլ, ոսք բեօբիկ առնի. գայ, իմ թագաւորութեն տամ ինոր։

Իւր տղէն Աֆռանտիյար որ չանգիստաց էր, կասի.—Նա պտի էրթամ, պագօ։

Էն ժամանակ Աֆռանտիյար կըլլի, կերթայ. կը տեսնայ մէ բանձր

---

* Պատմած է, Նարտւզայ Սիրուճս գիւղացի Վարդան Մարտիրոսեանց, որ երկար տարի Վան մնացած է. 2 տարի ետս կը բնակի. բարբառը շատ խառնած է։ Սա լսած է իւր երկրի մէջ ճայ ասդղներէն. կասէ թէ հդներէն շատ լաւ կասեն հայեր եւ երգերով։

1 Մի բանի տեղ Աճռասիյար ասած էր Վարդան։

սար. կըլլէ սարի վրէն կը կայնի. կը տեսնայ մէկ բարակ ծուխ մը կելլի, կեռ Ռօստամ Զալ ընտեղ։ Ռօստամի Զալ էն տեղ ինչ կանի. կը տեսնայ կեռ մէ վերու եզ սպանիր ի, զարկիր ի սաղ եղը մէկ ըիբի, մէկ ձեռքով բռներ ի վըր կրակին, կեփի, կուտի. մէկ ձեռքն էլ դրիր ի իրեսին։

Աֆռանտիյար կասի.—Է՛, էսա իչ զօռպայի. ես կասիմ ախչարքի մէջ ես զօռպայ եմ. էսայ ընձնից չատ զօռպայ ի։

Աֆռանտիյարի աչք վախեցաւ, ասաց.—Սա ինչխ իննամ։

Էլաւ մէկ ջաղչի քեսր գլորից պանկեռավեր, որ քեսրը գեայ, Ռօստամի Զալին փորձի, տեսնայ ճարապար կը խանի—կուվաթով ի, քի չէ։

Էդա Ռօստամ կը տեսնի քեսր գլորի, կուգեայ, ինք գինք կասի.—Էս օր գեարուն չի, որ գետին կակուղիր ի, քեսրիր գլծնի սարից կուգեայ. կայ-չկայ էդա փայլեվանցի բան ի։

Ռօստամ ոտք կը գարկի, քեսր կը բռնի, ուր տեղ կը դադրըցուցի։

Էդա Աֆռանտիյար կասի.—Էյ-հէյ, էսա չատ զօռպայ փայլեվան ի. ըստուց ընձի զարար պտի գեայ։

Ուր նետ ու աննեղ կը թափի ուր թև, կուգեայ մօ Ռօստամ, բարև կուտան մէմիկու ու կը նստին։

Ռօստամ կը ճանչնայ Պամաթ-չահի լանճ ի Աֆռանտիյար, կըլլի վեր, չատ պատիւ կանի, կոճախլըղ կանի։

Էդ տեղ Ռօստամ կը խոսցուս.—Աֆռանտիյար, խեր բլի, ընձի էս էկեր մօ ՝ձի։

Ըն ու կասի.—Դոխս, ընձի էմ, էկեր էմ, էկերէմ որ քիս ձեռք կապեմ. քիս ճգմեմ լիք խող անեմ՝ քեօ վզէն կախեմ. տանեմ. էրթամ եմ խօր խամար։

Ռօստամ կասի.—Ֆրլեհի կըրաճ (մեծ Աստուած) տեսնախ իմ ձեռքեր կը կապի, Աֆռանտիյար՝ ձեռ կապել չէ, ամա քիս խաթրի խամար ճգմեմ լինի խող կախեմ եմ վզից, կընկնեմ քիս յետևի։

—Չէ, կասի. բրխօ քիս ձեռներ պտի կապեմ։

Էն ժամանակ խօսքեմ իննորից, խօսքեմ իննորից, խօսք իրարու վրայ չերթայ. էն տեղ կռիս կանեն։

Մէկ օր կռիս, երկու օր կռիս, չորս ութ օր կռիս կանեն։

Ռօստամի Զալ ասորի ունի. Ռօստամի խեր Զալ բռմատար ի. կը տեսնայ Ռօստամի ասող չատ մժդուիր ի, կասի.—Էյվախ ոհյ վախ, Ռօստամ չատ նեղութենի մէջ ի։

Զալ կըլլի վեր, կերթայ, կը հասնի Ռօստամին. կը տեսնայ էնքան եարալու սիրիր ի, փոկե մաղի տեսակ ծակծըկիր ի, կը զանչ չի.—Ռօստամ

ԷՆ ԷԼ ԿԱՍԻ.—Ջա՛ն, խէրիկ, մէկ էլ քիւ ձէն ընկաւ եմ ա-ղանջս։

ԿԱՍԻ.—Ռօստամ. դիւ իշխօ ինոր խատ կուիս կանես, ինոր ջան պողպատի. դիրկեվան (նետ աղեղ) չբանի։

—Պա, կասի, ինչի անեմ, խէրիկ։

ԿԱՍԻ.—Դնա, դարե կեազի, ճաշա վէտ կայ, քե. բալէի մէ կերպով ինոր աչքեր խանես։

ԿԵՐԹԱՅ, դարե կեազի կը բերի, կը դնի վրը նետ անեզան, կասի.—Ասֆանտիյար, քիւ աչքեր խան դիւս, մէ խատ քի տիանամ. դիւ ընձի որ բօշ արեր իս, ես կը մեռնիմ, եմ սրտի վրէն չմնայ մրազ, մէկ խատ քե տիանամ. ջայնամ թի մեռնիմ։

ԷՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՍֆԱՆտիյարի էճՁ կուգայ, գլուխ չափարից կը խանի դիւս։

Որ գլուխ դիւս կը խանի, Ռօստամ դիր կը զարկի։ Որ դիր կը զարկի, մէկ ծէր կը մանի մէկ աչք. մեկել ծէր մէկ աչք։

ԷՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՒՏՈՑ ՄՐՆԷՆ ԿԵՐԹԱՅ։

Ռօստամ կը ղանչի.—Ա՛յ կիօի, սեսաս կըրի։

Դիւ ընձի կը զարկեր խինդ խարիր դիւ։

Ընձինից չէր երթար հաւար ղըր։

Էս օր ես քե զարկերէմ մէկ դարե կեազի (երկհիւղ վայր), Քեզնից կերթայ խինդ խարիր հաւար կազի։

ԷՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՍԻ.—Ռօստամ. ախչերք աչքի լուսու վրայ ի, դիւ եմ աչքեր հանըցիր, ինչ անեմ էլ ախչերքի վրէն։

Ռօստամ կասի.—Ասֆանտիյար, մը վախենայ, ես քե խամար տաներ կը չնեմ, դնեմ ինե չուր օր մեռնելուն։

Ասֆանտիյար կասի.—Ընձի խամար մէկ տուն չինի, մէկ սուճ թող ինի։

Ռօստամ կըլի մէկ տուն կը շինի, մէկ սուն կը թողի մէջ. էն տան ծածքն էլ կը բառնայ էդ տան։

ԽԷր-Ջալ կասի.—Ռօստամ. դիւ դըտիս Ասֆանտիյարի մեռք իչի, քե պոի տանի տակ, սուն փրցուցի. քե զայ տան ուր խատ երկու դռնէն չինի, մէկ դռնէն մտնէք, էն մէկել դռնով փախնես։

Ռօստամ տուն կը շնի. Ասֆանտիյար կը դնի մէջը։

Ասֆանտիյար որ կը մանի մէջը, քամակ կուտայ դռան։

Ռօստամ կը փախնի մօ մէկել դռան, դիւս կըլի։

Ասֆանտիյար կասի.—Ռօստամ. դիւ տան մէջն էս։

ԿԱՍԻ.—Խա, տան մէջն էմ. քիւ կող նստուկ էմ։

ԷՆ ԳԱԽԱ ԼԱՆԿով կը զարկի, սուն յեռջևնէն կը փրցուցի։ Ընձի.—Ռօստամն էլ ուր խատ մեռնի։

Ռօստամ կը փախնի. տուն կը տապղի վրէն, կը մնայ տակը։

Ասֆանտիյար կը մնան։

Էն գալս խապար կերթայ Ասֆանտիյարի խօր Պամաք չահին խամար, Պամաջ չահ կասի.—Էյ վալս, ես էմ, էն լաճ, էլ ինչի անեմ։

Կըլի մէկ երկու տարի միջոց վրէն կըընցնի։

Էդ Ոստամին մէկ աղբէր ունէր, անուն Ձղալ. ասեմ Ոստամից մեծ էր. ձեռքէն բանըմ չգնայ, բանց սարսալս մարդմ. Ոստամ էրես չտայ ինըր։

Պամաք չահ կասի.—Ձղալ. քիւ աղբէր քե էրես չտայ. արի, քե աննեմ մէկ չալուշ, մէկ ջոջմ, եա մէկ պիճ բաճի մը. գնա, մէկ կերպով քիւ աղբէր սպանիր։

Ձղալ կասի.—Լաւ, կը փչացուցեմ զՈստամ։

Էն գնալս Ձղալ կերթայ մօ Ոստամ, բարև կտայ։

Ոստամ կասի։—Ձղալ. Աստուած խէր անի, դիւ ընչի էկար մօ ձի. քիւ իրես բարի իրես չէ էս օր։

Ձղալ կը վերսուրուի, կասի.—Դիւ, խալդ ասեն մէկ սոխ ստրկի. կստրկես, ես քիւ աղբէրն էմ. մէկ բան ասեմ չես անի։ Կասի.—Ըիւ Խաբրի խամար կանեմ, Ձղալ։

Ձղալ Պամաք չահին կիմցուցի։

Պամաք չահ իշ կանի. կըլի քեառասուն կազանոց մէկ խոր կը փորի, մէջը խրօտ կը զարկի, խորի բերնին խրոտ մըրչ կը թալի, կը ծածկի։

Էն գեալս Ձղալ կերթայ մօ Ոստամ. կասի.—Ախբէր ջան· բարև քեզ։ Էմէլ Ոստամ կասի.—Ձղալ, էս օր քիւ իրես բարի չէ՝ էս օր եմ մնանելու օրն ի։

Կասի.—Ոստամ, իշ կըլի, ձի խամար մէկ ձի խաղցուցես. մեյտան մի տաս, էրթաս, գաս, ես տիանամ։

Կասի.—Ձղալ քիւ խաբրի խամար կը խաղցուցեմ։

Ոստամի ձին ինչ ժամանակ ծուլուց դիւս րնկաւ. խրիչտակ ճալիր, Ոստամին ասիր ի, իշ գեալս քի՛ւ ձիու ճալ. ձիու ոտքերուց ընկաւ, էն օր քիւ մալն ի։

Ոստամ կըլի, կը խաձնի ձին. էրկու-իրեք գլուխ կերթայ, կուգայ, կը խաղայ։ Խաղալու բաւցաճ, կուգայ վուշ փալասի վրէն, որ խորի բերան սարքած ի։

Կը խասնի խորի բերնի մօտը, ձիու ճալը կը թռնի.

Ոստամ կասի.—Էս օր եմ մնանելու օրն ի, եմ ձիու ճալ ոտնէն էլաւ, եմ մախուան պատճառն էլ եմ աղբէր էղաւ։

Էն ժամանակ կինի խորի մէջ խրօտի վրէն. խրօտ քեամկից կը մտնի, դօշից կուտայ դիւս էն գալս ձին էլ կինի վրէն։ Ոստամ կը կանչի.—Ձղալ, Աստուած քիւ տուն աւերի, դիւ ընձի տուիր սպանել. պարուխ եմ նետ անող տու եմ ձեռ. ձնճղներ, խաւքեր

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

համ աչքեր չկանանն, մինչև կուգան մեղի խորից կը խանեն, կը տանեն։

Նետ աննղ կտայ Ռօստամին, Ռօստամ զձղալ կը տիանայ. կեօ նետ աննղը կը բռնայ, թալի իննե. ձղալ զինք կը փախնի ճնարի ծառի յէռջևը. էն ժամանակ կը կանչի Աստուած. նետ աննղ կը քցի, կերթայ ճնարին կը զարկի. ճնար կը ծակի, կը զարկի ձղալ կսպանի. կելլայ, կերթայ զնարի մէջ։

Էն դախ Ռօստամ ուր անուն կտայ, կասի.—Աֆարըմ ժպօ Ռօստամէ Զալ. համ ճնար, համ ձղալ, համ զնար, Աֆարըմ ժպօ Ռօստամէ Զալ։

Էն դախ ձղալ էն տեղ կսպանի, Ռօստամ էլ խորի մէջ կը մնռնի։

Ձուաբ գնաց Պամաթ չահի խըմար.—Ռօստամ ընկաւ խորի մէջ, մեռաւ. ձղալն էլ ուր ձեռով սպանեց։

Էն դախ Պամաթ չահի ցեղի մէջ կըլի ուրախութեն, խաղալ, էեֆ աննլ- Ռօստամի ցեղի մէջ կըլի սև. սուգ, լալ, գոռալ։

Ռօստամի ցեղ մեծ ու պտրիկ թըլի ու կրակի բերան կուտան. պիրուն կսպաննեն էդ ու որձ, մարդ չմնաբ։

Կը մնայ իննը էրկու խաբս. էրկու խաբսն էլ էրկու խոգևով։

Էդ էրկու խաբսներաց մէկն էլ կը փախնի սարի մէջ. մէկն էլ ուրին կը թալի եօթ ծովու աեեն։

Ձալն էլ չատ ծիրացիր-չատ իխտիյարցիր ի, հարաքանթէ ընկերի, էլ չեն սպաննիր. կը թալէն խորի մէջ. դանէ դան խաց ջուր կը քցեն մօաբ։

Էդ խաբսներէն մէկ՝ էն ինչ սարի մէջն ի, մէկ զաղեմ կը գնարնի, մտնի մէջը. ժամանակմ զաղի մէջ կապրի։ էն իչ ժամանակ կուգնայ, Աստուած տղէմ կուտայ էդոր։ Էդ տղի անուն ուր մէր էլ դրեց Դիւրօ։

Ժամանակմ էդ տեղ մնաց էդ խաբս չուր Դիւրօն ջոջացաւ։

Էն իչ ծովու աեեն ի, Աստըծու խրամանքով պատկաւ. էն էլ մի տղայ բիրեց, անուն դրեց Ատամբժի։

Էն ինչ սարի մէջն ի, Դիւրօն հապաճ կառնի. կերթայ, խացքան կը ժողուի. կը բիրէ. զինք, մէր կուտեն։

Էն ինչ աեի մէջ ի, կերթայ ձիւկ կը բռնի, խաւք կը զարկի կը բիրէ. էն տեղ եօթա կը տանին, կուտեն։

Ատամբժին մէկ օր ծովուց դիւս կընկնի-չորան, կերթայ։

Շատ ու քիչ կերթայ, կերթայ կը հասնի ուր պատկէ քաղաք դիւս կըլի։

Որ կերթայ պատկէ քաղաք դիւս կըլի. խապար կերթայ Պամաթ չահի խամար.—Մէկ զօրպա փայլևան էկեր ի քաղաք, իսկն Ռօստամի ցեղիցն ի։

Կասի.—Որ սկուն ի, գնացէք, բիրէք տիանամ։

Գնացին բիրին, Պամաք չահ տիսաւ.—Օհօ, տասց. խակն Ռօստամի ցեղից կըլի, ինոր թիկունքի լինք օխտը թիղ. ինոր ձեռաց հասաւրեան քընց մէկ գերան, ինոր մատները կեօ եմ արմունկ։

Պամաք չահ կասի ուր փայլեվանքերաց.—Մէ ճառատլար լցքեցէք յառէջ. տիանանք, կանայ խանի, թէ չէ։

Փայլիվանքեր կըյնեն յետևը, էսա տեղ, էնա տեղ չեն զատանայ, կասի.—Ջաճըմ, իչ գործ ունիք ընձի խեռ. ընչի էք ընկե իմ յետևը։

Կասեն.—գիտես, ընչու ընկերենք քիւ խոև. ճառատլար կայ. քցինք քիւ դէմը, որ խանիր, մեր ցեղիցն էս. որ չխանիր, Ռօստամի ցեղիցն էս, քե կը տաննինք բռնատուն։

Կը բիրեն, լաւ զինիփեճչ կանեն, կայիմ կը կապեն, կասեն.—Դէ, քեաչի, կուռի։

Էն էլ թիւքեր չքացուի, զարկի կուռի. ոճ չյաղթէ։

Էննեց ձեռները կապուկ տաննեն քցեն բռնատուն Ջալի մօտ, ուր պատկէ մօտ։

Պատկն ի, դռնով տաննելու բաւցաճ թքի լինի, կասի.—Ամօթ չէ, զօրպա փայլեվան՝ էկեր էս. ես ծնրացիր իմ, քի իչ իլե, դիւ ահագին պապակիս փայլեվան։

—Ա՛յ պապալդ, կասի, ընձի լօմա մի դիր, մի մեղադրիր, ընձի խափած. եմ գլխիս գալած ճաղլ անեմ, որ դիւ խմանաս։

Եմ մէր Ռօստամի խարսն էր, Պամաք չահ որ կուռեց Ռօստամի ցեղ. եմ մէր փախաւ, գնաց ծովու ատեն. էն տեղն իմ իլե. մարդ չեմ տիսե. էս օր քաղքի մէջ դիւս էլայ, եմ ձեռները կապեցին, ձգեցին բռնատան մէջ։

Ջալ կըլի, Ատամբժու գլխօվ կը պագնի, կասի.—Այ որդի, դիւ որ կաս, եմ Թուն էս, ես քիւ պագն եմ։

Կմնայ մէ մէջոց, էրկու մէջոց բռնատան մէջ Ջալի մօտ։

Էդ Պամաք չահին էլ մէ աղջիկ ունի ինչպէս էրևանայ քաղաք՝ զատն ի ուր խօր մընէն։ Նամակ կը գրի ուր խօր խամար.—Պամաք չահ, էդ բռնաւորն որ դիւ բռնէրէս. ընձի խամար օրողկէ, դեայ. ես ինու էրուն խամեմ եմ աղբօր էրունի տեղ (Ասֆանտիյար էդ աղջկան աղբէրն ի)։

Պամաք չահ կը խանի բռնատնից, չորս ձի կը լծի.—Ճարէք, քասլիմ արէք եմ աղջկան, ինչ կանի, թող անի։

Էն ժամանակ կերթան, կը խասնին գետի մօտ. կը նեղանան, ձիանք կը թուննան։ Ատամբժին կը մնայ սէլի վրայ, արեգեական դէմ վառուի. իրենք կերթան գետի բիրան, կը քընէն։

Թո Ատամբժին սէլի վրայ վառուի. տարողներն էլ քնէն. մենք դառնանք Դիւրօ վրէն։

Դիւբօն էլ լինչ ի արէ, մէկ խատ պալթամ՝ չկնէ, մէկ արհիճ ինոր բերնի լէնքն ի. պալթէն դնի ուր թևին, կերթայ. մարդ ընի, դեօղ ընի, քալճի, շալի, բիրի զաղի մէջ զինքն ու մէրը կուտեն. էն մէկ օր էդ Դիւբօ աչք կընի մէկ սնուխեն, կերթայ դպա էդ սնուխին։ Կերթայ, կերթայ, կը մօտանայ, կը տիսնայ մէկ սէլ։ Կերթայ, կը մօտանայ սէլին, կը տիսնայ մէկ փայլեվաճ դրած կեօ սէլի վրայ, էլ էննայ զօրպա փայլեվաճ չկայ։ Խրտ մօտանալու կը քէլ լինե։

Էդ փայլեվաճ կասի.—Այ փայլեվաճ. դիւ ընչի կը քէլես. եա— վա'շ. եմ պլխին զնալած ճաղլ անեմքե խամար, նորէն քէլի։ Կասի.— Հալ էսինցն ի, եմ մէր եօթ ծալու մէջն ի. ես Աստամբժին էմ, ծնայ գնացի եմ խօր քաղաքը. ընձի խափրցըն. եմ ձեուներ ծնայ կապը— ցըն. հիմայ ճամրէրի ուր աղջկայ մօտը, ձը մորթի, եմ էլուն խմբե

Էն գեսի Դիւբօ կասի.—Վա, դիւ սր կաս, մէկ աղբօր տղայ ինքե

Դիւբօն կասի.—Չամբուրի, իս էրթամ մօ փայլեվաճքնը, գեամե

Կերթայ չայի դուաղ մէկ մէկ ճաճախ կը զարկի դլխըննէրաց մէջ, չորսն էլ կսլանի։ Կուդայ, զճճի կը կուտի, կուտնի Աստամբժուն, դուզ կերթայ մօր մօտ, էն իչ սարի մէջն ի։

Էն ժամանակ իչ կտանի մօր մօտ. մեր կըլի, դէմէն կը փախնի։

Փախնելու բաշտաճ Դիւբօն կասի.—Մէրիկ, ընչի կը փախնէս դէմէն, եմ խօրոդրօր տղէն ի։

Էդ գեսի մէրն ի, կդեան, չատ մեմեկու կուբախանան։

Առաւօտ Դիւբօն կասի.—Աստամբժի, դիւ նատի դայ, ես էր— թամ, մէրդ աեից խանեմ դիւս։

Դիւբօն ի, կերթայ աեի մէջ, Աստամբժու մէր կը խանի, կը բիրի սարի մէջ մօ իւր մէր, կը մեռեղուեին։

Մէ միջոց վրէն կընցնի, կասեն.—Մենք պտի էրթանք Պամաթ չահի վրէն կռիս. մեր խօր բօլ խանինք։

Մէրեր կասեն.—Ձեր պասկի իչքան որ ապրանք-մալ կայ, կեօ մօ Մըսըրայ լալաճար ի։

Կըլեն վեր, կը դանչեն Աստուած, որ էրթան Մըսըր, մօ լա— լաճար։ ջխտով մէ տեղ կերթան։

Իչ որ Դիւբօ ձեունի, մէկ ճաճախ, լինոր բերնի լէնք մէ արհիճ, իչ որ Աստամբժու ձեունի. մէկ դալամայ ի։ ինչպէս արև ուր ձեռ փէտ։ Կըլեն վեր, կերթան, իչ որ մէկ ծաղկընէրով, խոտով, ջրով, կանաչով տեղ։ էդ տեղ՝կը նատէն, կուտեն, կը խմեն։ Կը տիսնան որ էդա նատած տեղ դևերաց տեղն ի. դևերն էլ իրենք աղբէր են, նատած տեղն էլ են պատիկ աղբօրն ի-սրտակ դիւուն։ Կը տիսնան թոզ լլաւ խրա լրիճուց։

Ատամբժին էսաց,—Դիւրօ, մէ սա բոզ թօ բացուը՝ տխնանք ինչ ի կուգիայ։

Ատամբժին տխաւ բօզ բացուաւ, սըւտակ դև էկաւ, գալիս բաւցան սկսեց կռիս անել.—Ա՛յ փ սյլեվաճ, ասաց. խաւք ուր թևով, օձ ուր պօրտով չէր կարայ դնայ, ես կռիս կուզէմ։

Էն տեղ բռնեցին, կիւլաս կլան, որ կիւլաս կըպնելիս ժամանակ Ատամբժին զդև իսկեց գետին. էն գախ որ կոխեց գետին, դանակ թալեց, գնի վիզ կտրէր. դև ախ քեաչեց.—Հէյ վախ, ասաց։

Ատամբժին ասաց.—Դէ, էլի վեր, դիս չամաչեցիր մէ պուտ էրունի արով ախ քեաչեցիր. էլի վեր, քեզի ազա արեցի։

Ատամբժուն դև ասաց.—Խորհուրդմ կայ եմ սրտի մէջ, էն կատարէմ, եմ էրուն քեզ նալալ։

Ասաց.—Ֆիւ սրտի խորխուրդն իչ ի, ընձի ասա։

Ասաց.—Ես Ռօստամի սըւտակ դևն էմ. Պամաթ չահ որ Ռօստամ սպանեց, Ռօստամի բօլն խանէր, թօ դիս ընձի սպանէր։

Որ դևն լուենց ասաց, Ատամբժին ասաց.—Ես էլ Ռօստամի թոռն էմ։

Էն տեղ տատ ուրախ էլան։

Էլան վեր, քշեցին, գնացին։ Շատ-քիչ գնացին, էլմ ջրով, կանանչով, ծաղկով խոտով պատահան։

Ատամբժին ասաց.—Արէ, նստենք էս տեղ, էսոր տէր կայ, թող գեայ. իմանանք ինչ մարդ ի։

Մէկ էլ տխան կարմիր դև էկաւ. գալիս բաւցան.—Ա՛յ խոզածին. էսա եմ տեղն ի, մէկէր անոէր ի, դիս իկէր, նստեր իք վրէն։

Էն գախ կարմիր դևի խետ կիւլաս կլան. Ատամբժին զկարմիր դև թալեց գետին. որ կոխեց գետին, դանակ քեաչեց, պոչ սպանէր. կարմիր դև ախ քեաչեց.

Որ ախ քեաչեց, Ատամբժին ասաց.—Դիս չամաչեցիր պուտմ էրունի արով ախ քեաչեցիր. իլի վեր, քե ազա արի։

Ասաց.—Խորխուրդ ունեմ եմ սրտի մէջ, մրազ ունեմ. եմ մրազ կատարէր, դիս ընձի սպանէր։

Ասաց.—Կարմիր դև, քիս մրազ ասա։

—Ես Ռօստամի կարմիր դևն եմ. ես էրթէր, Ռօստամի բօլ Պամաթ չահի մօտէն առնէր, թօ ընձի սպանէր։

Դէ, էլի, գնա, ասաց, ես Ռօստամի թոռն էմ, մինչև քսան աւուր գեաս, ղօշուն անինք, էրթանք Պամաթ չահի վրէն։

Կարմիր դև գնաց խըտ ուր հալին, գինք, Դիւրօն չլսով էլան, գնացին։

Շատ քիչ գնացին, էլմ ծաղկով, ջրով, խոտով տեղ բացաւ էկան, գնացին, նստան վրէն։

Աստմբժին ասաց.—Արէ՛, նստէնք ըս տէ, հալպար իսոր սէր կայ. գեայ, տիանանք։

Նստելիս բաշտան տիսան գևերայ ջոջ աղբէր-սև գև էկաւ, գեօն գեչացե, աչքերաց էրուն կը թաւիլ։

Էն գեախ Դիւրօ չատ երկուղ արաւ. չատ վախեցաւ մօտէն։

Աստմբժին ասաց.—Դիւրօ, մը վախցի։

Աստմբժին, սև գև կալան յիրար առաւտուն աղօթարան գէլ չէր բացուե. ջհսով կալան յիրար, էննոց գետին կը ճղճղուի, ինոնց ոտաց դէմը լինչ վիսկի թալին, ճղճղին։ Աստուածուքեն էննոց ղուվաք իտու Աստմբժուն. Աստմբժին սև գև կոխեց գետին. կոխելիս ժամանակ վիղ սլտի կուէր, սև գև մէ ախ քեաչեց։

—Իլի վեր, ասաց. մէկ գդել էրունի սրով ախ քեաչեցիր. դիւ չես ամաչիր։

—Ա՛յ փայլեվաճ, ասաց. ես էրունի համար ախ չի քեաչեցի. մենք իրեք աղբէր էնք, իրեքն էլ Ռօստամի գևերն էնք, մենք իրեքն էլ ահե սրուկ լինք Ռօստամի համար, Պամաթ չահ զՌօստամ սպասենեց, գնաց կորաւ. մենք լինոր քօլ համէնք, յետոյ դիւ ի՛չ կանէր, անէր։

—Որ էննոց ի, ես Ռօստամի թոռ Աստմբժին էմ, գնա, մինչև քսան օր ժամանակ էմ տուե, քսան աւուր վրէն դիւ իրեք գևն էլ դէք։

Էն իլաւ. գնաց. էնոնք էլ ջհսով գնացին։

Գնացին շատ քիչ, գնացին Մսըրայ քաղաք։

Գնացին, սալրխով, սնլուխով լալատարի տունը գնատն, խարցրցին. մէմէկու յայտնի էլան թի.—Մենք Ռօստամի թոռներն էնք. թի՝ իսն էլ լալատարն եմ։

Էլան վեր, էն տե խօսքերն մէկ արեցին-պայման արին-—էրթանք մէ տեղ. մտոնինք մէ տեղ. էրթանք Պամաթ չահի վրէն։

Լալատար ասաց.—Մէ թապուր ասկեար ընձի-եմ պարտք որ ես բիրեմ, էրթանք Պամաթ չահի վրէն։

Էլան վեր, էն թապուր ասկեար, լալատար. Աստմբժին, Դիւրօն մէկ տեղ էկան. խասան գևերաց բլանքեր, էդ իրեք գևերաց խետ մէկ տեղ ղօտուն արեցին, էկան։

Շատ-քիչ էկան, էկան, Պամաթ չահի քաղքին մօտացան։

Աստմբժին ինոնց խօսողն էր-ինոնց մեծը. ասաց.—Էս քաղքին օխտը խատ դարկեախ ունէր. սև գև', էս մէկը քեզի. մէկն էլ իտուր կարմիր գևին, մէյն էլ իտուր սըւտակ գևին. մէյն էլ իտուր լալատարին, մէյն էլ իտուր լալատարի թապուր ասկրին. մէյն էլ իտուր Դիւրօյին, մէյն էլ առեց իւր։

Ասաց.—Ես օխտը դարկեախն էլ բռնէք, բան ի, չի Պամաք շահ դարկեախներաց փախնի։

Ճապ գնաց Պամաք շահի խամար, ասին.—Աստուած քեզ տուն աւըրի, ի՛չ կանես. Ռօստամի թոռներ օխտը դարկեախներն էլ քեզ վրայ բռնած էն։

Ասաց.—Ինչ՛ա անեմ, ի՛նչ չանեմ։

Ինու աղջիկն էլաւ, տղայ մարդու դըլլըխ խագեաւ. գնաց կուխու անել, մէկ հատ էլ ղուբի ղալման լցնց, դրնց ուր միջաց առջև. գնաց, խասաւ մօ Ատամբժին, ասաց.—Ա՛յ փայլեվան, ա՛ռ էսա ղուբին, խոտրտա, որ դիւ կռնաս եմ դրպի յէռջև քե բռնես։

Ատամբժին ղուբին առնց, խոտխըտաց. որ խոտխըտալու ժամանակ խելքը գլխուց գնաց, էն գեախ առնց, Ատամբժուն փախցուց, տարաւ. էննց մեռուկ տարաւ, գնաց, էդիր օդի մէջ, դուռ վրէն չինաց։

Էն քաղքի մէջ էլ մէկ կնիկ կայ, Ռօստամի ցեղերաց ի, էդ կնկայ անուն Քեաչտասավանուկ ի. էդ Քեաչտասավանուկ կըլի վեր, ի՛չ կանի. կըլի վեր, քեանիմ տղայ մղայ կառնի, կերթայ, կերթայ Ատամբժու դաշ օդի վրէն, կը կանչի.—Պամաք շահի աղջիկ, դիւռ բաց, ես գեամ. մէկ կտոր տուռ էնու էրնից, ես խմեմ։

Աղջիկ կասի.—Արի՛, նստի էսա տեղ, ես էրթամ. մէկէլ աղբէր—Դիւրօն էլ բերեմ. մէկին դիւ խմի, մէկին ես խմեմ։

Էն գեախ Քեաչտասավանուկ կը մնայ էն տեղ, էն կելի, կերթայ կուխու էնելու։

Էրթալու բաւցաւ էդ Քեաչտասավանուկ ջուր կը զարկի Ատամբժու իրեններըը. խելք կուգայ գլխօխը, կասի.—Ատամբժի՛. էլի՛, գնա՛. էն ի՛չ որ կուգայ, կուխու կանի, էն աղջիկ ի, էն դեղ կուտայ. կը քնիք, ամօթ չի ձի գեօրայ։

Ատամբժու խելք կուգայ գլխօխ. կըլի վազելվազ կերթայ. կերթայ, կը տխնայ էն աղջիկ, Դիւրօն կանած մէմէկու դէմ, խապար կուտան։

Ատամբժին կերթայ, դոր Դիւրօյից կառնի. փռնելու բաւցաւ էդ աղջիկ էլմ ղուբին կուտայ Ատամբժուն.—Ա՛ռ, փայլեվան, խոտխըտայ, որ յէռջև եմ դրպին բռնես քե։

Էն ժամանակ ղուբին կառնի, առնելու բաւցաւ էլ չխոտխըտաց. կը զանի ուր միջաց յէռջև։

Աղջկան կասի.—Դէ, քիւ դրպըն զարկ, ես եմ դըրպն յէռջև կուտամ եմ դուշմընին։

Էն ժամանակ աղջիկ ի՛չ դըրպ պտի զարկի, ի՛չ որ մարդ թօզ թօղթըփի։

Դոր էկաւ Ատամբժուն, իչ որ Ատամբժին զարկից. աղջիկ

ձիուց բիրեց տակ։ Էն գեախ դանակ թալեց, վիզ կտրեր, աղջիկ ուր ծընծվեր չանց կուտայ։

Էն գեախ Ատամբժին կասի.—Քիւ խօր օճախ մէջ մարդ չկէր, քիւ խօր քաղաք Բաւբախ էր, դիւ կուգեաս կուխս։

Էն ժամանակ ձագ կերթայ Պամաթ չահի խամար. Պամաթ չահ կըլի, կը վախնի. վախնալս բաւեցաւ կերթայ, ծոլու դաւս կանի՝ որ գինք քցի ծովը։

Ատամբժին կընի յետև.—Հա էսա տեղ գանի, սպանի, հա էնա տեղ գանի, սպանի. կերթայ, խասնի ծոլու բիրան. որ կը խասնի ծոլու բիրան. գուլ (ջրշուն) ծոլուց կըլի դիւս. խըտ ըլնելուն դիւս, գՊամաթ չահ կը գլխ. գլխու ժամանակ Ատամբժին թրով կը զարկի, գուլ կսպանի։

Էն գեախ Ատամբժին ուր անուն կուտայ.

Աֆարըմ, կասի, Ատամբժու խամար։

Ատամբժի գուլ սպանեց Պամաթ չահի խամար։

Պամաթ չահ սպանեց Իօստամի տեղ։

Աֆարըմ Ատամբժու խամար։

Էն ժամանակ Ատամբժին դառնայ, կուգնայ մօ գևեր, մօ լալէն, մօ Իւլօն։ կինին քաղքի մէջ, ինչ տար Պամաթ չահի ցեղից մարդ կայ, պիրուն կսպանեն։

Կը դառնան, կերթան, ինոնց մէջեր էն տարից կը բիրեն, կուգեան քաղքի մէջ։

Կերթան, ինոնց Պապ-Զալ խորից կը խանեն, կը բիրեն։

Էն ժամանակ էն ջուխան էլ կը փայլին։

Օխար օր, օխար գլեր խարսնիս կանեն։

Գևերաց կասի.—Գնացէք դիւ ձեր խող ջրու վրայ։

Ինոնք խասան ուրանց մրազ, դիւքն էլ ձեր։

3

ՐՈՍՏԱՄԻ ՋԱԼ

Քաջբերունեաց Ուրծկէի Աւրճձկոյս գիւղի բարբառով *

Հայ Բրդական վէպ.

Վախտով մէկ փայլեվաց կեղի Սալահանայ քաղքին մէջ։ Թագաւորին փեյլիվնութեն կենայ, ինչ դաս, ինչ իրաւունք էղի կուտայ էդ փեյլըվընին, էն փեյլիվաց չամ ղոչախ կեղի։

Էդ փեյլըվընի անուն Ջալ կեղի, ուաս-քսան տարի թագաւորի առէջ փեյլիվաւնութեն կենայ։ Աստու խրամանքով էդ փեյլըվնին տղէմ՝ կեղի, էդ տղին անուն կը դնեն Ըռոստամ։

Իրնք, չորս տարի արանք կընցնի, էդ տղէն կը մեծանայ, դնայ վարժատուն, երկու-իրեք տարի ուր խամար կը կարթայ։ Աւուր մէկին էդ տղէն վարժատունէն կելի, կուգեայ տուն որ խաց ուտայ, կուգեայ անսի փողնի մէջ իրեք-չորս տղայ ուր ուճիուճիս դըլուլ կը խաղան, էդ Ըռոստամ կը վերցու, տղէկներու գլուլ կը թալայ. կը թալայ կուրխայ։ Էդ տղէկներ չգիտեն թէ էդ Ըռոստամն ա, բիրտեճբիր կասեն.—Ռու մեր . . . դու յորին մեր դլուլ թալեցիր, կուրխանցիր։

Ըռոստամ կասայ, տղա, չանորթի՛, ես Ըռոստամն էղիմ, դու իմ ճակատ մէջ ընձի ճուճիր տաս։ Ըռոստամ կը վերցնէ էդ ճուճիր տուող տղէն, կը զանի ունէթ, կը տանի պաղչի մէջ ձեռը կը թալէ ծառ, զգնայ ձեռաց, բերայ, տղի մէկ ոտ չըրտով կը կապայ էդ

---

* Ասած է Դաւս մատխի ծառուբիւնեաց, յատ է փոքր ժամանակին մի հայէ, սակայն ընդհանուրապէս հայեր օթախներու մէջ կը պատմեն, ուրպէս եւ բազմաթիւ բրդական վէպեր։ Թէեւ բրդական վէպ է, բրդեր այնչափ չեն հետեւիր, այլ ընդհանուրապէս հայեր եւ մասնաւորապէս եւս կը պատմեն։

ծառ, ձեռ կը քալայ մէկէլ ծառն էլ կեռայ, ընդայ. էն մէկէլ ոտն էլ չըտով կը կալայ մէկէլ ծառը։

Էդ էրկու ծառներն օր կը թողայ, էդ ծառի զրպին տղէն կը կիսուլի օրթալըխէն, կէս կը մնայ էն ծառին, կէս կը մնայ էն ծառին։ Ըռօստամ թողայ, կուգնայ տուն, խաց կուտայ։

Էրկու իրէք օր էդ տղի խէր կընկնի խարց ու վորձ, վինից կը խարցուցայ, տղի սալղ չըն իտայ. տղի խէր դալալ կուտայ կանչել, կասայ.—Որն օր իմ տղին սալև տուից, ինչ օր ուզայ ախչրքի էրես, կուտամ։ Ամենքը ուրին ընկնաւ սլտոտից։

Մարթու մէկ գնաց, տեսաւ որ պաղչիմ մէջ ջանդկիմ կէս մէկ ծառէն կախուկ ա, կէս մէկ ծառէն կախուկ ա, ասաց.—Կեղի-չեղի էդ մարթու տղէն էս ա։

Էլաւ, գնաց էդ տղի խօրն ասաց.—Վ.ալա Ֆլաճ մարթու պաղչի մէջ կէս էն ծառէն, կէս էն ծառէն կախած ա, կօ չի գետեմ. քո տղէն ա, չէ, չէ։

Մարթն էլաւ, առաւ չորս խինդ մարթ որ պտի տեսնի. էկաւ տեսաւ ուր տղէն էր, ճուխմաթին ասաց.—Ես իմ տղէն էս թողից կուզեմ, տեսնամ որն ա էսքան չարչարանքով իմ տղէն սպաններ։

Էդ տղի ընկերտիք դլուլ կը խաղէն, լսեցին էդոր ասած խսեն, ասին.—Ադա, քո տղէն որն ա էդքան չարչարանքով սպաններ, ճլխէ եախեն մի բռներ, Ըռօստամից մարդ չսպանէր։

—Տղա, ասաց. դու տեսար Ըռօստամն ա սպանէր։

—Խա, ասաց, տեսայ։ Ասաց,—Իմալ տեսար։

Ասաց.—Մենք դըլուլ կը խաղէնք էսա տեղ, ես, քու տղէն, ուրիչ տղէք. Ըռօստամ վարժատնէն էկաւ, վերցուց մեր դըլուլ թալեց, մնք էլ չի գիտենք թէ Ըռօստամն էր, քո տղէն էնոր բիդրատեց, էն ա Ըռօստամ չթողեց օր բերնէն էլլէր, ասաց. «Ես Ըռօստամն էղիմ, դու մըջ իմ ճակտին ընձի բիդրատես». վերցնեց, զարկեց ուր ունէր, մենք վախանք։

Էդ մարթ չկանայ Ըռօստամին բան ասա, էլաւ գնաց ուր տուն. էլ աչկաբայ չենեց ուր տղի սպաննել, էլաւ, ձեռաց տկով մազպաթա չքեց, չաթիմ՝ էրկու էդմալ էդ մարթը ընկեաւ մըջ քաղքին. էնոր ղաճմիս էնեց, էնոր ղաճմիս էնեց.—Թէ էսօր իմ տղէն ա սպաններ վաղը ձեր տղէն կսպանայ, ճէ սուր կը բանի վրէն, ճէ թուր, էսլա էղի, մենք չենք կանայ դիմանանք։

—Ասա էդոր ճարն ինչ ա, խարցուցին էդ մարթիքը։

—Ճարն էն ա, մէկ մազպաթա տանք թաքաւորին, եաւ մեղնից ձեռ քաշայ, եաւ ընտուց ձեռ քաշայ։

Էլան fօմով, պիրլկով առան էդ մազպաթան գնացին, էն թուղթ

տարան տուին թաքաւորին, թաքաւոր թուղթ առաւ, կարծաց, ասաց.—Խմել կասէք, ձեր ասել ինչ ա։

Մեր ասած էն ա, քու փեղլըվանի մէկ հաղ կեամ թողեր ես, էղե չոր գլուխ ձի, էլ չչախուի. մենք չենք կանայ դիմանանք, եաւ էնոր մօտէն ձեռ կը քաշես, եաւ մեր մօտէն. մենք կերթանք ուրիշ թաքաւորի խոզ։

Ասաց.—Էնի մէկ մարթ ա, դու խազար-խազար մարթ էք, ես ձեղնից ձեռ չեմ քաշեմ. դու գեացէք, էս էն տղէն կը ճամբեեմ սուրկուն։ Էդ մարթիք էլան, էկան ուրանց տներ։

Թաքաւոր Ջալին դանչեց, ասաց.—Ջալ, էս ղեդաբ քեզի ամակ էմ տուեր իմ ձեռ չբռնէր ես քու տղին սպանեմ, քո տղէն ճամբայ ուրիչ երկրներ, թո էրթայ ուրին ապրուի, դոր էրթայ քու տղէն կապրուի։

Ջալն ասաց.—Թաքաւոր սաղ մնայ, կերթամ, կը ճամբեեմ։

Կուգեայ տուն, ուր կնիկ տուն չեղի. կը տեսի ուր տղէն վարժասրընէն կուգայ։ Խաց կուտայ, կը պրծնի։ Կասայ.—Տղա, էլ պտի չմնաս էս քաղքի մէջ, թաքաւոր քե սուրկուն ա արե։

Ավի, ասաց. Ես էլ չկայնիմ, գնաքի կերթամ, գաքի էն դախ որ իմ հետս կելլի, իմ աչքեր կը մթնոտայ, սար իմ աչքին լում կերևայ։

Էլաւ տղին խարճլիս տուեց, ճամբեաւ դրեց. տղէն գնաց։

Տղէն քիչմ տեղ գնաց, դարձաւ ասաց —Նա, ես էս դարտակ ու տկլոզ դոր կերթամ, իմ խօր էրկու թուր կայ, չուր մկայ տուն խաց կուտէի, մկայ պտի էրթամ դողուքենով, մարդասպանութենով պտի ապրուիմ, էրթամ մէկ թուր առնեմ։

Դարձաւ, խոր ասաց.—Ավի, քու էրկու թրէն մէկ տուր ընձի, ես պտի էրթամ ջարտուքենով ապրիմ, իմ տուն դան չէ։

Որդի, ասաց. գնա, էրկու թրէն որ մեկ խաւնիս, էն տար։

Թուր թալեց էկաւ, խոր ձեռ պաքեց։

—Որդի, ասաց. քե պահեցի, խասուցի, քո բար չկերայ։

—Ավի, ասաց. ընչի ընձի կանիծես, ընձի օրչնայ։

—«Որդի, ասաց. Աստուած քե յիմտաս էղի, քո թալած թուր կտուր էղի, քո թալած թրի դէմ մարդ չդիմանայ».

Տղէն էր դանչեց ուր Աստուած, ընկեաւ ուր ճամբեաւ։

—Աստուած, ասաց. դու ընձի ամօթալից չենէս, դուտմբնի յառէջ սիւտակ էրես պահես։

Տղէն էր, կէս սհաթի չափ գնաց, չգնաց, մէրն էկաւ տուն. խարցուց Ջալի մօտէն.—Որ ա Ըռօստամ, յորի չեկեր ա խաց կերեր ա։ Ոօր սիրտ դժարցաւ, արցունք պրծաւ, գըլգըլալէն աչքերուց էկաւ, ասաց.—Ջո աչքեր ֆօռնայ. թաքաւոր համր էննց, տղէն ճամբեեցինք սուրկուն։

Ասաց.—Մարթ, ես կերթամ. իմ տղին կը խասխմ, ես էմ, էն մէկ տղէն. իմ տղէն մէկ սաիաթ չտեսխմ, կը պատուխմ, դուցի մալից բէֆիա չկայ, մալ օ կայ, ձեռաց կնդտ ա, տղէն օ կայ չաքար ա. մէկ հաղ չաքար ուտես. բերանդ քաղցրնայ, մէկէլ հաղ չուտես, բերանդ ինչ տեսակ կնդի. տղէն օր կայ, անթառան ծաղիկ ա, իմ յառէջ պտի էղի օր ես խոտրտամ։

Մէր էլաւ, խալալութեն առաւ իրկայ մօսէն, ընկաւ ճամբախ, գնաց, գնաց տղին խասաւ։ Տղէն իշկեց էտեանց, տեսաւ. ահա, ուր մէրն ա կուգայ։ Նստաւ, մէրն գնաց խասաւ։

Տղէն վերցուց.—Մարէ, յորին էկար։

—Որդի, ասաց. ասլա ես քի պահեր էմ, ջոջըցուցեր էմ, քև չի տեսխմ, կը պատուխմ, ես չգտամ, ձն գնայ։

—Մարէ, ասաց, դու քո փափակ առաը, ետ դարձի, ես կերթամ խըտ իմ ճամբաւուն, քո ծծի կաթ ընձի խալալ էնայ, էլ ֆայտայ չէնայ, դարձի, դնա, իմ խօր անէծք մ' առնէ, ծերացեր ա, ուրին չկարայ չաւխի, իմալ պտի էնայ։

Մէր վերուց.—Որդի, ասաց. ես «իմ վար վարեցի, վարոց թալեցի.» ես պտի գտամ խըտ քեզի, անկարելի գործ ա։

—Մարէ, ասաց. դարձի, խուռմ կաթ ծծողին բաղթ չկայ, մի գար, էղեր իմ գլխուն բալայ, կնկեան խետ էրթըցող դատի ըռատ կուգայ։ Զարայ չէղաւ. մէրն ընկաւ խետ, գնաց։

Օրմ' էրկու, իրեք օր գեացին, իսկի ճեճիկ չընկեան. մէկ օր էլ գեացին օր սարիմ տէղն բարակ մուխմ կելլի յերկնուց էրեա։

Ասաց.—Մարէ, ատ վերցու (տրադ քայլէ) էս օր մեր դօճախ էդ տեղ պտի էղի։

Գեացին, տեսան օ գետնի տէղն մուխ կելլի։

Ասաց.—Մարէ, կայնի դադ, էս պտտտեմ, տեսիմ էսոր դուռ բան։

Գնաց ներքին դէն, տեսաւ ջաղէի ջոջ քար դրած դէմ, կօ դուռն էլ էդ ա. քար գլորից դէն, մտաւ մըջ մաղարին. տեսաւ Աստուածածուքեն ինչ ստեղծեր ա, մըջ էդ մաղարին կայ, մէկ էլ իշկեց եօթ կանթեն բէաւոտ օր օճախին դնուկ ա, կէփի։

Դարձաւ. էկաւ, մօրն ասաց.—Մարէ, կեօ դուռ դտայ՝ էրթանք, դորմ նստենք, չուտ էս տան տէր գեայ. սպառ էդինք։

Գեացին ներս, տղէն նստաւ օճախի կուշտ, մէրն՝ էնուր տեղ կուշտ ընկաւ, նստաւ էն մէրան դեհէն, տղէն ասաց.—ես իմ ուժ պտի փորձեմ էս բէաւոտի վրէն, որ դրած ա օճախ վրէն։

Տղէն մէկ ձեռք զարկեց բէաւոտի ոտք վերցեց, տարմիը դինէ, Մէր վերցեց.—Լա օ, քու ձեռ էրևցաւ, դիր գետին։

—Մարէ, ասաց. չում մկայ ես իմ ուժ ըսկի չփորձիմ, մկայ տի փորձնմ, ես դեռեմ իրենք էսքան էլ էղի, ես չդիտեմ թէ իմ ձեռաց վրէն բան կայ։

Տղէն բեառոճ դնեց վրը օճախին նստաւ ուրին ճդարաւ չրքեց. Ճաճաս մը առաւ, տեսաւ որ քառասուն խատ դև մէկ մէկ լըցուտնտուն, դոլին տեսան։—Նա, խողածին ասաց, խաւքն ուր թեւով, օձն ուր պօրտով ըս տեղրանք չկանէր գէր, դու իմա էս էկերես։ Ասաց.—Ես իմ ջոջի խօսք չլսեցի, Աստուած ընձնէ առաւ, էկայ, ընկայ էս տեղ։

Էն մէկ դև իշկեց, գլխիկ մէլ էդա տեղ նստուկ ա. էն մէկէլ դևեր ասեցին. —Աղէ՛, էս տղէն էս կնիկ բերեր մեզի կնիկ, էլ ընչի պտի տանք էս տղէն տանի։

Տղէն ասաց.—Թէ դուք ղոչախ էք, ձեր ղոչախութեն խըտ ընձի փորձէք, էս տեղ գալացող կնիկ չտար ձզիկ, ձեր ուչք չիտակ բացէք, ձեր ոտ դնէք։

Տղէն տեսաւ որ անկեանձ չեննեն, ամեկը զմէր կը քաշայ ուրին, դանչէց ուր Աստուած, խաց գինին. Տէր կենդանին, քեաչեց ուր թուր, ասաց.—Տէր Աստուած, ընձի ամօթալէց չեննես էս մարթեկաց մօտէն. թո՛ւռ. աչը գարկեց. ձախը գարկեց, բու էնեց ըղըտայ։ Էդ տեղ էլաւ Ըռօստամ դռան առէջ քեառասուն կեազանոց խոր մի փորեց, բերեց էդ ջանդկներ սաղ լցեց մըջ էդ խորին, բերեց, ջաղցիմ քար վերցնց դնեց էդ խորի բերան. մօր բամբխեց.—Ես կերթամ ճեճիր. ժեվ. ժոյլ կաւիլես, լցես էդ քարի ծկէն էդ խորի մէջ, խոտ չտայ մաղաւրին։

Դևէքներուն իրենք օտնէն ձիմ կայ, խեծաւ հասպե սի փե' համ չալ, համ բաւ, դնաց։

Տարիմ' էրկու էդ տեղ ճեճիրութեն էնեց, մնաց դադ։

Աւուր մէկին տղէն որ կերթայ ճեճիրութեն, մէր տախտ, տուն կաւլայ, տանի, լցայ մըջ էդ խորին, խորից տեսի բալակ ձէնմ կուդնայ։ Կասայ.—Դու ո՞ն էս, մտերէս մըջ խորին։ Կասայ.—Ռու աչքեր քօռնայ, չէ, ես իմ մըչ խորին։

Կասայ.—Պա իմա՛լ էնեմ ես խըտ քեզի։

Կասայ.—Դու տրի, խօսք տու ընձի, ես էդոր հնար կենեմ։

Կասայ.—Իմա՛լ խօսք տամ քեզի։

Կասայ.—Դու ընձի կնիկ, ես քզի իրիկ. տղէն մօր չպախայ, իրիկ կնկան կը պախայ, քու տղէն ծուռն մէկն ա, կերթայ, դաշտ կը պտուտայ, լինչ գիտէ քու հալ լինչ ա։

Կասայ.—Իմ տղէն որ տեսաւ, համ ձիկ կտպանայ, համ քզիկ իմա՛լ խօսք տամ ես։

Էդ տեղ կէս տարի դաւտար ցերեկ կուգայ մըտ կնիկ, գիշեր կերթայ մըջ խորին։

Կնիկ տեսի կը մնայ ճժով, կերթայ դևուն կասայ։

—Դև-ես մացի ճժով, իմ տղէն տեսի, ընձի կսպանայ։

Ասաց.—Դնա, տեղ թալ, պարկի. քե դիր խիւանդութենն, օր քու տղէն ճեճիրից կուգայ, կասայ.—Մարէ, քե ինչ էղեր ա, դու ասա. ես խիւանդ էմ, կը մեռնիմ, քընէ կը խարցուցայ, երթամ ինչ դեղ բերեմ քե, դու ասա թէ Սև սար կայ, էն տեղ անմախութենի ջուր կայ, խնձոր կայ. ինչ որ Աստուածութեն տեղծեր ա էն տեղ կայ. օ գնաց էն տեղ, մեր եօթ գլխէն դև էն տեղն ա, քու տղէն կսպանայ. մենք կը մնանք էս տեղ, էհյեն կենանք։ Տղէն էկաւ տուն, տեսաւ ուր մէր պարկի, ծանոթ կը տքայ, կասայ,—Մարէ, քեզ ինչ ա էղե՞։ Կասայ,—Լա ծ, ջրփոխուերէմ, ուռուցուրերէմ, կը մեռնիմ։

—Մարէ, ասաց. քե ինչ դեղ պէտք ա, դու ասա, ես բերեմ։

Կասայ.—Բան ընձի չի սաղցուցայ, ընձի օր սաղցուցայ Սև սար կայ, էնտեղ անմախութենի ջուր, խնձոր կայ. բերես, կը սաղնամ։

Բարի լուս բացուի հազրնեբուն ճաւդեսիւ միլեբին (եօթանասուն երկու ազգին), վըր էնոնց. խեծաւ ուր ձին, թուր թալից թև, դանչեց ուր Աստուած, ընկեաւ ճանբախ. չատ գնաց, քիչ գնաց, Աստուած գիտայ. մէկ գեղիմ ըռասե էկաւ, չկասաւ էդ սար։ Ձիու կեամ թալից ձիու վիզ, ասաց.—Ձին վիզ դուռ գնաց, կայնաւ, էն տեղ ոօճախ կեղիմ գիշեր. լուսուն կելիմ, կերթամ Աստուծոյ խրատանքով ձին գնաց կայնաւ խալխուրիմ դուռ. տղայ չկայ էդոր, եօթ խատ խուրնիկ խրեղէն աղջիկ կայ էդոր։ Աղջիկներ էլան դուռ, տեսան օր ձիաւորիմ դուռ կայնուկ ա։ Ձիաւոր խարցուց.—Աղջիկներ, ասաց. էս օր գչեր ընձի ոօճախ կը պախէք։

Ասին.—Կայնի դադ, մզի ջոջ կայ, խարցուցենք, կուգանք, քեզի ջուաբ կուտանք։ Աղջիկներ գնացին մըտ խէր, ասին,—Մեր դուռ ոօճախ էկեր ա։

Խէրն ասաց.—Լա ծ, ոօճախ օր կայ Աստուծոյ ոօճախն ա, թօղ գեայ։

Մարթու ձին քեաչին, մարթ գնաց յօղէն, թաղիս, եաթախ բերին։

Մնաց իրիկուան դեախ. էդ տան տէր ասաց.—Ռու անուն ինչ ա։

Ասաց.—Իմ անուն Ըռօստամ ա։

Ասաց.—Դու վիհ տղէն էս։ Ասաց. Զալի տղէն էմ։

Ասաց.—Սօրմաղ այիպ օլմասե, (հարցնել ամօթ չը լինի). խէր Ջղի, յոնսա կուգաս, դո՞ր կերթաս։

Ասաց.—Կերթամ Սև սար, անմախութենի բան կայ, բերեմ իմ մօր։

Էխտիյար իմաստուն էր, գլուխ տարաւ, բերեց, ասաց.

— Տղա, բանըմ ասեմ, չէղի ըռըքիս։

Ասաց.—Ընչի ըռըքիմ, ախչըքի գործ ա։

Ասաց.—Տես, իմ աղչկայ ձրն սիրուն ա, տամ քե, իմ մալ իպայ էնեմ վըր քե, նստի, կեր, չում յօր մեռնելուն. արի, մէրթար էն տեղ, կսպանուիս, էն տեղ երթըցող սաղ չ'գառնայ։

Ասաց.—Զում ես իմ մուրազը չկատարեմ, կարգուելու անուն ես իմ վրայ չի բերեմ։

Բարի լուս բացուի վըր ձեզի. լուս բացուաւ, էլաւ ընկաւ ճանբաս։

Գնաց, չում կէս օրին խասաւ Սև սար։

Գնաց, տեսաւ որ կարմիր բաւաց քաշուկ ա էգու չորս բոլոր, բիբուն իսնի գլուխ ու իսնի արուն։

Գնաց, ձին կապից դարկեախ. զարկից, դարկեախ կոտրեց, մտաւ մըջ բաղին, կերաւ, խմեց, փարչմ ջուր լցից, դնից մըջ խուրճինին, մէ քայն էլ եմիշ լցնց. բերեց, կապից ձիու քարկ։

Ասաց.—Շատ անուշ ա էսա բաղ. քիչմըն էլ պտի պտտեմ։

Դարձաւ բաղին էկաւ օ կեամ զանի ձիու գլուխ, խնծի. տեսաւ հօթ գլխէն դև գետզ վըր քեին էն տեխէն էկաւ։ Նա, խոզածին, ասաց. դու ըսկի իմ անուն չի լսեր էս. դու դարկեախ կոտրեր էս, մտեր էս նեղս։

Ասաց.—Նս քու անուն լսեր եմ, դուց էկայ, դու ինչ որ լսում' իմ աչից էրևաս, դու մարթ յորին կեղիս, «զատանց էլի աչքն էս խանէ, մօտանց տիրոջ.» էս օր եաև իմ մէր պտի լայ, եաև քու մէր»։

Դևն ասաց.—Որ դու ոօչախ էս, մէկ դըրպմ զարկ ընձի, տեսինք դու իմալ մարդմ էս որ քզի կը գովաս։

Ասաց.—Դև', որ ես իմ դըրպ զանիմ, դու սաղ չես մնաս. առջին դու զար։

Դևն ասաց.—Ըռօստամ, դէմ տուր, իմ գուրզ էկաւ։

Ըռօստամ ասաց.—Քու գուրզ կը լամի ճժերու բօլի, որ կըռբօլի խաղան։

Դև գուրզ զանից, Ըռօստամ ինչ օր ճնճղկուն, գուրզ բռնից։

Ասաց.—Դև', ես էրախայ էմ, ընձի խետ խանաք կենես դու, տղա մարթու դըրպ զարկ օր մարթու չկըրից բռնայ։

Ասաց.—Դև', դորն էկաւ ընձի, դայաղ տուր, էկաւ դըրպ։

Ասաց ու զարկից, չէմալ զանից օր չանդրկի կէս գնաց, տեղ տեղ մնաց կայնուկ։ Էդ տեղ թուրը առաւ, պրծաւ վըր դիւուն, էնից ըռբօտայ, փրթից. թափից ցած։

Էկաւ դները էդ էխտիյար մարթու տուն էլման ոօնախ էդաւ.

Հաց՝յար էլման ասաց.—Ըռօստամ. արի, իմ աղջիկներէն մէկ առ, իմ մալ իպա էնեմ վըր քե. օրմ կը վնասուիս, մեզքիս դու, ինչ որ էնես, չաբա չեղաւ խըտ Ըռօստամի Զալին։ Էտ իսդյար իմաստունէր, աղչիկներուն ասաց.—Խուրջին բացէք, ջուրն էլ եմիշ էլ վոխէք, վայ չէնէք, Թը մնայ։

Փոխեցին, բարի լուս բացուաւ. էղի ընկաւ ճանբախ։

Դևն ու էդոր մէր կայնած էն տանիս. տեսան որ բարձակ, Թող մը կելլի ճամբխու խնա, մէր վերցուց.—Ըռօստամ եկաւ. ետեմ ընձի կապանայ, ետեմ քզիկ։

—Փու տուն աւիրի, ասաց. Ըռօստամ էննց տեղ մէնք ճամբխա որ սկի չգիայ, դու էդ ինչ ա կասես։

Էկաւ մօտըցաւ, տեսան օր Ըռօստամն ա։

Դևը կննկան ասաց.—Դու էլի պարկի, քզի դիր ծանոթ խնաբընդունքեն, ես էլ մախի խոր, տեսինք ինչ կելլի։

Դևն մտաւ մըջ խորին, կնիկ էկաւ ծանոթ պարկաւ։

Ըռօստամ էկաւ իջաւ, տեսաւ ուր մէր հալաճի գնացեր ա.—Մարէ, ասաց. քու ասած ջուր բան բերիր էմ, էլի, տես քու իշտահ չէրթայ, ուտես։

Ասաց.—Էրկու խատ քեր, տեսինք։

Բերից, կերաւ մէկ խատ, ասաց.—Լաօ, դու ֆօռ օճախ էս իմ խելք քզնէ չկորէ ընձի անմախսական եմիշ բերես, գնացեր էս Շէրվընու Թթու խնձոր բերեր էս, ինչ։

Տղէն կերդուի, խոդուց կելլի, կասայ.—Մարէ, վալա գնացեր էմ, դրև սալաներ էմ, դու էդ ինչ ա կասես։

Ըռօստամ օր էդլան կասայ, դև ալանջ կենայ.—Վայ կասայ ինքն ուրին դև, էս անաստուած տղէն գնացեր մեր ևօթ պլսէն դևն էլ սալաներ ա, պա մենք իմալ պտի էնենք։

Կը մնայ, չանք լուսնայ. տղէն կելլի, կերթայ ևեջիռութեննի։

Դև կուգնայ, կասայ.—Իրիկունը քու տղէն կուգիայ, ասաս. Ես խնւանդ էմ, մեզքի կը վախնամ, էս տեղ մնացի, սաբրին խաղանք, օր ընցուցինք։

Տղէն կուգնայ, խը լուսուն կելլի օր էրթայ ևեճիռութեն, մէր կը վերցուց.—Լաօ, ես էս տեղ մնակ, խեղճ, նէ ջուր տուղ, ևէ խաց տուղ, ընձի կը Թողես վիհն ումուտին անտէր, անտիրական։

—Ասա ես իմալ էնեմ, դու ասա, ես քու խօսք էնեմ։

Ասաց.—Մնացի էս տեղ, էրկու իրեք օր սաբրին խաղանք։

Ինքն, ուր մէր կը նաին սաբրինն կը խաղան։

Ինչ ղնդար կը խաղան, տղէն զըմէր կը տանի։

Մէրը կասայ.—Լաօ, հալպաթա օր մը քզի ծիծ էմ տուեօղիս մը Թող, ես քի տանեմ։

Օյին մէլ մէր դը աղէն կը տանի։

Մէր կասայ.—Լա օ, քու ուժ ինչ կը յաղթայ։

—Մարէ, կասայ. դու ինչ կուզես իմ ուժէդ։

—Լա օ, ճալպաթ չապիկ մը վեր քե ջոջ իմ, կեղի օր քզնէ էլ ուժով մարթ կայ։

Կասայ. Մարէ, ախչըքի էրես ընձի բան չգաւթայ, քեառսուն կեաղ պնաղայ զճճիլ՝ որ կապէն սուն, կը գաւթայ. էլ բան չգաւթայ։

Մէր բերայ քեառսուն կեաղ բնատայ զճճլով կը կապայ սուն։

Տղէն կասայ.—Մարէ, գնա դէն։

Տղէն չօր կը ձմըլկտայ, զճճիլի կտորներ ամկը ախչար մը կերթայ։

—Լա օ, ընձի սութ կասես, խա. ճալա ուղիղն ասա, գզի ինչ կը գաւթայ։

Ասաց.—Ընձի քեառսուն գեաղ կանվիչ ճոպան կը գաւթայ։

Մէրն ասաց.—Տղա, կանի, քու սութն՝ օղորդ ճրպիմ էդ խետ էլ։

Տալաւ, էլման կ՚ուզեց էդի սուն ճոպնով։

—Տղա, ասաց. մէկ իրար տուր, տեսինք։

Իրար տալու բաջացաւ ճոպնի կտորներ ինչ որ ժաժկի թափաւ։

—Տեսար, տղա, որ դու սութ ասան էս։

—Մարէ, ասաց, ես սութ ասան չեմ ամա, խում կաթ ծծողին բաղդ չկայ, վախենամ դու իմ գլուխ վնաս մը բերես։

Ասաց.—Լա օ, ես քու մէր էղիմ, ընչի քու գլուխ վնաս բերեմ։

—Մարէ, ասաց, ախչըքի մէջ ընձի անղան լար, որ իմ էրկու բուդ էտևէն կապես,, էնի կը գաւթայ։

Կապեց ասաց.—Տղա, քե իրար տուր, տեսինք։

Տղէն ձեռներն յիրար տալու բաջացաւ արուն պզպզալէն տամարներուց թափեց։

—Մարէ, ասաց. արէ, իմ ձեռներ արձկայ, մրմուռ թափեց իմ սիրտ, իմ չկեար կտրաւ։

Մէրն ասաց.—Սութ կասես. ճոպան կտրող, զճճիլ կտրող էդ անղան լար չի կեարնար կտրէր։

Տեսաւ չի կեարնայ կտրէր, կանչեց դիւուն, ասաց.

—Դև՛, քզնէ կուզէմ, օտնէն վրթիմ մինչև գլուխ։

Փրթեցին, լցին մըչ մաղէ դարաւրին. կապին վրը ձիուն, դոր էս էկեր էս, էն տեղ գնաս։

Աստուծոյ խրամանքով ձին տո՞ղրու կերթայ էդ խոթիյար մարթու դուռ կը կայնի. էդ տեղ էդ մարթու հօթ ախչկէ մեկը կելի դուս, կու տեսի, օհօ, Ըռօստամի Զալի ձին, կը մտի ներս, կասայ.—

Ափօ, ջանեակ մը կապուկ վըր ձիուն, կասես Ըռօստամի ձին ա էխտիյար իմաստուն էր, էդ տեղ իմցաւ։

—Աղչի, ասաց. վազէք, ջանեակ բերէք նէյա։

Ջոբս-խինդ աղչիկ ժողովին վերէն Ըռօստամին կը վերցնեն, կը տանեն օդէն։

—Աղչի կասայ. խմիօը ծեծէք, էնէք մլճամ։

Բերայ տղի ջանդակ, կը դնայ ատխակիմ վրէն, ձեռ ձեռաց տեղ, աչք աչքի տեղ կդնայ, ոտ ոտաց տեղ կը դնայ. էդ մլճամ կը բերայ քաչայ տղի եարէֆներու վրէն. կակուղ եօղանմէլ կը թալայ վըր տղին, կը պարկին, քնին, կասայ.—Ջանք լուս տեսինք Աստուած ինչ դուռ կը բանայ։

Բարի լուս կը բայուի հազրնեբուն, վըր էլ մարդեկաց. աղչկըներ կը լցուին յօդէն, Աստուծոյ խրամանքով էդ աղչկներու ձէն կընկի տղի անկաջ, տղէն բիւրեհ չտկի նստի, կասայ.

—Պապէ, ես էրեկ էկայ քու տուն սաղ ի, ընձի սալանացին. մկայ քու տուն սաղ իմ, էս իմալ բան ա։

Պապէն կասայ.—Տղա, զա էրագ էս տեսեր դուս տղա, կասայ, արէ, իմ եօթ աղչկէն մէկ տամ քզի, իմ մալ իպայ էնեմ վըր քզի, օրմ քզի կսպանեն, մեղք էս։

Տղէն ասաց.—Պապէ, էն իմ ծնող մէրն էր, ես ինչ խասկացայ. քու աղչիկ էլ օղլու աղչիկ ա, ես ինչ պտի խասկընամ. խում կաթ ծծողին բաղդ չկայ, քեանի ես սաղ իմ, էրդում կուտամ, խում կաթ ծծող պտի չտեսիմ, իմ ձին քեաչեայ, ես էրթամ։

Տղի ձին կը քեաչէն դուս, բռնայ էդ մարթու ձեռ տղէն կը պագայ, կասայ.—Պապէ, քու սամակ ընձի խալալ էնայ, քու սուրբ բերնով ընձի օրչնայ. ես էրթամ խըտ իմ ճամբեսուն։

—Որդի, ասաց. Աստուծոյ օրչնիքը խըտ քզի էղի. գնա։

Տղէն զձին էմալ քշեց օր, իմալ օր կուլլեն թվրճեի բերնէն կելի։ Էկաւ մօտըցաւ մադարին. դև ու մէր տեսան, էսի Ըռօստամի Զալի ձին էկաւ, ասեցին իրարու.—Էս ձին խնծնող ին պտի էղի, զախար ճամբխորթ-մամխորթ ա։ Բիւրեհն, օհո էսի Ըռօստամի Զալն ի։ Դև փախաւ, մտաւ մըչ խորին, մէր գնաց, պարկաւ։

Ըռօստամ էկաւ տուն, տեսաւ թուր պատից կախ ա։ թուր թալեց վիզ, գնաց, կանաւ խորի վերէն, ասաց.—Դև', դև', էլի արե դուս, մը' վախկնայ, քզի բան չեմ ասի։ Գնա էն քեաուսուն կեազանոց ճոպան ու պալթէն առ, էրթանք մեհեն. փէտ բերենք։ Տաբաւ մեհեն. ինչ դաբար ճոպան փէտ տարաւ, դև ճղճղաեց, չալակ գնեց, չալկեց. առաւ էկաւ տուն։

Դևն ասաց.—Քընէ կուդեմ, էդ խազան իլին չուր լցիս,

դնիս վըր օճախին, մէկ չխոիկ փէտ չմնայ, բիբուն վառես օր իմ մէր դնեմ նամաւ Դի վառեց. ջուր չէմալ կեռայ, թալայ որ էրկու մզրաղ բոյ կելի։

Ըռօստամ դնաց կայնաւ մօր գլխու վերէն, ասաց.—Մարէ, չէլի քէ դնեմ նամամ—Լա օ, ասաց, էդա ջուրը չէմալ կը բղբղկայ, էդոր ձէն իմ ականջնէր կը խուլցուցայ, ընձի կը տանես կերթցես— Մարէ, քի չերթցեմ, նամամ կը դնեմ. մարէ, էն օր որ թուր տուիր դեռ ձեռ, ընձի կը փրթեր, էն օր իմ ջան իմալ էր, քար էր, չէ ամեկը ուր բրդած՝ կուգայ ուր գդալ։

Էլաւ էդա տեղ մօր ճիւ բռնեց, բերեց, դնեց մէջ բհաւօշին։ Էդոր աղչիկմ էղեր էր, էն էլ թալեց մըջ բհաւօշին, դեռ ճիւն էլ բռնեց, դնեց մըջ բհաւօշին, ասաց.

—Դէ, բեցով ձեղի ուրախութեն էնէք։

Ըռօստամ էլաւ ուր մօտի խալալ փարէն լցեց ուր քամարին մէջ, կապեց մէջը, թըեց վըր չեման, ասաց.—Էսա տեղաց խաց ու ջուր ընձի խառամ էղի, բերի դուենա էղաւ, գնաց։

Շատ գնաց-քիչ գիացց, Ասատւած գիտայ, գնաց մէկ քաղքիմ ցախիլ էղաւ. որ տեղ գնաց՝ էդոր տեղ չի տուեցին, ասաց.—Ա՛ստուած, ես ինչ դիդար բեաճիր մարդ էմ, էս դիդար օհելիկին մէջ դոր զացի, ընձի տեղ չի տուին։ Գնաց, կայնաւ ժամատն դուռ. ին էլաւ ժամէն, էդ մարդուն չի տարաւ տուն. չէտի խոտ ժամխալ ժամէն էլաւ. ասաց.—Ախպէր, չէլաւ, չէլաւ, դոռ տեղ մը տուր, էս օր սրար էղիմ, լուսուն կերթամ։

Ասաց.—Ախպէր, տեղ չունիմ, մէկ պզտիկ գողտիկմ ունիմ, քեղի կը տանիմ, քընէ կենիմ ամօթով։

Ասաց.—Ախպէր, յորին կեղիս ամօթով, սրար ա, սրուինք լուսուն կերթամ։ Էդ մարթ առաւ, գնաց տուն։

Ձին քեաչից բակի մէջ. բերեց, փօսեմ թալեց, էդ մարդ նստաւ։ Մնաց չումմ կէս գչեր, Ասատւծոյ խրամանքով ժամիրըի կնիկ պարիաւ, աղչիկմ բերեց։ Ըռօստամ վերցուց.—Ժամխալ քեղի ինչ էղաւ։

Ասաց,—Ասելու չէր որ ես ասեմ, աղչիկըմ էղաւ։

Ասաց.—Ժամխալ, իմ պատուածն էլ էդ էր, գտայ, Ասրծուց էդ կուզի։ Գնա, ասա քո կնկան, թո ծիծ չտայ էդ աղչիկեն, ես բերեմ ընձիկ։—Ըռօստամ, ասաց. էդ անասուն խմալ պտի տանես, պախաս։ Ասաց.—Կը տանեմ, թէ մնաւ Ասրծուն ա, թէ մնաց, ընձիկ ա։

Էլաւ էդա ժամխըրին էրկու-իրիք խարիր օսկի տուեց, աղչիկ առեց, ընկեաւ ճամբեն։ Շատ քիչ Ասատւած գիտայ ինչ դիսար գնաց, գնաց. գնաց մէկ բարձր սարիմ ըռատս էկաւ. չատ զարկեց

մնաց էդ սար. տասնը չորս տարի էդ աղչիկ պահեց, ջոջըցուցեց՝ էղաւ խուրնիկ խրեղէն։ Պարկաւ էդ աղչկայ ծոց, Աստըծոյ խրատմանքով տարին օր թմաւ, էդօր տղէմ տուեց Աստուած, էրկու իրիք տարի արանք անցաւ. էդ տղէն մեծացաւ։ Աւուր մէկին Ըռօստամ գնաց ճէջիրութենի, տեսաւ քառասուն խատ դև էկան, էդ կնկայ չաթրի առէջով ընցան դեացին։ Իրիկունը Ըռօստամ ճէջիրութենից էկաւ տուն. կնիկ Ըռօստամին պախս չենեց, չասաց թէ քառասուն խատ դև մեր դռնով դեացին։ Լուացաւ, էլման Ըռօստամ գնաց ճէջիրութենի, տեսաւ դևէք էլման էկան, գեացին. կնիկն էլաւ դուս, խարցուց.—Ախպըրիք, դու որ տեղացի էք։ Ասին.—Մեղի մասի տխալէր։ Ասա, ասաց. ինչ ասեմ։

—Մենք էկեր էնք Ըռօստամ սալանենք, դու կանամս, քու դլխուն ճար էնե։ Ասաց.—Ինչ ճար էնեմ, իմ ձեռ ինչ կայ։

Ասաց.—Ա՛ռ էսա յեսան, իրիկուն Ըռօստամ կուգայ,, կը քնի, կընկի խորունդ քուն, յեսան պռտայ վըր փորուն, ասա.—ամիս մը մնաս քնուկ, ամիս օր կը թմի, էլիս վեր։

Իրիկուն Ըռօստամ էկաւ, կնիկ իսկի պախս չենեց։

Ասաց.—Կնիկ, էսց բիր ուտեմ, նեղացուկ էմ։

Էսց բերեց, կերաւ, քնաւ. օր ընկաւ խորունդ քուն, յեսան բերեց պռտեց էդօր փորուն, ասաց.—Ամիսմ մնաս քնուկ. ամիս օր կը թմի էլիս վեր։

Առաւօտուն կնիկը—դևեներու տուն, դոր իս, էկայ քղի։

Ամիսն օր թմաւ, կնիկն առաւ ուր տղէն, էկաւ ուր տուն —Կնիկ, ասաց. յէս օր գներ ինչ դնեար էրկէն էր, չատ էմ քնէր յէլի, իմ ձին քաշայ, էրթամ ճէջիրութենի։

Ձին կը խեծի կընկի ճանբախս. չատ կերթայ-քիչ կերթայ, խազալմ քարիմ տկէն յանկարծակի կը թռլի։ Ըռօստամ թռնելու բաւցան կընկի էտև, խաստպէխաս կեղի որ զանի. օր կը զանի, Ըռօստամ կուգայ քիթ ու. մրթի վրէն։ Ըռօստամ չումմ չտկաւ, խազալ տուեց, էլաւ դէ սարի գլուխ։ Էդ տեղ Ըռօստամ կասայ.—Մեճզիլի եախսուն, ֆիրասի չոխ, պուրտայ պիր իտկիլիֆ վար. (երկարութիւնը չատ, վարձքը քիչ, այս տեղ մի խարդախութիւն կայ)։ Էն տեղ խայլին մէջքէն կը խանայ, կիչկայ, կը տեսի, էյ, ձեռաց գեացէ. էդտ մեռնելու դուռ։ Էդ տեղէն կը խեծի ձին, քոռ ու փոսման կու, գնայ.—Վայ անաստուած կնիկ, կասայ. կնկեան անուն խոզի չկայ. էս ինչ փորձանք բերեց վըր ընձի։

Կուգեայ տուն կասայ.—Կնիկ, խիւանդ եմ ես, իմ տեղ թալ, ես քնիմ։ Ձինք կդնայ սութ-աղուէս քուն։

Կնիկ կը բերայ յեսան կը պռտայ էդօր փորուն, կասայ. —Ձիրեք ամիս քնես, իրեք ամիս թմի, նոր էլիս վեր։

Կնիկ կառի ուր տղէն, կերթայ դէպքներու տուն։

Ըռօստամ կը չոկի, կը նստի, կասայ.—Կնիկ. գնա՝ թէ ես քու նախեն էկայ, զաքի Ըռօստամն եմ, թէ չէկայ, քու լայչին խապար խոտ իմ գլխուն էղի։ Ըռօստամ մեղաց.—Թէ ես առիմ իմ թուր էրթամ, դուվաթ չէ մացեր, չառիմ ես կնիկ ուր էրած պտի մարսայ ու էրթայ, ես իմալ էնեմ։

Զարէն կտրաւ, Ըռօստամ էլաւ չուն մօրթեց, էրաւ տիկ, մտաւ մէջը, գնաց.—Էրթամ, իշկիմ, ասաց. չատ էն, քիչ էն։

Գնաց, գնաց. Աստըծոյ խրամանքով էդ կնիկ ուր մէկ տուն էր, գնաց էդ տուն։ Կնկան աչքեր որ կառի չան տիկ, կասայ.—Եամա՛ն։ էդ չուն մէնք դուս, էդու աչքեր կը մանի Ըռօստամի Զալի աչքեր։ Փէսամ կը զանէն էդ չան. չուն չիսախի. բռնեն, չուն տիկ միջէն կը խանէն, օ, ես Ըռօստամի Զալն ա։ Դև կասայ.—Աղէկ էսի էկաւ, ընկաւ մըջ մեր լիճին, կայնի, չարչարանքով էսի պտի սալանեմ։ Բերայ, քառսուն գետ ղնճիլով կը կապայ սուննուվի, հօթ կանթէն բհարօտ ջուր կը լցայ, կը դնայ Ըռօստամի Զալի գլխու վրէն. ճրագն էլ կը դնայ վրը բհարօտի կասայ.—Չարչարանքով քու խոզին պտի խանեմ քու փորու միջէն։

Էդ Ըռօստամ մնաց մըջ ուր ճալին, էդոնք պարկան քնան, ուրենց բէֆ էնին։ Դև Ըռօստամի աչիչ յառէջ Ըռօստամի կնիկ դրկեց պարկաւ.

Մնաց չում կէս գչերին, Ըռօստամի տղէն էլաց, ասաց.

—Մարէ, ընձի ջուր մը տուր, խմեմ։

Ասաց.—վաւամ ընկի քո բերան, դուն էլ կենես քու հօր պէս, էկե, ընկե մըջ գերուրթեն, չես կանաս ջուր առնես խմես։

Խօր սիրտ մրմըրաց վըր տղին, ասաց.—Կօյա ջուր, էլի կօտիկ առ, լից ու խմայ։

Տղէն էկաւ առաւ կօտիկ, ջուր լցեց, խմեց։

—Տղա՛, ասաց. արև մըտ ձի, բան ասեմ քե։

Տղէն էկաւ, Ըռօստամ խարցուց.—Տղա՛, մեր տուն կը ճանչնա՞ս։

Ասաց.—Խա՛, կը ճանչնամ։

Ասաց.—Կանա՛ս էթաս, իմ թուր բերես։

—Ախօ, ասաց. մէ տախտա չքաշայ, քու թուր կը խասուցեմ, տուր ընդ, էրթամ, բերեմ։

Տղէն գնաց մըջ չաորին ընդ զանեց, ճրագ էննց, տեսաւ թուր պատէն կախ ա. տղի ձեռ չկասաւ որ թուր բերէր, էլաց. Աստըծուն չաթին էկաւ. ինչ որ մէկ մէկու ասէ, տղա՛, ընչի՛ կու. լաս, քուրսին բեր, դիր քու օտներու տակ, էլի, թուր առ ու գնա։

Տղէն քուրսին դնեց օտներու տակ, թուրն առաւ, էկաւ, տուեց հօր։

Տղա, ասաց, Թուր բերեցիր։—Բերեցի, ասաց։

—Տղա, ասաց. Կանգնա Թուր պատեր, զենիլ կարես։

Բերեց պատեց, զենիլ կարեց։

—Տղա, ասաց. առ զենիլի ճօթ յուշիկ պտոտայ, ձէն չելի մօտէն։ Տղէն պտոտեց, վաթ արձակեց։

Ասաց.—Տղա, դու դնա, քնի, չէղի վախենաս։

Ասաց.—Ընչի՞ վախենամ, զահե ես քեզնից չեմ, դու տատ սպանիս, խինգ էլ ես կսպանեմ։

Ասաց.—Լա ծ, դու դնա, քնի, էն պիքուն քու խօր քուքուն ալքի չէղի։

Թէր գլխուց բհաroc դնեց տակ, քաշեց Թուր, դանչեց ուր Աստըւած, ընկաւ մըջ տներուն, նստունը վինը դեն սպանեց, էկաւ տուն զենիլ վաթից բոլոր, բհաroc դնեց վըր գլխուն, կայնաւ Քիչ մնաց, գլխանց բօռաց։

Բօռալուն պէս տուն, աներ բռան պէս ինչ օր կը դողան։

Էդօր կնկան սիրող դև չտկաւ, նստաւ, ասաց.

—Ինչ կը բօռաս, կանի, տէս, քզի շարչարանքով ոպտենամ։

Ասաց.—«Առսրզ ճեռճե առլաներ, չուլ տա կեյեր սալլաներ» (անամօթը ինչ բանէ կամայի, քուրչ ես հագնի, կը չարժի)։

Ասաց.—Դև, քե բանմ ասեմ, չես ըռըքիս։ Ասաց.—Չէ։

Ասաց.—Իմ աչք կալաւ, էրազ տեսայ, քառ սուն դև սպաննցի, մէքի դու մնացեր ես։

Ասաց.—Զաթի դու չես ամչընաս, նոր էս ընկն իմ ձեռ։

Քիչմ մնաց, Ըռօստամ զենիլ-մենիլ արցըկեց, գնաց, կանաւ դիւռ գլխու վրէն, բօռաց։

Որ բօռաց դև խինգ Թիղ քնու միջէն Թռաւ վեր։

Դև բօռաց.—Տղէքներ, խասէք, Ըռօստամ փրցեր ա։

Ասաց.—Տղայ-մղայ չկայ. տղայ-մղայ պիքուն մատղերէմ զլիկ, զլիկ էլ կը մատղեմ իմ կնկան, որ իմ կնիկ ընձնէ ազատեցիր։

Կնիկ, ասաց. կանի զլիկ էլ մատղիմ իմ տղին, որ պախեցիր, չսպաննեցիր։

Էլաւ ուր տղի ձեռ բռնեց, Թալեց ուր Թև առաւ էկաւ ուր չաար, քաշեց ուր ձին, խածաւ, տղէն Թալեց բարէ դանչեց ուր Աստուած, ընկաւ ճանբախ, ասաց.—Էսա տնղաց խաց ու ջուր ընձի խարամ էղի։ Ասաց.—Տղա, իմ խօր վաքաց ընկել ա իմ միտք, ալի էրթամ իմ խօր երկիր։ Շատ քիչ Աստուած գիտայ ինչ ղնդար էկան ճանբախ էկաւ, տեսաւ մէկ լալուտ, անտուկ մը չալկե. յինք ուր կնիկ. ուր տղէն ճամբխաւ խետ կերթեան։ Ըռօստամ էկաւ, էգա լալուտին խոսաւ, ասաց.—Բարև քե, ախպէր լալուտ։—Աստրծու բարին քե, աղա, ասաց։

Ասաց.—Ախպէր լսուտ, էդ ինչ ա, քու չալկին։

Ասաց.—Աղա, չեմ դիտեմ, խեղճի պակասութեն ա, էսա հօթ տարիյա անտուկ իմ քամակն ա։ Ասաց.—Ընձի չես էննես քե ախպէր։ Ասաց.—Աղա, ես դոր, դու դոր։ Ասաց.—Լսուտ, աղէն էլ Աստըծոյ տեղծածն ա, լսուտն էլ։ Եղան ախպէր էդա տեղ։

Փիչմ տեղ գնացին, աղբուրմ էդոնց ըռաստ էկաւ։

Ասաց.—Ախպէր, քու անտուկ դիր տակ, քիչմ էսա տեղ նըստինք. ըռահաթնանք, էրթանք։

Ասաց.—Ախպէր, թող քո խօսքն էղի, դնենք։

Ախպէր, ասաց. դու յէլի, ցան ժողուայ, թօ տղէկներն էլ էրթան ղըրչ ժողուին, ես էլ օճախ կը դնեմ, քո կնիկն էլ ջուր բերայ, վռիկ էփայ. ուտենք, էրթանք։

Բերեց վռիկ էփեց, բաւէն լցնց, դնեց էդ չորսի յառէջ, մէկ էլ լցնց, դնեց ուր յառէջ։ Ըռօստամի յանք վրը կնկան ա։

Տեսաւ, կնիկ գողտուկ բասեմ լցնց, անդկի դուռ բացնց, դնեց մըջ անդկին. Խաց կերուն, պրծան։

Ըռօստամ ասաց.—Ախպէր, ես կը բաժուիմ, իմ մօտի փող կէս ընձի, կէս քե, քո անտըկին որ կայ. կէս ընձի, կէս քե։

Կնիկն ասաց.—Ախպէր, ինչ կայ մըջ անտըկին, պիրուց քըրչ ու պըլընկ էն, քաք չոր էն։

Ասաց.—Ես քու քըրչ ու պըլընկին ղայիլ էմ, դու իմ օսկուն ղայիլ չէս։

Տեսաւ որ կնիկ գլխացաւանք կէնայ, լանկէն զարկնց Ըռօստամ, անտկի դուռ կոտրնց, տեսան բուղա մարդմ մըջ անտկին. գդալ, պաղաւ, մնաց էդ մարթու բերան։

Լսուտ ասաց, բաժա քու կնիկ, էս մարթ պտի պսակեմ վրը յիբարու թող խասին ուրենց մուրազին։

Բերեց էդ էրկուսն էլ դնեց դէտին, խաւու պէս մորթեց։

Էդ լսուտ կեցաւ, Ըռօստամին օրչնեց, ասաց։

Էս հօթ տարիյա, էս անտուկ իմ քամակն ա, իմալ օր դու ընձի ազատեցիր, Աստուած էլ քզի ազատայ։

Առաւ գլաւտ, էկաւ խօր էրկիր։

Էնոնք խասան ուրենց մուրազին, դուք էլ խասնիք ձեր մուրազին։

4

ԲԷՁԱՆ

Աւծկէի Աւրճճկոյս գիւղի բարբառով *

Ռօստամ Գայքալուզայ քաղքէն ա. Բէճան էլ էդոր խորդէն ա։ Էդ քաղքին մէջ պառաւ կ'ապրի. էդ պառաւ ուրին բաղմ կը տնկէ, էրկու իրէք տարի էդ բաղ կը չախէ, կը պախէ։ Մէկ օր կ'երթայ բաղի եմիշ ժողուայ, բերայ. կու տեսի ծառի վրէն բան չ'թողածին, թափ-թրփած՝ տարած ա.

Պառաւն ա, խեղճ-խեղճ կուգեայ ուր տուն, կասայ.—Տարող թէսլիմ էղի յԱստուած, տէր չունիմ, տիրական չունիմ։

Պառտայ կուգեայ վախտին (յաջորդ տարին) կ'երթայ. կու տեսի էլման տարած ա, կասայ.—Էրթամ մօտ Թազաւորին գանգատ։

Կ'երթայ օր Բէճան դռնից կ'ելի դուս։

Աստուծուց կ'ողի, Բէճան կը խարցուցայ էդ պառաւուց. կասայ.—Մամէ, դոր կ'երթաս։

Կասայ.—Կ'երթամ մօտ Թազաւոր գանգատ։

—Մամէ, ինչ ա քու դարտ օ կ'երթաս գանգատ։

Կասայ.—Օ ես ասեմ, դու ինչ պտի չ'նես։

Կասայ.—Դու ասա, մենք էլ մե կօրայի մարդ էնք։

Կասայ.—Բաղմ տնկեցի, չախեցի, մկայ իմ բար տարած ա։

Կասայ.—Գնա մըտ Ռօստամ էնոր գանգտի, էն օր քեզնէ կը խարցուցայ. «քու գող որն ա, ընձի ասա, ես իճրեն կ'էնեմ». դու էլ կասես՝ «իմ գող Բէճան ա»։

Պառաւն ա, էլաւ գնաց մըտ Ռօստամ, գինք Թալնց Ռօստամի օտաց, ասաց.—Վէրին դէն Աստուած՝ ներքին դէն քեզի դաստ էնե-

---

* Պատմած է Դաւո Մուխսի ցարուբիւնեան։

բեմ, էկերեմ. եաճ դարեիս դարման, եաճ գլխես Ցարմաճ»։

Կասայ.—Մամէ, քու դարs ինչ ա, ասա տեսինք։

Ասաց.—Տղայ չունիմ, ընարոր չունիմ, գութան չունիմ, տէր չունիմ, տիրական չունիմ. ես էմ՝ էն մէկ բաղ, էս պառաւ նալոլս պախեցի, չախեցի, բերի խասուցի բար, յէլայ իմ ջուլ ջուալ ժողուեցի, գետցի օր իմ բար թախթփեմ, բերիմ. գետցի, տիսայ «ինչ օր տուերիս, արէ տար,» «էղեր ա աչնան բաղ, ճէ եմիս ճէ բար, ճէ նալ, էկերիմ մըտ քէ դանգատ, ինչ գիտես էմալ էրա։

—Է՛, ասաց. պառաւ, քու դող գիտես, սրն ա։

Ասաց.—Չէ, չեմ դետեր, վըր ընձի մութն ա։

Ասաց.—Որ չես դիտեր, ես իմալ ետրուն տանիմ, քսիմ չոր փէտ»։

—Ես էն գիտեմ, մէկ մարդմ ընձի ըռասս էկաւ, անուն Բէճան էր ասաց. «պառաւ, ես էմ քու դող»։

Խըտ էդ ասելուն՝ Բէճան մտաւ ներս։

Ռօստամ Բէճանին ասաց.—Բէճան, դու իմ խօրզեն էղիս. ախշար մեր ձեռաց տակ զար ա, մեր ձեռաց մէջ կը դողայ. էն մարդ որ ընկի մեր ձեռաց մէջ, քամինք ձէթ կուգեայ էն մարդուց, դու պոի էրթաս էդ պառաւուն գողուքեն էնիս, կելլիմ վրէդի կը բռնեմ, տիեմ էդա պատ, ամեն կտորմ ախշար էրթայ։

—Գեռ, կասայ Բէճան, ես գող չեմ, դու ընձի դաստուր տուր, ես էրթամ էդ պառաւու դող բռնիմ. օր բռնեցի, բերեցի՝ բերեցի, օր չբերեցի՝ իմ կողեր ծակայ, իմ ձեռներ մտու ինեն։

—Դէ, կասայ, քե իրաւունք ա, գնա։

—Դէ, կասայ, մարդմ էլ տու ընձի, օր էղի ընձի օհաս, որ ես էն գող բռնեմ, չէղի վաղն ասես «Բէճան սուտ ասաց»։

Կասայ.—Մարդ ին կուզես, տամ քե։

Ասաց.—Ընձի տու Կիվ (Կիվ Ռօստամի մոզիկն ա)։

Տուեց, ասաց.—Դէ, գետցէք, ինչ կէնէք, էնէք։

Էլան էկան, իրանց նետ աներնեը թալեցին թև ուրենց. թեսպիր տեսան, խեծան ձիանք, գետցին պառաւու բաղի կուշտ, վըր ճամբեսուն կայնան։

Կիվ, ասաց Բէճան, դու իմ ձին բռնէ, կայնի, կերթամ բաղի մէջ, թի դող էկաւ, լարեցի, չկարցայ բռնեցի, կուգեանք, ձիանք խեծինք, կընկինք յետև, կը բռնինք։

Ասաց.—Բէճան, դու գնա, ես էս տեղ պատսա կը կայնեմ, որ քու դալապալըխ էլաւ, ես կը խասիմ։

Բէճան գնաց, մտաւ մըջ էգուն ծառին տակ, էրկու իրեք սահաթ իշկեց, տեսաւ մարդ չկայ. մէկ էլ իշկեց, տեսաւ ինչ մէկ խատ զինք պատէն թալեց տակ քընց ամպրոցմ, Բէճանի գլխու մէկ

մաղ էղաւ քընց գնրան։ Տեսաւ էդ մարդ ճերկի գլխուց ծառեր, ճղեր ջարդելով՝ եմիս կնրելով գնաց էն գլուխ. էն տեխէն էլ առաւ էն մէկէլ ճերկէն՝ կնրելով ջարդելով էկաւ, խառաւ մէկէլ գլուխ. էն մէկէլ ճերկէն էլ առաւ, էկաւ, պտի գեայ Բէճանի վերէն. Բէճան էլ նստուկ էր էն ճերկի ծառի տակ. էկաւ, խառաւ, մէկ ծառ էր մնացեր՝ օր խասի Բէճանին.—Վայ, ասաց. ես քու Ֆելաճ բէ-Ֆաճ էալան՝ էալան էնիմ, չէ ես Բէճան էմ, Ռօստամի խօրզեճ էմ. դու իմ անուն չես լսերէս, քու փոր տասուերկու պլօճակ կայ օր դու կուգեաս մըջ իմ էդուն ջարդիս, կուտես։

Բէճան օր կը խասի, էդի գինք կը թալի պատից, կը փախի-

Բէճան կը վազէ Կիվի մօտ, կնրթայ, կը տեսի Կիվ չկայ, ձէն օր կնլլայ, Կիվ կը փախի։

Էն տեղ Բէճան կասայ.—Ախչար իմ էրես կը թքեն, թող իմ ճանճկին թքեն. խանգակտուր կը պառնայ, գնի էտև կընկի, չատքիչ՝ Աստուած գիտէ ինչ ղդար կերթայ. տեսի մէկ էլ դև կը մոի մաղարիմ մէջ։ Էն տեղ Բէճան կասայ.—Պտի մտիմ ինե։

Մտաւ, ասաց.—Եաճ էնի ընձի պտի սպանայ, եաճ ես։

—Դէլի, դև', պոռայ Բէճան. եաճ Աստուած ինձ կուտայ, քե կսպանեմ. եաճ քե կուտայ, ընձի պտի խորիս, չէդի ասիս «էսա մարդ գնաղտիկ ընձի զարկեց։

Դև ասաց.—Բէճան, արի, նստենք, խաց կուչա ուտենք, եաճ Աստուած ընձի կուտայ, եաճ քե։

Կասայ.—Դու քու խաց կեր, ես իմ խաց ուտեմ, դու իմ բաբնկամ չես, ես քու խաց ուտեմ, «խաց քընց ձի զօրպայ աչ, օրական ես խազմր մարդ կանամ սպանեմ, կտորմ խաց չկանամ սպանեմ, քրգուճմ գետին տեսիմ, վերցեմ, կը դնեմ իմ գլխուն, քընգի բանձր կը բռնեմ էն խաց։

Էդ տեղ էն ուր խաց կերաւ, էն ուր խաց։

Կերան, պրծան, ուրենց ճղարէն քաշեցին։

Բէճան կասայ.—Դէ, էլի, դէ, էլի։

Դև կասայ.—Ընչի զանինք, իրարու եարալի էնինք, չարչրինք, էլի, կիւլաս կպինք, ըռհաթ բանմ ա, թը դու ընձի կոխեցիր, իմ արուն ինչ օր քու մօր ծծի կաթ քե խալալ էղի, թը ես քե կոխեցի, քու արուն իմ մօր ծծի պէս ընձի խալալ էղի։

Էդա տեղ կելին ագեալնան բողա գնչու պէս կը դիպին յիրար, էն կը ճխտայ դէն, էն կը ճխտայ դէն, էն . . . իրար կը ջարդեն. էս խեա Բէճան կատաղոտա, կառնի վըր կտան, կը ծեփ՝յ գետին, չոք կը զանի վրը սրտին, պնչներուց արուն կը թալայ։

Էդ տեղ դև խորունք ախ քաշեց։

Նա՛, դև՛, ասաց. դու չես ամչնաս էդ կեավախց, ախ կը քաշիս պուտմ արնի խամար։

Ասաց.—Ես արնի խամար ախ չքնաշիմ, ընձի եուսունինը ախալէր կայ. fեօկե եուսընինը ախալէր ընձի չեղածէն, դու իմ ախպէր էղած էր։

Ասաց.—Ազատ, քե էլ չեմ ազաներ։

Էլան նատան, նոր բուժա էղան ախալէր—դեսսեբայ։

Բէճանին էս խետ պատիւ պախեց, իրամ էնեց։

Բէճան ասաց.—Ընձի իզին տուր, էրթամ երկիր։

Ասաց.—Բէճան, Աստուած քո բան յաջողայ, գնա։

Դև ուր գլխու մազէն բուրակմ մազ կուտայ, կասայ։

—Նեղ տեղ ընկիս, տուր կրակ, ես կը խասիմ։

Կասայ.—Դև՛, ախչարք քըզինք էլ զօրպա մարդ կայ օր ես նեղ տեղ ընկիմ։

Կասայ.—Ձէմալ զօրպա մարդ կայ աչխարք, քեզի կենայ դայվալքի. Բէճան, էն աղէկութէն օ դու ընձի էնեցիր. ես չմոռնամ, ան. ես բուրակ մազը խըտ ե՛։

Բէճանն էր, էլաւ տուեց հանքախ, գնաց. հանքախ մոլըրաւ, ինքն էլ չգիտէ ինչ ճամբխով կերթայ. for forբնդայ դէմէց դէմ գնաց գնաց Սալահանայ քաղաք. գնաց ախալրիմ՝ ըռաոs էկաւ, նստաւ վըր էդ ախալրին, խաց կերաւ, ջուր խմեց. էդոր քուն քաշեց, քնաւ. սահաթմ քնի, երկու քնի։

Էդի էդ տեղ կենայ քնուկ, մինք դառնանք Սալահանայ թագաւորի վրէն։ Էդ Սալահանայ թագաւորի աղջիկ կուգեայ եայլէն, եուսուն, քառասուն կոն խետ՝ անուն տղա մարդ խետ չեղնի, պիր քուն կնիկ էն, աղջիկ էն։

Էդ թագաւորի աղջկան անուն էլ Մախմարի ջան էր։

Մախմարի ջան ուր առաջի (ծառային) աղջկէն կասայ։

—Ա՛ռ էդա կուգում (պղնձեայ կուժ), ջուր առ արի. չոյ էվայ։

Աղջիկն ա, կառնի կուգեայ. կուգեայ, կը տեսի օ, քսան տարեկան աղէմ պառկէ վրը ախալրին, fեաՖr վարդի պէս կը վառի, էն դեի խօրտա ա-

Աղջիկը կը տեսի տղի քրտինք էն էրեսէն, էն էրեսէն գլուլ գլուլ կը թափի, խեյք կերթայ. էդա տեղ կընկի, կասայ.

—Աստուած, եսլան էլ խօրտա կեղի ախչրքի էրես։

Աղջիկն ա խեյքը կերթայ, կելի կուգում դարդակ կառի կերթայ. որ կերթայ Մախմարի ջան կասայ։—Աղջի, դու էս սահաթմ գացերիս, ինչ կենիս, չես իգեաս։

Է՛, աղջիկն ա, իդա տեղ սուտ ասաց—Ֆլան էղաւ, բէՖան էղաւ.

Ասաց.—Աղջի, ես օր քե խաբր։

Աղջիկն էր, կուգում տարաւ, դարդըկից որ ջուր չկայ ինև։

—Աղջի՛, ասաց. ես քու ծծդալա տեղն եմ, ես մէ թագաւորի աղջիկ էղիմ, դու չան մը աղջիկ էղիս, ընձի խափճս, եա՛ց տորու կասես, եաց քու գլուխ կը կտրեմ։

Աղջիկն էր, ասաց.—Մախմարի՛ ջան, քեզնէ ինչ պախեմ, Աստըծուց ինչ, մէկ խատ տղէմ վըր ախպրին էր, ճակեաճի գացի քիսա վերէն, աչքս առաւ տղէն, իմ գլխու խելք գնաց։

Մախմարի ջան էդա տեղ չաւտաց, ասաց.

—Ես թագաւորի աղջիկ էղիմ, ախչար մեր ձեռն էղի, էն ինչ մարդ էղի, գեայ մըջ մեր սընճօրին, ասաց—ծաղջի՛, սութ կասես»։

Ասաց.—Սութ չեմ ասե, ընկիմ քու յառէջ, էրթամ էն տեխ՝ սութ էլաւ, իմ գլուխ զարկ։

Ընկեաւ էդոր յառէջ, գեացին, տեսաւ տղէն ձեռ դներ բարձի տեղ ուր ակնջի տակ, քներ աւ։

Մախմարի ջանի աչք առաւ ինև, տաս տեղով խունճան կտրաւ.

—Վա՛յ, աղջի՛, ասաց. Ատտուած քու տուն աւիրայ, դու իմ՛ղ սաղ մնացիր։ Աղջի՛, իմ՛ղ էնինք էս տղէն խանինք վեր քնուց։

Ասաց.—Մախմարի ջան, դու գիտես, դուն ճարմ էնայ։

—Աղջի՛, ասաց. գնա՛, քաֆուր վարդ ատ, արի՛, ես էս տղէն վարդով պտի խանեմ վեր։

Բերեց վարդ զարկից ջուր, զարկից էդոր ճակատ. էրես, աչք. քիթ ու մռութ։ Տղէն աչքեր բացեց, տեսաւ էրկու խատ աղջիկ ուր կուչտ նստած ա. էլաւ, ես՛ խօսք, ես՛, զրուցք, գնաց աղբուր վըրցուաւ. էլաւ ուր նետ ու աննեղ թալեց ուս պտի էրթայ. աղջկէն աչք առաւ տղէն, բաժը, բոյ, բուսաթ բօսուն թրնցազ, ատտուածծուրթեն սկի դսուր չտուի՛, տղին ասաց։

— Տղա՛, դար կերթաս, կայնի՛, քեզնէ բան կը խաբցուցեմ, խաւքն ուր թևով. օձն ուր պորտով էս տեղրանք չկրնէր դէր. «ինչ էս կուրիսեր, չիս կարաս գտիս», ինչ կը պտոտես։

Ասաց —Ընկեայ մէկ դևի էտև, չկաբցայ խասերի, էկայ, ընկեայ էս տեղ։

Ասաց.—Էս օր գիշեր ընձի դօճախ չես էղիս։

Ասաց.—Օր թը կամենաս, կեղիմ։

Ընկեաւ տղի յառէջ, գեացին ուրենց կօն. տղին խաց ու ջուր բերեց, խօրոտ կերակուրներ բերեց, որ տղէն խաց կերաւ. պրծաւ։

Շաբաթիմ, էրկու էդ տղին իզին չտուեց, էդ կօնի կնկտիք, աղջիկներ գեացին, էդ տղին ու Մախմարի ջանին սատանուրթեն էննեցին թագաւորին։ Մախմարի ջան էդա տեղ իմցաւ, ասաց.

—Բէճան, չընկիմ քու մեղաց տակ, էլի, գնա՛։

Ասաց.—Ընչի աբռով էրթամ, ընձնէ ընչի նեղացար։

Ասաց.—Ընկեայ քու մեղաց տակ քե բիրի էսա տեղ մկա կուդնան քե կսպաննեն. իմ խեր լսեր ա, մկա փայլեվանքեր կճամփայ։

Ասաց.—Էդա ղսեն ընձի չասիր, որ ասեցիր, Թը գեան ընձի սպանին, դու գնա, զատանց կայնէ, մկայ դու գնա, քչում խաց բի, ես ուտեմ, օրմ՝ էղերիմ, օրմ՝ կերթամ։

Մախմարի ջան իշկեց օր, կեօ քսանը չորս խատ փայլեվաճ կուդնան, չոմխաները ձեռ, ամեն չոմխի գլխի վերչեն խինգ նուկի բիրեռ կայ, ասաց.—Բէճան, Աստուծոյ սիրուն էղի. էլի, փախի, էկան։

Ասաց.—Մախմարի ջան, կեօ ես չատ չոմախ տեսերիմ, էս փախող մարդ չեմ, էնոնք քսանը չորս՝ ես մէկ էմ, եաճ քսանը չորսի մեր կուլայ, եաճ մեկի մեր։

Փայլըվաններ էկան, էն կասայ՝ ես կը զանեմ, էն կասայ՝ ես կը զանեմ, կսպանեմ. էն կասայ՝ փարայ-փարայ կենիմ. էն կասայ՝ ես անուն կչենեմ. էն կասայ՝ ես գլուխ կը կտռեմ, տանեմ թագաւորին. էն մեկելդոնք կասեն՝ էնու ջանդակ պտի էնիք բզիկ-բզիկ։

Փայլըվներ գեացին, մտրըցան կասեն.—Իշկայ, տես, քնազոխ խաց էլ կուտայ. խոգին պրծուց, խաց էլ կուտայ։

—Տօ, ախալէր, ընչի կը զանիք, էկէք մօտիկ, խուլ էմ, չեմ լսե, ինչ կասէք, ասէք։

Էդ Փայլեվաններու ջոջ կասայ։

—Տղէք, խասէք, զարկէք, էդոր ջոջ փերդ անկանջ թողէք։

Ասելու բաօտաճ Բէճան թռաւ, կայնաւ. էդ թռելու զարպէն չում չոքեր գնաց մըջ խողին.—Չէ, ասաց. ես Բէճանն եմ, Ռօստամի խօրզեն եմ. դու իմ անուն չլսերէք։

Էլ ըդոնց մաճալ չտուց, վիր զարկեց, ընկուց. քսանը չորան էլ ընկուց էն տեղ, բերեց տրսուէրկու խոգու աչքեր խանեց, էդ մեկել տսուէրկսի կողեր ծակեց, թևեր մըտուց մըջ կողերուն, դնեց էդ fonերու չալակ, ասաց.

—Գեացէք, ձեր թագաւորին բարև էնէք, «էսլան մարդ կայ ախշարք»։

Էդ քաղքի մարդն էլ ինչ ղդար կայ, թափած վըր ճանփու.—«էդ ինչ զօռեղ մարդ ա էկե մըտ Մախմարի ջանին»։

Ըդ մարդիկ տեսան տսուէրկու խատ մարդ չլակ չկած՝ խըտ ճանփու կուգեան։ Գեացին, տեսան ընդոնց փայլըվներ. էդ մարդեկաց աչք առաւ էդա fon մարդիկ, փախան, գեացին թագաւորին խապար տուին թի, «քու փայլըվններուն էս աճեպներ խանած ա գլուխ»։

Էդա տեղ թագաւոր դալալ կուտայ կանչել, ինչ ղդար ասկա՛ր, զօռո՛ւն, մարդ կայ, պիրուն կը ժողուէ։

Էն ասկար, որտուն Թը կենայ էն տեղ, մենք դառնանք վըր Մախմարի ջանին, Բէճանին։

Մախմարի ջան վերուց.—Բէճան, քու գլխուն. արևուն դուրբան էղիմ, էլի, փախի, դնա, մկայ իմ խէր որտան կենէ, կուգայ վըր քե, կսպանայ։ Ասաց.—Չեմ էրթամ։

Ասաց.—Օր չէրթաս, իմ խօր ձին կայ, ձին Արաքսատան ա. համ չա՛լ ա, համ բաց ա, էս տաս տարի կապեր ա խամ, ճե օր ա տեսեր, ճե՛ արև առեր վերէն. իսաւ չմօտենայ, էնոր գետրին, էնոր ջուր, էնոր կեր յերդսէն կուտան, Թը կարցար, էն ձին բերիր. քսան դռւ կը ջարդես, խազար քու ձին կը ջարդայ. Թը չերբեցիր, դու մէկ մարդ էս, չատ սպանես, էրկու խարիր չան պտի սպանես. ինչ պտի սպանես, խո Թագաւորմ չես յաղտես։

Ասաց։—Ձին որ տեղ ա կապուկ։

Ասաց.—Իմ խօր քսան ձի կայ կապուկ, ըռեզ կապուկ էն, կերթաս էն ըռեզ. ձին կընցիս, դուռմ կայ էն տեղ, էն դուռ օր բացիր, էն ձին էլ էն տեղն ա, էնոր կեմ, Թամբ էն տեղն ա։

Տղէն մտաւ ախքատի խալաւ, էլաւ գնաց։

Գնաց էդ քաղաքի մէջ դարաղուլուԹեն քալեց մինչև յիրկուն, անգեան գեախ էլաւ տանիսի վրէն, տանիս ծակեց, ղինք ծակէն Թալեց տակ. նըւէր զարկեց, ուր մոմ կպուց. տեսաւ օ քսան ձի կապուկ ա դադ, գնաց տեսաւ դուռ մէջ էդ տեղ կայ, դուռ. բանալու բաօցաւ, ձին հռհռացմ դնեց. չուրայ կը Թալայ, չԹողի մօտանայ։

Բէճան ասաց.—Ես Բէճան էլիմ, էսի ձիմ էղի էսի ընձի պտի յաղդայ. խոսնելու բաօցաւ ձիու ճակտի պռճուկ բռնեց, գոմբմ զարկեց ձիու անկըճի տակ, սահաբմ ձիու խէլք գնաց. պուպուզուկ մնաց, էրկու օտաց վրէն։ Բերեց այար դնեց վըր ձիուն, զօլան, գուռուն պնդեց, կեամ զարկեց, դանչեց ուր Աստուած, քալեց գուս, ոտ դնեց գանկուն, նստաւ. «Մախմարի ջան դոր էս, էկայ քե։

Մախմարի ջան ասաց. Բէճան, բերեցիր ձին։—Խմ, բերեցի։

Ասաց.—ՂասաՃեք մէնի. էս խոտ կը յաղտես։

Մնաց, չուր լուացաւ, տեսաւ օ Թագաւորի որտուն էկաւ, աստղին նաւոզ կայ, ասկերին չկայ։

Ասաց.—Դէ, Մախմարի ջան, խաց բէ, ուտեմ. կայնելու վախտ չէ. էս օր մախուան խնդիր ա։

Թուաւ վըր ձիուն, ձին քշեց միյօրնի մէջ, Թը տաս ինք սպասեց, խարիր ձին սպանեց. իմիսի գլուխ կարեց, իմիսի աչք fonցուց, իմիսի ոտք կոտրեց, չանք իրիկուն որտուն կէս էն ջարդեց։

Բէճանն էր, դարձաւ էկաւ ուր տեղ, Թագաւորն է. էն էլ տեսաւ ուր որտուն, գնաց ուր տեղ։

Թագաւորի ձեռաց տակ ինչ ըռայաթ կար, թէկ տուեց, պիքուն ժողուեց, առաւ էկաւ։

Բէհան ասաց.—Ծաց բեր, ուտեմ։

Ծաց կերաւ, պրծաւ, ուրին-ուրին տուեցմիւս կեղի։

Կասայ.—Ջանըմ, իմ դաստաբէն դև ձի իմաց տուեց թը—«նեղ տեղ ընկիս, ես կը խասիմ. կայնի, տամ կրակ, տեսիմ ժամանակէ մարդուն բաղդ կայ, չկայ։

Կրակ տուել բաւցան դև ճազր, առջև կայնաւ։

—Բէհան, ասաց. էլի, ընձի կերակուլ էփայ.

Ասաց.—Դանէն քու կերակուլ ինչ ղնդար ա։

Ասաց.—Սուսուն ղիմար բրինձ ա, ղիտրմ եղ ա, մէկ օխըրի ջանդակ ա։

Բերեց, էփեց, դրեց դևու յառէջ. դևն էր կերաւ, պրծաւ։

Իչկեց, տեսաւ օր մարդ չմնացեր ա ախշրքի էրես, էկան։

Դև ասաց.—Բէհան, էս օր ես կռիւ կչենեմ, ես կչենեմ, ասաց. դու թամաշա չնէք։

Դևն էր, էլաւ, ընկաւ մրջ ասկրին. չուր մկայ իսաւ էր, մկայ դև ա. դև տեսնելուց ոչ, ախու մեռաւ, օր ախու պատռաւ։

Դևն էր, ետ դարձաւ, թագաւորն էլ ուր ասկար ուր ղօսուց ետ դարձուց,

Դևը թը կչենայ տուն, մենք դառնանք վըր թագաւորին։

Թագաւորն է, դանչեց ուր վէզիրներ, նազիրներ, դանչեց էկան օն իֆիլար. դանչեց ինչ օր ջոջ մարդ կէր, ասաց.

—Էկէք, ճարմ էնինք, մտաք խալխի մեղաց տակ։

Էդոնց մէկ վերուց.—Ճամբխու վերչէն քեռսուն գեազ լէնք, քեռսուն գեազ երկէնք փորենք, լուսուն էրթանք, կռիւ էնենք՝ օր էն մարդ գեայ, ընկի մրջ էն փոսին, բռնինք, ճար էս ա, էլ ուրիչ ճար չկայ։

Թագաւորն էր, դանչեց էրկու խարիր մարդ։

—Էս գիշեր, ասաց. էն ճանքախ պտի փորէք, չքէք. յէմալ չքէք օր խըտ գետնի գաւնին էղի, պէտու չէնայ։

Գիշերուայ մէջ փորեցին, չքեցին, պրծան։

Դևն էր, ասաց.—Էս օր էլ ես կերթամ կռիւ, վաղն էլ դաճ գիտես, ինչ գիտես, յէմալ էնայ։

Դևն էր, էլաւ կռիւ, կռիւ էնելէն գնաց, ընկաւ մրջ էդ փոսին. մկայ ախու չեն կանայ ոայ վըր դնուն, էն կոլիճ մարդիկ կուտան վրը դնուն։ Ինչ մարդ ընկաւ դևու ձեռ թակեց մրջ փոսին, պիքուն ջարդեց. էդ ահագին փոս ջանդակ էլին լցուաւ, դև էլաւ գուս, էկաւ Բէհանի տուն, ասաց.—Էլի՛. իմ խաց բեր, ես ուտեմ, էս խետ ես կերթամ։

Դևն էլ էլաւ, գնաց, մնաց Բէճան։

Թագաւորը էլաւ, չորս խատ մարդ խրկեց Բէճանին Թը թագաւոր բահլիճի էներայ, պուի գաս ղօնախ։

Թագաւոր ինչ էնեց, եաւսուն խատ ուր փայլվիններուց ջոկեց, բերեց, դնեց ուր մօտ, ասաց.

—Էն մարդ կը բերեմ տուն, օր խաց կուտայ, փրցիք վերէն. ձեղի տեսիմ, էնու ջոջ փերդ, էնու տկանջ Թողէք։

Էդ մարդիկ Բէճանին առան էկան։

Էդ տեղ կը տեսի օ փեյլվինները դողտուկ քըսա ու վըսա կէնին էն կասէ, «ես ղէխուն կը զանիմ.» էն կասէ, «ես գլխուն զանիմ.» էն կասէ, «ես աչիկ կը զանեմ,» ամեկը ուրին բանիմ կասայ։

Բէճան էդոնց կասայ.—Ախալրտիք, էլէք, գնացէք, ձեր ճժերու մեղք չընկի իմ վիզ, մկայ կնկեմ, ձեր վիզ կը բռնեմ, կը տփեմ էնա պատ, խազար տարի կպրի պէս եաք, էդ պատէն չպրծնիք։

Փայլեվիններն ա, ասին.—Մենք ինչ դաւի ունինք, էլան գնացինք։

Թագաւորն ա, կասայ .—Բէճան, արի, ես ու դուն իրեք օյին սադրըն խաղանք։

Սադրըն խաղցին. իրեք օյին զԹագաւոր տարաւ։

Թագաւոր ասաց.—Բէճան, դու քու գլուխ կը սիրես, իմ գլուխ կը սիրես, ինչ աչխըքի էրես քե կը զաւթայ։

Ասաց—Թագաւոր, դու սաղ մնաս, աչխըքի էրես ընձի բան չզաւթայ, մեկ բան կը զաւթայ։

Ասաց.—Էն մեկ բան ինչ ա։

Քու ձիու պոչի մազ բերես, էսանց կապես իմ էրկու բուդ, էն ընձի կը զաւթայ, ես գիտեմ, ասաց. դու իմ գլուխ կը կտրես. էլ ինչու չարչարանքով կտրես, իմ գլուխ կը կզեցուցեմ, կտրայ. ճամբուԹենով ընչի կտրես։

Ասաց.—Ես կուզեմ քու դուխաթ իմանամ։

Բերեց, կապեց տղի էրկու բուդ էտևանց, տեսաւ օ տղեն զաւթուաւ։ Ղանչեց ջալաւին, ասաց.

—Տարէք, էս մարդուն ջանցակ մազ-մազ բրդէք։

Ջալաւներն ա էդա մարդ առան գնացին, իրարու ասին.

—Մենք էսա մարդու գլուխ յորին կտրենք։

—Ախա ինչ անենք՝ չկտռենք, Թագաւորի ձեռնէն չենք պրծինք։

Թագաւորը ինչ գիտայ, դիչերը քեռասուն գեաղանոց խոր կուտանք փորել, Թալենք մըչ խորին։

Խոր տուեցին զարկել. բերեցին, Թալեցին խոր։

Թագաւորը ղանչեց ջալաւին.—Ջալա՛ս։

Ասաց.—Էն ինչ ա, Թագաւոր ապրած։

Ձեզնէ կուզեմ, Մախմաբի ջանի ջանդակ էնէք լօղում.լօղում.

Առան Մախմարի ջանն էլ գնացին։

Ջալաճներ ասին.—Թագաւորական աղջիկ ա, ճէ՛ սուր կը բանի վրէն, ճէ՛ թուր. մենք իմմլ լօղում. . . . էնինք։

Ասաց.—Միասակ չասլիկմ թողինք վրէն. միասակ թումպաճ մի, թընկի դէղի մէջ, խաց ժողուայ, ինչ գիտեն թը թագաւորի աղջիկ ա։

Ադա աղջիկ կընկի մըջ դէղին, խաց կը ժողովուայ, կը տանի, թալայ մըջ խորին, Բէճան կուտայ։

Շատ, քիչ, Աստուած գիտայ, ինչ դէրը կը մնայ էդա խորին։

Իսոնք թո մնան ուրենց հալի մէջ։

Բեանիմ՝ տարի արանքը կընցի, իրենք խատ իմաստուն մարդ կուգեան մըջ էդ քաղքին. իրեք, չորս չաբաթ էդ մարդիկ էդ քաղքին մէջ կը պտոտեն։

Աւուր մէկին Մախմարի ջան կիմնայ օր էդ մարդիկ իմաստուն էն, աչք վըր էդ մարդըկաց կը պախայ։

Օրմ էլ էդ մարդիկ կելին օ էրթան. Մախմարի ջան կընկի էտեններ, կասայ.—Ախպըտիք, դո՞ ձեր Աստուածը կը սիրէք, կայնէք, ձեզի բան մը կասեմ։

Էն էրկուս կայնան. էն մէկն՝ էրկսին ասաց.

—Ի՛նչ չուն գնայ, ինչ գել գնայ, դու կը կայնիք։

Էն էրկուսը ասին.—Մեզի տուեց Աստըծու սուրը, որ Աստուած չսիրենք, fաճr ենք.

Էն մէկն ասաց.—Օր յըմալ ա, կայնենք, չում աղջիկ գնայ, զա էն աղջիկ չմա դարեի տէր ա։

Աղջիկը էկաւ, բարև տուեց էդ մարդեկաց.

Ասաց.—Բարև՛ ձեզի, աղաներ։

Ասին.—Աստըծու բարին քե, աղջի։

Աղանեը, ասաց. ձեզնէ մէ բան կը խնդրեմ, դալամ միւրհեպ։ Թուղթ ունիք, էրկու խապար կայ ձեզի ասելու. ասեմ, գրէք, Աստուած ձեր բան յաջողայ։

—Ձու բան ինչ ա, ասեցին։

Ասաց.—Մախմարի ջան, դուխդուրի ջան Բէճանի կիրիճօա, Ռօստամի բէբաղդ։ (Հօգի Մախմարի, հոգի դուստր, Բէճան կալանաւոր, Ռօստամ ազերբախտ)։

Էդ մարդիկ իմաստուն էն, էդ աղջկայ ասել խասկացան. գրեցին, թուղթ առին, աղջկայ ասեցին։

—Ձու սրտի խորհուրդ չանք չկատարենք, չենք հանդստի. օրական մեզի խապար մըլիօն վող էլ տանս։

Շատ, քիչ, Աստուած գիտայ ինչ դդար գնացին. գնացին, աւուր մէկին քաղքին դախիլ էղան. էրկու իրեք օր մըջ էդ քաղ-

քին պատահեցին. էրթցող՝ գալացողից խարցուցին՝ էս քաղաք վի՞ քաղաքն ա։

Թը. «Էսա քաղաք Քանկայուղ քաղաք կասեն»։

—Էս քաղաք զօռղ փէյլրվընի՛ անուն ինչ ա։

Ասաց.—Զօռպա փայլրվա՛ն կը խարցուս։

—Խա՛, ասաց. զօռպէն կը խարցուցեմ։

—«Ռօստամէ կօռէ Զալ»։

Ասաց.—Մեր պատահածն էլ էդ մարդն ա. ինչ օր դու կասիս իմալ էն մարդու տուն պտի գտինք։

Ասաց.—Քաւ տուն չաւըրի, մարդ խարցըցեկով ախշարքէն կէլի։

Գնացին, Ռօստամի տուն գտան։

Ընձի պէս Ֆուղարա մարդմ նստուկ էր էն տեղ-պատի տակ, էդ մարդուն ասեցին.—Ա՛ռ էսա տաս օսկին. գնա, տես, Ռօստամ տունն է, թէ չէ։

Գնաց էդ մարդ, տեսաւ տունն էր, էկաւ էդ մարդեկաց ասաց.

—Շատ մարդ կայ մօտը, խարցուցին։

—Ցինք մէջի ա, մարդ չկայ մօտը։

Էդոնք գնացին ներս, բարև տուեցին. էդ էլ բարև առաւ։

Թուղթ խանեցին, տուեցին Ռօստամի ձեռ. Ռօստամ կարդաց։

—Վա՛յ, ասաց. Բէհան մկայ սա՛ղ ա։

Ասին.—Խա՛, սաղ ա, մըջ խորին ա։

Բերից իրեք օր էդ մարդեկաց ազաք, իքրամ, ինչ տեսս էննեց։

Ասաց,—Մ'ամչընաք, մի վախենաք. ինչ ձեր լեզուն բոլըրէ, էն ուզէք, ինչ որ ուզէք պտի տամ Բէհանին ուղուրին, ինչ տամ, կուրուս չերթայ։

Ասին.—Իրեք խատ ձի կուզենք քու խեծած ձիանքներուց։

Էլաւ իրեք խատ ձի ուր ձիանքներուց տուեց, իրեք քեռ էլ օսկի տուեց, ասաց.—Հալա ձեր աղէկութենի տակէն չէլայ։

Էնոնք գնացին ուրենց ճամբխուն, մինք դառնանք Ռօստամի վերէն։

Ռօստամն էր, էլաւ դալալ տուեց կանչել, ուր մարդիկ ժողովուեց, բերեց խարիր յիսուն ջորի, մալ-թամալ ինչ կէր, բարձեց վըր էդ ջորիքներուն, մարդիկաց ասաց,

—Իմ տան մուղաք կացէք, չուտ ես գամ։

Էլան, տուեցին ճանքախ, չատ, քիչ, Աստուած գիտայ, ինչ ղօըր էկան. էկան, մէկ նեղ ճամբխում ըռաստ էկան, ես՛ կանայ դէն էթայ, ես դէն. տեսաւ քեռաւուն խատ դև էլաւ, էդ բարվնի առէջն առաւ։

Ութսամ ասաց.—Տղա, էս տավար ընչի կայնան, գնա առէջ. սէս, չէղի ճանբախ նեղ ա, առէջ չկանայ էրթայ։

Տղէն գնաց. սեսաւ օր քեառասուն խատ դև դատ, չում դարձաւ, Ութսամին խաբաւ, էդ տղէն հախու պատռաւ։

Ութսամն էր, ուր գուրզ վերցնց, քշեց առէջ, ասաց.

—Նա՛, նա՛, դևեր, դու իմ անուն չլսերէք՝ դու ընձի չճանչնաք, չէ՛ ես Ութսամն եմ, ախչար իմ ձեռ զարն ա, չէ, ես Բէճանի քեռին եմ է՛։

Բէճանի ախպէր դև էդ դևէքներու մէջ կեղի, կը վերցէ, Ութսամին կասայ.—Ութսամ, ես, Բէճան էղեր էնք ախպէր, ես, Բէճան դևացերինք Սպահան, ինչ դդար ասկար, ղօտուն կայ, պիթուն ջարդերէնք։

Ասաց.—Ինչ էնեմ օր Բէճան թալած ա մըջ խորուն, իմալ ախպէրէս։

Ասաց.—Ես գիտի Բէճան էկերի տուն, ես ինչ գիտի թալած ա մըջ խորուն.

Էդա տեղ նստան խաց կերան, ուրխութեն էնին։

Բէճանի ախպէր դև ասաց.—Ութսամ, մեզի իզին կուտաս, առնեմ եուսուն իննը խատ ախպէր, էրթամ, էն քաղաք աւիրեմ. առնեմ Բէճան, դեամ։

—Հալա մի գնաք, ասաց Ութսամ, չաբաթմ, էրկուք մնացէք, նոր էկէք։

Դևէքներ էլան, քշում մազ տուին Ութսամին, դրին վըր ճամբուն, գնացին։

Ութսամ գնաց մըջ էդ քաղքին տախիլ էղաւ, գնաց խնդիրք մը գրեց, տուեց թագաւորին թէ.—Ես բուհար եմ, պարտքնոտէրեմ, էկերեմ էս տեղ, իզին տաս, իմ մալ սաղցուցեմ, տանեմ տամ խլղի պարտք, խլղի ձեռ չմնայ մեր եախեն, քու բախտ բանին էլ դիչեր, ցերեկ տուա կէնեմ։

Էդոր խնդիրք դուս էկաւ, ասաց։

—Էնոր իզին ա, իմալ ծախայ, թո ծախայ։

Շաբաթմ, էրկու մնաց մըջ էդ քաղքին, խնդիրքմէլ տուեց։

—«Աստուած ուր թուր կուտ էնայ, խլղի պարտք տուեցի, խաղալ օսկի էլ խէր տեսայ, խնդրեմ թագաւորից, իզին տա՛ս, ես բեասիպ-բիւսուպի մէկ խեմ էնեմ։

Ութսամն էր, էլաւ, դդալ օսկի, աման արծաթ ճարբեին խաց տուեց։

Էդ Մախմարի ջան գնաց խաց ուտելու, վրին կուչտ գնաց, չթողեց խաց ուտելու։

Ութսամ դալալ տուեց դանչել։

—Ո՛ն ο Աստուած կը սիրայ, ուր առէջի դդալ, աման տանի։

Ամենքը առան գդալ. աման, տարան։

Ռօստամ դանչեց Մախմարի Ջանին, ասաց.—Արի՛, քե բանմ՝ ասեմ։

—Աղջի՛, ասաց, քու անուն ինչ ա-

էն էլ ասաց.—Իմ անուն Մախմարի Ջան ա։

Ասաց.—Բէջան սա՛ղ ա թէ մեռեր ա։

Ասաց.—Բէջան Ցլաճ ձորի մէջ՝ քեառասուն գեաղանոց խորի մէջ սաղ ա։

Ռօստամ դանչեց ածպազին.—Ածպա՛զ, քեղնէ կուզեմ, ինչ. կերակուլ ես, իմ ախալէր կուտէնք. էն կերակուլից չքես։

Ածպազ չքեց, տուեց Ռօստամին. Ռօստամ տուեց աղջկան, ասաց.

—Տա՛ր Բէջանին։ Աղջիկ տարաւ Բէջանին։

Բէջան չում իրիկուն անօթի մնացած էր, չվնով խաց, էդ կերակուլ լչուց մըջ խորին։

Բէջանն էր, ասաց.—Ա՛խ Մախմարի Ջան, ես չում իրիկուն մնամ խորի մէջ անօթի, դու էրթաս գեղի մէջ էհՁ էնելու։

Ասաց.—Ի՞մալ էնեմ, խարուստ մարդմ էկեր էր, խեր կենէր, անգցայ։

Բէջան բլդուճմ էդ կերակուլից կերաւ, իմցաւ, տեսաւ էն կերակուլն ա, յինքն, ուր քեռին խրտ իրարու կերած էն։

Էնոնք կենան թը էն տեղ, մենք դառնանք Ռօստամի վրէն։

Ռօստամ քեալեց ուր բարխանէն անգեան գեախ, գնաց վըր էն խորին կայնաւ։

Գլեօխ կախեց մըջ էն խորին, ասաց.—Բէճան։

Ասաց.—Խրամէ.

Ասաց.—Ջան, չէ քու ձէն մէկ էլ ընկեաւ իմ յանկեանջ, թո Աստուած իմ խոգին առնի։

Էլաւ, էդ գևէքներու մազ տուեց կրակ։

Որ տուեց կրակ, քեառասունն էլ էկան, Բէճանի ախալէր գև մտաւ մըջ խորուն. Բէճանի ձեռներ արձկեցին, խանեցին։

Ռօստամ դանչեց Մախմարի Ջանին, ասաց.

—Էս քաղքի մէջ քե ինչ տուն խաց չտուե։ Նշանց տա՛ւ, քաղաք պտի աւրեմ, էրթամ։

Մախմարի Ջան նշանց տուեց, Ռօստամ էլաւ, առաւ գևէք, ընկեաւ մըջ յէգա քաղքին, յէմալ էնեց, ինչ ο Դաւիթի աւեր։

Էլան ուրենց բեռ, բարխանէն բարձին. Գանկայուզայ քաղաք, դմր իս, էկայ քե։

Էկան, էկան, խասան ուրենց քաղաք։

Կիվն էկաւ Բէջանի յառէջ, օ ձի խաղցուցայ։
Ձին քշէց վըր Բէճանին, ասաց։
—Ի՞մալ էս, Բէճան, քեզի ձիուց բերեմ տակ։
Բէճան Ռօստամին ասաց։
Իզիճ տուր, ես խըտ Կիվուն ձիաթողս խաղամ։
Էդա տեղ ջրինդ խաղցին։
Բէճան զարկեց Կիվուն քեամկից ճկրնեբուն, ճկրներ տուեց դուս։
Գեացին եօթ օր, եօթ դիշեր դումբ զուռնայ զարկին. Բէճան կարգին։
Էնոնք խասան ուրենց մուրազ։

ՍԱՄ

Մոկաց բարբառով *

Ժամանակով մէկ թագեաւուր կէր. մէկ տղայ կէր անուն անուն Սամ։ Էլաւ կռասպաչտ թագեաւուր մէկ ձը յորդղկից ընուն քնաղաք, էսաց.—Սա նա ձըն խիծնուղ տըլնը, եաճ եօթ տարուան խարջ տըտայ։
Ձըն բիրըն կան տուրն, մարդ չկէրցաւ խիծնէր։
Ջուաբ տարըն թագեաւուրը տղայ Սամըն։
Սամ իրի, ձըն էրիրըն խաս բաղչը մէջ, չուրս բոլուր բաջաճ քիշերէն։
Սամ թռաւ ձըիւ քեամակ, ձըն զՍամ վրցուց. դես տարաւ, դեն իրի, թռաւ վեր բաջաճէն ինի ընցաւ. զՍամ առըց, փախաւ։ Շատ, քիչ Աստուած գըտի. Սամ բանցրէն էզար ձըիւ գլխիւն, ձըն դառցաւ իրի, ուր թռած տեղ իջաւ։
Ջուաբ գնաց մատ թագեաւուր.—Ինիւ աչքը լիւս, քիւ տղէն խիծաւ զձրն։
Սամը խէր ջուաբ յորդղկից մատ կռասպաչտ թագեաւուր, որ խաչապաչտ թագեաւուրը տղէն Սամ խիծաւ զձրն։

* Գտմած է Սամսոար Բադրատսար պատմող Սախոճ։ Ըստ Սախոյի սա եւս Դաւթի ճիւղերէն է։

Նաբաւ Սամըց տանք, բըռմ ընկիր կնտաւ. հըմկն օր տը խըծնէր ձըն. տը էրթէր ավկուց:

Օրմ՝ քըցըն սար, խըազալմ փըյտայ էլաւ. ընոնց հուէջ։

Սամ էսաց,—Տղընիր, նա խըազալ վի ձըռւ ուտքերուն մըջէն ընցաւ. զանու վըզ տը կտռիմ։

Ջէյրան իրի. Սամը ձըռւ ուտքերու մէջվէ ընցաւ։

Սամ ընկնաւ յետին, չատ-քըչ Աստուած դըտի, ջէրան գնաց, մղուարըմ դռնով մտաւ Նիրս։

Սամ ձըռւց էջաւ, մտաւ Նիրս, տըսաւ պառաւմ.—Ահա, յուրի իմ խազալ։

Պառաւ էսաց.—Խազար բարով, Սամ. մըկայ քիւ ջէյրան կտամ քիւ ձեռ, տանըս։

Սամ նստաւ, խաց կերաւ. Պառաւ էսաց.—Տը քընիմ վրայ քիւ չոքըն։

Փնաւ, ըրըչկից անու դլոխ բանըլսամ կնտաւ, դեօռմ էրաց, պատկերքմ կնտաւ. էդիր ուր ծուց, իթուդ էլաւ դիւս։

Պառաւ տըսաւ որ կէյտ, էսաց.—Սամ, դիւր կըյտս, էրի, ձը առ, նըստ. գինա աղ պատկերքը տէր առ։

Սամ էսաց.—Դը, չհաճըմբ. բուդ պառաւ, իս Սամ ըլնիմ, իմ ձըռւ անուն Թուրաբ ըլնը, ես գեամ-գեամ, գքի առնիմ։

Պառաւ էսաց.—Չիւր ըղձը չառնիս, չըս կէրը զան առնը։

Սամ էսաց.—Մեռնըս, իս քի չըմ առնը։

Պառաւ էսաց.—Դը փուշմըննիս, դիւ գըտիս։ Կնյաս դաչտը մէջ, բազրկեանմ կգայ. տը գեան քեառսուն հարամիէ զան տը քալնին։ Դիւ տը կանչիս.—«Էս Սամն իմ, իմ ձըռւ անուն Թուրաբ իս։ Անոնք տը գեան յախռւ զուրինք տը Թըլին վար քիւ ուտաց, դիւ զան բազրկեանց տ'ազատըս, Թը սուխ էլաւ, չիս ձը չըս առնի. Թը աղուրխ էլաւ, չիւր ձը չառնիս, չըս կէրի զան առնի։

Սամ գինաց, խաղաւ ան դաչտ, տըսաւ բազրկեանմ կը Թալնին. կանչեց, էսաց.—Իս Սամ ըլնիմ, իմ ձըռւ անուն Թուրաբ. իմ ձեռնեն դիւր տը պրծնիք։

Հարամիէնիր հեկան, զուրինք Թալցըն վար Սամը վռւտաց, ասըցըն.—Մինք դիւր քցընք, քիւ ասգը ձեռքէն չպռծանք։

Սամ զանոնք ազատըց, տարաւ։

Պառաւ՝ չըկ Թռաւ Սամը յառէջ.—Սամ, էրի, ձը առ։

—Դը՛, չհաճեմը դեն, fաւsoռ պառաւ. մեռնիս գքը՛ չըմ առնը։

—Դիւ գըտիս. կը փուշմնիս. իմ ախռւս վար քի չգեայ. վար Թուրաբըն կգեայ, էսաց, Սամ. էս տեղէն կըյաս, էրկու ճանբաէ կգեայ քիւ յառէջ. էրկուսն էլ կերթայ Զին մայէն. մէկ ևօթ օր, մէկ եռսուն օր, դիւ կերթաս մօտխաս ճամբխուվ. դէվմ կայ վար

ճամբային. մը վախը, որ դիւ քիւ անուն կտաս, քիւ ձրու անուն կտաս. էն կդեայ, կինի քիւ ձեռ, վուտ, կըսպանիս դիւ դըտիս. չըս սպանիս, դիւ դահս։

Հանդիւց դացըն խասան դըվը տան մօտ. Սամ էսաց անունց.—Դիւ մնացէք. իս էրթամ որ իս ձեռնով իրի, էկէք։

Սամ գինաց դըվու տուն. կնէկ տեսաւ.—Խուղածին. օց ուր պուտուով, խաւք ուր թևով տանի չընցնի. դև կդեայ, քի կսպանի։

Սամ էսաց.—Թըլս դեայ։

Ըրկուն դէվ իրի, տըսաւ Սամ, ուր կնըկ տանիս կերթան, կդեան։

Դև կատղաւ, բօռաց, էն տեխէն իրի. զՍամ կըլ տըտէր։ Սամ կանչից.—Հը դըդի, իս Սամ ըլնիմ. իմ ձրու անուն Թուրաբ, դիւ իմ ձեռնէն տը պրծնիս։

Համա թիւքիր թուլացաւ, իրի ընկեաւ Սամը վուտաց վրէն.—Ամեն դըտի Սամ, ըզձը մսպանի՝ նա եօթ տարը որ ես ձի ասգըց փախիրիմ, իկիրիմ, իւմ քիւ ձեռնէն չպրծայ. իս քիւ դէլն իմ, ինչ գտիս. էցկուն էրա։

Սամ էսաց.—Որ ընցկունի, իս քի չըմ սպանի. էրի ըլի ձը մչակ։

Սամ կանչեց բազրկեաց բաշուց. էսաց.—Էկէք, դև սպանիրիմ։

Անունք չաւատացըն, ասըցըն.—Մինք կը վախանանք, զուր տեղ դև մի յաւէջ չսպանիս, մինք չընք գեայ։

Սամը ճար կտրաւ, էզար զդև սպանից. նուր անունք տըսան հաւատացըն, էկըն, նստան յընան։

Ան գըչիր մնացըն. առաւուտ էլան, բարցին հունդուց, քըցըն։ Ան դիւը կնըկ խատ ուրենց տարան։

Գեացըն ճամբաս, չատ-քիչ Աստուած գըտի։ Բազրկեաց բաշըք ու թագեաւուրը աղջկան խիտ. Սամըն ըսըցըն.—Մինք գըտինք դիւ ինչ ապով կըյաս Զըն մայինն Թըղ վողո ըլնը յեուջև Աստըծու մինք խասնիլիւն պէս քիւ սրտը միւրատ կատարընք։

Գեացըն, խասան Զընմայընը քեաղաք. ինչ Սամն էր, զթագեաւուրը աղբօր աղջկ վըրուց դինաց Թը թագեաւուր տուն. ինչ բազրկեան բաշըքն ին յըմեն մէկ ուր տուն գինաց։

Համա բազրկեաց բաշըք զՍամ մօռցան։

Մէկ օր Սամ կան կդէր քաղքը մէջ, տըսաւ զբազրկեաց բաշըն, էսաց.—Հէյ գըթի բէբախեաներ՝ յիւր ի ձի տուած խուսք։

Բազրկեաց բաշըն էսաց.—Սամ, մինք անուրվէ որ իկիրիք՝ դալ մի տուն չընք գեացը. յօր մէկ թուեար զմի կը տանը պատըւ. վաղ չէ, մըվէլ օր թագեաւուրը դորնը, մի տը կանչը, մինք անուս խաց բիրան չընք իտայ, ան տըտի. «Վրե դիւ իմ խաց բիրան չընք

խոյ». մինք տըսինք, «Մի խորխուրմ կայ, չիւր դիւ չը կառաբիս, մինք քիւ խաց մի բիրան չընք խոյ։ Սամ էսաց.—Դիւ գըտիք։

Մըկէլ օր Թագեաւուր զբազրկեաճ բաօրք բաֆլիճ էրաւ. խաց իդիր առէքիր, անոնք չը կիբրան։

Թագեաւուր էսաց.—Վրե՛ իմ խաց չգեայ ուտը։

Անուն ք ըսըցըն.—Թագեաւուր ապրած կենաս, նա տըղըն կը սիսնիս. անի էլ Թագեաւուրը տղայ ի, դիւ քիւ աղջրկ տաս անու. մինք քիւ խաց կուտընք, Թը չըս խոյ, չընք ուտը. մինք էկընք Ցլաճ դաշտը մէջ. ճարամի բաօրք բրլցըն վար մի, ան զմի ազատըց, անդիւց էկըք սև դիւու մհէեաճ. զսիւ դև սպանից, անդիւց էլ մինք բրծանք. ան աղիկուքին ինչ խիա մի էրաւ. մինքն էլ խուստ իկինք որ քիւ աղջրկ տաս գընք։

Թագեաւուր էսաց.—Որ արնցկուն ի. աղջրկմ դուրբաճ ըլնի ձիւ։

Բազրկեաճ բաօրք էլան, գնացըն. Թագեաւուրը ուր մէջ փուշմճաւ, էսաց.—Նա ինչ էր իս իրի. իս տուր. տըսնինք իմ կնըկն էլ կտայ։

Էլաւ գինաց, մա կնըկ, էսաց.—Կնը՛կ, սգնայ բանմ էրի, մըհա դիւ էլ կտաս։

Թագեաւուրը կնըկ էսաց.—Իմ աղջրկ մեռնը, իս անու ճաօ չըմ դնը վար Սամը Քիւքիրիւն։

Թագեաւուր էսաց.—Կնըկ, պա ինչվա էնընք, իս ինուր իմ տուր. ալ չըմ կէրի իմ խուաք յետ առնը։

—Մնայ, բաեպիրմ տրսնինք. զՍամ վորողկինք արնցկուն տեղմ, որ յետ չգեայ։

Թագեաւուրը կնըկ առաւաւտուն խըրընդցաւ- ջուաք տարան Սամըն.—Ձիւ զուքանչ խըրընդցիր ի. սիւ դիւու չկեաճ կուզը, որ ուտը, սաղանայ։

Սամ էլաւ, խիծաւ ուր ձըն, քեաղքից յէլաւ դիւս. ամա չը գըտի դ'ինը տէյա։

Պառաւ Թռաւ դիւս, էսաց.—Սամ, զձը կառնը՛ս, չըս առնը։

Էսաց. - Ջհյնըմի դևն, էհՁթոռ պառաւ. իս Սամ ըլնիմ, իմ ձըռւ անուն Թուրաբ, իս գեամ-գեամ գըխ առնըմ։

Պառաւ էսաց.—Դիւ գըտիս. կը փուշմընիս չիւր ըզձը չառնըս, չըս կէրի զԹագեաւուրը աղջրկ առնըս։

Սամ էսաց.—Դըռդըռան պառաւ. առիրիմ, պրծիրիմ. իմ գիւքեանչ խըրընդցիր ի, տիյամ անու խըմար սիւ դիւու չկեաճ բիրիմ, որ ուտի, սաղանայ, ընը աղջրկ տայ զձը։

Պառաւ էսաց.—Սամ, իմ սիսուս վարքի չգեայ, իմ սիսուս վար Թուրաբըն կգեայ, կըյաս, խասնըս սիւ դիւու մհէեաճ, ան տընը քիւ յեղջև. դիւ բօռայ, սա,—ախ Սամն իմ, իմ ձըռւ

անուն Թուրաբ, դիւ դ'ինէր իմ ձեռնէն տը պռծնիս»։ Ան ձի ասդիցնի, փախը, դեացը ան տե, որ քիւ անուն, քիւ ձրու անուն լսի, կը ճանչնայ. տի գայ, ինի քիւ ձեռ վուտ. կըսպանըս դիւ դըտիս. չսպանիս դիւ դըտիս. սաղ կը բռնիս, բիրիս դիւ դըտիս։

Պառաւ կուրսաւ։

Սամ քշեց, գինաց, խասաւ սիւ դիւու մհեեան։

Դև յելաւ յառէջ, էսաց.—Հա դըտի. ես դչերով քի կան կգէր. դիւ ցերեկով ընկեար իմ ձեռ. ալ դիւ դ'ինէր տը պռծնըս իմ ձեռնէն,

Սամ բռնաց վիրուց, էսաց.—Հա, հա հա. իս Սամն իմ, իմ ձրու անուն Թուրաբ. դիւ դինէր տը պռծնըս իմ ձեռնէն։

Դև որ լսաւ. իրի, զընք էթալ Սամը ձեռ վուտաց.—Եամաճ, գրծի Սամ. իս քիւ ասգը դարդէն նա՝ «ոօթ տարը կայ փախերիմ, իկիրիմ ոդայ. ոդինց էլ քիւ ձեռնէն չը պռծայ»։ Էսաց Սամ.—Որ աընցկունի, զքի չըմ սպանը. սաղ տը բռնիմ, տանիմ։

Ջուաբ տարան Թագեաւուրըն Թը Սամ զոխ դև բռնից, իրի. կը մուրթիս ջրկեաւնիր կը խանիս, սա՛ղ կը պախիս, դու գըտիս։

Թագեաւուր տըսաւ Սամ զդիւ իրի, էսաց.—Կնը՛կ, սգնայ չրինը, մինք ուրաղկիցընք դիւուն ջկեաւ բիրի, ան զդև սաղ իրի, ճար չկայ, զմի աղջրկ տ'առնը։

Կնրկ էսաց.—Թագեաւուր, ինչ խամ կէնըս. նա ոօթ տարը կայ վրչապմ փեյցայ իլի մի քեաղքը կուշտ. օր քեաուսուն էրընջ կը տանընք անու բաժրն. յօր մէկ կուտը, որ քեաուսուն օր թմաւ. քեաուսուն էլ կը տանրն. դիւ կանչի զՍամ, սա.—Դիւ կտրըճ էս, գինա, վչապ սպանի. աղջրկ պտակիմ վարքի։ Որ ան գինաց. վչապ զան կուլ տայ. մի պարաւ անու ձեռնէն կը պռծնը։

Ջուաբ տարըն Սամըն.—Էրթաս վչապ սպանիս։

Սամ էլաւ, գինաց. խասաւ մադարի դիւս. վրչապ զուր բեն քեշեց, որ Սամ կուլ տէր։

Սամ վուտքիր տարաւ թախ գնու բիրան, զուր Թուր յարկուղ բռնից. վչապ կուլ իտու Սամը. Թուր կտրից չի՛ր վչապը կէս. վչապ Թուլցաւ, ընկնաւ։

Սամ զվիշապ փրթից, թափըց ան տե։

Խաբար տուրն Թագեաւուրըն.—Սամ զվչապ սպանից։

Թագեաւուր էլաւ, գինաց մա Սամ։

Սամ խա Թագեաւուրըն կան կգէր։

Թագեաւուրը ախրօր աղջրկ, Թագեաւուրը աղջրկ նատիրէն փանչարէն քամաճա կինէն. զՍամ տըսաւ Թագեաւուրը աղջրկ, էսաց.—Կո հան ջնել կը տիսնիս. քեանիմ կտրիճի. քիւ խամար իկիր յուդայ։

Թագեաւուրը աղջրկ էզար մանչ անու գլխուն.—Իս իմ պատ-

կիրք դըրիմ վար մանըն, չիւր դան չառնը, ըզձը չը կերի՝ առնը։

Էսաց.—Ինչ պատկիրք քիւ մատ . . .

Էսաց.—Աղուրթ կըսիս.—Խա՛, ոլա, Էսաց.

Սամ գառցաւ, իրի, Թագեաւուրը կնըկ տըսաւ։

Կնըկ Էսաց.—Էսա էլ չէլաւ. դորիս անմախութինի խնձուր կայ հօթ դևու սրճօր, ձը խամար բիրի, իս սաղնամ։

Սամ խիծաւ Թուրաբ, գինաց։

Քաղքէն էլաւ, պատաւ իրի յառէջ, Էսաց.—Սամ, դիւր տիյաս։

Սամ Էսաց.—Տիյամ իմ գինքանչի խամար անմախութինի խնձուր տը բիրիմ։

Պառաւ Էսաց.—Սամ, քի կըսըմ. էրի, ըզձը տո. նուր Թագեաւուրը ալջրկ առ։

Սամ Էսաց.—Դուդուան պառաւ, չեյնըմի դուն. մեռնըս գքի չըմ առնը։

Պառաւ Էսաց.—Իմ ախսուս վար քի չգեայ. իմ ախսուս վար Թուրաբրն կը գեայ, որ կիյաս հօթ դևերու սրճօր. անունց բաղչի պատիր պօղպատի ի. Թուրաբ կը կապըս բաղչի գիւռ. գքիւ դև կառնըս, չըրծակուէ կը մանիս նիրս. դևաղտիկ գինձուր կը կոռխս, կը փախիս. անունք կինին յետիւ քի. քիւ դև խատ անունք կը կոռւր. չիւր դիւ խասնըս մատ Թագեաւուր. նա դև տը գեայ. խասնը քի. դիւ գինձուր։

Սամ ուր ձըն քշից, պառաւ կուրսաւ։

Սամ գինաց հօթ դևերաց սրճօր խատաւ. Թուրաբ կապըց գիւռ. չրծակուէ մտաւ նիրս. գեաղտըկ գինձուր կոռից, փախաւ։ Անու դև խատ հօթ դևու կոռուաւ։

Սամ խիծաւ Թուրաբ. դև խատաւ Սամըն. առից խնձուր. իրի, խատաւ քաղքը մօտ։

Պառաւ իրի յէռջև. էրկու գունդ փուխընդ վար խացըն դրած, խոռ անու։

Սամ Էսաց —Պառա՛ւ, նա ինչ փուխընդ ի։

Էսաց.—Թագեաւուրը ալջրկ մեռիր ի, անու ժամն ի։

Որ անցկուն Էսաց. Սամ չխրան ընկնաւ. մեռաւ։

—Դև, Էսաց. ինչխ անինք։

Գինաց քաղաք. կապըց գձըն խաւ, պախից։

Դաւրէչմ իլաւ, ընկնաւ ախչարք, գինաց, խատաւ Սամը խօր քեաղաք. «յաղկ, soup» էրաւ, մտաւ նիրս. Թագեաւուր Էսաց.—Դաւրէչը բաժրն տուէք թի էրթայ.—Ա՛ռ, գինա քիւ բանին Էսաց։

Դաւրէչ Էսաց.—Թագեաւուր, իս տիյամ. գքիւ տղայ Սամ բիրիմ։

Թագեաւուր էսաց.—Որ դիւ բիրիս գՍամ. իս իմ թագեաւուրիւթին կտամ քի։

Դաւրէչ գինաց, խասուց մատ դև, էսաց.—Տանավը՛ր, դիւ ինչ մարդ էս, որ քիւ աղէն չկէրի պրծնի։

Դև էսաց.—Իս ինչխ ինիմ։

Դաւրիչ էսաց.—Իս իմ թավարէն տը դնիմ վար իմ թիւրին. դիւ քիւ առամքիր, ընկնինք մանչ քաղքըն. վուվ դէմ առնը, վըզ կըրինք, չիւր մի աղէն կը բիրին, կտան մի։

Դև. գԴաւրէչ էլան, ընկեան մանչ քհաղքըն. վուվ տրսան վըզ կարեցըն.—Իլա՛հ մի աղէն տը բիրէք։

Պառաւ թռաւ Սամը յառէջ, էսաց.—Սամ, էրի. սա թի, եթագեաւուրը ախչիկ չը մեռիր, սաղ ի։

Սամ էլաւ, մարդ իրի, խիճաւ իւր ձրու վրայ, քչեց վըր թագեաւուրը դռան. զօռով ախչիկ առըն։

Էլան քհաչին իւրենց երկըր խասան։

Գաղքիմ կուչտ, դաչտը մէջ չատ մի կէր, նստան։

Պառաւ թռաւ, էրի յառէջ, էսաց.—Սամ ըզձը կառնը՛ս։

Էսաց.—Կորսուի դեն. մեռնըս, զքի չըմ առնը։

Պառաւ խարցնէց. Սամ էսաց.—Զըմ առնի, չըմ առնի, պառաւ։

Էսաց.—Սամ, պողպըտէ սօլ տը խաքնըս, պողպըտէ փէտ տը բռնիս ձեռդ. յեվ մաչաւ. զմի տը գտնիս.

Պառաւ ծափ իզար յիրար, էլաւ էղվընիկ. էրկուսն էլ էլան, թռան, գնացըն.

Սամ էլաւ, պողպըտէ սօլ էտու կարէլ. ընկեաւ աչխարք։ Մնաց դև, դաւրիչ. դաւրիչ գինաց մանչ քհաղքըն. էլաւ Ֆռնճի. դև տաբաւ զԹուրաք խան կապից, մնացըն.

Մինք խապար Սամից տանք։

Շատ, քիչ Աստուած գըտի, օրմ Սամ ալընգկուն անօթըցիրէր, կատամէն կտո իրէր, պառկեր էր վըր յախբիրին, էլ չկէրի յիրար առնը։

Տըսաւ էրկու եղվընիկ էկան, թռան վըր ծառըն։

Պառաւ կանչից, էսաց.—Սամ. ըզը կառնիս։

Սամ թուլ ձէնով էսաց.—Խա, կառնիմ։

Պառաւ իրիք դիր էսաց.

Սամ իրիք դիր էսաց.—Խա, կառնիմ։

Պառաւ ծափ իզար յիրար. էրկուսն էլ իլան ախչիկ, կանան Սամը դէմ։

Սամ չճանչցաւ որն ի թագեաւուրը ախչիկ, որն էր պառաւ։

Պառաւ ծալի էզալ յիրար, իրիքն էլ էլան էղունիկ. Թռան, գնացըն մատ դաւրիչ, մատ դէ։

Տըռաւ, ճանչցան զմէմէկ. էլան, գնացըն Սամը խօր քնաղաքը տըսան Թագնաւուր մեռեր ի։

Սամ նստաւ թախց. դաւրիչ էլաւ վուզըր. դևն էլ էլաւ սարսափեար։

Նուր եօթ օր, եօթ գշեր խաբանիս էրաւ. էրկուսն էլ աւըց։

Իրկնից իրիք խնձուր իրի, մէկ ձի, մէկ խեճաք էրողըն, մէկն էլ Սամըն։

6

ՂԱՆՏԻԼԻ ՍԻՅԱՓՈՒԾ

ԵՒ

ՀԵՕՋԲԷԿ

Մակաց բարբառով *

Եամանայ քաղաք մէկ գիւղեարմ կէր, ադ գիւղեարըն էլ մէկ տղէմ կէր. մէկ օր էսաց.

—Այ որդի, իս կը մեռնիմ, էս ակնունք Թէ պակաս, ալ չէրի, դիւ յիսիւէն կերթաս. քիւ խօր սանիյաք չկուրիսիս։

Խէր մեռաւ. Թէ տարիմ Թէ տաս տարի մնաց, ակնունք խըլըսաւ, ալ ակնունք չէրի։

Խզմեքեարմ կէր անիւ, էսաց։

—Իլի, մի հեօղ էրայ (պատրաստուիւն տես), էրթանք իտաւ ակնուքին, բերինք. մի սանիյաք չկորուսինք։

Ատդունքն էլ էլան, գիւրեննց հեօղ էրըն. ճանբախ ընկեան գնացըն. գնացըն մէկ քաղաքմ դիւս էլան. մանչ քաղքըն կան էկըն, մեծ կոճախմ տիսան։

Տղը անուն Հեօղբէկ իւ,էսաց։

—Գշիր էրթանք ասա մի՛ծ կօճախ կօճախ ըլլըք մինչև առաւուտիւն, առաւուտիւն կըլլինք, կերթանք։

* Պատմած է Գիւմեկաց գիւղացի Ջաւիկ սարա երգերն հայերէնի վերածել տաս դժուարին է, մինչեւ անգամ պատմող Ջաւիկ չկարողացաւ. Տիգրանակերտցի Տիգրան Կոլոտեանի օգնութեամբ բարգմանած եմ, սակայն տաս թերի։

Էլան գետացըն ան մի՛ծ կօնախ, դիւռ չալիցըն, դիւռ բացըն, գետացըն նէրս։ Տխան մէկ մարդմ կայ ան տե, նստած։

Էդ մարդն էլ խաց, կիրակուլ իրի, կերան մինչև յիրիկուան, յիրիկուան տխան դիւռմ՝ ան տեղն էր, բացուաւ. կնըկմ դռնէն դիւս էլաւ, ծափիր էղար, «Հայ վախ» էրաւ. բիրանք սըվի ընկեաւ գետըն։ Հնօզբէկ ուր ծառան էլ ատե ամչըցան։

Էդ մարդն էլ էլաւ, գկնըկ գրկից, տարաւ յօդեն, դիւռ իդի վրէն. իրի նստան մատ ուր մարդիր։

Հնօզբէկ էսաց.—Իս ինչ բան էր, էլաւ։

Էդ մարդն էլ էսաց.—Ասրկ, եօթ տարը կայ, ան կնկեան ամալ նա ի. ամին յերկիւն տը գեայ, «Հայ վախ» տ՛ենէ, ծափիր տը զանի, վէր ընկնը։

Էսաց,—Ան կնըկ քիւ ինչն ի։

Էսաց.—Իմ կնըկն ի, ամին յիրիկուն անիւ ակնախս կգեայ վերըէն. վեր կընկնը մինչև մէկէլ յիրիկուն, մը՛նչ կը մեռնը. մը՛նչ կը ժրի։

Թանբի ըլ մըչա մեզին ղը կեան.
Սեար շուշղնա մը նա չազինա
Հարա դենա սեար մե չորկ կեաւնա,

Լազ ղը մըրմ ռօժի շաշան

Մա հլչանիւ տան սար չորկ Քարզան

Հիւն խոսի կեան խոսի ղը հարիւն.

Թանբի ըլ մեաչայի մեզըն բը կեան.
Սեար շուշղնա մը մե չազինա.
Հարա դենա, դենա սեար մը չորկ չաւ ռաշա:

Բեժիզրկա դեա, ղըրեմ, ըռահանայ.
Ըռահանայկ բեար բաղեանի.
Սըրան, եվարան խնաւ ավկրը բիւ խաչ կեարտանի.

Կեայ, դիւ ըռամիւսանայկ բըտամի,

Բըչա մըն բաւեժրն նաւ ակրռ չեան-նամի:

Չի ղրկեամ հայկեմրն բեաչանկազան
Չարի ըռունշղնա ատմարան խտըրնայ դրիզդազան.

Դըրսրկա մը աւտաչա խոսի ավա.
Դեարբյի խարիբան բը մըրմ, նա կեան մա բու մրազան.

Գունեջրկ մը դաւրա, չրմա շանիան, խաւնայ,

Մինչև ուխտավայրը արի իմ հետ
. . . . .
Ով որ մեզի բան ասէ-բանբասէ,
Ասա, «Ասուծոյ Թշուառ որբը ասաց իրաւունք էր»
Ես կը մեռնեմ չորրորդ օրը (չորեքշաբթի),
Չիս զոյգ փայտի վրայ վերցուցէք.
Եթէ Ասուած կը սիրէք, Ասուածուն կը հաւատաք.
Պատուիրեցէք մեծ մօլաններուն,
Լուացուելուս վրայ չխաղան.
Մինչև դան մեր վրայ զոյգ սիրահարները.
Ես կը մեռնեմ վեցերորդ օրը (ուրբաթ),
Մեզ վերցնեն զոյգ մը դագաղի վրայ,
Թէ Ասուածուն էք, Ասուածուն հաւատաք.
Պատուէր տուէք մեծ մօլաններուն.
Թող իմ լուացուելու վրայ չդրաղին.
Մինչև Թխաչնայ զոյգ մը դան իմ վրայ:
Հասակդ, կասեմ, համեմի (բոյս).
Համեմ մը պարսպի առաջ (բուսած)
Աւաւօա, երեկոյ գինը կը ձգեր խալ վզին.
Քա աղջիկ, դու համբոյր մը տուր ինձ.
Թող գիս ձգեն դժոզքի կրակի մէջ.
Ինչ ասեմ իմ չուառ վիճակիկս.
Նարնջագոյն, Թխագոյն (սիրականները) նուած են.
Ասուածոյ Թշուառիս վախը այս է,
Պանդխտութեան դռները մեռնելու չհասնենք մեր փափաքին.
Իմ գիւղը հարսանիք է, ուղարկած են քուն չգայ.

Դրսում գուն ու չինար բրդեհատրե Վախենամ գիւղացիք ու դրացիք զարթնին.
Մա բրնս բհար բհաչայի: Մենք մնանք վտանգի առաջ:

12

ՀԱՅԴԱՐՑԻ ԱԼԻ ԱՂԱՑԻ ԵՒ ԵԶԴԻ ՔՕՔ ԱՂԱՑԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Թարգմանութիւն գրական բարբառով)*

Ալի աղան պատուաւոր կերպով գնաց Քօք աղային տուն, որ նրա աղջիկ Զարիֆ խաթունը կնութեան ուզէ: Քօք աղան տունը չգտաւ, նա Վան էր, որով վերադարձաւ իւր տուն:

Քօք աղայի եղբայրը Սրևան էր, դարձաւ իւր տուն, լսեց որ Ալի աղան եկած է եղբօր աղջկան ուզնկան. չընդունեց, առաւ աղջիկը 50 ձիաւորով որ տանէ Վան: Ալի աղան լսեց գայթ, մի հնար մտածեց, որ աղջիկը իւր հօրեղբօր ձեռքից խլէ: Նա հաւաքեց թոռըններըը (ցեղապետներ), ձևացուց թէ իբր թոռուն մի մեռած է, պիտի տանեն թաղելու: Հարիւր ձիաւոր իւր հետ առաւ, գնաց Բեկրի Քօք աղայի գիւղի միջով և նորա դռան դէմից անցնելու վերայ էր. տեսնուեցաւ ձիանք զարդարուած, մի ձիու վերայ ևս պաթաթուած թաղիք մի դրուած էր իբրև մեռած. այս մէջացին Քօք աղայի ընտանիք և երկու աղջիկներ դուրս գան, որ հանդիսատես լինին և լսեն թէ քրդեր ինչ եղանակով «Վլօ» կերգեն:

Շարոյի Սլէման յանկարծ բռնութեամբ հանդիսականներուս

*) Այս պատերազմի ամբողջապէս մի գիչու, որ նահատակեցի կերպով գրի առի, վերածելով հայերէնի: Եզդիներէ ևս լսած եմ, որ բոլորովին ի նպաստ իրենց կը պատմեն. որոյ համառօտութիւնը ևս այլ տեղ զետեղած եմ:

մինչեւ կը յափշտակէ Զարիֆ խաթունը. կառնէ ձիու վերայ և քշեն կերթան։

Քօք աղան տունը չէր, հաւար հասուցին, որ գայ, մի հնար մտածէ։

Քօք աղան եկաւ, «դէֆթէ հաւարէ»-ն ածեց, 366 գիւղի եզդի ցեղակիցները խմբեց. նաև լուր յղեց Վանայ Ասատ փաշային, թէ ինքը գնալու է Հայդարցի Ալի աղայի վերայ պատերազմելու, փաշան ևս իւր բանակով օգնութեան գայ։

Ալի աղան ևս լուր յղեց Քօք աղային, ասաց.—Ձո ասելն ինչ է, մենք քո աղջկան օժիտը միլիօն տանք, արի թոյլ տուր պատրաստուինք։

Քօք աղան չընդունեց, իսկ Ալի աղան խոստացաւ 13,000 ոչխար տալ, բայց դարձեալ չընդունեց.—Կռիւս, կռիւ է, ասաց։

Դարձեալ Ալի աղան խոստացաւ Թուրքներուս աղջիկներէն 3 աղջիկ տալ Զարիֆ խաթունի փոխարէն, բայց դարձեալ չընդունեց։

Ասատ փաշան Ալի աղային լուր յղեց թէ Զարիֆ խաթունի փոխարէն իբրև աղախին Գասըմ աղան տայ իրեն *)։

Հայդարցի Թուրքները ասացին.—Մենք չենք ընդունիր այդպիսի անպատիւ բան, կնոջ փոխարէն կնիկ կառնք և ոչ մարդ։

Սկսան երկու կողմից պատերազմի պատրաստութիւն տեսնել։

Ձօրաժողով արաւ Վանայ Ասատ փաշան ընդդէմ Ալի աղայի։

Լուր յղեց Հաքարցոց, Հարթալցւոց, Ձէլօներուն, Գիլիսցիներուն, Շերվանցիներուն, Համզա բէկ Գրպազ աղային, Շինու Շաբաւցիներուն, Մախսօյի Շինօյին, Մարղըկցի Օմարին, Փութկեցւոց ցեղին, Հօզպահօզցիներուն, Սէտքեսցիներուն, Տևարթուխուպցիներուն, Հաւրկցիներուն, Մուկուրցիներուն, Սզոխխանէներուն, Մկրանցիներուն, Ներինցիներուն, Լալկեաւրներուն, Չուլամերիկցիներուն, Գուզէլդերէցիներուն, Կարճկանցիներուն, Կաւաչցիներուն, Տուբվանցիներուն, ոլք եկան հաւաքուեցան Ասատ փաշայի մօտ 12,000 ձիաւոր, զորս Ասատ փաշան առաւ եկաւ Գործոթ։

Ալի աղան ևս իւր ձիաւորներով Սոլուզ-Բուլախէն արշաւեց Սիւլուկլու (մերձ ի Դարազիատին) հանգիստ առաւ, ուտի Պէկէճուկ, Մայէթլու, Զալուքլու, Տիրէքլու, Թիմարայ դաշտը, Ալիքաշայ, Ռէզիա Կէօնքէր, ուր հանդիպ Ասատ փաշի իւր վրաններըը կանգնեց։

Իւսուֆի Մամատ աղին թուղթ դնաց ի Մախաթ — մերձ ի Մակու։

---

*) Գրեթէ կը ծաղրեմ թուրքերս, որ նասկցնել կուզեմ թէ առաւագէս եւ վերջ եմ օսմանցիք։

Նա ևս հաւաքեց իր ձիաւորներէն, էկաւ դաշտի մէջ իջևանեցաւ. ընդաւ ճանապարհ, իջևանեցաւ Նապի գիւղ, ապա Ալան, Կեօլ, Ռավոճին, Գըրխլար, Սարըչիման, ապա դնաց միացաւ Ալիի բանակին։

Նամակ դնաց Պաքիրի Հասան Չօրավացուն, նա ևս իր խըմբով դնաց Թուճի, ապա դաշտի կամուրջի վերայ, ուստի Կանթարայ դաշտի վերայ։

Չալալցիներուն նամակ դնաց. Աղկիօլ Հասան ըէկլին, որ եկաւ իր ձիաւորներով Հասարնեը իջաւ, ուստի Այ-պզակէ, ուստի Տօշուրման, Ղալի կիօլ, Պալասօր (Ակալաղայի մէջ), Կարմիր դաը, ապա եկաւ Կարմիր ջուրը և խաժըք-խաթեանը բռնեց—տեղաւորուեցաւ։

Կամ և Բենաբլու նամակ դնաց Գըզլբաշ օղլի Մուսա աղային. նա ևս իր ձիաւորներով եկաւ, Շահսուար իջևանեցաւ, ուստի Կարկըը և Սօրմըճան։

Ալի աղայի պատրաստութիւնը 3000 հոգու հասաւ, որք Խաչայ քիլլը դաշտը բռնեցին։

Լուր տուեցաւ Ասատ փաշին՝ թէ Ալի աղան պատրաստ է քոռդէմ կռուելու։

Լոյսը դեռ չէր բացուած, օսմանեան բանակը յառաջացաւ. նաքա հանեցաւ Շիկակցիներու, ապա Շիրվանայ, Պիթլիսի, Ձելոներու, Շկութի, Մարզըկցիներու խումբերն կարգ կարգ։ Սրանցից 26 ձիաւոր յառաջացան։

Ասատ փաշան 12,000 ձիաւորով և 800 հրացանաւորով Պուխուբա-խանէի առջևը բռնեցին։ Ջալալցի քաջ Իւզբաշին և Օսմանցի հարիւրապետ մէ կանգնեցան դէմ առ դէմ կռուի. սորա հետևեցան երկու յոդմ կազմ, պատրաստ կանգնած բանակներն։

Պատերազմ սկսաւ չաչխանայով, ատրճանակով, թրով և վահանով. հրացաններու ճայթիւն, թրերու ու վահաններու չխրտոց բռնած էր աչխարհ։ Ձելոներ ամրացած էին քարերու և ծերպերու մէջ. հրացանի ծխից դաշտը մթնեցաւ, աչխարհի վերջ եկաւ։ Ջալալցիք փախան բանակի առջևից և ձայն ձգեցին թէ Ատամցիք յօդնութիւն հասան. Ատամցիք ևս փախան։ Առաջ անցաւ Ճանկզեռի (ոսկեձեռ) Ալի աղան. ձայն ձգեց Չորսայ գնդին, ասաց.—Մեռնել կայ, փախնել չկայ։

Առաջ եկան Շարօյի անէն Սլէման, Բէքո, Նատր, Հաճի Միրզա աղաներն, Շէխ Սլօյի Ահմէն։ Շամկցու տնէն առաջ եկան Ամարինի Ալօն։ Կրկին ձայն ձգեց Ալի աղան։

—Այսօր քաջ մարդերու օրն է։

Բայք իրենց կրծքեր տուին գնդակներու դէմ. գարձեալ ծխից մութ պատեց տչխարհք, խաւար տիրեց, Մսրրի Թրերու չփշրփոցն ձայնը ականջ կը խլացնէր։ Նաղարի նիզակներու իչխոցն բարձրա-

ցաւ, Մանակի նժոյգներու նռնբռուցը ելաւ, դաշտ լցուեցաւ։

Մեծ կռիւ մի տեղի ունեցաւ. ականատես վկաներով, քաջքաջ մարդեր առիւծաբար կը մռնչեն. Ալէմանի աղան—Շարօյի ընկերը մռնչելով պատերազմի դաշտի վերայ կերթայ, կգայ, հարուածհարուածի վերայ կտայ, բայց ձինը չնեղացնէր. նա մի հարուածով երկու դրօշակիր օսմանցի սպաննեց, չրջեց գնաին։

Մչուչ ու մառախուղ է, չէչխանեներու գնդակ ղը՛ժ-հա-ղը՛ժ կգայ. Օսմանլուի զօրքից որը մեռաւ, որն ևս ձինք տուեց լիճն, կոբսուեցան։ Ալի աղան նրանց կանչեց.—Հա գիդի, հա գիդի, լուր տարէք Ասատ վեզիրին, որ ծառաներուն թաշակ տալով կշտացնէ. Բերկրուայ սայլեր մինչև այսուն հասաքին այս գեղեցիկ պատանիներու դիակներ և աղաներու աստկածներ կրեն։

Շիլակայ զօրքը փախած էր. նրանք դարձան իրենց տներ. երկրացիք մանր մունը կը հարցնէին.

—Ձեր տուն կրակ ընկնի, դուք կասէիք, մենք կերթանք ոսկով ու կարմիր հագուստով կանայք կը բերենք, կարմիր ու սպիտակ ոչխար կը բերենք. այժմ ինչ մնաց Օսմանլուի, Շիլակցու ու Ճէլօյի տուն. 12,000 դիակ Կէօսիւրմի ձոր բուդ ենք տուած, կը հաւատամ—չէս հաւատար. Օսմանլուի երկիր 15 կարմրադլուխ հարս մնացեր է մի հատ ալևորի։

13

ՉՕՄԱՐ ԲԷԿ

(Մոկաց Նոռուզայ Ցիմ գիւղի բարբառով) *

Չօմար բէկ մէկ կարիճ քիւրդ է. ժամանակ մը ճախչի էր, գեղի ջոջի ճախիր կը պահէր։ Չօմար էն ջոջին՝ մօտ հօթ տարի ճախչութիւն արաց, հախ չառաւ։

Չօմար մէկ օր ճախիր տարած էր ծովու բերան. տեհաւ մէկ

*) Պատմած է Պետրոս Վարդանեան Նոռուզեան. ունի հրդեհն քնդրածակ երգեր. Պետրոս մեռաւ 1—2 տարի կը յիշէր։ Առաջին պատմագրի 38.րդ գլխու Չօմարը լինելու է այս։

խրեղէն ձի ծովուց քաշուաւ, էկաւ, թռաւ ճախիւի մէջին մէկ մատկի վրէն։

Դորիս աղէն ասաց.—Ինձ տարին քըմաւ. արի, քիչ ճախ առ, որ մեր կաթ-կիթ մե խալալ ըլնի։

—Չէ, ասաց. ես զաս չըմ առնի. որ էդա մատակ ծնաւ՝ ինոր ճուանին ասա ձիկ, ես եմ ուօթ տարուան ճախի տեղ դապուլ կանանմ։

Էդա մատակ ծինաւ, բերեց բահրի (ծովային) քուռակ մը, անուն դրեց Սայլալի։

Չօմար Սայլալին առաց ուր ճախի տեղ։

Սայլալին որ չոջացաւ, էլաւ Չօմար խնծաւ, աւերուիքեն ա-բաց. էսա տեղ զարկեց, էնա տեղ զարկեց, քալնեց բիրեց։

Որ անուն խանեց, դուշմնքեր չատցան, էլաւ գնաց, զինք տուեց Մոկսայ Ամիրին, իլաւ ինոր մարդ։

Դորիս գնաց քալնեց Մըհամատանք, մարդ սպանեց, քալաճ առեց, տարաւ Մոկսայ ամիրին։

Վանից Խախ փաչէն խրամանք տուեց. — Գնացէք, Չօմար բէկ բռնէք, բերէք։ Թուղթ օրողկեց Մոկսայ ամիրին.—Ընձիկ խը-մայ բռնի, բիրի, ես ինոր կը խալաթեմ։

Չօմար բէկ ակխաւ, գիտցաւ որ ամիրէն զինք պաի բռնէք. դորիս փախաւ, գնաց դէն։ Գնաց Փիղան, մօ Հադարցոց բարոն։ Էմել ուր աւերուիքեն արաց, իդախ թալեց դաշտի (Մուսուլ) դեխ, դաշտի դեխէն քալաճ-քուլաճ կը բիրեր Հադարացոց բարնի մօտ։

Մէկ բարոն էլ նատեր էր Խոշապայ բերդ. Չօմար տեհաւ էն զօռ է չըզ Հադարացոց ամիր, էկաւ Խոշապայ ամիրի մօտ։

Էդտեղ դորիս աւերուիքեն չատ արեց. Դիլիմանայ, Իրանայ կը զարկէր, քալաճ-քուաճ կանէր, կը բիրեր Խոշապայ բարնի մօտ։

Մարիֆաթ ուրին չէր, մարիֆաթ Սայլալուն էր։

Մէկ օր Չօմար բէկ էկաւ, ընկեաւ Ոստանայ դաշտ, որ Ոս-տանայ դաշտ ընկեաւ, էդա ամիրէք խնծել արեցին, ժողուան, ըն-կեան խուճ, որ բռնեն, փաչի նըմակ ճամբեն։ Ոստանայ դաշտ էկաւ խարիր խաղար խոքի, ինոնք տուին սարեր, որ չուրս բիւ-զոր բռնեն ու բռնեն։

Ի՛չ արին, չկրցան բռնեն. Չօմար բէկ խարիր խոքի սպանեց ու ընցաւ, գնաց։

Ճըմեն գեախ կգէր, որ կագխէն վրէն՝ խարիր խոգի կսպանէր ու կեհէր։

Ոստանայ սար՝ քե ասեմ ինչի է.—Ջոջ է, ճամբախ չկայ, մէկ նեղ ճամբախ կընցնի։ Էլան սդայ կապան չինին, որ ճար տանեն, բռնեն։

Գեաղտիկ ի՛չ կապան չինեցին, սլրծան. Զօմար բէկ Կաբճկանայ դէն էկաւ, տընցնէր Ոստան. կապան վըր ճամբէն էր, էկաւ տընցնէր, կապանայ դէմ տակըցաւ, չկրցաւ ընցնէր. խոծել ընտեղ-ընտեղ էկան, օր տը բռնեն։

Զօմար բէկ ուր ճար կտրաւ, ձիու դլօխ արաց դեղ ծով, դընաց մըջ ծովուն, գնաց իլաւ Գատուանայ էն դեղ դիւս։

Խոծել որ տեհաւ գնաց մըջ ծովուն, ասին.—Գնաց, խեղդաւ, կտւրնաւ։

Մէմէկուց սլաւան, յըմեն գնաց ուր տեղ։

Օրմ էլ տեհան Զօմար էմէլ էկաւ ծովու մէջէն, ընկեաւ Ոստանայ դաչտ, զարկից, բալնից տաբաւ։

Էմէլ մէկ օր Զօմար էկաւ, գնաց, ձիով ընկեաւ մէկ հաւկի (ճահճային վայր) մէջ։ Խոծել էկաւ տը բռնեն. ուր ձին բահրի էր, զանկուն զարկից, մէյտան մի տուհց, էդա հաւկից դիւս ընկեաւ. քսան, կտւսուն մարդ ապանեց, էմէլ ուր իրես տուհց դեխ ծով, գնաց, սլրծաւ։

Խոծել էկաւ, գնաց քեչուաւ դեղրանք. լինոց տուին սարեւրաց փեհ—դեղրաննքաց մէջ։

Զօմար բէկ բեհիվի էլաւ, ասաց. — Մկայ սլաւան, դնացին. ևս էհամ էմէլ։

Զինք դանց ծով էկաւ։

Կհհէր Գատուանայ դեխ, կհհէր Կարճկան, բեհիւի կըլնէր, կգէր։

Մէկ օր ծով ընցաւ, էկաւ. էկաւ Շամիրանայ առուի կող, բեհիւի էլաւ, նստաւ։

Գնդուքենով էդա խոծել ժողվըդան, խապար արին մէմէկու, էկան դեխ Զօմար բէկ։ Զօմար բէկ յընդեակ ակախաւ, տեհաւ բիւլոր բռնին. չքռոլին էհէր մըջ ծովուն, յիտիւ կտոլին։ Շէխի բէկ Բժնկերպայ աղի լաճն էր, էն զարկից, Զօմար բէկլի ոտք կոտրեց, Զոմար էլ չկրցաւ խոծնէր ձին. փախնէր. ինոր ռաքըպքեր Թրջուհր էր էզալ, կրակ չրանաւ. էկաւ Շէխի բէկ Զօմար բէկին բռնեց, ինոր ձին խոծաւ, գլօխն էլ տարաւ Թաքաւորի խրմակ։

Զօմար բէկ օ կիգիմա,
Սուարէ Սայլավիմա,
Լը Մուշէ սօպաշիմա։

14

ՄԻՐՋԱ ԱՂԷՆ, ԹԷԼԻ ԱՇԱՆ

(Մոկաց Ներուզայ Ցիմ գիւղի բարբառով) *

Միրզա աղէն էլ մէ օգի ջոջ էր։
Էլաւ ուր մշակ օրողկից, գնաց ուր խըմակ կնիկ ճարի։
Էլաւ մշակ ուր բեալամչեն (ջուխակ) առաց, գնաց Արաբբոսանոյ հլի մէջ. մէկ լաւ աղջիկ մը տըսաւ, էկաւ յետ, աղին ասաց.
—Մէկ լաւ աղջիկմ տեհեր եմ Թէլի Աշան անունով, գնա, դիւ չըզ ձի չատ սազ սրող ես. տըսի։

Միրզա աղէն էլաւ, ուր բեալամչեն առաց, խեծաւ, գնաց մըջ Արաբանցոց հլին։ Գնաց, ցըզ տներաց դէս մէկ յաղբուրմ տեհաւ, երկու աղջիկ կիս վրէն կայնած, ասաց.—Խո ես գիտէր, էդա երկըսից որն ի Թելի Աշան։

Աղջիկննը ասին.—Ա՜յ ձիաւոր, դիւ ի՞չ կիշկաս վըր մե, մենք Թելի Աշան չենք. Թելի Աշան մէկ բաժ բըլրնդ ի, ինու աչքեր բալամ ի, ինու բսկեր կանծի-մանծիկ են, ինու դնդներ արծըթէ են. որ դիւ ինոր տըսնաս՝ ձիուց առնես գետին, խաոնիս։

Դորից Միրզա աղէն թողաց, գնաց մըջ գեղին։ Գնաց Թելի Աշանի խոր դիւռ, տեհաւ Թելի Աշան կօճի պառչիքքեր գետին կը տիւէր. բեալամչեն առաց ձեռ, վարկաց, ասաց.

Ավըր որնկեա, որնկեա,
Վի բաշանի Մկրտուրի դնկեա, դնկեա,
Տըռսըմ դհասի բր ժըրհդ,
Պշկեր խըրխալի հարդու լընկեա.
Թեկի Այիշան վե դիրն դագի դրբնազդեն,
Բե հայէ վարա եմ խասեդ։

Ո՞յայուածքը, տեսքը գոյնզգոյն է,
Այն Մերզուքի աւարի դմդմբոցն է,
Կը վախենամ ձեռքէ բաց թողուի,
Կոտրուի ապարանջան էրկու ոսի.
Թելի Աշանին որ տեսաւ ինչու կը վազէ,
Առանց ափսոսի մի պատուականն կգայ։

*) Գեորգ Վերոյեան Խորովեան պատմած է։

—Տնքից ձէն կըլլի, ես վախենամ վրթըննէ ձեռքերաց, առնէ ինու ոտքերաց, խրխալքեր (տող) կոտրի։

Թէլի Աչան տնքից ձեռ. թողեց, գնաց, մտաւ փարեխ քեամակ։ Մըրզա աղէն ասաց. — Ընչի կը մտնես փարեխ քեամակ, ես էկեր եմ, քե սեանամ։

Թէլի Աչան ասաց մօր.—Իլի, եմ խօր կապուտ տուր, մբրըպ տանի, էհայ ուր տուն։

Մբրըպ (գնչու) ասաց.—Ես չեմ իկե քիւ խօր կապուտ տանեմ ձի, ես էկեր եմ, քե տանեմ, ես մբրըպ չեմ։

Թէլի Աչան ասաց մօր. — Իլի վեր, Ֆիշմիշի բուրուն լից դալօն, յեսի-յեսի, ես դիւ յիւշիկ-յիւշիկ էհանք մօտ։

Իլաւ վեր, գնացին մօտը. մէր ասաց.—Էսա մբրըպ չա խապար իդայ, ինոր խապէրքեր Թէլի Աչանին կը Թալի, ուխելու ի էն մբրըպ։

Դարը բամբուրէ դարէ դառա,	Թամբուրի փէտ Թաց վէտ է,
Չի մբրըպ շաշ ու փառ ա,	Ինչ գնչուն վեց Թևաւոր է,
Չաւաև խապար դա վեսա,	Ինչպէս խօսք կը ձգէ,

Նաւ դանիեաև խո Թէլի Հարևիչիճայ։ Իր անուանակիցներուն մէջ դարձեալ Թէլի Աչան։

Որ գնացին մօտ; մէմէկու աչկարայ իլան, մէմէկ էլ ճանչցան։

Մբրզա աղէն ասաց աղջկու մօր.—Ես Մբրզա աղէն եմ, էկեր եմ քեօ աղջիկ ուզեմ։

—Աղջկայ խէր Մուսուլ գնացեր ի, Թի գեայ տանք, ասաց։

Աղջկայ խէր Մուսուլայ էկաւ։ Մբրզա աղէն էկաւ, ուզեց Թէլի Աչան։

Խէր ասաց. — Որ դիւ եմ աղջկան խաւներ ես, եմ աղջիկն էլ քե ի խաւնե. քիւ ճաղդ տը կտրենք։

Ասաց.—Դիւ քեանիմ խազ աններ, քիւ ճաղդ տամ։

Ասաց.—Թէլի Աչանի ճաղդ քսան խինդ ոսկի ի։

Մբրզա աղէն էրկու մարդ օրոզկեց մըջ ուր էլին, գնացին քսան խինք ջոբի առին, էկան։

Ջօրէքեր տուին աղջկայ խօր, աղջիկ առին, գնացին։

Մբրզա աղէն խըտ համբխին ասաց.—Ես քեզ բիրեցի քամպիւռով, եմ մատներ մտուցի քեօ խօր աչկերաց մէջ, եմ քամպիւռի զօռով առեցի էկայ։

Թէլի Աչան ասաց. — Էսա իրեք օր կայ, քե արեր եմ մբրըպ եմ խօր վրանի դիւռ, դիւ ժաժիկ կը պարաւիս մըջ քեօ ապի ախուրկին (տոպրակ)։

Մբրզա աղէն վըր էդա խօսաց՝ խարսընըսից ձեռ. քեչեց, ուր ձին քշեց, Թողեց, գնաց։

Մէրզա աղի մշակ ասաց. — Թէլի Աչա, մէ բաւս Թալի, ինոր սիրտ դնի, որ գնաց, էլ չի գար։

Թէլի Աչան ասաց.—

Մաչա մազայիրի, ձիւ դալալ ի, Մի գնար գէրեզմաններ, ձվ դու սիրուն,

վուտրա ճիւ խո դանն նաւա դաշտ Արի, մեր տեղ դնենք դալտի մէջ,
բաւտա ոագին,

Ջալըմ բէկո, դիւ մըն գովանա։ Ճարպիկ բէկո, իմ սիրտ կցանկայ։

Մէրզա աղէն զըւռաւ, էկաւ յետ, խը մէմէկու գնացին ինոնց տուն։

15

ՔՈՒԼԼԸՔ ՈՒ ԿԵԱՌՕ

Գրչական բարբառէ ի հայ բարբառի վերածուած*

Ժամանակով Արաբատանի միրը կը լինի Արաբաքէ Կէսի. սա իր ցեղին յատուկ վեց հազար կոնի վրանաբնակներու վրայ կ'իշխէր։ Ունէր ընդարձակ արօտավայրեր և մեծ հարստութիւն. անհաչիւ էին նորա հօտերը. նախիրն ու ձիերու ջոլիրներըւ Նա ուներ Արաբական ձիերու ընտիր յատկութիւններով օժտուած մի նժոյգ-մատակ ձի, որ աշխարհի չորս ծայրերն հռչակ առացած էր, ամեն կողմ այդ ձիու լաւ-լաւ յատկութիւններու վրայ կը խօսուէր.

---

*Վէպս տարածուած է Սուրմալուի կուլար նայ գիւղի մէջ. ամբողջովին երգ է եւ իրեն շատ խոսխոս կերգուի. լսած եմ շատ անձերէ. բառ առ բառ գրի առնելու յարմարութիւն չեմ ունեցած. այլ միայն պարունակութիւնը այլ եւ այլ անձերէ հարցնելով լրացուցած եւ գրած եմ։ Վէպս ունի շատ նիւտեր. ներկայ վէպս չափաւորուն մէջ ամենէ ընդարձակն է։

երջանիկ կը համարէին այդ ձիու տէրն, որ այդ ձիով կը փառաւորուէր. նաև չաուերու մէջ նախանձ կը յարուցանէր. ամէնն ևս կը վախճաքէին ձեռք ձգել այդ ձին որպէս զի իրենք փառաւորուէին։

Արաբակէ Կէս իր ջոլիրը յանձնած էր Սլիվի անունով մի մարդու. որ պահպանէ։ Սլիվին լաւ հովիւ էր. ամեն խնամ կը տաներ. ջոլիրն լեռ, դաշտ և ձոր տանելով կարածեցնէր. գիշեր, ցերեկ հոգ կը տաներ, կը մտածէր, ուր որ լաւ մարգագետին կար, հետևեալ օր այն տեղ էր իր ջոլիրով։

Սլիվին մի օր ջոլիրը տարած էր ծովեզրը, հետևն նստած ուշադրութեամբ կը դիտէր. տեսաւ յանկարծ-ինչ տեսնէ—ծովէն մի ծովամի դուրս թռաւ. այդ հրեղէն ձին մերձեցաւ Կէսի Ալէքսանի Բէջանին (այդպէս էր նորա նժոյգ ձիուն անունը). որ անմիջապէս յղացաւ։ Սլիվին այս բան չը յայտնեց Կէսին, մտածեց որ յաջորդ տարին երբ հովիւ վարձուի՝ Ալէքսանի Բէջանէն ծնած քուռակը ստանայ իր վարձքի փոխարէն. այնպէս ևս արաւ. նա ամենայն հաւատարմութեամբ Կէսի ջոլիրը պահպանեց։ Յաջորդ տարին Կէս ուզեց որ Սլիվին դարձեալ վարձէ. Սլիվին պահանջեց իր վարձուց փոխարէն Բէջանի քուռակն որ նոր պիտի ծնէր. Քէև Կէս կրկին և եռապատիկ վարձք խոստացաւ միայն Քէ քուռակն չուզէ. սակայն Սլիվին անդրդուելի մնաց. Կէս ևս անգէտ լինելով որ քուռակը հրեղէն ձիէն դոյացած է. նա մանաւանդ Սլիվու պէս հաւատարիմ հովիւ չպիտի գտնէր. խոստացաւ։

Սլիվին զայն (քուռակն) ստացաւ. խնամ տարաւ, մեծացուց. անուն Սոսըք դրաւ։

Վարժեցուց հեծնալ. արշաւել և ինչ որ կարևորն էր, Սոսըքն ամեն կերպ վարժեցուց, կրթեց։

Սլիվին մի գեղեցկադէմ երիտասարդ էր. երբ Սոսըքի վերան կը նստէր, կը կարծէր Քէ Սոսըքի հրեղէն ուժը իր վրայ եկաւ։ Նա կը սիրէր ջոլիրի չուրջը ձիարշաւ տալ. առուի ու ժայռերու վրայէն զՍոսըք թռցնել. այնչափ սիրահարեցաւ ձիասորութեան, որ շատ անգամ կը թողուր ջոլիրն անխնամ. որով ձիանք օր յօրի սկսան նիհարանալ, յետ գնալ. որով Կէս երբեմն հարցում կուղղէր.—Սլիվի, կերևայ դու հին հովիւը չես. այս ինչ պատահած է քեզ որ մեր ձիանք յետ կը մնան։

— Աղա, բան չկայ. լաւ կը պահեմ, կասէր. սակայն ուշը-միտքը վրան չէր. երբ ժամանակ կգար որ ջոլիրը ջուր պիտի խմէ. նա կը մտածէր Քէ երբ Սոսըք հեծնամ ու աւարի գնամ. քանի մարդու կարող եմ դիմադրել։

Նա երբ Սոսըքի վրայ ոտք դնէր, ձին պիտի խրխնջար, որով ամբողջ իր ցեղի վեց հազար վրաններու բնակիչներն վրաններէն

ղուրս պիտի թափէին դիտելու Սլիվու ձիաւորութիւնը։ Սլիվուն հանոյ թուեցաւ ձիաւոր կեանքը. մանաւանդ Սոսըքի յարմարութիւններըը զինք ձիաւորութեան սիրահար արին, որով նա միշտ փարած ձիուն, նստած նորա վրան, կը չրջէր վեր ու վայր, լեռ, ձոր և դաշտ. այլ ևս թոյլ տուեց հօլուութիւնը. սկսաւ աւարարութեամբ պարապիլ։

Սլիվին իր ցեղին մէջ տեսաւ Վորտէք անուն մի սիրուն աղջիկ, որ Հասօյի Տուտէի եօթ որդոց քոյրն էր. Սլիվին սիրահարեցաւ այս աղջկան ու իրեն կնութեան ուզեց։ Հասօյի Տուտէի եօթ որդոց աչք վաղուց ընկած էր Սոսըքի վրայ. յարմար առիթ գտան, զալանի վոխարէն Սոսըք պահանջեցին Սլիվուց։ Սլիվու համար այս խիստ ծանր պահանջ էր. նա որչափ Վորտէքի սիրահար, կրկնապատիկ սիրահար էր իր ձիուն. ձին իրեն համար կեանք էր, ձին էր, որով հռչակ պիտի ստանար։ Նա մերժեց. չեմ տար, ասաց։ Սակայն սիրահարութեան բոցը քանի գնաց, իր մէջ վառեցաւ. կը մտածէր մի կերպով Վորտէք ձեռք ձգե, փախցնէ. սակայն երկիւղ կը կրէր Հասօյի Տուտէի եօթ որդիներէն, որք ամբողջ Արաբստանի մէջ հռչակուած քաջ պատերազմողներ էին և միրի Արաբանի զօրաց դլխաւորներն էին։

Սլիվին առ երեսս խօստացաւ Սոսըք Վորտէքի համար զալան տալ. մի առ ժամանակ միամտեցուց Հասօյի Տուտէի եօթ որդիներըն. մի օր յարմար միջոց գտաւ. Վորտէք աղբիւր եկած էր ջուր առնելու, հեծաւ Սոսըք. սլացաւ աղբիւրի վրայ, Վորտէքը քաշեց առաւ գաւակը. քշեց, ընկաւ Արաբստանու դաշտը, մտաւ իր ծանօթ լեռներու ու կրճերու մէջ, անհետացաւ։ Հասօյի Տուտէի եօթ որդիներն կատաղած դայլի պէս ընկած Սլիվու ետևէն, ամեն կողմ խուզարկեցին, չգտան։

Սլիվին Վորտէքի հետ մի առ ժամանակ մնաց այդ լեռներու մէջ իրեն ծանօթ դարանավայրեր. տեսաւ որ Վորտէքի եղբայրներն հաւաքած քաջ քաջ մարդիկ՝ զինքը կորոնէին. այլ ևս մտածեց որ այդ երկրի մէջ մնալ անկարելի է. որոց վրիժառութեան պիտի ենթարկուի, առաւ իր գլուխն և Վորտէք. Սոսըքի գլուխը ուղղեց դէպի Վանայ կողմերն։ Նա Արաբստանէն դուրս ելաւ. հանդիստ չունէր քաշեց. այլ ևս երկիւղ չունէր Հասօյի Տուտէի եօթ որդիներէն. եկաւ—եկաւ, հասաւ մի էլ աղասու (ցեղապետ)—Ամարի Մլի մօտ. ապաւինեցաւ նորա որ զինք իր հովանաւորութեան ներքև առնէ։ Մլիանցի Ամար տեսաւ որ Սլիվին լաւ ձիաւոր է, շատ սիրով ընդունեց. գրեց իր ցեղի վրայ։ Սլիվին այդ ցեղին մէջ յատուկ տուն մի եղաւ։

Անցան քանի տարիներ, Սլիվին որդի մի ունեցաւ, անունը

Փուլըք դրաւ. ապա մի որդի ևս ծնաւ, անունը Կեառօ դրաւ։ Ինքը դեռ երիտասարդ էր. հայրենիքի ու ազգականի սէրն զինք կը մղէին որ գնայ ծնած ու անած երկիրը, տեսնէ հին յիշատակարանները, տեսնէ Սոսըքի գոյացած ծովափին։ Սակայն Հասոյի Տուտէի որդոց երկիւղէն ու սարսափէն Արաբստանու հողն ու քարը անդամ իրեն դէմ ոխակալած էին։

Սլիվին մի բան մտածեց, գուգուեց Ամարի մլին որ պատերազմ բանայ Կէսի վերայ, անուանի Բէջանը բերէ՝ որպէս զի ինքն ևս միջոց գտնէ, հայրենիք տեսնէ, իր վրէժը լուծէ Հասոյի Տուտէի որդիներէն. սակայն Ամարի Մըլ թէև կը ցանկար Բէջան ուննենալ. բայց նա ևս երկիւղ կրեց Տուտէի որդիներէն, որովհետև որոց քաջութեան համբաւը համբաւեամբողջ աշխարհը բռնած էր։

Սլիվու ցանկութիւնը չյաջողիր, իր վախքը իր փորուն մէջ կը մնայ. օր յաւուր կը մաշի հայրենիքի փափաքով, կը հիւծի. երբ կը տեսնէ դեռ երիտասարդ, մեռնելու վրայ է. իր մօտ կը կանչէ իր Փուլըք և Կեառըք որդիները, որոց կերդուընցնէ, ու կը կտակէ որ իր վրէժն լուծեն իրենց քեռիներէն, եթէ թերևան յաւիտեան պարտաւոր մնան։

Սլիվին մեռաւ. Փուլըք ու Կեառօն մեծացան. նոքա քանի կը մեծանային, վրէժխնդրութեան ոգին ևս կը զօրանար իրենց մէջ. իրենց խօսակցութեան առարկան միշտ իրենց հօր կտակն էր. վասն զի իրենց համար մեծ անպատուութիւն էր, երբ մէկը վրէժ ունենայ անկողնոյ մէջ մեռնի. որպէս իրենց հայրը մեռած էր հակառակ քրդական սովորութեան։

Ուխտեցին անկողնի մէջ չմեռնիլ. սակայն դեռ փոքր էին. որով քանի տարի ևս սպասած էին իրենց փոքրիկ տունը կառավարել ընդ հոգացողութեամբ Ամարի Մլին. որ և իր բազմաթիւ հօտը յանձնած էր սոցա. սոքա ևս իրենց հօր նման հովութեան արհեստին վարժ էին. իրենց պաշտօնը լաւ կառավարելուն սիրելի դարձան Ամարի Մլին, որով Ամարի Մըլ այդ տան վրայ ունեցած հոգացողութիւնը կրկնապատկեց։

Փուլըք ու Կեառըք իրենց յարմար հասակին հասան. Փուլըք իրեն համար ունէր Սոսըք ու լաւ զէնք. Կեառըք չունէր. վերջինս խնդրեց Ամարի Մլէն, որ իր վարձուց փոխարէն իրեն զէնք ու ձի տայ. Ամար սիրով յանձն առաւ, տուաւ նորա խնդրածը։

Երկու եղբայրներ սկսան Բէջանի հռչակը տարածել, այլ և այլ առասպելներ կը յօրինէին նորա վրայ.—«Մովէն դուրս եկած հրեղէն ձի է, թևեր ունի, երկինքէն կը թռչի. ևն. ևն։

Ամբողջ հասարակութեան մէջ ուրիշ զրոյց չկար. միայն Բէջանի վրայ կը խօսուէր, ինչ մարդ որ կը ներկայանար Ամարի Մլի

առեանը.—Բէջանը քեզ կը յարմարի, նա աշխարհի առաջին նժոյգն է. նրանից ծնածը հրեղէն է ալնւ Ամար աղան այս գովեստները լսելով Բէջանը ձեռք բերելու տենչով վառեցաւ. կը խորհէր ինչ հնարքով Բէջանը ձեռք բերէ. բայց Մըլի Ամար Միրի Արաբանի վրայ չէր կարող պատերազմ գնալ ու յաղթել. վասն զի Միրի Արաբան մեծ ցեղի վրայ կիշխէր. հարիւրասլատիկ աւելի ձիաւորներ ունէր, նա մանաւանդ այդ անհաչիւ ձիաւորներու կառավարող Հասոյի Տուաէի հօթ որդոց երկիւղէն այդպիսի քայլ չէր կարող անել, այլ մի ուրիշ եղ ճանապարհ կը խորհէր, կամ գողութեամբ և կամ մի այլ եղանակաւ վախցնել տալ Բէջանը։

Ամարի Մըլ ունէր Ռեհան անունով մի սիրուն աղջիկ, որ քրդական ամեն բարի յատկութիւններով օժտուած էր. նա ամուսնութեան հասակի մէջ էր. չատ անուանի ու հարուստ մարդիկ իրենց որդւոց հարս բերելու համար Ամարի Մըլին դիմած՝ խնդրած էին Ռէհանը. սակայն նա չէր յօժարած. մինչև անգամ հազար ոչխար և հարիւր ձի ղալան տուած էին. նա առ ոչինչ համարած էր։ Մի օր Ամարի Մըլի կինը ասիլեց իր մարդուն.—Մինչև երբ պիտի պահես Ռէհան. հասակը առած՝ ժամանակը անցնելու վրայ է. տուր թող երթայ։

Ամարի Մըլի երևակայութեան մէջ կը դառնար Բէջան. յանկարծ մի բան յղացաւ իւր մտքի մէջ։ Լուր յղեց. իր մօտ հաւաքեց իր ցեղի և տոհմի երևելի անձնաւորութիւններն. նորա հրաւէրն անմիջապէս գործադրուեցաւ, նորա առեանը ներկայացան աշիրաթի ճիւղաւորութիւններէն Բօզ ու Բարանան, Կիգան և Սարը Մշանի ցեղէն քաջ-քաջ մարդիկ. այն մարդիկ որ իւրաքանչիւր ազգի ! գլխաւորներն էին և այն մարդիկ որ ամեն ցեղի մէջ իբրև քաջ հռչակուած էին։ Առաջիններըը առեանի մէջ բազմած՝ վերջիններըը բարև բըռնած՝ կանգնած էին։

Ամար աղան երբ տեսաւ ամեն իր ուզած մարդիկ պատրաստ են. նա մի գաւաթ օշարակ լեցուց իր ձեռքով և առեանի մէջ դրուած եռոտանու վրայ դրաւ. դարձաւ բազմութեան, ասաց։

—Ո՛վ իմ պատուաւոր ու կտրիճ հպատակներս. Բօզ ու Բարանան. Կիգան ու Շիկագան և Սարը Մըլանցիք. ձեզ յայտնի է որ ես ունիմ մի աղջիկ Ռէհան անունով. դիտէք նաև որ չատ չատեր ուզնկան եկան, անհաչիւ դանձեր, ձիեր ու հօտեր խոստացան տալ Ռէհանի ղալան. սակայն ես չյօժարեցայ. իսկ այս օր ձեզ հաւաքած եմ այստեղ, մի առաջարկութիւն պիտի անեմ. ձեզմէ ով որ քաջ է, առեանի մէջ տեղ գայ. այս գաւաթ օշարակը խմէ. գնա Կէսի Բէջանը բերէ. Ասոնց ակօյս կողմանէ իմ աղջիկ Ռէհանը

առանց ո և է դալանի նորան պիտի տար, ով որ իրեն կը վտահի, թող առաջ գայ։

Այդ տեղ հաւաքուած մարդիկ ընկան խոր խորհրդածութեան մէջ. մէկը իր տեղէն չշարժեցաւ, մէկը չհամարձակեցաւ մի բան ասել։ Ամար աղան իր առաջարկութիւնը կրկնեց ու երեքնեց. սակայն ամենը նաև լուր ու մունջ մնացին։ Ամենը ևս կը մտածէին մերի առաջարկութեան անկարելիութեան վրայ։

—Աղա, ասացին միաբան. ով կարող է մերի Արաբանի երկիրն ոտ դնել. Հասսի Տուտէի որդոց երկիւղէն քարերն անգամ կը սարսափին. հօ՛ գլխանի վիշապն անգամ այդ երկիրը չհամարձակիր մտնել. հնար Աստուծոյ չէ մէկը գնա. քառասուն հազար անձ կազմող էլի՛ մը մէջէն Բէջանը վախցնէ։

Ամարի Մըլ ճանապարհ դրաւ երեւելիներն ու քաջերը. լուր յղեց հասարակ ժողովրդեան, որ ժողովեցան մերի չուրջը, որոց ևս առաջարկեց նոյն խոստումը. անոնք ևս իրենց դլուխը կախեցին, մէկը չհամարձակեցաւ օշարակը վերցնել ու խմել։

Այդ միջոցին Քուլլըք սարէն հօտը տուն բերաւ. տեսաւ ժողովրդեան բազմութիւնը, չատ զարմացաւ.—Կեառը՛ք, ասաց. այս ինչ բազմութիւն է։

—Մեր մերը, ասաց կեառըք, առեան հրաւիրեց իր էլի ամեն երեւելի ու քաջ մարդիկ. նաև հասարակութիւնը, որոց առաջարկեց, ծը մէկը գնայ. Բէջան բերելու լինի իր աղջիկը Ռէհան կնութեան պիտի տայ իրեն, բայց մէկը չհամարձակեցաւ առոտանւոյն վրայ դրուած օշարակը վերցնել ու խմել։ Նա իր կշռաքով ևս ոսկի տատնար Ռէհանի հետ։

—Կեառը՛ք, ասաց Քուլլըք. չես ամաչէր, այդ խօսքերը անտարբերութեամբ կարտասանես. դու մեռնէիր, այդ խօսքերը չասէիր, ապա մենք մեր կեանքը չէ՛ նորան պարտական եմք. այլ ևս ծը աւուր համար մենք պէտք պիտի գանք նորան, նորա խօսքը գետին ձգելը, զայն սպաննել ասել է. ես կերթամ, Բէջան կը բերեմ, Ռէհանն ևս կառնեմ։

Քուլլըք մերի առեանը չտապեց. բարև բռնեց, կանգնեցաւ.

—Հա, որդի՛, ասաց մերը. որպէս ամենուն ասած էր. կարող ես այս գործը խմել ու դնալ, Բէջան բերել։

Քուլլըք առանց ձայն հանելու վեր առաւ դաւաթն, օշարակը խմեց.—Մերս, ասաց. Աստուծոյ յաջողութեամբ պիտի գնամ, Բէջանը բերեմ։

Վորպէք լսեց Քուլլըքի բռնած գործը, ծնկները ծեծելով, մազերը փետելով և դառնագին լալով հասաւ մերի առանը (վրան), երգելով ասաց.

Միրս, արդեօք այդպես կը լինի՛,
Որ մեր ու մեր տան գլխուն կաճես.
Չէ բօղ ու բարեացան հաւատեցիր,
Կիգան ու Շիկագան օուրջդ ժողվեցիր.
Սարի Մլանցի բաջերն ալ բերիր,
Որոց մէկն ալ Ւհջան բերել չեմամարձակեցաս:
Չէ՛, անոնցմէ վերջ ժողովուրդը եկաւ,
Մէկն ալ այդ գործը յանձն չառաւ.
Արդեօք այդպէ՞ս է, որ մեր գլխուն կաճես,
Չգիտես որ իմ որդիս փոքր եւ անփորձ է,
Այդ տեսակ գործերու մէջ մտած՝ ելած չէ:
Չէ բու հովանու տակ մի փոքրիկ տուն ունէիցիր,
Մեր տունը պիտի գլորէիր, գայն չգիտէիցիր.
Սլիվիցն մեռած ու մեր տուն բանդուած եր,
Ի՛նչ հարկ կար Ամար ալան մնացածն ես բանդէր:

—Վարուէք, ասաց Ամար աղան. այս բանի չէ. եթէ կարող է, թող գնայ, կատարէ. իմ աղջիկն ու իր կտուանքով ոսկի ես առնէ, եթէ կարող չէ, թող չերթայ:

Քուլլըք մօր վրայ բարկանալով ասաց.—Մայր, ինչ անեմ, որ ինձ սպիտակ կաթ ես տուած, եթէ ոչ հիմայ իմ ճմայի նալչայի տակ գլուխդ պիտի չախչախէի: «Ինչ որ կանէ, Աստուած կանէ. մարդ կը մեռնի, անունը կը մնայ, եզը կը մեռնի, կաշին կը մնայ. զուտմաթաուան (որկրամոլ) կը մեռնի, սպասի կճուճը կը մնայ. ձին կը մեռնի սապարէզը կը մնայ»: Աստուած եթէ ինձ կօգնէ, Սոսըք եթէ տակս է, իմ գործ յաջող է, դուն ես ուրախացիր. իսկ եթէ Աստուած ինձնէ երես դարձուց, Սոսըքս տակէս առաւ, ես արծիւի թեւերու վրայ ալ նստեմ, իմ գործ անյաջող պիտի լինի:

Ահա մայր իմ, ես պիտի գնամ,
Աստուծոյ կամքով պիտի վերադառնամ.
Ինձ հալալ արա ես սպիտակ կաթ,
Ուրախ պահէ սիրտդ խանդակաթ:

—Որդի՛, ասաց մայրը, որ պիտի գնաս՝ Աստուած հետդ լինի. կաց, քեզ մի քանի պատուէր տամ, որ չվտանգուիս. դու քո գնալիք ճանապարհներուն համար չես և ապագայ վտանգներուն անփորձ ես: Քո ճանապարհն չատ երկար է, մինչև Արաբատան քարքարուտ ճանապարհներէ պիտի անցնիս. տեղ կայ որ արծիւին պէս կարող գայլախազի քարեր իրար վրայ կուտակուած են. Սոսըք չատ զգայր քշէ, որ իր ոտները չվնասէ. երբ այդ վտանգաւոր քարքարուտներէ

անցաք, կը մտնես Տարըքայ կիրճն ուր գողը ու աւազակները պահ կաս չեն, զգոյշ կաց, որ Սոսըք ձեռքէդ չխլեն։ Տարըքայ կիրճն շատ բարձր է, այն տեղէն կը տեսնուի Արաբստանու ընդարձակ դաշտը. այն դաշտը շատ չոր, անջուր, աւազոտ անապատ է. եթէ տեղ տեղ բոյսեր կը տեսնուին, այն միայն եւշան բոյսն է և բնակիչներն ևս միայն այծեամներ են, որոնք կը բնակին եւշանի բուլքերու տակ և այդ բոյսով կը սնանին։ Որդի, պատուէրս այս է. ձեր ձիանք շատ մի քշէք. այծեամ բռնելու փափաքէ հետի կացէք. այդ անապատը լայն ու երկար է. դաշտի միջով հինգ օր պիտի գնաք. այդ անապատին մէջ մեակ մի հատ լիճ կայ, որ ձեր ճանապարհի ձախ կողմը կրնկնի. այդ լճի ջուրը չափազանց նեխած է, մեծ մասամբ ուղտի և կրիայի միզուածքէ կազմուած է. դորտերով լիքն է, չորս կողմ դարչահոտութիւն կը բուրէ։ Այդ լճի ջուրը խըմելը վնասակար է։ Սոսըք այդ վայրերուն ծանօթ է. զգոյշ կաց որ դիս, որ Սոսըքը այդ նեխած ջուրը չխմէ, եթէ խմէ, այլ ևս յոյսդ կարէ Սոսըքէն, նա անմիջապէս կուռի ու կը մեռնի։

Վորտէք դարձեալ հրդով չարունակեց.—

Որդի՛ Բուլլըք, ձեր հօրը հետին միրի Արաբացի մօտ եմ,
Անոնք միմիայն արաբերէն լեզուով կը խօսին.
Հօրս եւս բարձրահասակ եւ կարմիր դէմքեր ունին,
Հօրս ալ մեծ ու կապոյտ աչքեր ունին.
Հօրին ձիերն ալ մոխրագոյն ու պիսակաւոր են,
Արագաթռիչ, հսկայ եւ ուժեղ են.
Սիրուն, լայն եւ հաստ կուրծքեր ունին,
Իսկ հետևի կողմերնին որսի շան պէս բարակ են,
Ազդրները ճապաստակի պէս կախ ընկած են,
Ականջներնին խարազանի պէս դիւրաշարժ են,
Բաճի եւ պոչի ծայրերն ասեղի նման ցցուած են,
Սմբակներն ալ բոլորակ կոճի պէս են։
Թամքերուն ճայեցէք, Համատանու բամք են.
Ձեր հետիներու գլխու փաթոցը Անմահի են,
Անմահի վրայի կրկին փաթոցներ ունին, որ Հերաքի են,
Մեծամեծ դաւոյներ ունին, որոց բուրը սպիտակ է,
Դաւոյնի ծայրերը ձկան ատամի պէս կետ են,
Ղալիօններու փայտը կարճ ու կեռասենիէ են,
Իսկ ղալիօններու ամեն մեկը մեկ բուղթ ծխախոտ կը պարունակեն.
Կռուի միջոցին երբ ղալիօնները կը ծխեն,
Հօր ածօրի գալերու պէս իրար ձեռէն կը փախցնեն՝

Ամպի պես կոյտ-կոյտ ծուխ կարձակեն իրենց բերնեն.
Ամբողջ երկիրը այդ ծուխեն կարծես մութը պատած է:
Բէջաները որ կայ, միրի Արաբացի ձին է,
Լաւ ուտադիր եղիր, ճորա ճտացը է այս.
Բէջանի աչ էիքն ու ականջը ծակած է,
Ծակերեն ոսկեայ շղթայ մի կախուած է:
Ձեր բեռիներ արաբերեն կը խօսին, ձեր լեզուն չգիտեն.
Երբ զանոնք կը տեսնէք կամ երբ կը պատահիք անոնց
«Մենք ձեր բոլոր որդիներն ենք, ասացէք.
Վորտէքի ճարազատ որդիներն ենք, կրկնեցէք»:
Մի կերպով անոնց յայտնեցէք, որ վտանգի մէջ չըննկնէք.
Երբ մի ճար ճարակ անեն, ձեր բեռիներ պիտի անեն,
Կամ դրամով Բէջաները կը գնեն, կամ մի ճնարով կը փախցնեն:

Վորտէք իր որդոց խրատներ տալէն վերջը գաղտնի մի նամակ գրեց իւր եղբայրներուն, տուաւ մի մօլլայի որ չուտ տանէ, հասցնէ իր եղբայրներուն. որ գիտնան թէ իր քրոջ որդիներն, վնաս չտան: Նամակի մէջ գրած էր.—«Հասցյի Տուտէի օճախի պատուոյ համար, ձեր քոյր Վորտէքի սիրուն: այդ կողմեր կգան Վորտէքի երկու որդիք—Քուլլըք ու Կեառօն, մի հնար գտէք. դրամով, կամ բռնի և կամ դաղուէնամբ Բէջանը ձեռք ձգեցէք, յանձնեցէք Քուլլըքին, որ բնիկ Ամալի Մլին, նորա աղջիկը կնութեան առնէ:»

Մօլլան նամակը առաւ, ճանապարհ ընկաւ:

Քուլլըք ու Կեառօն իրենց պատրաստութիւն տեսան:

Առին իրենց հետ երկու քսոջ հայելը—Քուղդէի ֆլէն (հայ Բաղտասարը), Ղուկէի Լեզկօն նաև Տուքէթի հարսանը. հինգ հոգով ճանապարհ ընկան. զինուած ու զրահաւորուած լաւ ձիերու վրայ նստած քշեցին, գնացին: Հինգ օրէն հասան Վորտէքի սուրհանդակին. սուրհանդակ մօլլան մեռնել թաղելու և դրամ չահելու զբաղուած լինելուն ուշացած էր. Քուլլըք քննեց. իմացաւ որ մօր սուրհանդակն է, նամակը ձեռքէն առաւ, գինք յետ դարձուց:

Հինգ հոգիէ բազկացած փոքրիկ աւազակային խումբը իրենց ճանապարհը չարունակեցին, աննման քարքարուտ վայրերէ. սուր և վտանգաւոր դայլախաղէ քարերու կոյտերու վրայէն անցան, բարձրացան Տաւրքայ կիրճը, գլխըվրան դէպի Արաբատանու դաշտն: Այդ տեղ փոքր ինչ հանգստացան. հաց կերան, տկերով իրենց հետ բերած ջրէն խմեցին. հեծան, քշեցին: Շոք անապատի մէջ չատ նեղուեցան. չատ քիչ տեղեր եաւչանի քօլիր կիրևայինն: Ծանկարծ տեսան որ մի եաւչանի քօլի տակէն մի այծեամ դուրս թռաւ, փախաւ: Քուլլըք մօրը տուած խրատը մտաբերաւ. յոգնած և քրտինքի մէջ կո-

բած Սոսըքով արձակեցաւ այծեամի եանէն, հա այստեղ, հա այն տեղ բռնեմ ասելով ձին արագ-արագ քշեց. երկու ժամու չափ հեռացաւ իր ընկերներէն. պատուախնդրութիւնը չտարաւ որ դատարկաձեռն յետ դառնայ. Սոսըքին ուժով ասպանդակեց, պնդեց այծեամի եանէն. վերջապէս մի կերպով բռնեց, բերաւ եղբօր մօտ. ասաց.—Կեառօ, եթէ դու ինձ օգնէիր, կարող էինք այծեամը չուտ բռնել. Սոսըք այդչափ չէր չարչարուէր:

—Եղբայր, ասաց Կեառօն. երբ դու այծեամի եանէն ընկար, տեսայ այծեամի և Սոսըքի փախչիլը. որ Սոսըք կէս աւելի կերթար այծեամին բաղդատելով. խորհեցայ անունը քուկը լինի, դորա համար չօգնեցի:

Քուլըք յոգնած էր. արդէն երեկոյ էր, պատուիրեց Կեառօյին որ այծեամի մսէն խորոված չինէ. մինչև ինքը փոքր ինչ քնի ու զարթնի: Պատուիրեց որ Սոսըքի վրան ևս հսկէ: Ինքը զափուըը վրան առաւ. ու քնեցաւ: Կեառօն իր ընկերներով խորոված պատրաստելու հետ էր, ուշադրութիւն չի դարձուց Սոսըքին, որու սանձը քամքի յոնքը ձգած էր, ոտքերն ևս չիտարած: Անցաւ բաւական ժամանակ, Կեառօյի միտքը ընկաւ. զարձաւ Սոսըքին նայեցաւ, տեսաւ անյայտացած է. յանկարծակիի եկաւ. ընկերներն առնելով այս-այն կողմ որոնեցին, չգտան: Զարթեցաւ Քուլըք, իմացաւ եղածը, թոյլ տուեց խորովածը, ընկերներով որոնեցին Սոսըքը. գտան Սոսըքի ոտից հետքերու ուղղութիւնը, որ կը նչմարուէր աւազի մէջ. բռնեցին հետքերու ուղղութիւնը ու գնացին, պարզ լուսնկայ էր. չատ քիչ գնացին, Աատուած գիտէ. տեսան Սոսըք մի լճակի եզրն կանգնած է, այս լճակը իրենց մօր ասած նեխած, դորտի, կրիայի և ուղտի մզէ կազմուած լիճ էր. տեսան Սոսըք սանձը կտրած, նեխած ջուրը խմած, ուռած, փորքաչն ևս կտրած ու քամքը գետին ընկած էր. այլ ևս Սոսըք չարժելու միջոց չունէր:

Քուլըք և Կեառըք երբ տեսան Սոսըքի վիճակը.

—Վայ մեզ, ասացին. իրենց գլխուն զարնելով. մենք ինչ սլիտի անենք այս անապատի մէջ առանց Սոսըքի. Սոսըքով մեզ փառք ու պատիւ սլիտի վաստակէինք, այժմ ամեն բան կորուսինք: Քուլըք վազեց, Սոսըքի սանձէն բռնեց, քաշեց. սակայն նա չչարժիր, եանէն հրեց, խարազանով հարուածներ տուեց. սակայն դարձեալ անշարժ էր. որպէս թէ դամուած լինէր գետին: Տեսաւ Սոսըքի փոր հետզհետէ կուռի, պայթելու վրայ է. վերջին ճիգ մը ևս արին, հրելով-հրելով ջրէն դուրս հանեցին. տակաւ առ տակաւ մինչև իջևանը հասուցին: Քուլըք Սոսըքի դժուարին դրութեան վրայ չուարուեցաւ, իր մահը աւելի քաղցր էր իրեն համար, քան Սոսըքի ցաւալի վիճակը. «Սոսըքով էր որ անուն պիտի հանէի, այժմ ինչ քար ձգեմ իմ գլխին,

այլ ևս ես մարդու երես չեմ կարող տեսնել. մեկ ձի ունէինք՝ դուրս տուեցինք. մնացինք մենք ու այն խօսքը որ մեր նախնիք ասած են. «Գնաց իր հօր վրէժը լուծելու, իր կարմիր արիւնն ալ վրայ տուեց»։

Ընկերներով հոգ տարին, դեղ ու դարման արին. ճանապարհէ հետու քաշուեցան մի առանձին վայր, որ միջոց մի մնան, մինչև Սոսըք լաւանայ։

Չորս օր այդտեղ մնացին, դեղօրայք բաւական օգնեցին. Սոսըք կարող էր քայլերն փոխել. այդ տեղէն ևս բարձան, մի բարձր դարի հետև իջևանեցան, որ անցորդի աչքէ հետու լինին։ Այդտեղ ևս չորս օր մնացին, մեկ օր Քուլլըք ասաց—«Ձիաւորուեցէք, տղայք. Սոսըք միշտ իր պատիւը պահած է. այս անգամ ալ յաւասով եմ որ ձիս ամօթով պիտի չթողու, ինչ որ արած է, Աստուած արած է»։

Հնձան, երկու օր, երկու գիշեր քշեցին, Սոսըք ճանապարհին լաւ չէր բանէր իր ընկերները թոյլ կը քշէին իրենց ձիանք, որ Սոսըք չվնասուի։

Հասան մի փոքր դար, ուր իջևանեցան ու հանգստացան։ Այս դարէն կը տեսնուէր Արաբստանայ միրի էլաթը, որք վրաններ զարդարած էին նոյն տեղէն անցնող գետի մը երկու ափերու վրայ. գետի այն կողմ, հաստատուած 3000 ևս վրաններու մէջ կերևէր մի մեծ ռազմական վրան, որ Արաբստանայ միրին կը պատկանէր։ Գետի այս ափի վրայ ևս ևս վրաններ դեռեղուած էին։ Մեր խմբի իջևանած վայրէն, մինչև այդ վրանները 15 ժամ հեռաւորութիւն ունէր։

Քուլլըք իր խմբով գիշերը նոյն դարի վրայ անցուց, հանգստացան, վեր ի վերոյ իրենց անելիքը որոշեցին. գործի պիտի սկսէին, բայց Սոսըքի վիճակը չէր ներեր. երեք օր ևս սպասել որոշեցին։

Որոշուած էր, ամեն գիշեր ընկերներէն մեկը պահպանութիւն պիտի անէր, այս գիշերուայ պահպանութիւնը Կեառըքի յանձնուած էր։ Կեառըք այս անգամ զղոյշ էր, հեծած էր Սակլավին. խմբի չուրջը ման կգար։ Ման գալու ժամանակ հետուէն մի ձայն լսեց. Սակլավին քշեց ձայնի կողմը, տեսաւ հօթ ղաթար ուղտերու խումբ, ձայն տուեց.—Լօ, լօ, լօ. դուք ինչ մարդ էք։—Մենք Արաբստանայ էլեցն ենք.—Այդ ինչ բեռ է կը տանիք։

—Մըրի աղջկայ օժիտը կը տանենք եուբատատեղ (հովտավայրը. խումբ մը վրաններու դեռեղուած տեղ). սը դառնանք, վաղը չէ. միւս օրը միրը ևս պիտի գնա եուբատատեղ։

Կեառօն Սակլավին քշեց ուղտապաններու վրայ մեկին մի սիկ փայտի հարուածներ տուեց, չատերու գլխները ջարդեց, մնացած

մէկ քանին ալ փախան. ինքը ուղտերը իրենց բեռներով խաւնեց իր առաջ, բերաւ իր խմբի չուրջը նստեցուց։ Գուլլըք զարթեցաւ, տեսաւ Կեառօյի արած քաղաքավարութիւն, մի հառաչանք արձակեց, ասաց.

—Այս ինչ է, Կեառօն ինձմէ աւելի քաջ գտնուեցաւ. քաղաքավարեան համար ես եկած եմ, Կեառըք կը գործէ, ինձ համար մեծ ամօթ էր որ ես քնէի։

Խումբը մտածեց որ առաւօտ խուզարկուներ զիրենք կը փնտռեն, երբ իրենց պատահին առանց Բէյլան ձեռք ձգելու կռուի պիտի բռնուին, աւելի լաւ համարեցին մի ապահով և դաղտնի վայր քաշուիլ։ Այն տեղէն տեղափոխուեցան մի անմատչելի ապրի կող

Դեռ արշալոյսը չէր բացուած.—Կեառօ, ասաց Գուլլըք. ես ես գիս մի անգամ ցոյց պիտի տամ այն էլաթի մէջ, եթէ յաջողութեամբ եկայ, Աստուծուն փառք կտանք. իսկ եթէ վտանգուեցայ, վրէժս կը լուծէք. Սոսըքս չէք թոյլ տար որ ալաբներու ձեռք անցնի, եթէ չի կարողացաք ազատել, սպաննեցէք։ Գուլլըք գնաց։ Երեկոյն մօտ էր, գնաց վրաններու մօտեցաւ, մտաւ գետի եզերը բուսած ցախերու մէջ սպասուեցաւ, որպէս զի դիտէ թէ գետի հունը ուստի է, որ տեղէն մարդիկ անց ու դարձ կանէին։ Կէս գիշեր մօտ էր, ձայն-ձուն դադրած էր, Գուլլըք անցաւ ջուրը, վրանի մի անկիւնէն ներս սողաց, ձեռքը դրաւ թուրի բռնուի վրան, մի անգամ քնաւ որ միրը սպաննէ. յանկարծ աչքը ընկաւ միրի դէմուն, որ դրած էր իր կնոջ թեի վրան ու հանդարտ քնած. «քնած մարդը սպաննել ոմարդութիւն է մտածեց Գուլլըք քանդեց կնոջ վրի մարդարտեայ չարանը, առաւ, ելաւ դուրս. որոն արեց Բէյլանի վայրը, տեսաւ անկարելի է այն տեղէն դուրս հանել, հեռացաւ. ուրիշ ժամանակի թողնելով այդ գործը դարձաւ իր խմբի մէջ։

Արդէն բօթ հասած էր միրին թէ իր աղջկան օժիտն ու ուղտերը իրենց բեռներով տարած են։ Միր «տէֆի հաւարէն» զարկեց, հաւաքուեցան երկու հազար ձիաւոր Հասոյի Տուտէի հօթ որդիք ձիաւորներու առաջ անցան, իրենց երկրի չորս կողմ խուզարկեցին, չգտան։

Հետևեալ օր արշալուսի հետ Գուլլըք գետնզրը ցախերու մէջ դարձեալ ի պահ մտած էր, եկած էր այս անգամ ո և է միջոցով Բէյլանը ձեռք ձգէ, որ հետևանն այդ վտանգաւոր վայրէն։ Տեսաւ որ միր երկրորդ անգամ «տէֆի հաւարէն զարկեց, ինքն ևս երկու հազար ձիաւորի գլուխ անցաւ, հաւաքեց, պատուիրեց որ գընալու են գողերը որոնելու։ Այս միջոցին Բէյլանը դուրս հանեց մի քրդուհի, տարաւ աղբիւրի վրան որ ջուր խմցնէ ոսկի թասով։ Գուլլըք ջրի ափը եկաւ, հարցուց թէ ջրի հունը որ տեղէն է։ Աղջիկը ցոյց տուեց։

Քուլլըք անցաւ այն կողմ, մօտեցաւ ձիուն, տեսաւ նշաններն, որ մայրն ասած էր, նա Բէջանն էր. կասկածի տեղի չկար։

—Աղջիկ, այդ ձին ու՞մ կը պատկանի, հարցուց։

—Ինչու, միթէ դու օտարական ես, որ կը հարցնես. չես ճանաչէր Բէջանն է, միրի Արաբանի ձին է. «տէֆի հաւարէն» զարկած է, կը ջրեմ որ միրը հեծնի, գնայ։

Աղջիկը դեռ խօսելու հետ էր, Քուլլըք յանկարծ յափշտակեց աղջկան ձեռքէն Բէջանի սանձը, թռաւ քամակը ու քշեց դէպի իր խմբի կողմ։

—Ո՞ւր կը տանես. դա Բէջանն է, երկիւղ չունես միրէն. չէ՞ որ կառներդը երկինք կը հանէ, պոռաց աղջիկը։

—Ես ամարդութեամբ չեմ տանէր. լուր տուր միրին, որ մենք այն դէմի սարի մօտ սրսըլէքներու մէջ ենք. մինչև ինձ անուն չթողում, չեմ դնար, թող չասեն «Քուլլըք ամարդութիւնով Բէջանը առաւ փախաւ։

Միրը երբ այս լուրն ալ լսեց, կրկին և կրկին «տէֆի հաւարէն» զարկեց. իւրաքանչիւր տնէ մի մարդ հեծաւ, վեց հազար ձիաւոր կազմ և պատրաստ ձիաւորուած պատրաստ կանգնեցան միրի վրանի չուրջը. առաջնորդի կապասէին մեկնիլը։

Քուլլըք դեռ իր խմբին չէր հասած, կեառըք հեռուէն նայեցաւ, տեսաւ միրի վրանի դուռը ևս ամպի կոյտի նման մի բան նշմարեց, այդ ևեւթիւնը ծովի ալիքներու նման կը ծփծփար. զգաց որ այս չարժումը աննչան չարժում չէ, մի մեծ դէպք պատահած լինելու է, կամ Քուլլըք իրեն համար մի անուն արած է, կամ վտանգի մէջ ընկած կը լինի, ինչ և է. պէտք է պատրաստ կենալ մտածեց։

Ինք ու իր ընկերները ձիանք հեծան պատրաստ կանգնեցան, տեսան հեռուն մի անձ փոշիէ ամպի մէջ խառնուած կը դայ, ասոնք առաջին անգամ թշնամի կարծեցին. Քուլլըքն էր այդ ամպի մէջէն դուրս թռաւ յաղթանակով, Բէջանի վրայ հեծած եկաւ, բարև տուաց իր ընկերներուն. քանի կարճ բառով բացատրեց անցքն ու միրի պատրաստութիւնը։

—Մեր և թշնամեաց մէջ տեղ երկար ճանապարհ կայ, ասաց Կեառօն. մենք կարող ենք խոյս տալ և մի ապահով տեղ պահուիլ։

—Չէ, ասաց Քուլլըք՝ այդ անկարելի բան է, ինձ անուն պիտի թողում. դողութեամբ, կամ փախցնելով տանիլ իմ պատուոյն սօթ կը բերէ. եթէ փախչիմ, այլ ևս որ կարենամ մօտ երես պիտի ունենամ։

Քուլլըք ձիէն իջաւ, իր խմբին հրամայեց. անոնք ալ իջան.— Թշնամին դեռ հեռու է, ասաց նա. նախ պէտք է մտածենք թէ ինչ

անելու ենք, ապա կռուենք։ Խորհուրդ կաղմեցին որ Նախ Ռուլլըք պիտի սկսէր կռիւը. Կեառօն ևս Ռուլլըքին պիտի օգնէր. միւս երկք ընկերները իրենց հետ ունեցած կողոպուտը պիտի պահէին. ի հարկին անոնք ալ պիտի մասնակցէին կռուի։

Սոսըք կաղմ. պատրաստ էր, Ռուլլըք Բէջանը յանձնեց ընկերնուն, ինքը թռաւ, Սոսըքի վրայ։

—Բէջանը հեծիր, Սոսըք հիւանդ է, ասաց Կեառօն.

—Այդ ինչ յիմար-յիմար կը խօսիս, ասաց Ռուլլըք. Բէջան հեծնեմ որ ամբողջ Արաբատանայ էլը ասէ թէ «մեր ձիով քաջութիւն արաւ»։

—Ուրեմն իմ եղբայր. արի իմ Սակլաւին հեծիր. Սոսըք հիւանդ է, քու դլուխ վատնդ կը բերէ.

—Սակլաւին ինձմէ աւելի քեզ պէտք է. Կեառօ. աւելի լաւ է մարդ իր սովորած ձիու վրայ մեռնի, քան թէ անսովոր ձիու վրայ նստի, յաղթող հանդիսանայ. ես կը ճանչնամ իմ Սոսըք, նորա ամեն յատկութիւնները ինձ ծանօթ են. նա դիս հազար վտանգներէ ազատած է. Սոսըքս միշտ պահած է իմ և իր պատիւը. նա մի օր վատ անուն բերած չէ իր վրայ. կը յարդէ տէրը։

Մերի Արաբանի բանակը վեց հազար ձիաւորէ կը բաղկանար, որք արաբական լաւ-լաւ նժոյգներու վրայ նստած կը խաղային յառաջ, դէպի Ռուլլըքի խմբի վրայ, այդ բանակին կառաջնորդէին Հասոյի Տուտէի հօթ որդիք։ Տուտէի կատաղած որդիք ամեն կողմէ պաշարեցին. Ռուլլըքի խումբը մնաց մէջ տեղ։

Երկու եղբայրներ, Ռուլլըք ու Կեառօն պատսպարակի մէջ տեղ. սկսան ուշադրութիւն դարձնել թէ որ կողմի հետ պիտի կռուին։ Ըստ սովորութեան երկու կողմի զլխաւորներն պիտի սկսէին կռիւը. ապա հասարակ ձիաւորները։ Ռուլլըք ձին քշեց առաջ, մեծ քեռին իր ձին խաղցուց Ռուլլըքի վրայ, ու յետ դարձաւ. ապա միւս քեռին։ Այսպէս ձիերն առաջ ու յետ խաղացնելով տաքցան։

Այս կողմէն Ռուլլըք ու Կեառօն. այն կողմէն հօթ քեռիները քանի անգամ քշեցին ու դարձան։

Կռիւը տաքցաւ, վեց հազար ձիաւոր այն կողմ. Կեառօն ու Ռուլլըք այս կողմէ մեծ գոռոցով ու աղմուկով իրար վրայ յարձակեցան ուղղակի։ Տուտէի հօթ որդիք ոչ լեզու դիտէին ոչ կարգ, ալ ձեռներուն բռնած էին մերկացած թրեր, իսկ ձախերնին վահան. ուսերէն կախ տուած էին երկար նիզակներ. զալիօնները որ ամեն մէկը մէկ և կէս թուղթ ծխախոտ կը պարունակէր, մի կողմէն կը ծխէին, միւս կողմէն կը կռուէին։ Որ մէկին զալիօնը ապառած լինէր. անօթի գայլի պէս միւսին ձեռքէն կը փախցնէր, այնպէս որ ամբողջ բանակը որոց ծխախոտի ծուխի մէջ կորած էր։

Սօթն աղբայրները ծխախոտ ծխէն տաքցած՝ այս անգամ ուղղակի յարձակում գործեցին Փուլըքի վրայ. սակայն Փուլըք այնչափ արագաշարժ էր, Սօթի թրերու հարուածը աննպատակ անցաւ. այս անգամ ինք ընկաւ իր քեռիներու եանէն. բայց յանկարծ Սոսըք կանգնեցաւ այնտեղ, ուր Փուլըք հարուած տալու վրայ էր։ Սոսըքի ոտքերն բռնուեցան։ Փուլըք որչափ ճիգ կը թափէր, կասլանդակէր. վտանգէ հեռանալ կը ջանար, հնար Աստուծոյ չէղաւ։

Ջայս որ քեռան իր Սօթ քեռիներն իրարու եաւէն եկան, մի մի զարկս մխեցին նորա սիրտն ու կողերը։ Փուլըք ձիու վրայէն գլորեցաւ, ընկաւ գետին։ Փուլըքի ընկնիլը երբ տեսաւ Կառօն, ձայն ձգեց իր ընկերքն երկու հայերուն որ իրեն օգնեն.—Դուք ձիաւորներու առաջը կտրեցէք. մի թոյլ տաք փախնելու, ես Փուլըքի վրէժը պիտի լուծեմ։

Բաղտէի Ֆլէն, Ղուկէի Լեզկօն ամբողջ բանակի առաջը բռնեցին. սկսան վեց հազար ձիաւորի հետ կռիւ. իսկ Կառօյի նպատակն էր իր քեռիներէն վրէժ առնել, ընկաւ քեռիներու հետ կռիւ, իր սուր նիզակով վեց քեռին ալ սպանեց, հասաւ մնացած մէկին, նիզակը պատրաստեց որ նորա սիրտը մխէ, վեհանձնութիւնը բռնեց.—Գնա, ասաց. քեզ չեմ սպաններ, Վրտէքի պատուոյն համար որ նորա հօր տուն աւեր չդառնայ։ Քեռին քրդերէն չէր գիտեր, բան չհասկացաւ։

Կառօն երբ իր քեռիները վիրջացուց, կայծակի արագութեամբ յօդնութիւն հասաւ Բաղտէի Ֆլէին և Ղուկէի Լեզկոյին, երեքով սկսան ջարդել։ Ձիաւորները երբ տեսան իրենց դվխաւորները սպանուած սկսան կռուի դաշտէ փախչիլ, կարծելով թէ երկինքէն գլոր մը մտած է իրենց մէջ. բոլորն ևս պիտի վերջացնէ։

Սարսափը այնչափ մեծ և փախչողները այնչափ շատ էին, շատեր ձիաններու ոտից կոխան գարձան, մեռան։

Կառօն գարձաւ Փուլըքի մօտ, ձեռքէն բռնեց որ բարձրացնէ, ձիու վրայ նստեցնէ։ Փուլըք որ թէև մահուան ճգնաժամի մէջ՝ սակայն եղածը տեսնելով ուրախ-ուրախ ասաց.—Սոսըք բեր մօտս, ման ածէ, մէկ անգամ ևս տեսնեմ, ուրախանամ։

Կառօն բերաւ, ման ածելու միջոցին Փուլըք մի թրի հարուած տուեց, Սոսըքի երկու ոտները կտրեց։

—Մեղք չէր, այդ ինչ արիր, տնաչէն, ասաց Կառօն.

—Կառօ, ասաց Փուլըք. դու չես գիտեր. Սոսըք չէ կարող քալել, որ հետդ տանես. նա երբ այստեղ մնայ, Արաբատանու էլը պիտի ասէ թէ «Փուլըքի ձին դերի բերինք. այս մէկ, երկրորդ՝ Սոսըքի յարգը չգիտեն, տանեն ջուր ոչ վայր պիտի բառնան։

Բուլլըք սկսաւ հառաչել.

—Աղբայր, քեզ ինչ եղաւ, ասաց Կեառօն.

—Քո տուն չաւիրի, ասաց. արի, տես, ինչ եղաւ։

Կեառօն տեսաւ զարկածը մխուած է սիրտը, դուրս քաշեց. դուրս քաշածին պէս ընկաւ, մեռաւ Բուլլըք։

Կեառօն եղբօրը դիակը բարձաւ ուղտերէ մէկուն վրայ. նոյն օրը հանապարհ ընկաւ իրենց հայրենիք իրենց աւարով և ուղտերով։

Բուլլըքի դիակը ուղտի վրայ զետեղեցին այնպէս ինչպէս ողջ մարդը նստած լինի, ուղտի իւրաքանչիւր քայլուածքին Բուլլըքի ձեռքը յետ, առաջ կերթար, կգար։

Քիչ ու շատ գնացին, մօտեցան Ամարի Մլի երկրին։ Կեառօն իբրև աւետաւոր, առաջ յղեց Բաղտէի Ֆլէին, որ գնա, աւետիս տայ միրին։

Աւետաւորը գնաց, միրի առեանը կանգնեցաւ, ասաց.—Ակնջկլէս, աղա, փառք Աստուծոյ. յաղթանակաւ վերադարձանք. վաղ Կեառօն իր աւարով և Բէջանով կը վերադառնայ։

Բաղտէի Ֆլէին իբրև ակնջկլայ թանկագին ընծաներ տուեց միրը։

Վարտէք հետևեալ օր իր բարեկամներով գնաց դիմաւորելու իր որդոց։ Տեսաւ. փոխանակ Բուլլըքի, աւարին կառավնորդէր Կեառօն. համբուրեց Կեառօյին, հարցուց.—Կեառօ, որդիս. ուր է Բուլլըք, ձեր խմբի մէջ չերևար։

—Ետևի կարաւանի հետ կգայ, մայրիկ.

Մայրը անմիջապէս զգաց որ որդին սպանուած է. եթէ նա ողջ լինէր, աւարի կարաւանի առաջ ձի խաղցնելով պիտի մտնէր վարսաեղին։ Նա չտապեց, արագաքայլ գնաց առաջ. ինչ տեսաւ. Բուլլըք նստած էր ուղտի վրայ, աջ ձեռքը կերթար ու կգար. ծնկներուն զարկեց. սկսաւ հեկեկալ, լալ ու երգել.

—Բուլլըք, մեռնեմ ձեռացդ որ կախեր ես,
Ետեւ ու առաջ շարժելով կը fարոգես.
Աշխար այսպես միշտ եղած է, կասես.
Այսպես ալ պիտի անցնի ձեռքով ճշաճ կաճես։
Ջկայ Սոսըք. որդի, ո՞ւր են զհնիեերդ
Ինչու պիճդ փակած ես վառուրռուն աչեերդ.
Սոսըք ինչու թողիր, ուղտի նստար,
Այս աշխարհին ինչու այդպես շուտ ճեռացար։ *

* Այլ եւ այլ ճիւղերով կը պատմուի այս վէպը. ուճի շատ երգեր, Վարտէք եւ Ռէնճաճ երբ կերթան դիմաւորելու, մեռած կը տեսնեն. երկուքն ալ փոխ առ փոխ կերգեն։ Այս երգերն գրի չեմ առած։

վ.որտէք եօթ օր եօթ գիշեր սուգ արաւ, սև կապեց, լացաւ ու ծննդեբուն տվեց։

Իսկ Ամարի Մըլ երբ Բէջանը տեսաւ, մեծ ուրախութիւն արաւ, եօթն օր, եօթը գիշեր դօհուլ գուսանք ածել տուեց, հարսանիք արաւ. մխիթարեց Քուլլքի մօր, իր Ռէհան աղջիկը պսակեց Կեառօյի վրայ։

IԶ

ՔՈՒԼԼՔՔ ՈՒ ԿԵԱՌՕ

(Արձէօու բարբառով) *

Կեղի չեղի, Կիկանցոց, Մլանցոց էլ աղասին Ամար անունով դոլվաքւոր քուրդ մի կեղի. էդոր Փարիչան անունով չատ խոբօտիկ աղջիկմ կեղի, անունով, նշանով, յերկէն բոկով, ջոբր խամճ տեղ բոկէն կերևէր։ Ինչ կնատր դոլվաքւոր քուրդ կին էդոր էլի մէջ, էկան էդոր աղջկէն յուղնկան, մէկին էլ խոստ չէկաւ։

Մնաց օրմ, յինքն ուրին չատ մէզեց. ուր մլզուածքով խորխուրդմ էրաց, յէլաւ ուր խորխուրդ ուր կնկան էլ ասկարա էրաց, ասաց.—Կնիկ, ես բամ մեմ մէզեր եմ։

Կնիկն ասաց. — Աստուած բարին կամենայ, խեր էնայ քու մլզուածք, ինչ ես խորխուրդ էրեր։

Մարդն վերուց, ասաց.—Ես կնատր աղա, իշխաններ մեր էլի միջէն օրական մեր աղջկէն յուղնկան էկան, մենք էլ մէ խոտ չիշկռանք, չի տուեցինք. մկայ ես լսեր եմ Արաբստանայ էլ աղասի խոդբր աղա—Բրայիմ աղա կան, էնդոնց մէկ խորօտ ձիմ կայ, ա-

*) Իմ առաջարկութեամբ գրի առած է Այտզկերեի խասեաւր գիւղացի Խաչայէկ Միրաքեան։ Ինչպէս կերեւի ասողր երգերն նայացուցած պատմած է, բայց քէ գրառածին եւ քէ երգերու մէջ շատ թերութիւններ կային, կարգադրելու համար մեծ նոգ տարած եմ, եւ կարգի դրած։

Նուն Բէջան ա։ Բերենք մէկ ծանոթ ազար-իբրամ էնինք մեր աղա, իշխան մարդկանց, յետին դրուն էլ բերենք մէկ կթխէմ շարբաթ դնենք օսկի սաճարախի վրէն, բերենք դիվնի օրթալախ. ես վերեւանց կը բռնամ, կասեմ.—Աղա, իշխաններ, դուք յրմնքդ էլ էկաք իմ աղջկէն յուղնկան, ես մէկիդ էլ խոսք չտուցի. յէսօր իմ աղջիկ Փարիչան խանըմ էկեր ա մայթրնի օրթալախ, որ մէկիդ կուվար օր կը խասի, ձեր մոքով, ձեր խելքով որ մէկդ որ միտք ունիք իմ աղջիկն յուզելու, էդ կթխայ շարբաթ վերուցէք, խմէք, դնացէք Ալաբաստանու Խդըր աղա, Բրայիմ աղի Բէջան անունով ձին բերէք, ես իմ աղջիկ—Փարիչան խանըմ բերող տղին առանց դալնի տամ։

Կնիկն էլ ասաց. — Աստուած խեռն էնա, աղէկ խորխուրդ ես էրիր, էդ բան օր էդյա էնիս, չատ աղէկ ա, բալի աղջիկ տանք իրկան, ուր կարդուելու վադր էլ խասեր ա, մէկ օր մի եա մեր խոլըւուն եա մեր մշկու խետ կը ճօչան (բանբասանն), մեր նամուսին ամօթ ա, մեր պատիւ ափսոս ա։

Էն մէկել օր Ամար աղէն յէլաւ, ձեռ էրաց, բաստիր տեսաւ, տուեց հաւարի, դումբ զարկեց, հլի մէջ աղքատ, դօլվաբոր յրմեն դանչեց, բերեց տուն։

Դումբ զարկողից էկողները խարցուցին. — Ամար աղէն մղի ընչի ա խանչեր, Աստուած խեռն էնա, ինչ յադով ա։

Ասաց.—Ըակի, էլման յէսօր ազար-իբրամ պտի էնայ։

Գացին դիւաց նստան. Ամար աղէն ասաց. — Ինչ օր քեռուց կտրիճ ա, ինչ օր յինք չասարաթով, չնամով ա, ոն մնացեր ա, ոն չմնացեր, յրմեն խանչէք։

Մչկներ ասեցին.—Աղա, զրմեն խանչեցինք, մեր մէջի մհաճիր Սլէմանի էրկու Լամուկ—Քուլլըք ու Կեռւօն մինակ չինք խանչեր։

Աղէն ասաց. — Գնացէք, էնոնց էլ ասէք, թո գան, էնոնք էլ կտրիճ տղեկներմ կերևան։

Մչակներից մէկը գնաց էնոնց տուն, Կեռւօն ու Քուլլըք բերելու, ներս մտաւ, բարև տուեց։

Կեռւօն բարևն առաւ, ասաց.—Խէ՞ր ա։

—Շուխր, խեր ա, ասաց. յէլի էրթանք, աղէն քեզի ու քու աղբօր կը խանչայ ազար-իբրամի։

Կեռւօն ասաց. — Որ յրմալ ա, աղբէրս Քուլլըք նալա քնած ա. գնա, նոսի յոտներու մօտ, յոտներ մաժա։

Քուլլըք սորվեր էր, էդոր քնած տեղէն ձէն տալով չիմցուցին. պտի էնդոր ոտներ մաժելով քնած տեղից վեր խաներ։

Մչակ գնաց, Քուլլըքի ոտներ մաժից, Քուլլըք չիմցաւ յէլաւ, ասաց.—Խէ՞ր ա. ինչ կայ։

Ասաց.—Շուխր, խեր ա, Ամար աղէն ձեզի կը խանչայ։

Կեաւօն ասաց.—Դու դնա, ես ու Քուլլըք յետևանց կուգանք։

Մշակ յելաւ, գնաց։ Կեաւօն յելաւ, առվանին թալեց Քուլլըքի թևերու վրէն, յելան երկու աղբէր մեկտեղ գացին։

Կեաւօն ասաց.—Գիտես, Ամար աղէն էս ծանոթ իֆրամ, ազաթ ընչի՞ ա էրեր։ Քուլլըքն ասաց.—Չէ, չի գիտեմ։

Ասաց.—Էսօր եկի մէջի աղէք, իշխաններ օր էկան էսօր աղջըկան յուզնկան, օր չտուեց, էլ մարդ գինք վրէն չքշեց, տեսաւ որ աղջիկ պտի մնայ ուր վերէն. էս ազաթ ու իֆրամ որ էրեր ա, բաւիր մեկ կերպով տայ իրկայ։

Քուլլըք ասաց.—Ի՞մալ պտի տայ իրկան։

Կեաւօն ասաց.—Իմ մեր ըստուց քեանիմ օր յառէջ գացեր ա Ամար աղի տուն, կնկանից ա լսեր Ամար աղէն էդ բան պտի էնայ։

Քուլլըքն ասաց.—Ի՞նչ բան պտի էնայ։

—Ամար աղէն ազաթ-իֆրամ պտի էնայ, յետին դրուն պտի բերայ կթխէմ շարբաք օսկի սաճարախի վրէն դիվճի յորթալախ, ասա.—Աղա, իշխաններ, դուք յրմինդ էկաք իմ աղջկէ յուզնկան։ Էնոնք էլ պտի ասեն.—Խա, մինք էկանք, բալէ դու չտուիր .... Կեաւօն էս ասաց, պրծաւ, զարձաւ Քուլլըքին ասաց. — Քուլլըք, մեռնիմ քեզի, չէղի յէլիս մէկ բանմ էնիս. մեզի ինչ լաղա կայ յէմալ բաներուց. մինք էրկու խատ կարիպ-էրում տղայ ինք, յընկեր ինք յԱբաբատանու երկրից էատիղ, մեզի կապրինք։

—Հայ շապա՜շ, մալի ապա՜շ. Սիյամանտ խաճա զերին տարաւ, ճանկ մը ոսկի խոուր մրդրըպիւն։

Որ ասաց. «Խաճէն տարան, յըմին տուին մըշ գլխուն. ես տուի մըշ գլխուն, դիւ տուիր մըշ գլխուն, ասին։

—Ձէն մի՛ տուր, սուբ ի. Արաբանցոց հլի լամուկ լսնայ, քե կապանի։

Ասաց.—Աստուած ձեր տուն աւիրի, տարաւ գնաց, ես իշ ասեմ։

Սիյամանտ Խաճէն բիրեց, եկաւ պառիճ, խլացուց, էկաւ Սարհասի սիճոռ, (արևելեան հիւսիս),

Որ լսացաւ, ճաւար ընկեաւ խոհ. ջոջ, պատիկ ընկեան խոհ. պառուու լաճերն էլ էկան, գնացին, խասան Սիյամանտին։

Ասեմ, պառուու լաճեր խնծլի պառահիճ բռնած չըն Թողնի մարդ էհայ. վեսէն մըննակ կեհայ։

Ասեմ Սիյամանտ զատնի, Խաճէն կեօ դրե, նստե։

Փեսէն գնաց, մօտացաւ, գեախն է խասնին մօ մէմէկ։

Սիյամանտ իլաւ, դասբրմալ տուեց Խաճ ձեռ, ասաց.—Սդայ պիւ խաղայ, ես տեհամ իննոր յառաջ։

Գնաց իննոր յառաջ։ Էդա պառուու լաճեր խնծլի պառահիճ բռնած չըն Թողնի մարդ գեայ, կասին.—Խաճէն էրկըսից մէկ տառնի. մենք առնող չընք, մի՛ գնացէք,

Էրկուս խասան Թըլս մէ մէկէլ. մէմէկու բերլոր իլան պատռ. Սիյամանտ քեամակ մըննէն առեց, մէկ բօխուզ գոնեց մըշ գլխուն. ճանճղեց, բիրեց տակ. պայա արեց գեաին։

Խաճային դանչեց.—Արի աղայ, քիւ պամամու գլօխ դիր վրը քիւ չոքին. fհասար չմնայ մըջ սրտին. չու էնոր խոքին թառնի։

Իկաւ, դրեց ուր չոքին, չու խոքին տուեց։

Խաճէն խոծաւ ղէնու պամամու ձին, զինք խոծաւ ուր ձին. քշէ՛ն, դնացին։

Խիծել էկաւ էն ասլանուկին. տուին իննոց մարդ, դնացին. Սիյամանտ տուեց Խաճէն, էկաւ։

Դնաց Սիփանայ քեամակ գաչում կայ. դնաց, նստաւ։

Ասաց.—Բնօ չոք դիր, Խաճէ. ես գլօխ դնեմ վրէն քընիմ։

Գլօխ դրեց, քիւն տարաւ։

Մէկ վէրու կով էկաւ, խինք վեց ցլոր իտև կովուն էր, մէկ մընէ դոչախ էր, կով մէկիկանցմէ խլիր էր Խաճէն ծծղաց, ասաց.—Էսա հաքի Սիյամանտ ի, կով զըմեկելացմէ խլէ, կառնէ կեհայ։

Որ ծծղաց, Սիյամանտ ակխաւ, ասաց.—Պեկաւի էկաւ վրը ձիկ որ դիւ կը ծծղաս։

Ասաց.—Չէ։—Պա ինչ իլաւ որ դիւ կը ծծղաս։

—Մէկ վերու ցլոր էկաւ, դնաց. մէկ վերու զըմենացմէ գկով խլէր էր, ասի. ախա ես Սիյամանտ կը մանիմ։

Ասաց.—Անս ընեի ես խոքիւն, եան ես սաղ մնամ, եան էն, չումրու դիւ ասիր Սիյամանտի ցեղն ի։

Ասաց.—Սիյամանտ, ես ինչի կանիմ, մի գնա, ես կուրպաճ իմ քիս դիրկեվանին, մի գնա։

Ասաց.—Չէ, ես պոի էհամ։

Էլաւ դիրկեվաճ կապեց վրը ուր, դնաց։

Գնաց վէրու եղ կիս գնացե, խասե Սիփանայ գլօխ, կովն էլ կիս կչաին. մէկ դիրկեվաճ թալեց իննե. զանեց, վէրու եղ սպանեց։

Գնաց, ոտ տուեց կօտչին, որ տը զինէր. դանակ թալեց, վիզ կտրեց. էն ուր գլօխ թափ իտուր, կօտօշ զանեց Սիյամանտի ոտաց տակ, թալեց։

Սիյամանտ գնաց, ընկեաւ Սիփանայ տակ։

Ընկեաւ վրը մէկ պալալիւկի կոճին, վրը ուր քեամկին։

Կոճ մէկ թիզ իննոր սրտից տուեց դիւս, սպանեց, պրծաւ։

Խաճէն իլաւ իր չոփին գնաց. գնաց իլաւ Սիփանայ գլօխ, իչ վէրու եղ դայ մրտըրլէ. իչկաց զատ, մարդ տեղ չըտեհաւ. իչկաց մէկ ճալոց էկաւ, գնաց քաբի գլխուց իչկաց Սիյամանտն ի, ընկի, կը տքհայ։

Խաճէն իլաց։ Դորես իաղ ասին իրարու։

Խաճէն ուրին իսկեց ցած։

Մկայ էրկուս էղած ի ծառ։

18

ՍԻՅԱԲԷՆՏՕ ԵՒ ԽԱՁԷ ՁԷՌԻՆ

(Խլարայ բարբառով) *

Ալիվանայ էրկիր Ալիվանցիմ կեղէ. էգոր մէկ տղայ կեղի, տղի անուն լէ Սիյաբէնտի կեղի. չատ աղքատ կեղին։ Մէկ օր կելլին ինքն ու ուր խէր խորթեր կը տանին, արծան։ Խորթեր կը բերեն, խէր կասայ.—Գնա, գեղէն խաց ժողվա բի։

Սիյաբէնտօն կերթայ մըջ գեղին, խաց կը ժողվայ, կելնի օր տուն բերայ, ճժեր կը ժողվին վրէն ձեռնէն կառնին։ Սիյաբէնտօն էսմալ ինչ խորր խաց կը ժողվայ, գեղի ճժեր կը կըլեն մօտէն, էնի գարտակ կը թորկայ կերթայ մըտ խէր։ Լուսուն լէ էլման գնաց, ժողվեց, էլման ճժեր առան մօտէն։ Մէկ օր լէ գնաց մըջ գեղին, տեսաւ օր, հեռի լողայ մօտէն, մէկ ջանդակ կէր, չներ թափած էն վրը ջանդրկին, կուտին. իչկեց պզտիկ բօճիմ էկաւ, զէդ չներ դէն լարեց, դէն լարեց, ջանդակն ինքն գաւթեց։—Վայ, էսոր խող իմ գլխուն էղի, ասաց Սիյաբէնտի Ալիվին, ես ինչ խորր խաց կը ժողվեմ, կուգեան ընձէնէ կը խլին, ես ձէն չըմ խոսայ։

Սիյաբէնտօն էլման գնաց խաց ժողվեց, ճժեր էլման թափան վերէն. Սիյաբէնտօն ա, դարձաւ վրը ճժերուն, ամէկին դրրբ մը էզար, էնտեղ լարեց, էնտեղ. առաւ խաց, գնաց խօր կուշու։—Սիյաբէնտօ, ասաց խէր, ամեն օր խաց չըր բերէր, լալելին գիգէր, յէսօր ինչ էղաւ։

Ասաց.—Ափօ, յէսօր գացի, զաղար մի իսմլա էրեց, ե լէ իչկեցի զաղարին, զարկեցի ճժերուն, լարեցի, խաց առայ, էկայ։

Սիյաբէնտօն մէկ ամիս մնաց խօր կուշտ, մէկ օր ասաց.—Ալիվանայ խաց ընձի խարամ ա կեցի, ես թորկիմ, էրթամ ուրիչ էրկիր։ Թորկեց էկաւ էլ-աղաստս մը խող, տեսաւ ուր խոգի մարդ

*) Պատմած է Տափավանի գիւղացի Պօղոսեան Սառաս։ Վէպիս նիւղերը շատ են, ունի րնդարձակ երգեր։

Ներկայ Սիյամանցի սոյն երկարդ նիւղը ունի երգեր որ այլ եւ այլ բաղցր եղանակով կերգուին։

նստած էն ղրսա կէնին. վչում կայնաւ, իշկնց էնոնց բերան։ Կանչեցին էդ մարդիկ.—Աբի էստեղ։

Սիյաբէնտօն դնաց էդոնց մօտ, էդոնք ասին.—Գնացէք, խաց բերէք, Թը ուտայ։

Խաց բերին, ասին.—Քու անուն ինչ աւ — Իմ անուն Սիյաբէնտօ ա, ասաց։

—Ո՞րտեղացի ես—Սլիվանայ երկրէն եմ։

—Դու ինչ աբով կը պատռես—Կը պատռիմ իմ ապրուստի համար։

Սիյաբէնտօյին մչակ բռնեցին. Թառի տակի ձին տուեցին ասին.—Էդ ձին աղէկ կը տիրես, կը չախես։

Սիյաբէնտօն պղինձ մի ջուր լցեց, դրեց Թորուան վերէն, զէդ երկու ձին խանեց դուս, ըրդի սապօնով լուաց. ինչ որ ուրիշ ձիանքներու եմ կուտէն, գողնէր, կը բերէր էդ երկու ձիու առէջ կը լըլէր։ Մչկըներ էկան, մտան թաւլեն, իշկեցին օր ձիանք էրկու օխտայով կապեն, չզաւթուիր. իմ աղբօր ասեմ, տասուերկու խոգի էկան, էրկու-էրկու մանիթիյա տուեցին Սիյաբանտօյին։

Օրերուց մէկ օր էլ-աղասին էկաւ, մտաւ ձիանքներու մէջ, տեսաւ ձիանք էղած ա ֆեաթիլ ձիու պէս նազարի. կանչեց մըչկըներ էբեր, ասաց.—Էսա ձիանք ինչ ձի են։—Թառի տրկի ձիանքն են, ասին մչկըներ։

—Էս պրն ա տիրեր, կանչէք Թը իգայ։

Սիյաբէնտօն էկաւ. էլ-աղասին խարցուց.—Անունդ ինչ աւ։

—Իմ անուն Սիյաբէնտօ ա. ես Սլիվանայ երկրէն իմ։

Ասաց.—Իմ տակի ձին տուէք, Թը տիրէ։

Սիյաբէնտօն էր, զէդոր ձին իմալ տիրեց, քու հաւնածի պէս, որ խեծնէր, ինչ որ խաւքաւ կը Թռնէր։ Էդ օրեր էլ-աղասու խող քեառաւն էստա խարամի ընկեան. գալացող քալնեցին. էրԹըցող քալնեցին. ձէն գնաց, էստաւ էդ էլ-աղասու Թագաւորին։ Թագաւոր գիր գրեց. — Դու չկեառնես քու երկիր զաւթեր, օր գողուԹեն չէղնի։

Էլ-աղասին կանչեց, բերեց էրկու խարիր էստա մչակ, ասաց. —ԿերԹաք, գէն գողեր կը բերէք, օր չի բերիք. կը մլեմ դուս։

Սիյաբէնտօն, իմ աղին ասեմ, էկաւ. տեսաւ մչկըներ ղրսա կենէն, ասաց.—Էդ ինչ ղրսա կեննէք, ինչ դաւի աւ։ Ասին. — Էլ-աղասին մըզի կանչեր ա գողերու աբով, մենք կը վախենանք, Իմալ էրԹանք, չընք կարայ ընդոնց վերէն։

Ասաց Սիյաբէնտօն.—Դէ, գացէք, ձեր էլ-աղասու ասէք. Սիյաբէնտօն կասայ.—Էլ-աղասին ուր տրկի ձին Թը տայ, ուր ճակեր Թը տայ, որ ես էրԹամ, բռնիմ, բերիմ։

Էն մարդոց մէկ՝ մէկ չափալեխ էզարկ Սիյաբէնտօյի էրես. էն

մէկել ասաց.—Ցորին զարկիր, ախոռս չէր Սիյաբէնաօն։ Սիյաբէնաօն ասաց.—Կը զանի, զանի, զարար չունի։

Ասաց էն չավալեխ զարկող.—Ըզա մենք էրկու խարիր խոզի ենք, մենք յորին չկրնանք էրթար, էսի մնակ կերթայ։

Ասաց Սիյաբէնաօն.—Ես Աստուծոյ խրամանքով կերթամ։

Էն ուզ խոզին գացին էլ-աղասու մօտ, ասին։ — Էլ-աղասին անուշ մնայ, Սիյաբէնաօն կասայ.—Ուր տըկի ձին տայ ձի, ես մընակ էրթամ, բռնիմ բերիմ։—Դէ, չուտ կանչէք թը գայ, ասաց։

Կանչեցին էկաւ.—Դուռ իս «ճարամիք կը բռնիմ, բերիմ» կասես։

—Աստուծոյ խրամանքով կը բերիմ, ասաց։

Էլ-աղասու ձին բերին, ճակեր կապեց վերէն, էնտեղ «քառլան գլօ» մի կանչեց Սիյաբէնաօն.

Էարի, յո՜ յո՜ յո՜. էլ-աղասը, հազ րը դորան,
Էազի րը դուվարա Աոսկ ճճաւրիմ.
Դրզան դրդրիմ ու բլնդրիմ էլաղասի։

... Ես քեզ մատաղ,
Ես Աստուծոյ ուժով կերթամ.
Գողեր կը բռնեմ, բերեմ էլ-աղասուն։

Էլ-աղասու ձին խոծաւ Սիյաբէնաօն, դնաց. Աստուծոյ խրամանքով տեսաւ քառասուն գող սարի գլօխ, ասաց.—

Գեաղի սուարան, ռարիւ հասպան սուար բրբրիմ,
Նարէ բրբեմ Սիյաբեճսօ բեյտեճի հար ու մա գըրբ.
Դէ, ռարա, գին ու հասպէ խո չերբիմ, շերա Աոսկ բրկրիմ։

Այ, ձիաւորներ, ելէք, ձիանքը հեծէք,
Չլինի ասէք Սիյաբէնաօն ապերախտութեամբ եկաւ, բռնեց.
Դէ, ելի, քու ձիու թամբը չինէ, Աստուծոյ օրէնքով պրէք։

Գողեր ասին.—

Սիյաբեճսօ, դիր ու կեավան, զու ու գին մարըմ բը բրնիյէ.
Դիւ չմնան մեա բրկրէի, ըրնըմ չըլ մարըմ ըրն։
Բը դուվարա Աոսկ հազի ո բրկրիմ։

Սիյաբէնաօ, նետ ու աղեղ, ոսկի, արծաթ, մարդով վինակ ես.
Դու ինչպէս մեղ կը բռնես—քառասուն մարդու։
Աստուծոյ ուժով ես ձեզ կբռնեմ։

Գողեր սուսցին վերէն, կռիւ էրեցին. քեաւսուն լէ Աստուծոյ խրամանքով բռնեց, զոռներ կապեց ձիու փորու տակ ու, իմ աղբօր ասեմ, ձեռներ կապեց, առաւ էկաւ էլ-աղասու մօտ.

Էարի, ձիւ ռարա, էլ-աղասի, դէ, ձիւ ռարա բրճեռ։
Սիյաբեճսօ լի կըր, հէյ վույ՛, հէյ վույ՛.

Դու ելիր, էլ-աղասի, դէ. դու ելիր, տեսար
Սիյաբէնաօն ինչ ըրաւ, հէյ վույ.

էլ-ադասի, դէ, ծու ոարա մեզա բըկես, րը դոմարա խոսկ. Սիյարհեռօ ըշտառա չի աճիյա.— Չրւ դըզ մը ըշտառա աճի:

էլ-ադասի, դէ, դու ելիը մտածէ, Աստուծոյ ուժով. Սիյաբէնտօն քեզ համար ինչ է բներ.—քառասուն գող ես քեզ համար բերի:

Էլ-ադասին ասաց.—Բռնէք Սիյաբէնտօյի ձիու գլօխ:

Սիյաբէնտօն ձիուց թռաւ ոակ, գնաց ձեռ էտուր էլ-ադասու ձեռ. էլ-ադասին բռնաց ճակատ պադեց. կանչեց, էրկու խարիր խատ մշակ էկան. էլ-ադասին ասաց.—Սիյաբէնտօն ձեր էրկու խարիրին ջոջն ա. էնի իմ ջոջ տղէն ա, չըլաի Սիյաբէնտի խօսաց էլիք:

Էլաւ, զդողը ճանփեց, գնաց թագաւորին: Սիյաբէնտօն էկաւ, նստաւ էլ-ադասու կչտին, ախ քեաշեց: էլ-ադասին ասաց.—Սիյաբէնտօ, դու յօրին ախ քեաշիր:

Ասաց.—Իմ խէր, իմ մէր Սլիվանայ երկիրն ինչ:

Ասաց.—Դը յելիր, լուսաւն խուրճի մի օսկի կը լցնեմ, կառնես կերթաս քու խօրն ու մօր կը բերես. օր չէկան՝ օսկին քը ուտին մեռնելու ժամանակ:

Սիյաբէնտօն լուսաւն ընկաւ ճանփախ, գնայ գնաց Միր Արաբու հին ըռասր էկաւ. տեսաւ խազար կօճ մէկ բարաճ ա, մէկ կօճ մէկ բարաճ ա. ասաց.—Ես պտի էրթամ, իմանամ, էգըր էուքն ինչ ա, օր զատանց ղրեր ա: Գնաց կօճի մօտ, տեսաւ աղջիկ մի կօճէն էլաւ: Սիյաբէնտօն ձիէն թռաւ տակ: Աղջկայ ձէք առաւ Սիյաբէնտօյին, խելք գնայ. իշկից, Սիյաբէնտօն չատ խօրատ ա, աչերքի մէջ չի դոնուիր:

Սիյաբէնտօն ասաց —Ռու անուն ինչ ա:—Խաճա Զէռին:

Ասաց.—Ռեզի խէր ու մէր, պամաւ, ինչ ունես:

Ասաց.—Եօթն աղբէր ունեմ:—Ըպա քու անուն ինչ ա:

Ասաց.—Իմ անուն Սիյաբէնտօ Սլիվի ա:

Խաճէ Զէռին տեղ ու բարձ էրեր, մըջ կօճին դրեց. կօճ էլ էն դդար ջոջ ա, եօթ սուն ա:

—Ռու աղբրտիք դոր ա գացած. ասաց Սիյաբէնտօն:

Ասաց.—Իմ աղբրտիք դացած ընձի արով Կոնէ Միր Արաբու խատ կռիւ: Ասաց.—Ցորին ա գացած:

Ասաց.—Ես Կոնէ Միր Արաբու խօրողբօր աղջիկն իմ:

Ասաց.—Ռու աղբրտիք յորին չի տան Կոնէ Միր Արաբուն:

—Իմ աղբրտիք կռւտան, կասեն. «Գնա, մէկ ունէ եօթ խատ աղջիկ բի մըղի, որ մեր քուր տանք. էն էլ չէրթայ. բերայ:

—Է, ասաց, յէսօր քու աղբրտիք կըգան:—Եա, ասաց:

Ցիրկուն էկան. տեսան մէկ խուրնիկ խրեղէն մարդ մի չատ նստեր ա: Բարև տուին:—Աստծու բարին ձեզի ասաց:

Խաճէ Զէռին ջուլ բերաց, աղբրատց տակ դրաց, նստան։

—Աղբրտիք, դու դո՛ր իք գացէ, ասաց Սիյաբէնտօն։

Ասին.—Գնացեր էնք, կռիւ կենէնք Կոնէ Միր Արաբու խատ. չէ էտա Խաճէ Զէռին մեր քուրն ա. Կոնէ Միր Արաբու աղէն էկեր, մեր քուր կուզայ, մենք լէ մէկ տնէ հօթ քուր կո՛ չենք, որ մեր քուր տանք. էն լէ խօսք տուեց, մըկայ փուսմըներ ա, չտար, կասայ. «Ես չկարամ». մենք լէ մեր քուր չտանք։

Լուսացաւ. Սիյաբէնտօն էլաւ, ձին խնծաւ. էլաւ որ գալ էրթայ Սլիվան, աչքը ընկաւ Խաճէ Զէռին, ուր էրթալ փուսմընաւ Ջոջ աղբէր էն գզալիկ աղբօր ասաց. — Գնա, էն ձիւուր դանչո՛ թը գայ։

Էկաւ ասաց.—Ձի ընչի՞ կանչեցիք։ Ասին.—Մենք հօթ աղբէր ենք, մենք մեր խօսքեր էրեցինք մէկ. մէկ էլ դու կեղիս՝ կնդինք ութ. մենք մեր խօսքեր էրեցինք մէկ, որ Խաճէ Զէռին տանք քեզ։ Ասաց.—Դու որ ձեր քուր տուեցիք, ես էլ կերթամ մէկ տընէ հօթ աղջիկ իմ փարոյ, իմ դալճոյ բերեմ ձեզի. յըմա բերէք, Աստծու յառէջ վադդա էրչէք, օր չի փուսմընիք. ասա՛, թը ձեր քուր բերայ, մատնիք վոխեմք։

Էն օր մնաց էնտեղ. լուսուն էլաւ, դարձաւ գնաց դրէս էլ-աղասին, չդնաց Սլիվան։ Գնացին, էլ-աղասուն ասին.—Աչքդ ի լուս, Սիյաբէնտօն էկաւ։ էլ-աղասին կանչեց, խարցուց. — Դու յորին չգացիր Սլիվան։

Ասաց. — Ես գացի հօթ աղբօր ըռասք էկայ, Խաճէ Զէռին տուին ձի. մէկ տնէ հօթ աղջիկ պըտի տանիմ էնոնց իմ փարոյ, իմ դալճոյ։ Ասաց էլ-աղասին. — Ընձի աղբէր մի կայ, էնոր հօթ աղջիկ կայ։

Էլաւ խարիր յիսուն դէվսբեռ մալ բուներ, խաղար ձիւուրով խնծաւ, առաւ Սիյաբէնտօն ու գնաց ուր աղբօր մօտ. էն մէկել աղբէր էկաւ յառէջ, տարաւ տուն, ձիւուրներ ցըլրեց. իրեք օր մնաց, ասաց.—Աղբէր, էս ինչ բեռ ա։

—Ես էկեր եմ, քեռ հօթ աղջիկ կուզեմ, տանեմ Կոնէ Միր Արաբու աղբօր տղէկներուն. էտա յիսուն բեռն էլ քու աղջիկներու դալեն։

Աղբէր ուր աղջըկներ տուեց. էլաւ աղջըկներու խատ խարիր բեռ ջընեզ էդիր։ Էլ-աղասին առաւ, էկաւ ուր տուն իջուց աղջըկներ։ Օր մը մնաց, խըլուսուն խնծան, էրկու խարիր ձիւուրով գնացին. գնացին տեսան օր կօճ, մարդ չկայ. տեսան օր հօթ մարդ էնտեղ էկան. ասաց Սիյաբէնտօն.—Դու ինչ մարդ էք։ Ասին. —Կոնէ Միր Արաբու մարդիկն ինք։

—Ցա՛ւը ա էսա կօճի տէր։ — Կոնէ Միր Արաբու տղէք էկան, կռիւ էրևցին, Խաճէ Ջէվին տարան։

—Ասկեա՛ր, ասաց Սիյաբէնտօն, դու տուէք աղջըկներ դարձէք։

Ա՜սաց,—Ընչի՛ տարան։ — Սիյաբէնտօ Սլիվի կէր, էդոնց քուր ուզեց. էդոնք էլ ասէց աղջիկ ուզեցին. էլան բէբախտութեան էրին. թէ «մեր քուր չէք իայ էլօղուն, կուտանք մեր խօրոզբօր տղին»։

Սիյաբէնտօն մինակ խնծաւ, գնաց իջաւ Կոսէ Միր Արաբու էլին մէջ. գնաց իջաւ ասէն սուն կօճի մի դուռ. տեսաւ մէկ խանըմ մի նստեր, ղալօն կը քաչայ. խարսին ասաց. — Ջուլ բեր, դի, իմ տղէն թը նստի։

Տեսաւ չատ խօրտիկ տղէմ ա, ասաց.—Նստի՛, որդի. իմ տըղին իայ բերէք, թը ուտայ։ Որ կերաւ, խանըմ ասաց. — Դու ո՞ր երկրէն ես։ Ասաց.—Ես խարիբ երկրէ եմ։

—Խանըմ, էդ ինչ խարսնիս ա։—Խաճէ Ջէվինի խարսնիան ա։

—Ջէ, ուրիշ մարդ էր ուղի։—Որդի՛, ասաց. դիւցեն բէբախտ ա. Սիյաբէնտին պըտի տէն, մըկայ Կոնէ Միր Արաբու տղէք տուած ա ուրանց խօրոզբօր տղին, ընդոր խարսնիան ա բռնած։—Մարէ, Սիյաբէնտօն ես եմ, ասաց։

Խանըմ ասաց. — Ես ասէ տղայ ունիմ. վաղդա դրար էղի, իմ ասէ տղէն դնեմ քու ուղուր։

Կանչեց զտղէկներ էրևր, ասաց.—Իմ ծծի կաթ ձըգի խարամ էղի, օր, էսի Սիյաբէնտօն ա, կերթայ Խաճէ Ջէվին կառնի, Կոնէ Միր Արաբու տղէք որ կընկնին էսոր էտև, զարկէք։

Գնաց Սիյաբէնտօն Խաճէ Ջէվինի կօճի դուռ կայնաւ, ասաց. —Խաճէ Ջէվին, արէ։

Ձեռ թալեց ձեռ, քաչեց ձիու քարկ, էկաւ գովրնդի օրթալաղ կայնաւ։—Ղրնօլչի, զուռնաչի, ասաց. արէք էտեղ. «Շաբաս մալի աբաս», Սիյաբէնտօ ու Խաճէ Ջէվինի դլխուն. ասաց ու օսկի մի էտուր։ Մէկ լէ էտուր, ասաց. — Էսա օսկին լէ էս խաղցողնէրուն դլխուն «շաբաս» էրա։ Մէկ օսկի լէ էտուր, ասաց. — Էսա օսկին լէ «Շաբաս մալի աբաս, Սիյաբէնտօն առաւ գԽաճէ Ջէվին, դնաց։ բալաս (առանց ղալանի)։

Բօչէն չուրի շաբաս կանչեց, րըմրմնց, յըմեն դիայ չըշկռած կիչէին Սիյաբէնտօյին։ Սիյաբէնտօն զանկուն զարկեց ձիուն ու քըշեց ասկրէն. էլաւ դուս ու սահաթէն մի ճանփայ տարաւ գԽաճէ Ջէվին, իջաւ, ասաց.—Խաճէ Ջէվին, էրկու խատ լայլուխ կառնիս քու ձեռ, էտեղ կը խաղաս։

Կոնէ Միր Արաբու տղէն ասաց. — Ձեր ձիանք խնծէք, ճակը կապէք. Սիյաբէնտօն մէյտան կէնէ, ուր ձին կը խաղցուցայ. Խաճէ Ջէվին լէ էրկու խատ լայլուխ առեր, էնտեղ էլ էն կը խաղայ։

Սիյաբէնտօն դարձաւ վրը ասկըրին. էն հօթ աղբէր ընկած էն Կոնէ Միր Արաբու տղի էտև. Սիյաբէնտօն նետ ու անդմ էդար սպանից զԿոնէ Միր Արաբու տղէն։

Ասկեար քչցին վրը Սիյաբէնտօյին. էն հօթ աղբէր ասին.— Կայնէք, ինչու անասուածութեն կենէք. մարդ է՝ աւ, զուր կենիկ տարաւ. յորին կը քշէք վրը էդա մարդուն. չատ աղէկ մարդ ա, օ սպանից զԿոնէ Միր Արաբուն. տղէն մեզի զարար չէրաց. Թը Կոնէ Միր Արաբու տղէն զէնի զարկէր սպաներ, կենիկ էն առնէր, դարձէք, էրթանք։

Էնոնք դարձան. Էդի Սիյաբէնտօն առաւ կնաճէ Զէուին, էկաւ, էլաւ Սիփանայ գլօխ, ասաց.— Խաճէ Զէուին, իջիր ձիուց։ Իջաւ. Սիյաբէնտօն ասաց,—Նստի, իմ գլուխ. գնում քո չոխի վերէն։

Սիյաբէնտօն գլօխ դրեց վրը չոխին, պառկաւ. Խաճէ Զէուին իշկից Սիփանայ սար, տեսաւ վէրու կովը ու բուղէք էկան։ Խաճէ Զէուին իշկից, որ մէկ պզտիկ աղաւ մի դանից բէդ-բէդ եղներուն, կովը ինքը զաւրեց։ Խաճէ Զէուին դժարցաւ, էլաց. արցունք պըրծաւ, ընկեաւ Սիյաբէնտօյի յերսին։ Սիյաբէնտօն լմացաւ, ասաց.— Խաճէ Զէուին, յորին լացիր դու։ Ասաց։—Բանի չէր։—Սատ մաներ, տօղրու պտի ասես։—Վէրու մէկ կով էրկու-իրեք խատ ցլվոր էտև էկան. էն մէկ պզտիկ զարկեց էն մէկել չորսին. ես էլ դժարցայ, լացի Թէ «էսա աղաւ կը մանի իմ Սիյաբէնտօն, օ Կոնէ Միր Արաբու տղէն ու ասկեար դմեն սպանից, պիսի առաւ. էն արով լացի. ասի «զալրմ սա ջարաճ ...»։

—Խաճէ Զէուին, ասաց, դու էտեղ նստի, ես էրթամ, զէնի լարիմ, տանեմ սպանեմ, էնոր միս բերեմ, էնիմ քըզի բեապապ. ուտենք ու յէլլենք, էրթանք։

—Սիյաբէնտօ. ասաց. արի, մի էրթար. ես կը խնդրեմ քըզնէ, էն էլ քե պէս վրը մուրազի ա, դու արի խըտ ձի էրթանք, էն լէ խըտ ուր էրթայ։

Սիյաբէնտօն էլաւ լարից, լարից, լարից ձեռ թալից յետին ոտ բունից. բերից դրից վրը զընարին. վիղ կօրից, դրից վրը չոխին, օր պտի կըտրէր՝ վէրու աչառ ցոնցաց, կօտոչ առաւ Սիյաբէնտօյի դօշ, քարէն չպրտաւ ու ընկեաւ տակ. էնտեղն էլ բանձր էր, ընկեաւ վրը փետէ դալմին. սրտէն ծակից, մէջքէն էտուր դուս։

Խաճէն յէլաւ, ժուռ էկաւ, տեսաւ Սիյաբէնտօն չկայ. էկաւ, իշկից օր վէրու աչքու վիղ կտրուկ. իշկից ցածր, պառեկ ընկի վրը բըլալըկի թափի դալմին, սրտէն տուեր ա դուս. տեսաւ Սիյաբէնտօյին.—Վայ, իմ արեւուն, ասաց. դնաց Սիյաբէնտօյի մօտ կայնաւ, ասաց. — Սիյաբէնտօ, չէ ես քե ասի մի էրթար, դու ընչի իմ տուն աւիրեցիր, իմ աչք fonցուցիր։

Խաճէ Ջէւիւնի երկու աղջէր էկան, ասին.—Խաճէ Ջէւին, արի, էրթանք։

Ասաց.—Ինչէ՞ք էրթանք, մեռաւ, էլ ես ինչ էնիմ։

Էրիւ սահաբէն ճոնփախ դեացին. ասաց.—Կայնէ՞ք դա, չուր ես դեամ, քանի մոռցեր եմ, առնեմ գեամ։

Էկաւ խասաւ Սիյաբէնոցին, չոխերուն էզար, ասաց.—

Ukark Սիփանիկ խալաչկ բրլալիմ ա,
Թալանիկ բուղայիկ հուվի պայիզա

Տա չի անի ukար զաւա, բիւրա,
Տա չի անի ukար մեր ու ժրնա։

Ukark Սիփանիկ մըժ, մուրան ա,
Թալանիկ բուղայիկ հուվի ukար կավիկ պայիզա,
Ըռաշի ukark մա վարանի,
Նանիշո ամ կանանիկ մըրազի։
Ukark Սիփանիկ խալաչկ չոգ ա,
Տիր կեավանի Սիյամանցի չինց գազ ա,

Թալանիկ բուղայիկ հուվի ukար կավիկ պայիզա
Չի անի ukար զաւա բիւրա բազա։

Ukark Սիփանիկ խալաչկ գեղուկ ա,
Մը կըրա կուչին պապիկ.
Բեաժնա Սիյարեանօ դայեկ ըռահան ա

Թալանիկ բուղայիկ հուվի ukար կավիկ պայիզ,
Մը հըղդայ ըկ խոյ, ըկ խոտանան։

Ukark Սիփանիկ խալաչկ ղըրկմգոլ ա,
Մը կըրա եղսիր, ևխրտա ևաւա չօլ ա.

Բահրէ վանի բահրէ հուր ա,
Տէ ղրգեաղըն մսախչկ հուր ա.
Խաճէ Ջէւի, հառա մալա բաբէ խոյա
Մը ըժտռա դայա դեասուրա։

Խլաթայ Սիփանի գլուխ մացառատ է,
Ցափշտակութիւնը վայրենի ցուլի աշունքը,
Դու ինչ բերիր փեսի ու հարսի վրայ,
Դու ինչ բերեցիր մարդ ու կընկան վրայ։
Սիփանայ գլուխ մառախլապատ է
Ցափշտակութիւնը վայրենի ցուլի այս աշնան գլուխը
Սևը որ բերեց մեր գլխին,
Չթողեց մենք հանդիխնք բաղդի։
Խլաթայ Սիփանի գլուխը, ...
Սիյաբէնտի նետ ու աղեղը քանի՛ կանգուն է.
Վայրենի ցուլի աւարը աշնան գլուխ,
Ի՞նչ արաւ նոր փեսայի ու հարսի գլուխ.
Սիփանի գլուխը անցք է,
Ինձ արեց խեղճ ու անտէր։
Սիյաբէնտի հասակը մի ճիւղ ըռահան է։
Վայրենի ցուլի աւարը աշնան գլուխ,
Ես վերցուցի անտէր, անտիրական։
Սիփանի գլուխը կասեմ լիճ է.
Ինձ արեց գերի ու ձգեց անապատի մէջ։
Վանայ ծովը չատ խոր ծով է,
Մէջ մանկ կգան մանր ձկներ։
Խաճէ Ջէւի, գնա՛ քո հօր տունը,
Ես քեզ տուած եմ իրաւունք։

Խաճ Ջէռի, հազ բր դորքաւ,
Նայանայ ֆաբիյէ տկա:
Ժր տհմոր ֆեսցր ժր ճաւկա մրնի,

Բրխօ-բրխօ տհ խորա:
Սիյարհնցւ, տիւ ոարա բրմրռա,

Գա ֆուվի ֆրռա, հառա ըժխորռա.

Գա ֆուվի դրգեառրնի, բհվախբ ա,

Էավ ժի վոխա տհա բաղդ ա,
Տիւ ոարա բր մրռա:
Սհարհ Սիփանհ բր բախե ա,
Գա ֆուվի դր գհառրնի, բհ վախբ ա,

Էավ ժի մինհա տհա սհար բր բաղդա:
Վույ՛ գհավրի, վույ՛ զամանի,
ֆՀ դիբիյա
Նէյիր, նհյիրվան բրկուժա,
Էավ ժի բաղդ ու տայահ ըժմրռայա:
Բնհյհ Սիփան բր բախե ա,
Գա ֆուվի դրգեառրնի բհվախբ ա,

Գա ֆուվի ասուդհ ա բրյալիֆ ա:
Սհարհ Սիփանհ նայաբհ դրբհմ բրմհշա,
Բրնհ Սիփանհ նայաբհ դրբհմ բր մհշա,
Խաճ Ջհռի, տիւ կհազիյհ խռ բրֆհա վոարիս ա,
Բաւհժա մրյ ժոր բր ֆհշա:
—Ջհհպա դարհ ապհնդաւան դրհժ ա,
Էագհ տհմո սհար Սիյարհնցո կոռհ Սրյիվի,
Կհազ գուշհ պապիֆ նարհժա:

Խաճէ Ջէռի, ես քեզ մատաղ.
Հեծկլտանք ընկեր է քու մէջ.
Արտասուք աչքերէս կը թափի ցածր,
Ինքն իրեն Ղազայ ցածր.
Սիյաբէնտօ, դու արի ինձ համար,
Վայրենի ցուլն ալ երթայ իր համար:
Վայրենի եղներ մեն կըզան անժամանակ.
Այն ալ քեզ պէս բաղդի վրայ է,
Դու արի ինձ համար:
Սիւիանի գլուխը գահ է,
Վայրենի եղներ մեն կըզան անժամանակ,
Այն ալ քու նման բաղդի վրայ է,
Վայ դարեր, վայ ժամանակ, ով տեսած է,
Որսը որսկանին սպաննէ.
Այն ալ իմ բաղդի դիպուածէն է:
Սիւիանայ տորոտը գահ է.
Վայրենի եղներ մեն կըզան անժամանակ.
Վայրենու եղջիւրը ճիւղաւոր է:
Սիւիանայ գլուխ կասեմ անտառոտ է,
Սիւիանայ տակը կասեմ անտառոտ է.
Խաճէ Ջէռի, դու քու ծամերդ հիւսէ չուան,
Ձգէ մէջքս, վերև քաշէ:
Բարտի ծառի ճիւղերը երկար է,
Ես կըգամ ներքև Սլիվու տղայ Սիյաբէնտօյի վրայ.
Ձասեն ծամ կտրած խաղճ անտէր:

Սիյամանտի մի այլ ճիւղի վերջը կը պատմուի թէ Խաճէ Ջէռու եղբայրներն ևս կընկնեն Սիյաբէնտի հանէն. կը պատերազմին փեսայի հետ միացած. իսկ երբ փեսան կը մեռնի, կանգ կառնեն, ապա կը հետևեն Սիյաբէնտօյին, որ սպանեն, իրենց քոյրը վերադարձնեն: Կերթան, կը տեսնեն որ Սիյաբէնտօն քարեն ընկած կը հեծկլտայ, կառնեն իրենց քոյրը կը դարձնեն: Խաճէ Ջէռին ճանապարին կը

տեսնէ իրենց եղբօր մէջ փափսուկ ընկած է։ Երկու եղբայրներ կուզեն սպաննել իրենց քոյրը, իսկ փոքրը կասէ թէ.—Այս անմարդաբնակ տեղը չեմ սպաններ, պիտի գնամ իմ ցեղի մէջ սպաննեմ, որ վաղը չասեն թէ ձուտ կասէ. չեն կարողացած վերադարձնել, ամօթու կասեն թէ սպանած ենք։ Այս խորհուրդը կղզայ Խաճէն, կասէ.—Ապարանջաններս մոռացած եմ հոն, գնամ, բերեմ։ Կերթայ, վերև յիշուած երդերը կասէ. ու դինք կը ձգէ Սիյաբչնոյ վերան, ցիցը սրաէն կը մանէ, կռնակէն կտայ դուրս. որով սիրտ սրտի կտան, կը մեռնին։

ԻԹ

ՈՕՉՔ, ԱՊԸՋԷԹԻ ԺԸ ԱՊԸՋԷԹԱՆ

Ոզմեցոց բարբառով *

Սօլթան Հասէն ու Ոօչք աղբէր ին, Սօլթան Հասէն մեծ աղբէր է, Ոօչք պզտիկ։

Ոօչք իր հասակին խասաւ, Սօլթան հասէն ասաց,

—Կնիկմ կը բերեմ իմ աղբօր։

Գնաց Շէրնգի Մէքէ կայ, էնոր աղջիկ ուր աղբօր խամար ուզեց։

Մէկ քհանի օր կմնայ, կերթայ բերելու։

Օր գնաց բերելու, էնոնց սովորութ թքն ա, մէկ մարդ խաբըսնաղբէր կգայ, մէ տարի կը մնայ. չուր աղջիկ ուր ազգական, ուր գերդաստան կը ճանչնայ, մարդ նոր կերթայ։

Բերէն փսակին, մնաց տարիմ թմաւ, Ոօչքին տղէմ էլաւ։

Էդոնց սովորութք էնպէս էր, էրկրի մէջ լինչ տղայ էլնէր, կը տանէն, դնէն Սօլթան Հասէնի առաջ. դիլնի մէջ, անուն կը դնէր։

---

* Սոյն վէպը ասած է Ոզմեցի Ծովսէփ Մհ. Ծովհաննէսեան, արհեստով զգրար. Տիգրանակերտ, Մուշ, Պալանէ, Խնուս, Պարսկաստան, Թիֆլիս երջած է, նաեւ 3 տարի է Էջմիածնայ գաւառին մէջ մանկայ. 40 տարեկան, ժիրացու է, լեզուն շատ խառնափնտար եւ անճոռնի, մինչդեռ վէպը իսկական էդու կեանքի պատկերն է։ Սղերուն կողմերն այս նեխաթր կասեն, ընդհանրապէս սոյն նեխաթի պատմողներն են Ոզմեցիք, Մոկացիք եւ Սղերդցի հայեր. էդեր եւս հայ ասողներէն սովորած են, կասէ։ Սոյն անձն է նաեւ «Աբաբայաի» ասողն։

Սօլթան Հասէն որ էն գախ անուն պտի դնէր, ասաց։

—Շատ կոչախ ա, պէչէկի ժէ կեօռվայա (վոռքը ինչ թուխ)։

Որ էնպէս ասաց. աղբօր սիրտ պղտորաւ. եաճի թէ իրնից չէ, մչկներուց—խարանախպորից աւ (1) Ապուզէքի բին կը դնեն անուն։

Ռօչք ասաց.—Կը տանէք, էսա կնիկ, ուր տղէն չօլի մէջ կսպանէք. էդ կնիկ էդոց մօտէն աղաչեց, թէ-ընչի ընձի կսպանէք, ես Շէրէֆի Մէքեայաւ աղջիկնեմ, իմ արուներ ձեզնէ կուկեն։

Էնոնք էլ ասին.—Մենք քեզի չսպաննենք, մեր աղէն մեր վրէն կռըքի- Էդ էլ ասեց.—Ընձի մի սպանէք, օր կը հարցնէ, կասէք, «սպաննցինք, թողինք էկանք»։

Զեն սպաններ. կնիկ կառնէ զուր տղէն, կերթայ, կերթայ, կը մտի սագլըղի մէջ, մէկ սաճաթմ, էրկու սաճաթ կը մնայ. մէկ մարդմ կուգեայ, կը տսնայ, ձէն կուգեայ էդ սագլըղի միջէն կասայ.—Դու ինչ մարդ իս։

Էդա տեղ կասայ.—Ես քու աղջիկն իմ։

Էլի կը մեղէ, կասայ.—Ես էլ քու խէրն իմ։

Էկաւ, տեսաւ մէկ կնիկ, մէկ էրեխայ. առաւ, տարաւ ուրան տուն թէ.—Դու իմ աղջիկ, ես էլ քու խէր։

Մէկ խինդ-վեց տարի էդ տղէն կմնայ տան մէջ, կերթայ տղեկներու մէջ խաղ կը խաղայ, որ կը զարկայ, որին վիզ կը քաշըէ, որին թև կը կոտրէ, էկան էդ մարդու մօտ, ասին։

—Կաղաչենք, մեզ տղայ չմնաց։

Էդ մարդ ասայ.—Ընձի էրկու էրեխայ կայ, կերթան կարդու, թո էդ էլ էրթայ։

Որ կերթան, մէ քնիմ օր կը կարդան, էդ մարդու տղէն ուր դաս կը կալտընի, էդ մօլէն էլ սիլեմ' էդ Ապուզէքին կը զարկայ, Ապուզէքն էլ կասի.—Մօլա, ես իմ դաս չիմ կալտընի, ընչի ընձի կը զարկիս. իմ քեռու տղէն կը կալտընի, ընձի կը զարկիս։

Մօլէն կասայ.—Շան տղա, ես քեզի չզարկեմ էնի մեծ մարդու տղայա, էնու ընչի պտի զարկեմ։

Ապուզէք կասայ.—Էդա աչ ձեռն էր թէ ձախ, էն ձեռ պտի կտուիմ։

Ապուզէքի եօթ տարին կը բըմմայ, էդօր խրօխպէր Սօլթան Հասէն կուգեայ էդ Հալալցոց (2) օխտը տարուան խարճ առնէ։

Էն ժամանակ որ էկան խարճ ժողուելու, տղեկներու քեռին

---

1 Կասեն, ասուա վերայ խաւսցադրօր մի տարի մնալը արգելուեցաւ։

2) Այդ ցեղին պատկանող 4000 տուն բնիամելի. 4000 տուն բնմախելի։ 4000 տուն բնտարսի 4000 տուն բնտավազի Սուլթան Հասէնի ձեռաց տակ էին

սովրցուց.—Ապուզէթ սարէք ճեջիր, չըմիի Սօլթան Հասէն կուգեայ, էսի չար տղայա. մեզի վնասմ կսայ։

Կերթանն ուբենց խամար ճեջիր, օրմ՝ չում յիրիկուն կան կուգնան։ Ապուզէթ կսայ.—Ձէս օր մեր ձեռ բան չընկեաւ։

Կասէն.—Վնաս չկայ, տղերք, գիշերս կը մնանք, լուսուն կերթանք, լուս օր բացուաւ, էլմ կերթանք ճեջիր։

Կը մնայ յիրիկուան, կասէ,—ես կերթամ տուն։

Էդոր քեռու տղէք կասին.—Էս օր մերթայ, վաղ անպատճառ կերթանք։

Ապուզէթ կասի.—Դուք գաք էլ կերթամ, չգաք էլ կերթամ, չըմ կայնը։

Իրէք խըտ իրարու էլան, էկան տուն։

Գնդի կուչտ տըսան, ինչ տսնան,—Ինչ կաճsար մալ—sաւար, ոչխար կայ, տուտծ յառաչ, կը տանին։ Ասաց,—Տղէք, էնա մէկ ձին իմ ձին ա կը տաննն։

Քեռու տղէկներ ասին.—Էնի զարիպ մարդ ին, քիւ ձին մեր տուննա։

Ասաց,—Էն իմ ձին ա, ես կը ճանչնամ։

Էն մարդիրու ասաց.—Աղբէր, էդա ձին իմ ձին ա, ինչի կը տանիք։

Էն մէկն էլ ասաց.—Դէ, կորիր դէն, դու ինչ էս, էկեր ձի կուգես։

Էն մէկէլ ասաց.—Մէկ ձի է, տուէք, թո տանը, ուր դաճն ուր գլոխ։ Էնոր ձին տուեցին։

Աչքեց, մէկ պառուս ձի էլ ճանչցաւ՝ ասաց.

—Աղբէր, էս մեր գրկեցի ձին ա, մեր պառուս ձին ա, դոր կը տանիք։ Ապուզէթի վրէն քրխան։

—Տօ, ասին, չան տղա, քիւ ձին տուեցին, մկայ պառուս ձիրու դաւի՝ կէնիս, գնացէք, խլեցէք ուր ձին էլ ուր մօտէն, ասին։

Ապուզէթ մէկ ձեռ թալեց մէկին, էն մէկ ձեռ թալեց մէկէլին, էլկուս զարկեց յիրուր, ապանեց. էն մէկէլ բռնեց, էգոր ատմներ քակեց. քաշեց ճակատ զարկեց, ասաց.

—Դէ, գնա, ես քիւ լէ պոի սպանի, յըմա գնա, քիւ բէկին խսա էրայ, թո էնի դեայ։

Գնաց. Սօլթան Հասէն տըսաւ, մէկ մարդ ծծզայ, կուգեայ։

Ասաց,—Ի՞նչ էլի։

Ասաց.—Ի՛նչ իլի, մեր վերկին մի ձեռնէն առաւ. մզի լէ խայտառակ արեցին։

Ապուզէթն էլ գնաց տուն, քեռին ասաց.

—Տնաւէր, էգ ինչ արեցիր, լուսուն Սօլթան Հասէն կուգեայ, մեր ծծի էրեխէն էլ կը կորսայ։

Ասաց,—Գնա՛, դիւ մի՛ վախեցնայ. ամ քիւ ժողովուրդ, գնա՛, մէ կրաղ կայնի. ես կերթամ կռիւ, ան ժամանակ ընձի սպանեցին, դիւ գիտես։

Սօլթան Հասէն էլաւ ուր փաթիլիվաններ ճամբեց էդոր կռիւ. խարիր փաթիլիվաց Սօլթան Հասէնից սպաննեց. խապար տուեցին Սօլթան Հասէնին.—Էլ մեր կարողութեն էս մարդուն չկասնի, պտի աղբէր Ռօչք գնայ։

Ռօչքն էկաւ տըլի կռիւ, մէրն ասաց.

—Ապուզէք, որդի՛, էս օր մէկ փաթիլիվաց տը գնայ քիւ կռիւ, համա իմ ծծի կաթ քցի խարամ էղնը թէ դիւ ան մարդ սպանըս, տը բռնըս բիրես։

Ապուզէք գնաց կռիւ, չում յիրիկուն լինչ էրաւ, չկարցաւ առանց դրրպ զարնելու բռնէր, էն օր չկարցաւ զխէր բռնէր, մէկէլ օր գնաց, զխէր բռնաց, բերաց։

Ճուաբ տարան Սօլթան Հասէնին.—Աղբէրդ էլ բռնից, սպաննից չէնք գիտէր, բռնից չէնք գիտեր։

Սօլթան Հասէն ասաց.—Հայ վախ, աղբէրն էլ տարաւ, մենք էդոր ձեռ պաթմիշ կեղնինք։

Ապուզէք մէկէլ օր էլմէլ գնաց կռիւ։

Էնի թո էրթայ կռիւ, մենք դառնանք Ռօչքին։

Կնիկ ասաց.—Ռո՛չք, ընձի կը ճանչնա՞ս։

Ապուզէք գլոխ տարաւ, բերաց։

Կնիկ ասաց.—Ես Մէկայու Շէրնֆի աղջիկն իմ։

Ցիրկուն Ապուզէք էկաւ, տեսաւ էդ բռնած մարդ, լաւ չորեր խագուցեր ա էդոր ուր մէր, պապիրոզ չիներ՝ դրեր ա էդոր ձեռ, ասաց.—Կանցի, էսի քու սիրածն ա, էրեկ անճաղ բռնեցի. էնի մարամ էր ընձի սպաննէր։

Էդի դողդրք քեչեց, պտի զխէրն սպաննէր, մէրն ասաց.

—Որդի՛ մի՛ սպաններ, քիւ խէրն ի։

—Աղէկ, օր իմ խէրն ի, հարի մկայ դէրն էր, չկար։

Մէրն էլ նստաւ, էնու խամար դատ էրաւ։

—Էն ժամանակ որ դիւ էղար, տարայ, դրը դիւանի մէջ, քիւ խօրխալէր անուն դրեց, ասաց,—խօշ վերխոալը պըչխեկի ծր կեօրվայա ևավէվի Ապուզաբայ։

Էդու խամար քեօ խէր բռնեց քեզի էլ, ընձի էլ դիւս թալից։

Էդա տեղ որ Ռոչք խասկըցաւ, աղբօր թուղթմ դրեց, ասաց.—Էս կոչախ տղէն օր կայ, մեր տղէն, Ապուզէքն ա։

Սօլթան Հասէն լսաւ, ասաց. Աստծուն փառք, մզի խարիր փաթիլիվանն սպաններ ա, ամա զարար չկայ. գնացէք իմ աղբէր, ուր տղէն, ուր կնիկ առօք. փառօք առէք, էկէք ըս տեղ։

էն գախ որ կերթան, Ապուզէթ ձին կը խեծնայ, կերթայ մօլի դուռան վերէն կասայ.—Մօլա, ձր մէկ ձեռնով ընձի զարկեցիր. էն ձեռ բեր, տեսնանք։

Մօլի էն մէկ ձեռ կը կտրայ, կը դառնայ, կերթայ տուն։

Մէկ ժամանակ կը մնայ. Սօլթան Հասէնին մէկ աղջիկմ կայ, կը կանչին Ապուզէթ ու աղջիկն, կը բերին մէկ տեղ, պսակեն։

Տղէն առջի գլխուց կուգայ, կը պառկի։

Աղջիկն էլ կուգայ, խօր պէս կեսալ։

—Լաւ կորիճ փանիվաճ ի, ամա քիչմ սև ի։

Տղէն կասի.—Աղջիկ, գիւ էլ քու խօր խօսք ասեցիր, վաղտէ' էղնի, դիւ մնաս քիւ խօր տան վերէն. ոչ ես քզի կառնիմ. ոչ էլ կը թողիմ ուրիչ առնէ։

Աղջիկն էլ կասայ.—Ապուզէթ, վաղտայ էղնի, որ դիւ ընձի չառնես, ես էլ պտի մնամ առանց իրիկ, չուր պըռ տղէն առնեմ։

Էդ պայմանով աղջիկ կը մնայ։

Մէկ ժամանակ կը մնայ Ապուզէթաւ խէրն էլ կը մեռնի, Ապուզէթ կընի ծուռ պէս, կընկնի աչխար. կան կգնայ, չատ, քիչ, Աստուած գիտի, կերթայ մէկ քաղաքմ, էդ քաղաքի անուն էլ Պաժառա Բելնկերի կըլնը. էդ քաղաքին մէջ Սէյիթի կօռէ Սաուէթան անուն մեծ կեղնի. մէկ աղջիկմ, էլ կար էդ քաղաքի մէջ. էդ Սայիթէ կօռէ Սաուէթանի աչք վերէն կեղնի։

Օրմ աղջիկ կերթայ պաղչային մէջ կլողկընայ, Ապուզէթն էլ աւր ձին տարեր՝ կապեր է էդ պաղչի կուշտ, ինքն էլ պառկեր է, խապար չունի բանից. էդ Սայիթի կօռէ Սաուէթան կուգայ, էդ տեղ կը պախուի. աղջիկն որ կը լողկընայ, աղջկան հախէն կը բռնայ, կասայ.—Ես գործ ... ։ Աղջիկն կասայ.—Ի սէր Աստուծոյ, իմ չորեր տու, ես խազնեմ, ինչ գիտես, էնալէս արա։ Ինչ իլաճ կանէ, էնոր ձեռնէն չազատուիր, կասի.—«Ես ասի Աստ սիրուն,» չէլաւ, համա կասին, Ապուզէթ, ես չեմ տեսե, կասեն չատ կոչախ ի, էնու չոմախ առնէ քու գլխու վերէն։

Ասելու բուտան, համա Ապուզէթ կը թռնը, կը զանէ Սայիթի Կօռէ Սաուէթանի գլխուն, կսպանայ։ Աղջկ կասի.

—Ապուզէթ, դիւ իմ նրմաս խասար, ես քեզի կառնեմ, նրմա էս Սայիթի կօռէ Սաուէթանի տուն չատ զօռպա էն, իմ խօր տուն կը կտրեն։

Ապուզէթ կասայ.—Մի վախէնար, ես քեզի կառնեմ, քաղաքի մէջ կան կը լցեմ, կասեմ.—«Ես էմ սպաներ Սայիթի կօռէ Սաուէթան, ինչ կոչախ մարդ կայ, թո գայ ուր վրէժ ընձնից առնէ։

Ապուզէթ իրեք, չորս անգամ զաղջիկ կը թալէ ուր թարկ, կասէ.—Հէյ, մարդ մարդու մեղք չառնէ. ես էմ սպաներ Սայիթէ

կօռէ Սաուքան, էս աղջիկն էլ ընձի խամաթ կը տանիմ, ով որ կարող ե, թո գնայ իմ առջև։

Մարդ չկարաց դայ էնոր յառջև։

Աղջիկ կառնայ, կերթայ, կը տանայ ուր հեաթի մեջ կը պատկայ ուր վրէն։

Մէ ժամանակ կը մնայ, Ասուզէք կերթայ հեաթի մեջ կան գալու, թանկութին ի, կը տեսնայ մարդիր ուսկուր կը դնեն քարի վերէն, կը սղկեն, կուտեն, կասէ.

Մարդիր, էդ ինչ իլաւ.

—Էսա ուխտը տարի իլաւ թանկութուն ի.

Է՛, կասայ. դու ընչի Սօլթան Հասէնին խնդիրքիմ չէք իտայ։

Կասի.—Աստուած ուր տուն չէն պախի, էնոր մօտիկ մարդիր կուչտ կուտեն, թանկութեն չեն գիտի. մենք էսա հետու մարդիր, ձի տէր ունինք, ոչ տիրական. մենք ապրուստ էլ չունինք, էկերինք. էս օսկրնիր սղկէնք, կուտենք։

Ասուզէքն էլ կասի.—Ցիրկուն յեմենն էլ ժողուէք, կդէք էնոր դռան վերէն՝ ես ձի խամաթ կը խօսամ։

Ցիրկուն մարդիր ժողուան, էկան էնոր դռան վերէն։

Սօլթան Հասէն ասաց.—Էս ինչ մարդին, էկածին դռան վերէն։

Ասուզէք ասաց.—Սօլթան Հասէն, էսա ուխտ տարի ի թանկութեն ի ընկի, մէ իլանիմ չէս անի։

Կասի.—Ես ինչ իլանի անիմ։

Կասի.—Կասես, «ես ինչ իլանի անիմ,» դու քու էրկու աղէքն էլ—Ունէս, Մարէ Քող գեան իմ խնա, որ մենք էրթանք, էժնութեն բերինք, էդ մարդիկն էլ կաղալեն, «մենք մնդք ինք, անօթի մեռանք։»

Էդ իրեք կըլեն, ուրանց բասարէ կը տանան էրթըլու։

Ասուզէք մէկ բեամանչամ ուր թև կը թալի, իրեքն էլ կերթան։

Շատ քիչ Աստուած դիտի քեանի օր կերթան. կերթան մէկ ելիաբիմ կը խառնուին։ Մէկ քեֆ պառւի կօն ջոկ ի, մեկէլ յըմեն մէկ տեղ ին։ Էդ հեաթի մեջ խարսնիք ա, էդ իրեքն էլ կերթան, պառւու դռան վերէն կէջնին, կասեն.—Պառւա, մնդի չես չախե։

Կասի.—Ընչի չեմ չախի, որդի։

—Է՛, ինչ տղայ ունիս, պառւա։—Մէ տղայ ունիմ։

Կասի.—Տղէդ դոր ի դացի։

Կասի.—Գնացեր ի խարսնիս։

Է՛, պառւա, ինչ խարսնիս ա։

Կասի.—Որդի, մեք խարցնի, իս մեկ աղջիկ ուղերիմ իմ տղին, մեր աղեն զօռպա էր, ընձնէ խլեց. մկայ էնոր տղի խարսնիսն ա։

Ասաց.—Ընչի, դու բարեկամ, ազգական չունես։

—Ես էս տեղ խրօխտէր, բարեկամ չունեմ. ուրիշ տեղ կայ, հեռու է։

—Ինչ բարեկամ որ մեկն ա։

Աստց.—Իմ բարեկամ Սօլթան Հասէն ու Ռօչքն ա, իմ աղբօր տղէքնէրընէն։

—Է՛, պառաւ. որ Սօլթան Հասէն, Ռօչք քո բարեկամներընէն, քու խարս ընչի խլած, դիւ ձէն չես խանէ։

—Էնոնք հեռու են, ձեռս չհասնի, էնոնք էլ խապար չեն էսա բանից։

Կասին.—Էնոնք չատ հեռու են, մենք էնոնց տղէկնէրնենք, ես Ռօչքի տղէն իմ, էս էրկուս լէ Սօլթան Հասէնին։

Կասի,—Խելքս չկտրէ, դիւ էնոնց տղէկներ էղնիք, ձեր մօտ զօրութեն պտի էղնի։

Մնաց յիրիկուն, ասաց,—Պառաւ, էլի, մեզի կրակմ կսղու։

Պառաւ ասաց,—Որդի, չէ կը վախենամ։

Կասի.—Պառաւ, կրակմ կսղու, ինչ ժամանակ էկան, մենք պատասխան կուտանք, սկի դու մը վախենայ։

Կը զօռին պառաւու վերէն, պառաւ կլուկ կը կսղուցէ։

Էն տղէն կը տեսնայ էդոնց կրակ, կասի.—Գացէք, էդոր կրակ ընցուցէք, կոն կտրտէք. տղէն էլ բերէք, սպանենք։

Կուգնան պառաւուն կասին.—Պառաւ, դիւ քանի՞ գլխու տէր էս էդա կրակ կսղուցիր։

Ասղուղէթն կասի.—Էն կրակն մենք էնք կսղուցի։

Կասի,—Դիւ ինչ մարդ էք։

Կասի,—Մենք պեկզադե (գնչու-բօշա) էնք։

Կասի.—Դիւ ընչի կսղուցիք. դիւ չիք դիտէր եասախ ի։

Կասի.—Մենք բարխաճ ինք (ազատ)։

Կը դառնայ. կերթայ տղին կասայ.

—Պեկզադայ ին, պառաւ չէ կսղուցիր։

Կասայ.—Օր պեկզադայ ին, ընչի չբերեցիր մեր խարսնիս։

Կասի.—Երթամ, բերեմ։

Կուգնայ էն տեղ, կասայ.—Պեկզադա՛, մեր աղէն կասայ, «Քո դեանն»։

Կասի.—Ես կուգամ, ձեր խատ պահման կը դրեմ, թէ փեսի աջ կողմն, ձախ կողմն տաք, մենք նսահնք. կուգանք, չէ օր չընդունի, չգեանք։

Ասղուղէթ կասի,—Ունը՛ս, Մէարէչ, օր կերթանք, դու մեկ փեսի ձախ կողմ կը նստէք, մեկ աջ. ես էլ դռան վերէն կը նսահմ։ Էն ժամանակ ես օաւեր կը քաշեմ, ձեզի պտի ասեն. «էլէք, խաղացէք.» դու մեկ դեխէն, աղբէր մեկ մեկ դեխէն, ձեռ կը թալէք

վեսի կռնկրու վերէն, կը կոտրէք, կըլէք էն տեղ կը խաղէք։ Օր դու էլաք, խաղցիք, էն ժամանակ կասեն. «վեսա, դիւ էլ էլի, խաղցի.» վեսէն էլ ա՛սաի, «ձեր տուն աւերի, իմ էրկու կռնկրն էլ կոտրած ա, ես ինչ սը խաղամ»։ Էնոնք սը գեան դըլա մի. դիւ էն գնեխէն, ես էն գնեխէն զըմիննն էլ ջարդ ու բուրդ կանենք. որ սպանեցինք, կը բերենք մեր հօր քրօջ տղի վրէն կը սլսակենք։

Էդ մարդ կուգնայ էդոնց կը ղանչայ, կը տանայ, մէկ ալ կողմ կը նսաի, մէկ ձախ, Ալուզէթն էլ դռան վերէն ծաւեռ կը քաշայ։

Էդա տեղ կասեն.—Թո գեան քու ընկերքն էլ խաղան։

—Դէ, կասայ։ Ունէս. Մարէ, ելէք։

Որ կելնեն, վեսի էրկու կռնկրն էլ կը կոտռի, կելէն կը խաղան։

Դէ, կասի, վեսա, դիւ էլ էլի, խաղա։

Կասի,—Ես ինչպէս խաղ անեմ, իմ էրկու կռնկրս էլ կոտրած ա։

Կասեն,—Դէ, զարկէք էդոնց։

Ունէս, Մարէ էն գնեխէն կուգեան. Ալուզէթ էն գնեխէն կերթայ, կը զարկեն, էդա յըմեն ջարդ ու բուրդ կանեն, աղջիկ դավոլ, զուռնեն քաշեն, տանին, էդ պառուս տղի վրէն կը սլսակեն։

Ալուզէթ կանչեց, էն ինչ կանդար մարդ կայ մնացած, կասայ,

—Կուզէք սը մեր հօրքրօջ տղէն ձեղի աղա էղնի, դիւք էլ ըռայաթ։

Ասեն.—խա, մենք կուզենք։

—Մէյ ժամանակ էլ դիւ էդ մարդուս խնա գէչ կայնէք, ձեր էրեխէն էլ կը կորնէք։

Էդ պայման դրեցին, գնացին։

Մէ քանիմ՝ օր գնացին, մէ ջրի բերան խասան, ծչ կարմունջ կայ էդ ջրին, ոչ մէկ բօռ կայ անցնին, ուրանք էլ խեղճ էղան, մնացին էդ տեղ իրենք օր։ Էն մէկ գիչեր՝ մէկ գէլմ գնաց ջուր անցնի. մէկ էլ էն եաճէն էկաւ։ Էս եաճի գէլն պոռաց, ասաց.

—Բօռ չեմ գիտէ։ Ալուզէթն էլ էդոնց լեզուն կը խասկնայ։

Էլաւ մէ քիչ քար ժողուեց, գիլու յետև գնաց ջրի վրէն։

Էն մեկէլ գէլ պոռաց.—Բեզի էդ տեղ կը թալես, կուգեան կլես դիւս։

Ալուզէթ էլ քարեր էդ տեղ կոլոնեց, գինք գիլու խնա թալեց ջիւը, գնաց էն եաճ։ Էն եաճ էլ, ես եաճ էլ նչան դրեց, դարձաւ էկաւ։

Լուս օր բացուաւ, խըտ իրարու էլան, ջիւը անցան, գնացին, Մըրայ քաղաք դիւս ընկան։

Էդ տեղ տեսան օր իրիք մարդ էկան, գնացին փաշային խապար տուին թէ ուրանց տեղ թանկութուն ա, էս տեղ էժնութուն ա. էկած թէւրիս (քննելու)։

Փաշէն ասաց,—Դեացէք, իրիքն էլ բռնէք, բերէք։ Բերին։

Փաշէն խարցուց.—Դու ինչ մարդ էք։

Ապուզէթն էլ ասաց.—Մենք պէկզադայ էնք։

Ասաց.—Պէկզադուն նշան կայ, կը տանէք, ոտաց ճանապարհ մէջով անցուցէք, թէ ոսքեր թալեցին ջրու ածքի մէջ Պէկզադայ ին, թէ չթալեցին բռնէք։

Օր տարան փորձելու. Ապուզէթ ոլ տեղ չատ փսութուն կար, ոտ էն տեղ թալից, Ունէս, Մարէ, էդ էրկուս որ տեղ մաքուր էր, էն տեղ թալեցին։

Փաշային խապար տուեցին.—Էս մէկ Պէկզադայի, էս էրկուս չէ։

Ապուզէթ թողեցին, էն էրկուս բռնեցին։

Ապուզէթ էլաւ, ուր ձին խեծաւ. մէկ աւուր ճանբախ քանի կարցաւ, քշեց, գնաց յէժնութենի խամար, տեսաւ էն տեղ յէժնութենն ի, գարձաւ էկաւ քաղաքի կուչա, մէկ բեւեռ զարկից ձիու օտաց մէջ, ձին բռփլեց։

Փաշային խապար տուեցին,—«Պէկզադէն էլմ էկաւ։

Ասին.—Ցորի էկար. Ասաց.—Իմ ձին բռփալ ա. ընձի չտանի, իմ ձինս կտանէք, ընկերոջս ձինը կը բերէք։

Էլան էնոր ձին փոխեցին. ընկերոջ ձին խեծաւ, էրկու կողմերն կան իրի, էկաւ։ Ասին.—Էս օր ընչի էկար։

Ասաց.—Էս օր էս էլ կը բռփլէ, մէկէլ տուէք։

Ունէս, Մարէ էլ կըլեն թուղթմ կը գրեն իրանց խօր մօր, թէ «մենք Մսըրայ քաղաք բռնուկ էնք, կտունէք, մեր վրէն դարձէք, չէք կտունէ, մեր բան բօշ ա, մենք չենք ազատուի»։

Էս թուղթը կը մտուցին Ապուզէթի ձիու թամքի մէջ։

Ձին կուտայ, Ապուզէթ կը խեծնի, կեթայ երկիր, գնաց տուն

Սօլթան Հասէն ասաց,—Ապուզէթ, ուր ա Ունէս, Մարէ։

Ասաց,—Ես չեմ գիտի։

Սօլթան Հասէն էլ վրէն քրխաւ, ասաց.

—Գեացէք, բերէք ըստի։

Բերեցին, ան տե կասեցին, ոտներ էրկուսն էլ դայե դրեցին։

Մէկ ժամանակ մնաց խայտուկ, աւուրմ Սօլթան Հասէնին մէկ պզոիկ աղջիկմ կայ, կուգայ, կը տեսնայ Ապուզէթի ձեռ փեչլըվնի ուլինք կայ,[1] կասի.—Ապուզէթ, տուր ընձի։ Կասի.—Աղէկ, ես

1 Ապուզէթ ուլիճը ձեռը բռնած կը կըռէր, որով զուտակուրիւ կանէր թէ այդ հաղամի մէջ երեք փանիլուան կան, իմիր եթէ մի ճնարով ազատուի. փանիլուաններր իւր վերան գան ո՛ր մէկին կարող է յաղթել։

կուտամ. դնա, իմ խայտի բանլիս քու խօր ճեպն ա, մռ. բի՛, տամ։

Աղջիկ կերթայ, ձեռ. կմտուցէ խօր ճեպ, դրանլիս կը խանայ, կը բերայ, կուտայ Ալուղէթին. Ալուղէթ դխայտ կը խանի, թալի. ուրիշ ուլնիք կուտայ աղջկան, կերթայ։

Սօլթան Հասէն կը տեսնայ ոտնէն խայտ հանած, կասի.

—Բանլիս ո՛ր տարաւ։ Աղջիկ կասի.—Բանլիս ես տարայ, դացի տեսայ ձեռ. ուլնիք կէր, բանլիս տարայ, ուլնիք առայ։

—Կնիկ, կասայ. էլ մենք չենք կարայ Ալուղէթի վրէն, որ մեր տղէկները սաղ էղնեն, մկայ էնոնց նշանաբան էնոնց ձիու թամքի մէջ կայ։

Որ կայքէն, թուխտամ կը տեսնան, որ Ուննէս, Մարէ դրած ա։

«Մենք սաղ սեիիմ, Մսըրայ քաղքի մէջ բռնած էնք. կառնէք, մեր վրէն էկէք. չէ՛, չէք կառնէր, մենք էս դեխէն չենք կրնէր աղատուի»։

Սօլթան Հասէն բազատաւ կը կանչէ Ալուղէթին, կասի.

—Որդի՛, արի տողրին ասա, եթէ էն տի չէժնուԹուն ա, էրթանք։

Կասի.—ՉէժնուԹուն աւ—է՛, կասի. ճամբեններ կարող էնք էրթալ։

Կասի.—Ես ճամբեխ աղէկ դիտեմ։

Էդ տասնը վեց խազար տուն կը բռնէնէն, կերթան ու կերթան, էն մէկ օր Սօլթան Հասէնի տան ջուր կը պակսի, կասի.

—Մէկ թաս ջուր բերի՛ք, Ասատծոյ սիրուն ըլնը, կուզէք, մէկ օսկի տամ։

Ալուղէթ ուր կնկան կասի.—Կնիկ, մէկ թաս ջուր տար խրօխպէրս խմի։

Որ կը տանէ, կուտայ, խօրողբէր կայքի Ալուղէթու կնիկ, օր կը տեսնայ, խիլք գլխուց կերթայ. կը կանչայ։ Ալուղէթ կը բերայ, կասայ.

—Ալուղէթ, էտա քու կնիկ վրէն աղջիկն ա։

Կասայ.—Իմ կնիկ Բաժառայ Բելնկրի իմ բիրի։

Կասայ.—Ինչքան դարիպ աղջիկ մեր հէեաթի մէջ կայ, Թող ուրանց խօր տներ դառնան. չմի՛ էլ մենք մեր տներ չենք դառնար։

Ալուղէթի կնիկ գնաց խօր տուն.

Էդ հէեաթը իրիք օր մնաց ջրի բերան։

Ալուղէթի կնիկ օր գնաց, Ճազիյա, Սօլթան Հասէնի աղջիկ էկաւ, Ալուղէթու տղէկներու տէր էլաւ, էլաւ Ալուղէթու էրկու տղէք դրնց դեվու վրէն, Թալնց ջուր, որ Թալնց ջուր, Ալուղէթն տեսաւ տղէկներ դեվու վրէնէն, սիրտ վերէն էրեցաւ, ասաց.

—Պէ՛ խոյ անտէր դեվա՛, մու խօրմ (գլխի վայր) մու օռմ (չիտակ), գնաց դուս։

Էլեաք էտև գնաց, օր գնաց, մէկ աւուր ճանբաին գնացին. էդ տեղի էլի աշխատաք էկաւ յառջևները, ասին.—Ետ աստ աղջկան տասնորդ տը տաս, եաև չընք թողնը էրթաս։

Ալուղէք կայնաւ կռիւ, Սօլթան հասէն ասաց.—Ես կռիւ չեմ անի. ես կուտամ։

Ալուղէք ըռըգաւ, գնաց, գնաց մէ քաղաքմ։

Ասին Ալուղէքին.—Քու անուն ինչ ի։

Ասաց.—Իմ անուն Կնդռ ի (Կալոփ-կարճ հաստ կլոր մարդ)։

Կնդռ մնաց քաղքի մէջ, կնկտիրուն արկանք կաղէր։

Աւուր մէկ կուգեան, կը թալին քաղքի մալին վերէն, կը տանին. ինչքան մարդ կան. կերթան հաւարի, էն օր չնն իգնայ, էդ քաղաքի փաչէն կասի.—Մէկ մարդ բերէք, խաց տանի հաւարի մարդերուն։

Ախքսին մարդ չկայ, Կնդրուն ա, Կնդրռ բերին էնաեղ։

Ասաց.—Կընդրռ, էլի, խաց տար։

Ասաց.—Ձիմ տուէք, ես տանիմ, թէ չէ, չեմ տանէր։

Փաչէն ասաց.—Ձհյնեմ, տուէք, թը տանի։

Կընդրռ զէլն կը խնծնայ, զողդըք ձեռ կը բռնայ, կերթայ էդ մարդերուն կը խասնի, կը տեսնայ-ինչ-էդ մարդեր մալ, բալաճ թողած՝ կը փախնին, ասաց.—Ընչի կը փախնիք։

Ասին.—Էնոնք զօռչի էն, կը փախննիք։

Ասաց.—Էկէք, խաց կերէք։

Ձինքն քշեց, գնաց դրիս գողեր, խասաւ, մէկ քանի մարդ ապաննց, զբալաճ յետ դարձուց, բերեց, էդ մարդերուն խասցս։

—Դէ, ասաց. ես ձեր բալաճ բերեցի։ ըսդէալ դու գիտէք, ես գացի։

Ձինք թողեց, էկաւ գեղ. գնաց արկանք կաղայ։

Ասին.—Կնդրռ, բալաճ ինչրես էլաւ։

Ասաց.—Ինչես էլաւ, չուր գացի, գարձուցեր լին։

Մարդեր բալաճ առին էկան քաղաքի մէջ։

Փաչէն կանչեց, խարցուց.—Ո՞ր մէկ կոչախ էր, որ գարցուց։

Ասին.—Մեր կոչախութին չի։

Ասաց.—Պա որն ի։

Ասին.—Կնդրռն ի, ճամուս արաց։

Փաչէն զԿնդրռ կանչեց, բերեց, ասաց.

—Կընդր՛ռ, արէ տեսնանք, ինչ կուզես, տամ։

—Ես ինչ էմ արև որ ինչ ուզեմ, ասաց.

Ասաց.—Կընդր՛ռ, ես խասկացեր էմ, ճամուս դիւ ես արէ, ուզէ, տամ։

Ասաց,—Որ ուզեմ, մէկ ձեռք չոր, մէկ ձեռք սիլախ, մէկ աղէկ ձիմ։

Աղէկ ձիմ տուեցին, էլաւ թողեց, գնաց Կընդրռ։

Գնաց, խոսաւ հետաքրքիր մէջ, տեսաւ Հնոր Խրօխալօր աղջիկ Ճազիյան տարած եղսիր (տատանուդ տուած)։

Էլաւ ինչ արաւ Ալուզէթ. էլաւ չարչիր։

Ընկաւ էրկիրները կան դալու. չատ քիչ Աստուած դինայ, սալդ չառաց։

Մէկ ժամանակմ մնաց մանդալով, գնաց Գնչհա Կումհան, էն տեղ Ճազիյու սալըխն առաւ, էլաւ գնաց բերդի մէջ, ուլնինք բանման խանաց, խանմներ առնին։

—Է՛, դին ինչ ա, ինչ չէ։ Մախսուս թանդ կասի, օր ընցուցի։

Դարձաւ ասաց.—Խանում, կառնիք, առէք, թէ չէ, մուքն ա, ես տեղ չեմ խանը։

Ասին.—Ինչ հոգ ունես, դիչեր չես մնայ դիւս, տեղմ պտի տանք քե։

Ծերկուն տարան դիւանխանեն. տեսաւ որ մէկ աղջիկ էդ տեղ կար, մէկ չադիկ վերէն կար, էն էլ կարճ, ինչ մարդ կըտակ ուզէր, կըտակ կուտէր, որ կղուէր էտևանց կերևար, որ չուտէր, առջևանց։ Դիտեն ինչ մարդու աղջիկ ա, ըդրա յատով տարան եղսիր, կարճ չադիկ խաղուցին առաջուելու համար։

Էն տեղէն դիչեր դողացաւ զաղջիկ, գնաց։

Մէկ ժամանակմ գնաց, խոսաւ երկիր, տարաւ զաղջիկ ուր աուն որ ուր էրեխէք պախէ։

Մէկ ժամանակ մնաց, Սօլթան Հասէն մեռաւ։

Սօլթան Հասէն ու Դայապ իրարու դուշմանէն, գԴայապն էլ Սօլթան Հասէն բերեր ա, իրան խամար իլիկ կը մանայ։

Էգա Դայապն էլ կերթայ Շէխի Հասասանի մօտ, կասայ.—Ընձի մէ բօփմ չինէ։

Շէխի Հասասան կասայ.—Ես չըմ կերի չիննի. հա Ալըզէթաւ մօտէն կը վախենամ։ Աւուր մէկ Ալուզէթ կգնայ, էն տեղով կընցնի։

Դայապ կասի,—Ալուզէթ, հա Շէխի Հասասանուն կասեմ։ (ինքն կասէ բօփմ չինէ, ամա Ալուզէթաւ առջև կասի).—Ընձի մէկ ձներէթ (արչկանի գլուխ) չինէ։

Ալուզէթ ձներէթ կը խասկանայ, կասի.—Շինա։

Կը չինայ։

Դայապ էդ բօփ ուրան ծոց կը դնայ ամեն գախ։

Աւուր մէկ մէկ մարդ կը մեռնի, կերթան էնոր գերեզման կը փորեն, մէկ մեծ քարմ կընկի մէջ, կասեն.—Ալուզէթ չկայ, էս քար մարդ չկերի խանայ։

Կը կանչեն, Ալուզէթ կուգնայ, կասեն.

—Ալուզէթ, էս քարը դիւ պտի խաննես։

Դայապն էլ էդ տեղ կայներ է։

Ալուղէթ կը իջնայ դերեզմնի մէջ, կը կզայ, էդ քար կը խանի, Դայտալն էլ էդ բօփ կը զարկայ էդոր գլխու մէջ. Ալուղէթ կըսպանայ:

Դայտալ կասի.—Դնացէք, Ալուղէթի կրակ ընցուցէք, մեր կլուցէք:

Օր կերթան. կասեն. Ճազիյա կառնէ Ալուղէթի էրկու տղէք, էդ երկրից կը փախնի. մէ յուրիշ երկիրմ կերթայ:

Էն երկիրը մէ ժամանակմ կը մնայ. էն տղէկները կելնին ճահել, աւուր մէկ Ճազիյան նախրորդին կասի.

—Ինզի մէկ ջուխամ թաթ կուտամ, մէկ ճաւարմ էրա, տեսնենք, իմ տղէկները զօռ էն թէ չէ:

Նախրորդ ճաւար կենայ, կասի.—Նախիր տարեն:

Ճազիյա տղէկներուն կասի.—Դացէք ճաւար:

Տղէկները ձիանք կը քաշեն, էնպէս չլուր կերթան, նախրորդին կը խասնին, կասին.—Նախրորդ, դօր տարան:

Կասի.—Որ դու էկաք, էնոնք փախան, էլ չտարան:

Կը դառնան, կուգան տուն:

Մէկ տարի էլ կը մնայ. Ճազիյա կը մտածէ, էլմէլպի փորձեմ:

Նախրորդին կասայ.—Ինզի մէկ ջուխա չարոխ կուտամ, էս մէ անգամն էլ ճաւար արա:

Էս մէ անգամն էլ նախրորդ ճաւար կանի:

Ալուղէթի տղէկները էրկուս կելնին, ձիանք կը քաշեն, քամքեր կը դնեն, ձիանք կը չիննեն, կը խածնեն, կերթան նախրորդի ճաւար:

Կասեն.—Ինր ա տարած նախիր:

Կասի.—Դու էկաք, էնոնք փախան:

Կը դառնան, կուգան տուն:

Մէկ տարի էլ կը մնայ, նախրորդին կասի.—Ինզի խինդ դուռուց փարայ կտամ. մէկ էլ ճաւար էրա:

Նախրորդ մէկ էլ ճաւար կենէ:

Ճազիյա կասայ.—Տղէկներ, իլէք, դնացէք ճաւար, նախիրտարան:

Տղէկները կասին.—Ճազիյա, մեզի մէ դայծայ չինէ, խաց բէ, մենք ուտենք, նոր կերթանք ճաւար:

Խաց կերան, խածան գացին խասան նախրորդին, ասին.

—Ջաճըմ, էսա իրէք անգամ իլաւ, դու մեզի կը խափիս, յուր ա քիւ գողեր:

Ասայ.—Ջուր դու էկաք, էլմ փախան գեացըն:

Դարձան էկան տուն:

Ճազիյան ասայ.—Ապրզէթը ժը Ապրզէթան, պէտք ա դու պահու իք:

Ցղէկները ասին.—Դիւ գտեա՛

Ճաղիյան ասաց.—Էսքան ժամանակ ես ձեզի չսխեցում, մէկ ընձի առէք, մէկ էլ յիւրիչ աղջկա՛մ։

Ասին.—Դիւ գիտես՝ Ալըղէթի ժը Ալըղէթան էնի ղճաղիյան առից. ալոսիկ աղբէրն էլ մէկ յիւրիչ աղջիկա՛մ առից։

Էն օր որ ալոսի էրթէն վըը ուրանց տեղաց, ճաղիյան էն աղջկան ասաց.—Քու իրկուն կասես, չուր գու քու խօր ճէյճ չառնիս, չը գեաս մօտ ձի, ես էլ կասեմ։

Ասաց.—Աղէկ։

Որ գացին ուրանց տեղաց վերէն. ճաղիյան ասաց.—Դո՛ր կուգեաս, գնա, քու խօր ճէյճն առ, նոր արի, ես քոն իմ։

Ալըղէթի ժը Ալըղէթան ինչ ասաց.—Ասաց՝ ախմ առջին դիւշման դիւ իս, եավաշ, ես քեզի մտահ անիմ, նոր ես կերթամ դեխ իմ խօր դիւշման։ Էդիկ ղճաղիյան տեսաւ։

Գլոսիկ ալոսէր կնիկ օր էնալէս ասաց. էնիկ ուր տեղ չգնաց։

Ճաղիյան էն գլոսիկ կնկեան խարցուց.—Քու իրիկ էկա՛ւ քու մօտ։

Ասաց.—Ես ասի, «գնա քու խօր դիւշման տալանէ, նո՛ր արի», էլ չէկաւ։

Ճաղիյան ասաց.—Ալուղէթ . . . քընց քու իրիկ կորիճ աւ։

Մէկ ժամանակ մնաց ասաց.—Դէ, կերթաք ձեր խօր ճէյճ կառնէք։ Բերից էդոնց ձիանք արաց ճուանի, ասաց։—Ինչ ժամանակ ձեր ձիու ականջ քրտնաւ, էն գալս դիւ կարող էք Դայապին տալանել, քանի որ չքրտնի, առջևէն փախէք։

Ցղէկները իլան ձիու գուչքեր կորեցին, արևցին ճուանի. էրկուս խեծան գացին դեխ Դայապ, կանչեցին։

—Դայապ, արի, մենք մեր խօր ճէյճն կառնենք։

Դայապ խեծաւ, էկաւ, տեսաւ որ էրկսի ձիանքն էլ ճուանի (քուռակ) էն, ասաց.—Մէրաքուն, գո՛, գո՛ւ էկաք ընձի ըտալանէք, գու մէ մէկ բօռ (անվարժ) ճուանի խեծերէք, ես ձի էրկսն էլ կտալանիմ, ճանփու կդնեմ։

Ալըղէթ ժը Ալըղէթան ասաց.—Գու մէկ արէ՛ մայտաճ։

Դայապի կոր (կոյր) էկաւ անտե, կռուան. քանի էդոնց ճուվանիք չէր տաքցե, չէր քրտընի, էդոնք փախան. որ քրտնան, գտրձան Դայապի վերէն, զարկեցին գԴայապ տալանեցին, գեացին ուրանց հեթաթի մէջ։

Դայապի թախտում-կօռե վ՛ան Շամէն դեռպազ կրըն, ուրանց կրակ վառեցին, Դայապուն ընցուցին, նոր բազատաճ գացին ուրանց տուն էն երկրէն առան էկան։

Էկան հեթաթի մէջ նստան։

Դայապի դասը վէչացրեցին, ուրանք էլան աղա։

20

ՄԱՄ ՈՒ ՋԻՆ

Վ.ԱՇԱՅ ՇԱՄՇԱԴԻՆ ԳԻՒՂԻ ԲԱՐԲԱՌՈՎ *

Ալ վաչան տղէ մը ունէը, անուն Մամէ էր. չատ սիրուն տղայ էր, գինքն էր էդ մէկ տղէն։ Շատ հազ ունէը մօտէն, մէկ սաճաք օր չէրևէը ուր այիչ՝ օր օր չէը, չատ դէմ կինէը։

Մէկ օր մէջ ուր յօտին պատկած էր, իրէք խատ եղուբնիկ էկան, Մամէի յօտին փէնջարէն կայնան։

Մեծ քորը ասաց.—Աստուած, Մամէի պէս խօրատ ըսկի կայ։

Պատիկ քորը ասաց.—Մէկ խատ կայ։

Էն ասաց.—Ո՞րտեղն է։ Պատիկն ասաց.—Ձղիրն է։

Ասաց.—Ի՞մալ ինոնք պտի խասնին ուրենց մուրազին։

Ասաց.—Էրթանք, էն էլ տիսնանք ինչպէս է։

Գնացին էնտեղ, Ջինէի փէնջարէն կայնան։

Ասեցին. — Ես քընց Մամէն խօրատ է, Մամէն քընց Ջինէն խօրատ է, էրկուսն էլ իրար բաբաք են։

Ասեցին.—Բա ինչպէս աննինք։

Ասաց.—Աստըծու դէմ պտի տուվա աննինք։

Արին.—*Խոսէ բր կրաճր վուտրայ*
Փուսէ կհավորկայ dorտա բրկրա խորայ
Էամ սրսկճ ա, Ջինճ չժմառա բրրէ
չար ա։

Աստուած չայդողէր
Աղաւնիի մրթիը վէրևից գայ,
Մենք երէք ենք, Ջինէն ես մնգի
հետ կը լինի չորս։

Աստըծու դէմ որ տուվա արեցին. Աստըծուց ինոնց լիբասին մէկ լբաս էկաւ Ջինէին. էն էլ արեցին ուրենց նման, բիրեցին Մամօյի փէնջարից տարան դրեցին վեր Մամօյի լեա տօտակին։

Կէս դիշեր էր, Մամօն ակխաւ, տեսաւ մէկ կնիկ կայ ինոր ծոց, ասաց.—Ա՛յ կնիկ, դու առանց իմ իրաւունքին ընչի՞ ես իկեր քստեղ. ես Մամէն իմ, Ալ փաչի լամուկն իմ, էս երկրի մեծն ես իմ։

Ջինէն ասաց.—Ես չիմ իկե վեր քու տեղաց, դու ես իկե։

Էն ասեց «դու ես իկե», էն ասեց «դու ես իկե» էրկըսով արեցին կռիւ։

---

* Պատմած է Օսկան Օհանեան։ Սոյն վէպը տարածուած է նաեւ ընդհանուր Եզդի ժողովրդեան մէջ. որպէս նուիրական աւանդութիւն պարտաւոր են սովորելու, իւրաքանչիւր Եզդի կր պնդէ թէ Մամ եւ Ջին Եզդի եղած են. որով ամեն նոգեւորական պարտաւոր է գիտնալ ու երգել. սորա մէջ կը գտնէ ընթերցողր հուրդ ժողովրդեան յատուկ սովորութիւնները։

Մամօն ասաց.—Ես որ իմ իկէ, էլի՛ քու ճրագն արա՛։

Ջինէն էլաւ. դարիբ ի, չդիտցաւ ճրագի տեղ դո՛ր էր։

Մամօն էլաւ ճրագ կպուց. մէկ սրտով չէ, տաս սրտով այ՛ք իցքին յիրար։

Ջինէն ասաց.—Իմ բիրոդներ ընձի կը տանեն։

Մամէն ասաց.—Ինչ եղեր կը տանեն։

Ասաց.—Ինչպէս ընձի բիրած է, էմալ էլ կը տանեն։

Ասաց.—Տնաւո՛ր, քեզ որտեղ տանեն. մէկ գիշեր չուր լուս չինք քընէ իրար մօտ, մենք ակա՛ս։

Ասաց.—Իմ բիրոդներ ընձի կը տանեն, ես գիտնամ։

Ասաց. — Շատ չէլաւ, իրար կը գրկենք, ակա՛ս կը նստինք. դո՛ր պտի տանեն իմ ձեռաց մէջէն։

Շատ մնացին ակա՛ս մինչև լուսուն ղէմ։

Եղունիկներ ասին.—Աստուածծ, քենչպէս անենք, սև իրես իլանք քու դէմ. իսոնք չեն քնի որ տանենք։ Լուս բացուաւ։

Ջինէն ասաց. — Ես կնիկ եմ, չեմ կանայ քու իտև կան գնայ, դու իմ իտև պիտի կան գնաս։ Իմ տեղն Զվերն ի, միր Սևոնիկ աղջիկն եմ, Ղարաթաժոնիկի թոռն եմ, իմ անուն Ջինէ ի։

Մամօն ու Ջինէն ուրանց մատնիք փոխեցին։

Եղունիկներ տուվա արևցին. Աստըծուց քնու ուլնիք ընկաւ իդոնց անկաջ, էրկսով էլ քնան։

Էլի Ջինէն կոխեցին ուրանց լպասին, առիցին գնացին։

Մնաց չում առաւօտ, լուս բացուաւ։ Մամօն իչկաց տիսաւ կնիկ չկայ մէջ ուր տեղաց, մարդ չկայ մօտին։ Շատ ծանաբ խնըդցաւ. ասիցին.—Մամօ, դու ընչի՛ ես ընկեր պատկիր իս, էլիր, աղօթք արա՛, քու աղօթքի վախքն ի։

Աբին չարին, չէլաւ կայնաւ, ասաց,—Ես անճար խիւանդ իմ։ Ջուաբ գնաց Ալ փաչին։—Մամօն չատ խիւանդ ի։ Ալ փաչէն էր մէ տղայ. որ ասիցին խիւանդ ի, խելք իր գլխէն գնաց, էլաւ էկաւ վերէն, ասաց. — Ա՛յ Մամէ, քու որտեղ կը ցաւայ, որտեղ չի ցաւայ. ընչի՛ էդպէս կանիս։ Ասաց.—Տեղ սաղ չունիմ, չատ անճար խիւանդ իմ։ Ալ փաչէն չատ նստաւ իդոր կողքին, չատ իդոր թևքիր մաժեց։ Ջուաբ գնաց իդոր մօր. մէրն առաց էրկու խատ կընիկ, էկաւ վերէն։ Մէկ կնիկ չատ մեծ կնիկ էր, ասաց. — Մամօ, դու խիւանդ չես։—Բաս, ինչ իմ, ասաց։

Ասաց.—Դու խիւանդ չես, դու կնիկ ես տիսե էրազ լինես։

Ասաց.—Բա որ դու գիտնաս, ընձենէ ընչի՛ կը խարցնիս։

Ջուաբ գնաց Ալ փաչին. ասիցին.—Մամօն խիւանդ չի։

Ասաց.—Բա ինչ ի։—Կնկան տաւի կանի, պտի փսակուի։

Ասաց.—Աստուածծ անի էնպէս ըլլի, կըլլիմ ինչքան կնիկ կայ,

աղջիկ կայ, կը ժողվիմ, բերի՛մ, կը տանիմ Բաղէ Թոռկըն, Թող գնայ, ուր խնձոր Թալի, ար մէկին խնձոր Թալից կուզիմ, Մամօյին։

Էդտեղ էլաւ Ալ փաչէն, քալալ առաց կանչել, ասաց.—Որտեղ որ մի կնիկ կայ, մի աղջիկ կայ, զարդարէք բերէք Բաղէ Թոռկըն։

Ինչքան կէր զարդրեցին, բերեցին Բաղէ Թոռկըն։

Մամօն ասաց.—Աստուած, ես ինչ անեմ, ես գի՛ւղամ, իմ ուզած էնտեղ չի. ես իմ խօր խաբր չեմ կոտրիր, կըլեմ կերթամ, իմ խօր քաղաք մեծ քաղաք ի, բայմի մէ եաճ Զգիր ըլի, ես չը գիտնամ։ Կըլնի կերթայ Բաղէ Թոռկըն։ Ինչքան կնիկ կայ, աղջիկ կայ, կիցկին ըռեզ իդոր դէմէն կըննցուցեն, որ էդի խաւանի, մէկին ուզեն ինոր խամար։ Ինչքան կայ, կուգան կըննցնեն, կերթան, մէկին էլ փարսաճա չանի, խնձոր չի Թալի։ Մի խաւ աղջիկ կը մընայ յետ, ուր մի աղլախ կարձկի։ մէկ ուրիշ կը կապի, կասի. — Մամօն աչք կիցկի ընձի, ես պիտի էրթամ, խնձոր Թալի ընձի։

Էն էլ ընցաւ գնաց, խնձոր չի Թալէց։

Աղջիկն ասից. — Մենք ընցկընենք մը աղջիկ ֆուլՓաք էկանք բաւեղ մէկ չուզից ուր խամար. ես պտի մի խաղ ասեմ, տեսնամ Մամօյից ինչ ձեռ կուտայ։ Մէկ խաղ կասի.—

Տու տայրա տայրէ բազի՝	Դու Թռչուն, բազէ Թռչուն,
Դեւ բավէ խո ղրնազի՝	Քու մօր, հօր վրայ նազ կանես.
Էամ հանայ դիզա բեգ բեգլերիյան՝	Մենք որ կանք, իշխան իշխանաւորի աղջիկ ենք,
Տու չմե ակի ըժխառաս նախուազի։	Դու ինչո՞ւ մեկը քեզ համար չես ուզի.
—Եա կու հազ դրխուազմ նա յըվրա.	—Նա, որին ես կուզեմ, այստեղ չէ.
Նավէ վի Զինեք՝ դիզա Միր Սևեյինք՝	Նորա անունն է Զինէք, դուստր Միր Սևեյինի.
Նաւեա Միր Աղյասայ՝ վկըր Զգիր Բօթանայ՝	
Շանայ շինէ ռանգինայ։	

Զուաբ տարան Ալ փաչէն.—Մամօն մէկեմ աղջիկ ըսկի բակեամ չարաց, մէկին էլ խնձոր չԹալեց. մի աղջիկ կէր, խաղով էսպէտ ասաց Մամօյին, Մամէն էլ էդպէտ ասաց. — Իմ ուզած Զըգիր Բօթանն ի, կը բերէք բերէք։

Ալ փաչէն ասաց.—Էլէք վեր, օրողկէք ախչըներ, ինչքան մանգնացող մարդ կայ, կանչէք բերէք, Թո գնայ, տեսնանք իդա տեղ որ մէկ սալըղ կըտայ։

Օրողկից ինչքան խալիւոր կէր, բերեց, խարցում արաց. — Զգիր չէք գիտեր ձրտեղն ի։ Ասին.—Չէ, չինք գիտեր։

Զուաբ գնաց Մամօյին, ասին.—Մարդ չի գիտեր ձրտեղն ի։

—Սրբէք ասածներդ չգիտեմ, մրմնջեց,
Ձգիր ու Բօղան երկրիս որ կողմն է.
Միր Սևտին արդեօք ինչ թագաւոր է։
Խնդրեմ, ժողովականք, չտապեցէք,
Ցղէք երկու աշխարհատես մարդ բերէք,
Հարց ու փորձ անենք, նայենք, գիտեն.
Ձգիր ու Բօղան ասած ինչ քաղաքներ են։
Երկու ծերունի աշխարհատեսներ եկան,
Միրի առեանը բարև բռնեցին, կանգնան.
Միրը յուզուած սրտով մէկին ասաց.
—Դու Ձգիր-Բօղան տեսած ես, կամ լսած,
—Չէ, ասաց, երբէք չեմ տեսած և ոչ լսած,

Իմ հաւևրս անգամ այդ անունները չեն յիշած,
Միրը յափշտակուած միւսին հարցուց.
—Դու Ձղիր-Բօղան ար կողմն է,աւանած ես,
Ինչ ձեռաց վերայ կընկնի, արդեօք դիտես.
—Այո, դիտեմ ես, ազնիւ միրս ու տէր.
—Դու քանի տարեկան ես ծերունի աշխարհատես,
—Հարիւր երեսուն տարեկան կը լինիմ ես.
—Ծերունի, արդեօք կարող ես ձի նստիլ,
Որդւոյս հետ Ձղիր ու Բօղան մեկնիլ.
—Շատ ծերացած եմ, կը դողդողան անդամներս,
Ես դիս ձիու վերայ չեմ կարող բռնել, միրս.
—Մի մեծ սատգարակով յղեմ, գնա,
Որդւոյս ցաւին մի դարման արա.
—Անդամներս բոլորովին են քայքայուած,
Շարժելու կարողութենէ եմ զրկուած.
Միրը երկար, բարակ հարցուց, փորձեց.
Մի հնար չգտաւ, դլխուն ու չոքին տիեց,
—Հայ վախ-հայ վախ, ինչ պտի լինի որդիս,
Հիւծեցաւ, այլ ես ձեռքէս դնաց սիրելիս.
Լուր հասաւ, գնաց Մամէի Ալանի,
—Քեզ համար մի ճար, հնար չլինի,
Զկայ մէկը ծանօթ Ձղիր ու Բօղանին,
Որ Մամէդ չքաղեր կարօտ Խթուն Զլինին.
Մամէն երբ այդ լուր լսեց, շատ յուզուեցաւ
Ցմիչտ իւր վիճակին մէջ վառեցաւ,
Կեանքը ես օր օրի վրայ դառնացաւ.
Խելքթաւի այս, այն տեղ դեգերիլ սկսաւ.
Մի օր մտածեց-մտածեց, ապա որոշեց.
Իւր խանդակաթ մօր մի մարդ ղրկեց,
Ասաց.—Մայր իմ սիրելի և խանդակաթ,
Ինձ ճալալ արա քո ծծի անուշ կաթ.
Ասաց.—Հայր իմ յարդելի և պատուական,
Ինձ ճալալ արա խնամքդ հայրական.
Մնաք բարեաւ, հայր և մայր գթոտ,
Թերևս մի օր դառնամ, գամ ձեր ոտ.
—Որդիս, ճալալ լինի. իսկ ասա մեզ դու.
Ինչո՞ւ չտապեցար, չուտ ընկար ճանիփու.
Դէպի ո՞ւր կը գնաս, դէպ ո՞ւմ դուռ,
Գուցէ անծանօթ վայր կորսուիս ի զուր.
—Վճռած եմ գնալ, ծիլ հայրիկ բարձր,

Վչտերուս դարման գտնել, մայրիկ քաղցր.
Միր տեսաւ Մամէն չհամոզուիր,
Որոշած նպատակէն յետ չկանգնիր.
Ինչ որ պէտք էր, պատրաստից,
Ճօթ-ուճ ձիաւոր հետը դրեց։[1]

*
* *

Ընկան ճանապարհ, չատ-քիչ գնացին,
Մի ընդարձակ մարգիմ քով կանգ առին.
Այն տեղ աղբիւր մի կար, զուլալ ու յստակ,
Նստան աղբիւրի մօտ բուսած ծառի տակ։
Ջուր խմեցին, հաց կերան, հանգստացան,
Վեր բարձրացան, ձիանք հնծնին, գնան.
Մամէն էր, իր ուղեկիցներուն նայեցաւ,
Որոց դէմքը սաստիկ տխուր տեսաւ։
—Մաւոյք և ընկերք, ասաց, ինչո՞ւ էք տխուր,
Ասացէք, խնդրեմ, ես ձեզ կը բանամ մի դուռ։
—Մեզ մենք պահել ուզենք քեզնէ.
Ինչ կարող ենք պահել Աստուծմէ.
Չէ, մենք ընտանիք ու զաւակ ունենք,
Տուն ու տեղ կեր-կերակուր չունենք,
Մենք չենք համարձակիր մի բան խօսել,
Կը խնդրենք, չնորհ անէք մեզ արձակել։
—Ցանուն Աստուծոյ կերդնում, ձեզ հրաման է.
Գացէք ձեր տուն, ինչպէս ձեր, իմ կամքն է.
Ես երբէք պատճառ չեմ լինիր զձեզ պահել
Ձեր ընտանեաց անէծք վիրս փաթթուելէ.
—Մամէ, դու Աստուծոյ յաջողիս, ասացին.
Ուրախ զուրախ միաբերան օրհնեցին։
—Գնացէք, համայն ծառայք սիրելի,
Կրկնեց—արտօնութիւն տուած եմ ձեզի։
—Բո հօր երկիւղէն տուն գնալ կարելի չէ,
Չհաւատար մեզ.—Մամէն կօրուսած էք. կասէ.

---

1 Մամէի ճեէն մեկնիլը բանի տեսակ կը պատմեն. որպէս թէ միր հրաման կարձակէ աշխարհի գեղեցկուհիներն կը հաւաթէ. Մամէն որոց մէջ կը յղէ, որ մին հաւանի. վագիրի ու վաֆիլի աղջիկներուն ես կը պատուիրէ որ իրենց բաղցր երգերով Մամէի սիրտն գրաւեն. ամեն կողմէն ընդարձակ երգեր կերգուին. Մամէն որոց վերայ չնայիր: երեք անգամ կը կրկնուի: Մամէն Բօրի վերայ կը նսթի, կերթայ: Մի այլ նուղի մէջ ես որպէս թէ հայրն պատպի դռներն կը փակէ, Բօրի ոտն ես փականի կը զարնէ. նա ձին նսթելով ձիու ոտներն աջ-պէս փականիով պատպէն կը թռչի, կերթայ:

Թևդնէ կը խնդրենք, չնորհ՝ անես, գիր մի գրես.
Մերի պատիժը մեր ընտանեաց վերայ չբերես։
Մամէն նստաւ, նամակ մի գրեց,
Զիաւորներուն յանձնեց, իր հօր դրկեց.
Ասաց.—Գնացէք, ինձ համար աղօթեցէք։
Ծառաներն օրհնեցին, ձիանք հեծան,
Ուրախ-ուրախ աներնին վերադարձան։
Մամէն չուարեցաւ. անելիքը մոռացաւ.
Բորը հեծաւ, ասպանդակեց ու քշեց.
Երեք օր, երեք գիշեր սար ու ձոր անցաւ,
Զին աստիկ կը կաղար, ինչ բան է, չմտածեց։
Ցաւը Բորին հոգւոյն որ հասաւ.
Երբոյ իւր վիճակը յայտնեց—ըսաւ.
—Վայ Մամէս, իմ անխոհեմ Մամէս.
Ինչ երախայական խելք ունես։
Այդ չարունակ դիս կը հարուածես,
Երեք օր է անընդհատ կը քշես.
Այ աւազ, մոռացկոտ Մամէս.
Զիտարը կղպած՝ ատս թողած ես։
Չես ասեր՝ չիտարը Բորիս ձեռքն է կտրած,
Ցաւն ու մրմունջը նորա սիրտը հասուցած.
Ահ անխոհեմ, երախայամիտ Մամէս.
Ինչու այդպէս չոր դլուխ կը քայլես։
Իսկի մտքէդ չես անցներ ու ասեր.
Զիտարը Բորիս ձեռքն[1]) է զարկեր, կերեր.
Միայն ոսկորն է մնացեր եարալու.
Այլ ես կարող չէ մի քայլ-առնելու։
Տեղ որ զարխլայր է, տեղ որ կողղ.
Չես նայեր ոչ խոր և ոչ առնկողղ.
Ծայռ, սար ու ձոր և առուս, առուակ,
Առջևդ կարծես դաշտած՝ են տափարակ։
Բնաւ չես ասեր չիտարն է զարկնել.
Բորիս սիրուն ձեռները վիրաւորեր։
Մամէն երբ զայս լսեց, զգաստացաւ.
Մի ակնթարթի մէջ թռաւ, ցած իջաւ.
Հուժկու բազկով քաշեց սուր թուրը.
Մի հարուածով կտրեց փակուած չիտարը։
Տեսաւ Բորի խատուտիկ աչքերէն,

1 Զիտ առաջի ռուերուն «ձեռ» կասեն Ղրղիզ։

Պտուղ-պտուղ արտասուք կը հոսեն.
Սիրտը ցաւեցաւ, խիստ յուզուեցաւ,
Ուշաթափ Բորի առաջ ընկաւ, լաց եղաւ։
Ասաց.—ոչ ես լինէի և ոչ այսպէս վիճակ,
Մնայի այս տեղ չուար, խեղճ ու կրակ,
Ով տէր, լսէ աղաչանքս, ինձ մի ճար արա,
Մի դուռ բաց, սպեղանի դիր վերքիս վերայ։
Սղուկ ինձ՝ որ կարի մօտացկոտ եմ,
Ախտս ինձ՝ անզդոյշ՝ կորած եմ.
Վայ ինձ՝ որ անփորձ ու մոլորեալ եմ,
Չիտարն Բորիս ձեռքերն կերեր, ոսկորը մնացել։
Հաղար վայ ինձ՝ որ մնացի վիզս օղոր.
Իմ սիրական Բորն է եղած վիրաւոր,
Ո՛վ տէր, դարման արա դու ղօրաւոր.
Մի թողուր Մամէ ծառադ ոտաւոր։
Մամէն գետին ընկած՝ կը մտածէ, կը մտածէ.
—Ձգիր ու Բօղան ինչ ձեռաց վերայ է, կըսէ.
Աչ թէ ձախ թևի՝ հիւսիս թէ հարաւ.
Նպատակիս կարող եմ հասնիլ, ըսաւ։
Երեք քոյր աղաւնի զարձեալ յիրկնից իջան.
Մամէի գլխու ծառի ճիւղի վերան թառեցան.
Մամէի վիճակի վերան ցաւեցան.
Իրարու հետ խօսիլ սկսան։
Մին ասաց.—Մամէն եթէ լինի զգաստ,
Նորա վիճակը կը լինի լաւ և հաստատ.
Երբ մենք թռչինք, դնանք այս անդէն,
Մի փետուր կընկնի մեր թևի վրայէն։
Մամէն եթէ զարթուն-զդոյշ մնայ.
Փետուրն առնէ, քիչ ինչ ցած դնայ,
Այն տեղ աղբիւր մի կայ քաղցր-համեղ.
Որի ջուրըն պիտի լինի Բորի ոտաց դեղ։
Փետուրն երբ ջրին զարկէ, ոտաց քսէ,
Երեք ժամէն անհրաժեշտ առողջ է։
Մամէն իսկոյն ելաւ չտկուեց, նստեց.
Փետուրը ջուրը թաթխեց, Բորի ոտաց քսեց.
Բորը տեսաւ Մամէի չարչարանք,
Տեսաւ դառնաղէտ հեծեծանք,
Նորա վերան գթաց, քաջալերեց.
Երգեց ու իր անելիքը յայտնեց։
—Քաջ Մամէս, իսկի հոգ չքաշես.

Երկու ձեռներս թաշկինակով կապես,
Ես քեզի քառասուն (աւուր) մէկի վերան՝
Կը հասցնեմ երկիրը՝ ձգիր ու Բօղան.
Դեղեցիկ տեղին մէջ կը չրջադայես,
Սիրունատես երկարաւիզներով կզբաղուիս։
Քալ Մամէս, դու իսկի հոգ մի քաշեր.
Ձիս արձակէ թոյլ տուր լաւ-լաւ մարդեր,
Ձքեզ քո բաղդին կը տիրացնեմ.
Ձգիր ու Բօղան աշխարհը կը հասցնեմ։
Կը տեսնես սիրուններ անգնահատելի,
Դեղեցիկ հասակաւորներ զմայլելի։
Չըէ պիս զուլալ աղբիւրներու ակից,
Ինձ ազատէ երկաթեայ կապանքից,
Որ քառասուն և մէկ աւուր վերան,
Ուղղակի հասցնեմ ձգիր ու Բօղան։

***

Մամլեն հնձաւ, գիշեր-ցերեկ անընդհատ քշեց,
Քառասուն օր անբիծ դաշտեր անցաւ,
Քառասուն մէկ երրորդին բերրի երկիր մտաւ
Ձանապարհի վերան լծքաւոր մի տեսաւ,
Դիմից նորա մօտ բարև տուեց,
Վաղուց փակուած լեզուն բացուաւ,
Քաղցրալուր երգ մի առաւ, երգեց.
—Այ լծքաւոր, լծքաւոր, քեզ բարի օր,
Ինդրեմ, ինձ ասես, Աստուած որ սիրես,
Այդ ինչ երկրի լուծք է փառաւոր.
Դու որ երկրի քաղաւորի ժողովուրդ ես։
—Աստուծոյ բարին գլխիս աչքիս վերան,
Դու բարի հիւր մ'ես պատուական,
Մատաղ քեզ, ինձ ուղիղն ասես,
Դու որ այն Աստուածը կը սիրես.
Կերևի չատ հեռու երկրէն եկած ես,
Լուծքն ու այս աշխարհը կը հարցնես.
—Այո, ժիր լծքաւոր, մարդ պատուական,
Անապատներ անցայ, ես եմ օտարական։
—Ուրևմն այս ձգիրն, ատաց լծքաւոր,
Ցոյց տալով նաև Բօղան փառաւոր.
Ձգիր, Բօղան մեծ քաղաք աննման՝
Բարձր տներ, սիրունատեսներ հոն կան,

Կամարակապ ու սև ունքեր ունին.
Իրբև թագուհի դռներու առջև . .
Այնտեղ երեկոյին երբ մութը վրայ հասաւ,
Տեսար յանկարծ մեծ դուռը փակուեցաւ,
Աղբայրն եղբօր երեսն անգամ չնայիր,
Նաև ոչ մի խնամ կամ հոգ վրան տաներ։
Ճանապարհը շատ երկար, հազիւ կերևէր,
Մամէն ձին քշեց. քշեց քաղաք հասաւ,
Քաղաքի մօտ մի առատ աղբիւր կը վազէր,
Աղբիւրի վերան մի սիրուն նստած տեսաւ։
—Բարի օր, ասաց, ո՛վ սև ու ոգեղ խաթուն,
Աղբիւրի վերան ինչ կանգնած ես այս մութուն։
—Աստուծոյ բարին, գլխի, աչքի վերան՝
Քաջատոհմիկ, կարիճ Մամէդ Ալանեան։
—Դու Աստուած, Աստուծոյ մարդը կը սիրես,
Արդեօք կարելի չէ ինձ ճշմարիտն ասես,
Ի՞նչ գիտես, որ ես իմ Ալանեան տոհմից,
Քաջ և զօրաւոր թագաւորներու անից։
—Այո՛, քաջ գիտեմ, դու ես Մամէն,
Անուանի Ալ փաշայի սերունդէն.
Մութիը ղէմին աչքարհէն ես ելած,
Քառասուն մէկի վերան հոս հասած։
Եկած ես այս Զինէխս սև աչքերուն,
Կամարակապ ու գեղեցիկ ունքերուն,
Գիտեմ, վառուած ես ու սիրահարուած,
Դարս համար այսչափ լեռ, ձոր չափած։
—Եթէ արդարև, ասաց, դու այն Զինէն ես,
Մի յիշատակ ունեմ մօտդ, այն գիտես։
—Ես նշանն էր մատանի մի սիրուն,
Անգին քարերով գեղեցիկ զարդարուն.
Քառասուն օր է, նստած եմ այստեղ,
Միշտ կսպասէի ճանապարհիդ անշեղ։
Մատանին հանեցի մատէս, դրի գոգս,
Որ վերան նայեմ, քեզնից առնեմ կարօտս.
Իսկ երբ քեզ տեսայ, ուրախացայ,
Թռչնոյ պէս վեր թռայ, մատանին մոռացայ.
Մատանին գլորեցաւ, գնաց դէպի ջուր,
Շատ որոնեցի, գնաց ընկաւ չգիտեմ ուր։
Մամէն աղբիւրին վերայ կանգ առաւ,
Աչ և ձախ, հոս և առաջ նայեցաւ։

Ինքն իրեն խոր-խոր կը մտածէր,
—Այս իմ տեսած սիրուն Զինէն չէ, կասէր·
Նթէ երազի մէջ տեսած Զինէս է,
Ուրեմն այլ ևս իմ չարչարանքս զուր է.
Զին ասպանդակից, գնայ ու եկաւ յուզեալ.
Ցուսահատ մտածից, չիտ դառնալ, գնալ,
Հասկացաւ Բոր Մամէի մտատանջութիւնը.
Ուզից մի երգով յայտնել նորա յիմարութիւնը·
—«Մամէ, գլուխս դարձուր» զիս..
Ինչու անխոհեմ ընթացք բռնած ես,
Ի զուր քո սիրտն ու հոգին կը մաշես·
Բաւական է այսչափ անվորձ մնաս,
Դատարկ խօսքերու դու ականջ տաս.
Այս աղբիւրին վերան որ կը տեսնես,
Դու նաթուն Զինէն է կը կարծես·
Այս ալ է Բաքոյի աղջիկը Զին,
Հմուտ է կախարդութեան արհեստին 1)·
Նաղած-չեղածը օր օրին կը գուշակէր.
Ճանապարհներու գլուխը կանգնած կսպասէր.
Արարածներու գործերը կը խանգարէր·
Շուտ արա, զիս ասպանդակէ, Մամէ,
Այս տեղ ձգիր ու Բօղան քաղաքն է,
Սրբ իրիկուն հասնի, մութը պատէ.
Նղբայր եղբօր անպատսպար կը թողնէ·
Մամէ, զիս սանձարձակ թոյլ տուր,
Որ քեզ տանեմ մի բոճ, սարի դուռ·
Զգաստ ձին առաւ զՄամէն, տարաւ.
Ղարս Թաժինի դուռ կանգ առաւ.
Դուրս եկաւ Նաթուն Գիւլ փերին,
Զմայլեցաւ նայելով հիւրի երեսին·
Իջաւ ցած. առաջ վազեց, ձին բռնեց.
Տարաւ ներս, չատ սիրով հիւրընկալեց·
Երկու եղբայր ունէր Ղարաթաժին,
Որոց անուններըը ձագան, Աֆան էր միւսին,
Երեքն ևս եղբօրորդիքներ էին Միրին,
Երեքն միասին Միրի տաճանը կը բազմէին·
Նաթուն Գիւլ Փերին նրանց մարդ յղեց,

1) Ոմանք կասեն թէ Աւանի Բահոյի աղջիկը կախարդութեամբ ամեն բան կը գուշակէր. ոմանք ևս կասեն թէ Բահոն իմիք կախարդութիւն կանէր, իւր աղջկան կը յայտնէր գաղտնիքը:

—Մեր տուն վառաւոր հիւր եկած է, յայտնեց.
Ինչ կանէք, չուտ արէք, տուն դարձէք,
Ինչ որ արժան է, այնպէս հիւրասիրեցէք։
Երեք եղբայր չուտ տուն վերադարձան,
Տեսան, յարգեցին վառաւոր հիւրին.
Երեք օր Միրի առեանը չներկայացան։
Միրը մարդ յղեց Ղարաթաժտինին,
—Ղարաթաժտին, յարգելի բայմականս,
Քանի օր է ինչու չես դար առեանս։
—Վառաւոր հիւր ունիմ, Միր,
Չեմ կարող քո առեանն գոնուիր։
Միր դարձնալ լուր յղեց Ղարաթաժտինին,
Հիւրն ևս իրենց հետ առնին, տանին։
Խաթուն Գիւլ Փէրին ձեռք ձգեց ունելուն,
Սաստիկ հարուած մի առաց կանչողի գլխուն։
—Խաթուն Փէրի, ինչու այդպէս զարկեցիր,
Գլուխս արիւնլուայ վիրաւորեցիր։
—Կորիր, գնա, խոլամ, քո Միրին խօսէ,
Օթ ձեռք նուազածուներ թող հանէ,
Իւր դռնէն իմ դուռ խալիչա փռէ.
Առեանն ևս որպէս վայել է, զարդարէ,
Որ իմ հիւրը գայ նազելով, օրօրուելով,
Միրի առեանը բարձրանայ զրօսնելով։
Դու ինչ ես որ իմ հիւրը առնես, տանես,
Այդպէս անվայելուչ Միրի երես հանես։
Մատան չտալաւ դարձաւ Միրի դիւան,
Միր ասաց.—Ո՞ւր է Թաժտին, ձագան, Արֆան,
Նաև հիւր մը ունէին պատուաւոր,
Ո՞ւր են, ինչու չեկան նոքա այսօր։
—Միրս, քո քոյր գլուխս վիրաւորեց,
Խեղճիս արիւնի մէջ չաղախեց։
—Քոյրս յիմար քէ դիւահարած էր,
Պատճառ ինչ էր որ քո գլուխը կտրէր։
—Ասաց. «Թող վռէ խալի ու խալիչայ,
Իմ հիւրը վերան օրօրուի ու գայ»։
Միր ասաց.—Հոգ մի քաշեր, տղաս.
Անմիջապէս բժիշկն գտնան կամանաս։
Միր կանչեց, հրաման արձակեց,
Մինչև Թաժտինի դուռ դորդ վռեց,
Դուրս հանեցին պատուաւոր հիւրին.

Դրսանն լիքն էր արծաթն ու ոսկին։
Որչափ մարդ կար ձգիր ու Բօղան,
Առ հասարակ ելան, բամբա ևիան,
Ոսկին ցանելով, սիրելով կերթար Մամէն,
Դ.արաթաժոլին ևս կը դնար առջևէն։
Մամէն չհասած՝ Թաժոլն մոտ ևելս,
Միրի հետ խօսելան երես առ երես։
—Որչափ ծանր հիւր ունիս, Թաժոին, ասաց Միր,
Հազիւ լուրերով առևանս երևացիր։
—Հիւրս չատ ծանր է ու պատուաւոր.
Նորա կերպարանքն է չատ փառաւոր,
Երբ նա ներկայանայ առևանը Միրիս,
Պոռ պէտք է նորա առջևը կանգնիս։
—Ասա ինձ դու, ով Դ.արաթաժոլն,
Նպած—չնպածը ինչ է քո հիւրին,
Որ ստիպուիմ նորա առաջ կանգնել
Իւր չափէն ու պատուէն աւելի յարդել։
—Այժմ չգիտեմ թէ ինչ սիրտ անես,
Ցայտնի կանէ երբ դոնէն մոտ ևերս։
Միր երբ տեսաւ Մամէի դէմքը, հիացաւ,
Աճապարեց, բարձրացաւ, բարև առաւ,
Բռևեց ձևռքէն, դէպի աջ կողմը տարաւ.
Միրը երբ յանկարծ վեր էր բարձրացած,
Մամէի ձևռքն էր ձևռաց մէջ սինդ բռևած,
Դ.արաթաժոլն մի հնար մտածեց.
Իւր թաչկինակը Միրի տակը ձգեց։
Միր Մամէի տեսքին յափշտակուեցաւ.
Երեք օր, երեք գիշեր նորա հետ խօսեցաւ։
Խաթուն Գիւլ փէրի խանում եկաւ.
Բարկացած Միրի առևանը կանգնեցուց։
—Միրս, ասաց, այս ինչ ընթացք է.
Երեք օր է հիւրս ղրկնցիք հացէ, ջրէ.
Մինչ այս տեղ հիւրս բանտարկուած,
Ձեր անկարգ հաճոյքին է զոհուած,
Միրին դալու այս ծանր խօսքը,
Վարձաւ, խոժռելով առաց քրոջը.

1 Մամէն կասեն շատ գեղեցիկ էր, որու աչք նորա տանէր, կվայէր նորա վերաց, երեք or երեք վիշտ տեսնողը յափշտակուած անօրի ծարաւ, անհուն կաճցնէր։

—Եթէ բազուկս հասնէր, գիտէս, ես
Դաշոյնովս կը վերջացնէի գործդ։
Միրը ժողովականաց ասաց.—արէք,
Աւրդեօք կարելի չէ ինձ ճիշտն ասէք.
Չէ այս օր այս տեղ նոր եկած եմք,
Միմեանց հետ խօսք ու զրոյցք կանենք։
Ասաց Գիւլ Փերին.—ժողովականք, ասէք,
Այս երեք օր չէ, դուք նստած կը խօսէք։
—Այո, ասացին, Գիւլ Փերի, քո խօսքն է,
Մեր կարողութենէ այդ զրոյցք դուրս է.
Մենք չենք կարող միրին սուտ հաննել.
Նորա առաջ դիտողութիւն անել։
Միրը յանկարծ զգաստացաւ.
Իւր արած սխալը հասկացաւ.
Ասաց.—Աստուած վկայ, կը կարծէի,
Երեք ժամ է նստած՝ կը խօսէի։
Մառաներուն հրաման արձակեց միրը.
Գնացին, պարզեցին հացն ու կերակուրը.
Մամէն նստաւ, կերաւ, կշտացաւ.
Միրէն հրաման առաւ, տուն դարձաւ։
Մամէն երբ գնաց, ասաց միրը.—Թաժտին,
Չէ ասիր, «ալտի կանգնես հիւրի առջին».
—Այո, դու կանգնեցար. ձեռքէն բռնեցիր.
Հիւրասիրելով քո ալ կողմդ նստեցուցիր.
Եթէ չես հաւատար, վեր կանգնէ, տես.
Թաչկինակս քո տակ ձգուած կը գտնես։
Միրը բարձրացաւ, տակը նայեցաւ.
Իրաւ, թաչկինակը տակը ձգուած տեսաւ.[1]
—Աստուած վկայ, ասաց, ես չի գիտցայ.
Թէ ինչ ժամանակ ելայ, կանգնեցայ։
Թաժտին հրաման առաւ ու մեկնեցաւ.
Երեք օր դարձեալ առեանը չերևեցաւ։
Միրը այս անգամ ևս լուր յղեց.
Թաժտին իւր առեանը բերել տուեց.
Մի քանի խօսք հարցուց Մամէի վերայ.
—Ինչ երկրէն է, նորա հայր և մայր կայ։
—Չգիտեմ, ասաց, նորա վերան բան չխօսեց.

---

1 Թաչկինակը տակը ձգեց որպէս զի երբ ուրանայ կանգնիլը, Թաժտին թաչկինակով նմանեցնէ թէ կանգնեցաւ։

Լուր յղեց միր, զՄամէն բերել տուեց։
Միրը ասաց.—Մամէ, ինձ պէտք է ասես.
Ո՛ր թագաւորի, ծր վաղերի տղան ես.
—Միրս. ինչ է, ձեր ասածները չգիտեմ.
Այլ հասարակ մի խեղճ մարդ եմ։
Այս տեղ Միրը բարկացաւ, թաժտինին կտիպէր,
—Հիւրդ լաւ չանէր, ճիշդն չասէր, կըսէր, 1
Ջայն առ, տար, լաւ տեղեկութիւն քաղէ.
Առաւօտեան վաղ արի, ինձ յայտնէ։
Սրճք եղբայրներ, Մամէն ևս միասին՝
Գնացին դէպի ապարանքն Շահնաչին.
Իրենց հայրենական մեծ քօչքն։
Շահնաչին էր մի ապարանք փառաւոր, 2
Զորս կողմն ունէր այգեստան յարմարաւոր.
Շահնաչինեն էր խիստ բարձր չինութիւն,
Շուրջն ունէր քաղաք, գիւղ, բնակութիւն։
Ղարաթաժտին և իւր եղբայրներ,
Մամէի Ալան ևս իրենց հետներ.
Շահնաչի տանիս բարձրացան,
Գորգերու վերան բազմեցան։
Սաթրիճ դրին մէջ տեղ, խաղացին.
Մինչև կէս օր ժամանակ անցուցին։
Մամէն ու Թաժտին այդ տեղ Ջող խաղան.
Մենք գառնանք Խաթուն Զինի վերան։

*
*

—Զինէ, ալ Զինէ, կասէ Խաթուն Զինէ.
Համայն ծառաներս, աղախիններս հաւաքէ,
Տաս-քսան ձի ու ջորի առնեն, գան.
Ինչ որ տան մէջ կահ-կարասիք կան.
Բառնան, զընկզընկոցով աղբիւրը գնան։
Աղախինները չտապեցան, բարձան.
Խաթուն Զին առին, հանապարհ ընկան՝
Կարաւանը սիրուններու խմբով նազելով անցաւ.
Աղբիւրի վերան բեռներ արձակեց, իջաւ։

---

1 Մամէի դէմէն կը գուշակէին որ նա ազնուական սերունդէ է, իսկ հերբ նա ուրացաւ,, միր բարկացաւ։

2 Շահնաչին այդ ցեղի հնաւանդ ապարանքն էր. կասեն թէ եղբայր եղբօրադիմ բաժանուելու միջոցին, երկու բաժին առած են. միրութիւնը մի բաժին եւ ապարանքը մի բաժին. Թաժտին Շահնաչին բաժին վերուցած է։

Մամէն բարձրէն դէպ ի ցած նայեցաւ.
Օրիօրդայ սիրուն կարաւանը տեսաւ.
Գեղեցկուհին Չին էր կարաւանապետը.
Օրիօրդայ սիգաճեմ առաջնորդը:
Մամէն խաթուն Չին երբ տեսաւ,
Ուշաթափ եղաւ, գետին գլորեցաւ:
Երեք եղբայրներ երբ զայս տեսան.
—Այս ինչ օյին, ասացին, եկաւ քո վերան:
Մամէն զգաստացաւ երդեց սիրուն,
—Ահա կարաւան մի յոյժ զարդարուն,
Կարաւանապետ մի գեղեցկուհի.
Ընդհանուր աչխարհի սիրուհի:
Քաջ մարդ սէտք է առաջը գնայ.
Հարկ ու դրաւ առանայ, գայ:
Չինէն նշանուած էր Ճադանին,
Ուշադրութեամբ կը լսէր Մամէին,
Նորա երգէն չատ ու չատ զայրացաւ.
Որ նշանածին համալ խօսք բացաւ:
Ղարաթաժտին երբ զայս զգաց.
Եղբօր զայրոյթ երգով մի մեղմացոյց:
—Մամէս, ինչ է կտաս բերնէդ դուրս,
Դու իմ բարի ու յարգելի հիւրս.
Այն որ կը տեսնես չէ կարաւան,
Ոչ ոք չէ կարող պահանջել գրաւական:
Ոչ ոք չէ կարող նորա առաջ կտրել,
Գրաւական ու հարկ առանալ.
Այն կարաւանապետն է խաթուն Չինը,
Ի Միլ Սահմնի չքնաղ աղջիկը.
Միլ Թաժտինի համեստափայլ քոյրը,
Ճադան եղբօրս սիրուն նշանածը:
—Երեք եղբայրներ, ամեն մարդ կերթայ,
Գրդու կարաւանէն հարկ կառնէ, կգայ.
Իսկ բուն կարևոր գայմանն այն է,
Մարդ մերթ ու իշխանէ գրաւ առնէ:
Լսող եղբայրներ, գրաւ կը դնեմ,
Երթամ, գրաւական առնեմ, բերեմ:
Երեք եղբայրներ կը սկսկեն—չէ կարելի,
Այդ անհնարին է և անգործադրելի: [1]

1 Չինէն Թաժտինի եղբօր նշանուած էր. Եթէ մի ուրիշը Չինէի վերայ խօսեր, միևչեւ անգամ մարդասպանութիւն կը ծագէր այս ինչ պատճառաւ

Մամէն պայման կը դնէ, վեր կը թռնէ.
Բորի անխնամ վիճակը միտքը կընկնէ.
Կը մտածէ.—Երկու տարին վերջացաւ.
Չեմ գիտեր Բորիս վիճակն ինչ եղաւ։
Այժմ Մամէն զգաց ձիու պէտքը.
Նոր միտքը ձգեց նորա կեանքը։
Ցուզուեցաւ, երդեց ինքը-Մամէ.
—Մամէիս վիճակն միշտ այսպէս է,
Ես իմ Բորս պէտք է դուբս հանեմ,
Ոսկեզօծեալ թամքը վերան զարնեմ.
Մինչև աղբիւրի գլուխը հասնեմ.
Խաթուն Զինէյէն հարկ ու գրաւ առնեմ։
Մամէն զարձաւ ու գնաց ձիանոց.
Զին, տեսաւ. խառնուած է աղբանոց,
Կեղտ ու ժպրի մէջ անհետ կորած.
Կերակուր բերանը բնաւ չէ մտած.
—Մամէ. ասաց ձին. դու ես ինչ մարդ,
Անխոհեմ երախայ՝ ու ապերախտ
Երբ որ պէտք եղայ, մօտս կը վազես,
«Հեծնեմ ու դործիս գնամ», կասես։
Մամէն հառաչելով աչքերը կը սրբէր.
—Բարի Բորս ինձնէ գանգատ մանէր, կասէր.
Սիրահարութեան կրակն եմ ընկեր.
Մի ճար՝ ճարակ չեմ կարող գանէր։
Զգուշութիւն ինչ է ես մոռացայ.
Բորիս պէտքերը հոգալ չկրցայ։
Մամէն Բորը բիմարեց ու սրբեց.
Աչքերն ու ամրակները համբուրեց,
—Իմաստուն Բորս, ասաց, ես արի, դու մի՛ աներ,
Չիս մի ձգեր, լոցներու մէջ ու վաւեր.
Երգեց ձին.—Արի՛, իմ կարիճ Մամէս.
Ուր որ կը ցանկաս, տանեմ քեզ։
Մամէն ոտք ձգեց սապանդակը.
Ցաթքեց, ելաւ Բորին կռնակը,
Արշաւեց, աղբիւրի վերան գնաց,
Զին կանգնեցուց, երգեց ու ասաց.
—Ես Մամէն եմ, Ալփաչայի տղան.

Թաժին զգուշացուց զՄամէն որ եղբայրն չգգուշի. սակայն Մամէն իրենց ճիւրն էր, ետեւի էր ընտաց. ճիւրը մարդու կինն ալ նայ ինդրէ, (թէեւ չպատանիր) չպիտի մերժէն բան ճնաւանդ սովորութեան։

Արշաւեցի, եկայ ալբիւրի վրան.
Ասուած սիրող՝ ինձ մի ջուր տուէք.
Լսող դեղեցկուհիք, խօսքերուս ականջ դրէք։
Խաթուն Զին Մամէն որ տեսաւ,
Աղախիններու ձեռնէ բաժակը առաւ.
Շտապաւ կզնացաւ, ջուր մի լեցուց,
Բարձրացաւ, Մամէի երկարացուց։
—Խաթուն Զին, ով խաթուն Զին,
Ասաց Մամէն յոյժ սրտագին,
Կարող ես դլըմսազնուին[1] ինձ յանձնել.
Զիս աշխարհի մէջ բաղդաւորեցնել։
Զին երբ զայս լսեց, ձեռ ձգեց,
Վզի չարանի մէջ տեղւ ոսկին կոխեց.
Ջրի բաժակի մէջ ղրընկ դցեց.
Առաւ, ձեռ պարզեց, Մամէին տուեց։
Մամէն էր, փափաքով ջուրը խմեց,
Ետ դարձաւ, Բօրը ասպանդակեց,
Գնաց, հասաւ իւր եղբայրներու մօտ,
Ոսկին ձգեց Ղարաթաժտինի ոտ։
Մամէն ձին առաւ, դնաց ձիանոց,
Բարձրացաւ տանեաց վերայ—հոլանոց։
Ղարաթաժտին երբ զայս տեսաւ,
Մամէի վիճակին հասաւ եղաւ։
Իւր եղբարց դարձաւ, ուշիւ՝ նայեց,
Մամէի վիճակին վերայ այսպէս երգեց։
—Ինձ լսող եղբայրներ, մենք ենք չորս,
Մեր բոզ ձիանքն ևս են չորս,
Ժամանակ մի ձգիր ու Բօղան չըջինք,
Մամէն իւր սրտի փափաքին հասցնենք։
Բերենք զայն որ այքը խայտ, սիրուն է,
Ունքը թուխ աղեղնաձև ու կամար է,
Վիզն ու հասակը երկար և բարակ է,
Նորա տեսքը յարմար ու չնորհաւոր է։
Ճադան տեղէն վեր թռաւ բարկացած,
Թաժտինի մի երգ ասաց, զայրացած։
—Այդ խօսքդ ինձ մեծ ցաւ տուեց,

---

1 «Դլըմսազեռին» կը նշանակէ թիւդաւած ոսկի, որ է վզի շարանի միջի մեծ ոսկին. երբ Զինէն զայն ստր, այլ եւս թիւդաւած վերջացած էր Զինի եւ Մամէի գործը այլ եւս յայտերնին պիտի կըտրէին Թաժտին եւ նորա եղբայրներ Զինէին։

Սիրտս կտոր—կտոր արաւ ու փուքթեց,
Իմ նչանածը որմէն դուս կը կամենաս,
Ինչու եղբայրական սէրը կը մոռանաս.
—Մամէն մեր հիւրն է փառաւոր,
Նա մեր եղբայրն է արժանաւոր:
Աֆան երգեց.—Թաժոին, մեծ եղբայր,
Մինչև ցարդ եղած ես մեզ որպէս հայր.
Այնպէս կարգադրէ, ինչպէս կուզես,
Մամէն իւր սրտի փափաքին հասցնես:
Ճագան երգեց.—Համայն եղբայրները,
Երեք են մեր կարմիր ձիաննեը.
Մի առ ժամանակ չրջենք, որոննենք,
Մամէ եղբօր սրտի ուզածը բերենք,
Այն որ ինքը կը սիրէ և կուզէ,
Այն որ աչխարհիս գեղեցկուհին է: 1
Աֆան երգեց.—Համայն եղբայրները,
Ձորս են մեր սև ձիաննեը,
Միջոց մի չարաչար տանջուենք,
Մինչև Զինը Մամէ եղբօր բերենք.
Այն որ աչքն ու ունքըն է սիրուն,
Անուն հռչակուած ի մէջ թագաւորներուն:
Երեք եղբայրներ միասին երդուեցան,
Իրարու հետ հաստատուն խոստացան,
—Ինչ արգելքներ ևս պատահելու լինի,
Մամէ եղբօր փափաքը կատարենք պիտի:

* *

Միր, Ղարաթաժոինի լուր կը ղրկէ.
Որ Մամէն վերցնէ, իւր հետը բերէ:
Մամէն ու Թաժոին եկան, գնացին առանն,
Միր ղԹաժոին հրաւիրեց գաղտնի խորհրդեանն.
—Իմ սիրելի Թաժոին, ասաց, ուղիղն ասա,
Մամէն Թագաւորի, թէ փաչայի է տղայ:
—Միրս, այն է, ինչ որ դուս ասացիր,
Թագաւորի տղայ է, լաւ դիտցիր:
—Ղարաթաժոին սիրելիդ եմ,
Մամիդ դէմս վերայ կընդունիմ,
Աչխարհներէն որ քեզ դիմած՝ եկած է,

1 Ակամայ կը նամանայնի ձագան, ոտվ սիրտ չտանէր Զինէի տեսնը տալ, այլ ճարտ յատկութիւնները կր յիշէ:

Քեզ հիւրասիրելու պարտաւորեցուցած է։[1]
Միր Մամէին կանչէց, հանից իւր առևան,
Խաթուն Զին մի օր առաջ լսած էր մի բան,
Թէ իւր հայրը Մամէին լուսնթիւն պիտի անէր,
Զայն մի կարևոր պաշտօնի-գործի հրաւիրէր։
Զին Ավանի Բաբոյի աղջկան կը կանչէ,
—Զինէ, տեսնամ դքեզ, ով ժիր Զինէ,[2]
Հայրս, Մամէն իւր դիւանը տարած է,
Մի հասկացիր. տես, ինչ պիտի անէ։
—Հասկացայ, Խաթուն Զինս, ասաց Զին,
Ստամբօլ քաղաքը պիտի տայ Մամէին,
Որ այն երկրին իշխէ, այն տեղ մնա,
Կեանք վարէ, ուտէ. խմէ, ուրախանայ։
—Զին, ով Զին, հասիր Մամէին, թող չդնայ,
Մի ճար ու հնար գանէ, այս տեղ մնայ.
Հօրս պալատին մէջ մի պաշտօն առանայ։
Մամէն էր, ներկայացաւ Միրի առևտին,
—Ձեմ կարող Ստամբօլ գնալ, ասաց Միրին։
—Որդիս. ասաց, փոփաքս է քեզ մեծացնել.
Ուրեմն դու ինչ կուզես այս տեղ գործել։
—Միրս, քեզ սրտով սիրած եմ ու հոգւով,
Ձեր առևտրի մէջ ծառայել կուզեմ գործով։
Միր զՄամէն իւր ապարանք յղից,
Իւր խոհանոցին վերատեսուչ կարգից։
Այնտեղ ծառայող մէկը նախկին՝
— Ցնաւեր Մամէ, ասաց Մամէին.
Ինչո՞ւ իմ հացի առաջ բռնեցիր,
Չիս իմ երևխաներով ապանեցիր։
—Մեծ են դիպուածներ, ասաց, իմ վիճակիս,
Քեզ ես Աստուած ողորմած է, հոգիս.
Իմ թոչակս կը նուիրեմ քեզ,
Ասաց Մամէն սրտագին ու հեզ։
Պէտք է լաւ ճանաչես քո գործը.
Ոչ մէկի չը յայտնես այս խօսքը։
—Հոգիս դուրս գայ այս կաղապարէս,
Այն գաղտնիքը որ դու կասես, ես

1 Միր կը կարծէր թէ Մամէն Թաժրիճի հուչակը լսած ու եկած է դուռս փառքը ու պատիւը տեսնելու միայն։

2 Ավանի Բաբոյի աղջիկն ես Զին է, ւր Զինէի մօտ պաղախին է. Մամէն զայն տեսած էր դեռ բաղամ չմտած աղբիւրի վերան։

Դուրս չպիտի հանեմ կոկորդէս
Մամէն վերուց, տարաւ Խաթուն Զինը,
Միասին մտան գաղտնի խորհրդարանը.
Որտեղ երկար-բարակ խօսեցան,
Իրարու քաղցր արևով երդուեցան։
Տարիմ-երկուք այդպէս էր Մամէն,
Ուշադիր առաքլան էր միայն Զինէն.
Ինքզինք մոռացած՝ անօթի կանչէնէր,
Միրի սեղանի ժամանակը մոքէն կը հանէր,
Միրին որ նախաճաշ պիտի տանէր,
Ընթրեաց ժամուն միտքը կընկնէր։
Բաքոյի Ավանը քսու մի անձ էր,
Միրի մօտ մեծ-մեծ պաշտօն կը վարէր.
Առիթ կտրանէ, որ Մամէն հեռացնէ,
Իւր պաշտած սիրելի Զինէնէն զրկէ [1]։
Գնաց Միրի մօտ, յուզուած ասաց.
—Մամէն է մի անհոգ մարդ արաբած,
Նորա գործերն որ յայտնի կերևան,
Ցայց կըտան՝ նա մի տնէ է աննշան։
Ապարանքի մէջ խելացնոր կը թափառի,
Մարդ չգիտէր, մեկի՝ մլուին ինչ կը խօսի։
—Բաքօ, ասաց Միր, ինչ քսութիւն է կանես.
Չէ Մամէն իմ մարդն է, այդ չգիտես.
Ես նորա արածներուն կը խնայեմ,
Նորա սխալմունքին միշտ կը ներեմ։
Բաքօն քսութիւնը չարունակեց, մնաց.
Զինէն այդ ամենը նշմարեց, ասաց.
—Մամէ, մենք խայտառակ կըլլանք,
Եթէ այսպէս չարունակինք, դնանք։
Մամէն Միրի առեանը չխմեց,
Արձակման հրաման խնդրեց։
—Ինչ որ կը ցանկաս, արա այնպէս.
Բայց ուշադիր եղիր, չմոռանաս,
Օրը երեք անգամ առեանս ներկայանաս։

*
* *

Միր մի օր կանչեց Ղարաթաժտինի,

1) Կախարդութեամբ կուզէր իւր Զին աղջիկը Մամէին տալ, երբ չյաջողեցաւ, սկսաւ բռնամտութեան։

Ասաց.—Ցարմար օր է ձիաթոդսի, ջրինդի.
Շտապէ՛, պատրաստուէ՛ք ու՛ս,
Ձիով, ձիաւորով, գնանք հանդէս։
Ղարաթաժտին տուն վերադարձաւ,
Մամէին ինչ որ հարկն էր, խօսեցաւ.
Խաղացող ձիաւորներուն ազդարարեց,
Ջրինդ խաղալու հանդէսը պատրաստեց։
Մամէն ևս հրաւիրուած էր խաղալու,
Հրապարակ գալ, հուսկաբը ցոյց տալու.
Բայց նա վաղուց իւր Բորէն լուր չունէր,
Անօթի, ծարաւ, անխնամ մնացեր էր։
Շատ մտածեց ու ձիանց մտաւ,
Բորը բոլորովին անխնամ գտաւ.
Բոր աչքերը դարձուց, Մամէն տեսաւ,
Խարկանալով դառն-դառն խօսեցաւ.
—Հեռացիր աչքէս, Մամէդ անխոհեմ,
Աքացու առջև ջրեզ կը փարատեմ։
Մամէն լալով, հառաչելով դուրս ելաւ,
Ձեռքը ծոցին՝ պատի մի տակ նստաւ.
Նա իւր վտառք ու պատիւը մտաբերեց,
Խեղճ—խեղճ Բորի երևսը դիտեց։
—Իմ Բորը չատ պատուական է, երգեց.
Անչափելի ու չատ է Բորիս գութը,
Պիտի ներէ յանցանքներուս ևօթը-ութը։
Բորն ի գութ չարժեցաւ, ասաց.—Թող ներս գայ,
Կահաւորուած թամքը զարնէ մէջքիս վերայ։
Մամէն պատասխնդած չուտ մի հնծաւ։
Ջչեց, հրապարակի ղուխ կանգնեցաւ։
Միրը չորս հարիւր ձիաւորով եկաւ,
Հրապարակի միւս եղրն կանգնեցաւ։
Այնտեղ երկար-բարակ մտածեց Մամէն,
—Շատուորի կողմ գնամ՝ երկչոտ է կասեն.
Ձին քչեց, երեք եղբայրներու կողմն անցաւ.
Հրապարակի վերան պատրաստ կանգնեցաւ։
Միր մի նշանաւոր կտրիճի այնպէս հրամայեց,
—Գնա, Մամէին մի ջրինդ զարկ, պատուիրեց,
Տեսնենք, նա ինչպէս կարող է համբերել,
Հակառակորդի հարուածը տանել։
Քաջ ձիաւորը ջրինդը ձեռքի մէջ առաւ,
Ձին խաղցուց, քանի անգամ գնաց, զարձաւ.

Նա ուշով ջրինդի ուղղութիւնը կը դիտէր,
Որ Մամէին մի հարուածով ցած գլորէր։
Բորը ասաց.—Մամէ, այ տնաւեր Մամէ,
Սանձաբձակ լեցուած՝ անձիդ վնասը կորոնէ.
Նա վարժ, հմուտ ձիաւոր և կորիճ է,
Իւր մրցակիցը չատ լաւ կը ճանչէ։
Ասպանդակները դատարկէ, այ Մամէ,
Զքեզ Բորի մի կողի կողմի վրայ ձգէ.
Ինչ տուր իմ ընդարձակ փորի տակ,
Որ հարուածներդը անցնին դատարկ։
Եթէ հարուածներէն մին ինձ առնէ,
Այն հարուածը թող իմ անձիս վնասէ։
Ձիաւորը մի անգամ ևս լեցուց իւր ձին,
Ուղղահայեաց [1]) ջրինդ մի ձգեց Մամէին։
—Մամէ, ասաց Բոր, ասպանդակէ երկու կողմէն,
Որ ասպանդակներ փորիս մէջ իրար դիպչեն.
Դու ևս բարձրէն ուղիղ ջրինդ մի ձգէ,
Որ հարուածը նորա աջ բազկին բռնէ։
Մամէն ձին լեցուց, ուժգին ջրինդ մի ձգեց,
Հարուածը հակառակորդի ձեռքը կոտրեց,
Իսկոյն ձիաւ վրդի վրայէն գլխիվայր ձգեց։
Մէը ասաց.—Գնանք, այլ ևս է բաւ,
Տարածուեցաւ Մամէի համբաւ։
Այն օր ուրախ գուարթ յիտ դարձան,
Մամէի հետ պատկառանօք խօսեցան։
Անցան օրեր. Մէը դարձեալ լուր յղեց.
Թաժախին—հօրեղբօրորդին բերել տուեց.
Նստաւ, հետը քաղցր-քաղցր կը խօսէր,
—Այլ ևս երբ որսի պիտի գնանք, կը հարցնէր։
Մամէն որ լաւ է ջրինդ խաղալու,
Տեսնենք, ինչպէս է որս անելու։
Մի օր Ձին կը լսէ. Մէը որսի գնալու է.
Աղախնոյն կը կանչէ.—Ձինէ, այ Ձինէ.
Շտապէ, գնա, հասիր, Մամէին խօսէ,
Որսի չերթայ.—ես հիւանդ եմ, թող ասէ։
Առաւօտեան հեծան, գնացին որսալու.
Մամէն,—հիւանդ եմ, ասաց, մնաց խօսելու։

1) «Ուղղահայեաց» դրած եմ բոլորէն այն բառի ձեղ, որ կը նշանակէ ջրինդն ոչ գլխէն բարձր անցնէր եւ ոչ ցածէն անցնէր, այլ ուղղակի նպատակին։

Հարցուց Միքը.—Ո՞ւր է Մամկն, թաժտին։
Ասաց.—Հիւանդ է, Միքս, իմ հիւր անգին։
Միքը իր մարդերով եկան որսի գնացին։
—Չին, ով Չին, կանչեց Խաթուն Չին,
Շուտ գնա, հասիր, ասա Մամկին.
Գնանք, պրօսենիք պարապատատ այգին։
Չինէն մինակ ճանապարհ ընկաւ. այգին հասաւ,
Մամկն ևս զգոյշ-զգոյշ նորա հետևեցաւ.
Հասան իրար, մոտն այգին, չըկեցան,
Իրարու երես նայելով ուրախացան։

* *

Ճոքա այգանեղ չըկին, ուրախանան,
Մինք դառնանք որսորդներու վերան։
Մտան անտառը ու որոտալ սկսան,
Զոր ու ձորակ մտան ու զբաղուեցան։
Անցաւ քանի ժամ ու ժամանակ,
Սաստիկ կարկուտ եկաւ մի մեծ երակ։
—Թրջուանք, ասաց Միքը, գնա պառնանք,
Գնանք ուղղակի տուն, հանգստանանք։
Միքը իւր տուն դառնալ կչտապէր,
Քաւ Բաքօն մի այլ բան կը խորհէր.
—Միքս, ասաց նա, ճանապարհէն դուրս եկինք,
Միասին գնանք, պարապատատ այգին մտնենք։
Այնտեղ երկու որսորդ գնացին,
Տեսանենք մի ինչ բան որսացին։
Ամբողջ որսկանք ճանապարհէն չեղուեցան,
Ուղղակի գնացին Սուրկըրի այգին մտան։
Այնտեղ ուրախ կզբօսնէին Մամ ու Չին,
Չգիտէին գլխներէն ինչեր սլիտի անցնէին։
Միքը ձայն ձգեց.—Չավուշ, հա չավուշ, գոռաց.
Պարտիզպանը թուաւ վեր, Միքի մօտ գնաց։
—Չավուշ, ասաց Միքը, չորերս թաց են։
—Միքս, հրամանդ ինչ է, ասա, կատարեմ։
—Գնա, այգւոյն սենեկին մէջ կրակ վառէ։
Չավուշ չատպեց, գնաց, այգու օդաճ մտաւ,
Չին ու Մամ իրար վերած՝ քնած տեսաւ,
Ուզեց զարթեցնել, խղճահարեցաւ, մնաց.
Որչափ մտածեց, մի ճար չըգտաւ, եղաւ լաց։
—Ես, մտածեց. Աստուծմէ երկիւղ կը կրեմ,

Այս աստիճան սիրահարներն ինչպէս բաժանեմ.
Արդ գնաց-եկաւ, ձայն առալ չէը ուղեր,
Սակայն ուշացնելու ևս երկիւղ կը կրէր.
Փայտերու կտրոցները կոխեց ի բուրակ,
Ձարճատիւն ընկաւ երկար ու բարակ։
Մամ ու Զինի, յանկարծ աչքերնին բացին,
Ցեսան բոցի ճրագոց ընկած է բուխերին։
Նայեցան տեսան չավուշ իրենց մօտ կանգնած,
Աչքերը իրենց աչքերուն մէջ յառած։
—Չավուշ, ասաց Մամէն, դու որ կաս,
Աստուած ու նորա մարդուն կը հաւատաս.
Այս ինչ պատահար է ու դիպուած,
Որ զքեզ այդպէս չուարեցուցած։
—Մամէ, անուեր Մամէ, չուա արի, չատպէ,
Ահա Միրը դռնէն ներս մտնելու վրայ է։
—Զինէ, ով Զինէ, չուարած կտպէ Մամէ.
Մեր վիճակը աստիկ վտանգաւոր է.
Դու այլ ևս մի ճար, հնար չունիս,
Պէտք է վերարկուիս ներքև պահուիս։
Մամ արտասրուի բուրակի մօտ նստաւ,
Զինէն իւր վերարկուին ներքև առաւ.
Բարակ ձայնով դիղեցիկ երգեց,
Լսողներու սիրտն ու դուխ չարժեց։
—«Քաջօն երբ մտնէ սենեակը Միրին,
Մամէս-կը լինի ներա գնդին.
Աչքերէս արտասուք է որ կը վազէ,
Ո՛վ կասէ Մամ դառն կարտասուէ»։
Միր ուրախ դուարթ դռնէն ներս մտաւ,
Բարձր ու խրոխտ ձայնով բարև տուաւ.
Մամ դունատ, ծանր-ծանր կոնդնեցաւ,
Խոնարհեցաւ Միրի առաջը, բարև առաւ։
Քաջօն կտակած ունէը վերան արդէն,
Գիտէը չուար վիճակի մէջ էր Մամէն։
Առիթ գտաւ, քսութիւնը չտրտնակեց,
Մամէի սիրտն ու հոգին ի կլոկ վառեց։
—Միրա, ասաց. երբ դրսէն ներս մտար,
Մամօյի անկարդ վարքը հասկցար.
Բարձր բարևեցիր, նա որպէս չլսեց,
Ծանր-ծանր առաջդ եկաւ, կոնգնեց։
Քաջօն որ պայդ ասաց, Միր վիրաւորեցաւ,

Խաժոռ դէմքով Մամէի երեսին նայեցաւ.
Ժողովականք լուռ ու մունջ կանգնած էին,
Մխրի ու Մամէի երեսները կը նայէին։
Մամ տխուր ձայնով երգեց.
—«Մխրա, ես շատ հիւանդ եմ,
Ամբողջ մարմնիս մէջ ցաւ ունիմ.
Գլուխս կը շարժի մշտական,
Զդադարիր մի բարձի վերան.
Հազիւ եկած եմ այս այգեստան,
Խնդրեմ, ցաւիս սրա՛ մի դարմանը»։
Բաքօն գիտէր որ Մամ սիրահար էր,
Խաթուն Զինի կըրակով կը վառուէր.
Մի յուզիչ երգ ձեռք կառնէ, կերգէ.
Որ Մամէի սիրտ յուզէ ու դրդռէ,
Բերնէն մի անկարդ զրոյց դուրս հանէ [1]։
—«Մխրա, այն՝ որ Մամէն կը սիրէ,
Շրթունքը պիսակաւոր, երեսը արաբ,
Բնաւ հարկ չկայ անունը տալու պարապ.
Ցարմար չէ նաև վերան իսկ խօսելու,
Պատուաւորներու առիանը յուզելու։
Մամէն գրգռեցաւ, երգեց.
—«Բաքօն պատուաւորներու մէջ սուտ ասաց,
Աղաւնիներու մէջ ես գեղեցիկ եմ սիրած.
Եթէ անունը հարցնես, է Զին,
Հօր անունն է Մխր Սևոին,
Նըքօր անուն Մխր Թաժոին»։
Մամէի այս վտանգաւոր երգի վրան,
Ղարաթաժոին և Ճագան ու Աֆան
Աչքերնին նորա յառած՝ կակնարկեն,
Ցած ու մեղմ ձայնով կզգուշացնեն։
—Այ Մամէ, դու այդ ինչ է, կասես.
Զգոյշ կաց, գլխուդ փորձանք կը բերես։
Մամէի ուշն էր լարուած, չլսեց.
Նոյն խօսքերը կրկին Մամէ երգեց։
Զայրացաւ Մխր, գոռգոռաց մի արձակեց.
—Համայն ծառաներս և ազատաւորներս,

1) Բաքօն զգացած էր որ Մամէն Զինէի հետ Սուրիո այգին գնացած են, կարծէր թէ միասին պիծի գնէ ու խայտառակէ զՄամէն, երբ Զինէն չտեսաւ, զայն գրգռելու համար երգ ասաց։

Հարամ լինի ձեզ անհաշիւ երախտիքը հօրս.
Ձեր դաշոյնները մերկացուցէք դուրս,
Հազար հարուածէ համրէք այս ժամուս։
Մինչ հեռուորդք դաշոյնները մերկացուցին,
Որ հարուածի առաջ յօշոտեն Մամէին։
Ղարաթաժտին, Ճադան ու Ֆեան,
Ցանկարծ սաստիկ դրդռուեցան,
Իրար մօտ հաւաքուելով սպառնացան.
—Եթէ մին չարժի, ասացին, կտանք սրի բերան։
Համայն պատուականք, ասացին, զգոյշ կացէք,
Անվրդով որպէս բարեկամ ձեր տեղը կանգնեցէք.
Եթէ փոքր ինչ չարժիք, դուք ողջ չէք,
Եթէ անխոհեմ չարժիք, կեանք չունէք։
Եթէ արև ու կեանք տեսնել կուզէք,
Բարեկամութեան կապը պինդ բռնեցէք։
Մինչև դուք Մամէն ընկճելու լինէք,
Մենք ձեր հազարը մի անգամէն կսպաննենք,
Ո՛վ կը համարձակի, թող գայ առաջ, տեսնենք։
Թաժտին տեսաւ աղմուկը կը սաստկանար,
Մամէին մեծ վտանգ մի կսպառնար.
Շուտով ձեռաց տակէն իւր տուն լուր յղեց,
Խաթուն Գիւլփէրուն եղածը յայտնեց [1]։
—Մամէն ու Զին վտանգի մէջ են, ինչ կանես,
Շտապէ, մեր յարգելի հիւրի կեանքը փրկես.
Շո՛ւտ՝ օրօրոցն ու Բոր և մահաճ դուրս հանէ,
Շահնաչին—ապարանքը հրոյ ճարակ արա ու վառէ։
Մի վայրկեանէն ճարճատիւն ընկաւ Շահնաչին,
Բոցերը այդ մեծ ապարանքը չրջապատեցին.
Անմիջապէս հաւար հասաւ ամեն կողմեր,
—Ինչ կը կանգնիք, Շահնաչինն է կրակ ընկեր։
Մին Սևաին յանկարծակի երբ հրդեհը լսեց.
Ամեն բան մոռացաւ, դէպի Շահնաչին վազեց.
Մամէն այլ ևս ազատ էր, Զինը տուն յղեց,
Ինքն ալ դէպի հրդեհի կողմը չտապեց։
Տեսաւ Շահնաչին պարսպով պատած.

---

1) Ոմանք կասեն Ղարաթաժտին ապրի տակեն տեսաւ Զինի ծամերը, ճանչցաւ որ վտանգը մեծ է. ոմանք ևս կասեն թէ ծամերը Մամէն իմը ցոյց տուած է Ղարաթաժտինի, որով Թաժտին սխալուած է Միրի եւ ամբոխուելը պղտ կարծելու համար իւր նուիրակաց տուն հրդեհել։ Այս ամենը Թաժտին յանձն առած է մի միայն հիւրասիրութեան պատիւը հատուցուն պահելու համար։

Կատաղի բոցեր գայն են շրջապատած,
Տեսաւ այդ մեծ ապարանք հնաւանդ,
Նախնիք թողած էին անգին աւանդ.
Նորա աչքերէն արտասուք վազեց.
Հառաչելով տխուր-տխուր երգեց:
—Ա՛լա Չինէ, գիտեմ, քո անունը Չին է.
Չգիտեմ ինչու աչքերես արցունք կը հոսէ,
Արտասուք կը վազէ դառն ու լեղի.
Մեր մեղքէն օր չտեսնէ Բաքոյի Ավանի:
Կրակ ընկեր է, սաստիկ կը վառի Շահնաչին,
Մեր մեծ եղբօր Ղարաթաժախնի խօսկին,
Նորա չմնաց և ոչ խակ մի ձեռք-անկողին.
Վառուած ու խառնուած է մոխրին:

***

Մէր և Թաժախն Մամէի վրայ թշնամացան,
Երեք և չորս ամիս իրար հետ դժուած կեցան,
Վճռեցին իրարու տուն երբէք չմտնել.
Նաև իրարու երես չտեսնել, բարև չտալ:
Մի օր թշնամի մեծ բանակ մի եկաւ.
Ծանկարթ Մէրի երկիրն պաշարեց, կայնաւ:
Մէր թև ու թիկունք չունէր որ ելնէր,
Այդ ահեղ բանակի դէմ կռուիլ կարող լինէր:
—Առուած տուեղ քանդէ, ասաց, Բաքոյի Ավան,
Դու պատճառ եղար, ազգականներս հեռացան.
Արդ, զօրք կգայ, կը գրաւէ,
Գիտես, մեր վիճակը ո՛ւր կը հասցնէ,
Դիշեր-ցերեկ կտրուեցաւ Մէրի քունքը,
Ելաւ ինք զինքը, ձգեց Թաժախնի տունը:
—Մէրս, դալդ բարի, յանկարծ այս ինչպէս,
Ծառայիդ տունը բարի ոտքդ կոխեիր:
Թաժախն, սիրելի արենակիցս, քալ ու արի,
Ես քեզ չեր արի, իսկ դու ինձ արա բարի:
—Մէրս, հրաման արա, ինչ որ դու կասես,
Ամեն պատուէրներուդ պատրաստ եմ ես:
Թաժախն, յայտնելիս, եթէ վես կը սիրես,
Բանակին հրամանատար պիտի կարգեմ քեզ.
Որ արիւնարբու Թշնամին երկիրս հանես,
Մեր ազգականները զգուելիներէն ազատես:
—Մէրս, կուտան ամ այդ պաշտօնը դու որ կասես.

Մամէի-Ալան հէրս աւանդ կտամ քեզ,
Մինչև իմ վերադառնալը լաւ կը պահես.
Այնպէս ինձ յանձնես, որպէս յանձնեցի ես
Հաւաքուեցան հինդ հազար աբի քաջ զինուոր,
Թաժախն որոց առաջ անցաւ փառաւոր,
Ղարաթաժախն, Ճադոն Աֆոն ևս գնացին.
Միրը, Մամէն ու Բաքօյի Ալան մնացին։
Գնաս Բաքօն դարձեալ Միրի մօտ գնաց.
—Բան մի կայ, միրս, ես չընդունիմ, ասաց։
—Հա, ինչ կայ, ասաց, Բաքօյի Ալան,
Դու հարդոց մէջ ամենաանպիտան։
Կուզէի Մամի արարքը չը մոռանաս.
Այժմ ևս արածը ինչ է, հասկանաս։
Այ Ալան, Մամէի արածը գիտեմ ես,
Սակայն նա աւանդ է, յանձնուած մեզ։
—Այո, միրս, Մամէն աւանդ է կարևոր,
Պատժելու ճանապարհն է հնարաւոր.
Իրարու հետ սաթրիճ խաղացէք,
Որն որ տարուեցաւ, պատժեցէք։
—Արի, սաթրիճ խաղանք, Մամէս.
Որ տարուեցայ տամ քեզ Զինէս,
Իսկ երբ տարի, գիտես, ինչ կանեմ.
Մուխ բանտին մէջ կը բանտարկեմ։
Պայման դրին. ելան, պալատ գնացին.
Զինի Բոշկի առաջ սաթրիճ խաղացին,
Պայմանը երիք ձեռք էին խօսած,
Մամէն երկու ձեռք էր միրին տարած։
Խաթխաթ Բաքօն Զինի մօտ վազեց—գնաց.
—Խաթուն Զին, իմ մանչեն տուր, ասաց.
Միր ու Մամէն սաթրիճ կը խաղան,
Պայման են դրած իսկ քո վերան.
Երկու ձեռք Մամէն Միրին տարած է,
Մէկ ձեռք կը մնայ որ քեզ առնէ։
—Բաքո, քո բադդն եմ ապաւինած,
Արդեօք սուտ չէ այդ քո խօսուածն։
—Սուտ չէ. Աստուծոյ մարդը վկայ վրան,
Տես, որ տեղ և ինչպէս կը խաղան։
Զինէն առջի, յետի զգեստը հագաւ,
Ոսկեղէն զկօվ զարդարուեցաւ,
Եկաւ, լուսամուտի փայտին յենաւ,

—Դէպի ցած՝ խաղացողներուն նայեցաւ։
Ավանի Բաքօն Միրի առաջը կանգնեց,
Նորա ականջին, անուշ երգ մի սկսեց։
Կերևի, Միր, դուք դեռ անփորձ էք.
Ինչու այդպէս պղտած՝ նստած էք.
Չէ քաջերու հոգն իրար եռանդ կը բերեն.
Եթէ իրենց նստած տեղերը փոփոխեն։
Մամէն գնաց, Միրի տեղ նստաւ.
Միր ևս Մամէի տեղ փոխուեցաւ։
Մամէի երես դարձաւ դէպի արևմուտը,
Ուղղակի Զինէի եղած լուսամուտը,
Միր Սաթրիճի վերայ դարձուցած էր ուշքը,
Մամէն ուշադիր Զինէին էր յառած իւր աչքը։
Շուարեցաւ, խաղալ չկարողացաւ. մնաց.
Միր նորանից երեք ձեռք տարաւ, ասաց.
—Մամէ, ես քեզ տարայ, այնպէս տարայ.
Մի ձեռք ևս աւել տարայ քո վերայ.
Քո խօսքով քո տուն աւեր դարձուցի.
Բեզ աշխարհի մէջ խայտառակեցի։
—Համայն ծառաներ, ասաց Միր, երկուք-երեք արէք,
Մամէի ձեռներ ու ոտներ, բռնեցէք, կապեցէք։
Հինգ ծառաներ չտապաւ ներկայացան,
Մամէն բռնեցին, ձգեցին մութ գետաձ։
Մամէն երբ դէպի գետաձ տարան.
Մի անգամ ևս նայեցաւ Զինի վերան.
Ասաց.—Դու ինչ կասես, խաթուն Զին,
Թշուառ Մամէն կորուս իւր հոգին։
—Ինչ պիտի անեմ, ասաց, ասկէ դուրս,
Հողերը պիտի թափեմ իմ սև գլխուս։
Զինէն յանկարծ խելքի եկաւ, մտածեց
Երբ Մամէի մեծ ցաւ տեսաւ. կրկնեց
Քաջալերեց, երկու խօսք խօսեցաւ.
Տակն ու վերայ եղաւ, խիստ յուզուեցաւ.
—Մամէս, իսկի հոգ դու մի քաշեր,
Կը հասկամ վրադ ցորեկ և գիշեր։
Մամէն մտուցին բանտը նեղ և մութ.
Բանտապահներն կը չարչարէին անդութ։
Զինէն երեք ականահատ բերել տուեց.
—Գաղտնապահութեան մէջ ինչպէս էք,
Ասացին-այնպէս՝ ինչպէս որ կուզէք.

—Ահա, ասաց. ձեզի տաս ոսկի, առէք.
Ջնջատճի տակէն իմ սեղեակս ական բացէք։
Ականահատները ներքնուղի մի բացին.
Թաթուն Զինի սեղեակէն դուրս հանեցին։
Երկու սիրելիներ իրար տեսան.
Իրարու հետ զարձեալ ուրախացան.
Այսպէս իրարու հետ կեանք վարեցին,
Դառն ժամերն ուրախ անցուցին։
Քսու Բաքօն մի օր կը հարցնէ,
—Զին, սիրելի դուստր իմ Զին.
Դիտես, ինչ կանէ Թաթուն Զին.
Մի անգամ իմացիր, դուստր իմ Զին։
—Անկողին փռած՝ միչտ վրան է նստած.
Նա բան գործ արած է չարունակ լաց,
Երեկոյին երբ ճրագ վառել պիտի սկսէ.
«Գնացէք, այլ ևս ձեզի գործ չկայ, կասէ։
Քսու Բաքօն զայս խօսքը որ լսեց, զգաց.
—Այս վարմունքի ներքև մի բան կայ, ասաց.
Երկու երիք անգամ հարցուց, փորձեց.
Ուղղակի միրի մօտ չտապեց, յայտնեց։
—Միրս, ասաց. դու այդ որչափ անհոգ ես,
Զին ու Մամ իրենց գլխուն ազատ կը թողուս։
—Այ Բաքօ, դու խարդախ ու քերեն.
Ինչ գիտես, անտարբեր, անհոգ եմ ես։
—Միրս, երբ կը նեղանաս, չունիմ ինչ ասելու,
Որոց արածները մի առ մի քեզ յայտնելու։
—Ատուած կը սիրես. այլ բան չեմ ասեր,
Ասա, ինչու կասես «դու ես անտարբեր»։
Դարձեալ եղելութիւնն է քո աղջկան,
Ականահատներ բերած՝ բացած է ական,
Մամ ու Զին իրար հետ կը տեսնուէն,
Գիշեր ու ցերեկ իրարու մօտ կը քնեն։
—Բաքօյի աւան, չհաւատամ քո խօսքին.
Կարելի է այդչափ բան գործեն միասին։
—Ձեռդ երկար է, հրամայէ, գնանք,
Մեր աչքով որոց արարքները տեսնանք։
Միր ու Բաքօն երկսով ելան եկան,
Զին անկողնի վերան նստած տեսան։
Թաթուն Զին երբ իւր հայրը տեսաւ,
Վեր թռաւ, ոտի վրայ կանգնեցաւ.

Նա չէր գիտէր Բաքօն քաւութիւն արած,
Գաղտնիքը լուր հօրն է յայտնարարած։
—Մխրս, ասաց Բաքօ, ձեռքդ երկարացուր,
Ձինի անկողինը մի կողմ բարձրացուր.
Պիտի տեսնես զարմանալի տեսարան,
Մամ ու Ձինի գործած գաղտնի դարան։
Ձինի գոյնը իսկոյն նեթ փոխուեցաւ,
Սրկիւղէն ու ամօթէն ուշագնաց եղաւ։
—Ձին, ասաց Մխր, այս ինչ տեսարան՝
Մեր պատիւ ու տուն արիր դու վերաձ։
Ձինէի սիրտ կը դողար, լեզուն բռնուած էր,
Խելաթափ եղած չէր գիտէր, ինչ էր կը խօսէր։
—Բաքօ, ասաց Մխր, ասա, որտ ինչ անեմ,
Դուստրս ինչ տեսակ տանջանքի մատնեմ։
—Աստուծոյ ու մօր պատուոյն ներէ Ձինէին,
Իսկ քաղքաթօտ ու խոչնդոտ բանտը ձգէ Մամէին։
Մխր չորս ծառայ կանչեց, իր մօտ բերեց,
—Մամէն բռնէք, տարէք, հրաման արձակեց,
Տարէք, ասաց, մութ խոր հորի մէջ ձգեցէք,

* *

Մամէն տարի և կէս այնտեղ կեցաւ,
Շատ չարչարանք քաշեց, չատ նեղացաւ։
Երեք տարի թաժտինի զօրքերը կռուեցան,
Փառաւոր յաղթութեամբ յետ դարձան, եկան։
—Կռուգան, աւետեցին, թաժտին, Ճագան, Աֆան,
Փառքով ու պատուով տեղս պիտի երևանդ։
Մխր երբ լսեց՝ չուարեցաւ, մնաց,
Բաքօյի Աւան բերել տուաւ, ասաց.
—Ա՛յ անիրաւ, դուք քոս Բաքօյի Աւան,
Ինչ պիտի պէտատեմ, տամ սրի բերան.
Այժմ ինչ պատասխանեմ թաժտինին,
Ի՞նչ կերպ յայտնեմ արարքը Մամէին։
—Մխրս, ներէ, ես չատ խեղճ մարդ եմ,
Ինչ դէմ երբէք յանցանք գործած չեմ։
—Բաքօ, պէտք է հնար ու ճար դտնես,
Որ անհաչիւ արած մեղքերդ քաւես։
Բաքօյի Աւան վազելով Ձինի մօտ գնաց,
Հևալով՝ ծիծաղելով քաղցր-քաղցր ասաց.
—Ելթուն Ձին, աւետիս ունեմ կարևոր,

Մամէին հետ պիտի պսակուիք այս օր։
Քեզ հրաման է, արձակէ ինչպէս կուզես,
Մի վայրկեան չուտ Մամէն զնդաձէն հանեա։
Ծուսահատ Զինէն երբ զայս լսեց,
Հառաչանք արձակեց ու արտասուեց.
Ասաց։—Աւերակ դառնայ հօրս տունը,
Որ Մամչն պիտի ազատուի կնոջ ձեռքովը.
Կորսուի հօրս այնչափ անուն ու շան.
Որ նա լսեց Բաքօ կոչուած քսու չան։
Զինէն սճապարեց, ոտկի կանգնեց,
Քառասուն աղախիններըը հետը բերեց,
Իր խմբով գնաց դէպի զնդանի գլուխ,
Երգեց տխուր արտասուեց սրտաբուղխ.
—Մամէս, եկած եմ քեզ պիտի Թողեմ,
Ձո դառն տանջանքներէդ կազատեմ։
Ասաց.—Ա՛խ սիրելիդ իմ Խաթուն Զին,
Ինչու՞ չարաչար կը տանջես իմ հոգին.
Դու եկած չես թշուառիս ազատելու,
Այլ դառն չարչարանքով զիս սպանելու։
Միս և ոսկորներս են քայքայուած,
Միջոց չունեմ չարժելու ինչպէս մեռած,
Խնդրեմ, մի քիչ անուշ-անուշ երգես,
Մեռած ոսկերքս, հոգիս կենդանացնես,
Տրըմփող հոգիս ոսկորներէս ազատես։
Դու, Զինէս, եկած չես զիս ազատելու,
Այլ խոր չարչարանքով զիս սպաննելու։
Քառասուն աղախինները չուան ձգեցին,
Մամէն քաշեցին, դուրս զնդանէն հանեցին։
Նա աչք դարձուց, Զինէն տեսաւ, հառաչից
Քթէն կաթիլ մի արիւն վայր կաթեց,
Արեան հետ հոգին բերնէն դուրս թռաւ,
Սիրուն տեսքով գետնի վրայ տարածուեցաւ։
Զինէն երբ տեսաւ Մամէն մեռած,
Կսկիծց ու լացաւ սարսափով պատած.
Ձեռ ձգեց, ծամերն արմատէն փետեց,
Հառաչելով նորա վերան մեղմ երգեց.
—Ես կը կանչեմ այն Աստուածը,
Արեգիի ուխտավայրի մեծ սուրբը,
Մամէն մեռաւ առաւօտեան ժամուն,
Ես չը հասնեմ երեկոյեան պահուն։

Ատուծոյ Բէյարի սուրբին կը կանչեմ,
Որ ես ևս Մամէի հետ դերեզման մտնեմ։
Կայլակնաձև քրտինքն է դոհար,
Մամէս մեռաւ անմեղ ու արդար.
Մեռաւ նա կէսաւուր պահուն,
Ես չը հասնեմ երևկոյեան ժամուն։
Մէը տեսաւ զօրքերը վերադարձան,
Ղարաթաժտին, եղբայրներն ևս եկան.
Մէը Թաժտինի երկիւղէն սարսափած,
Ալանի Բաքօյին երկու խօսք ասաց.
—Տունդ աւերի, չուն Բաքօ, փախնենք,
Կանանոցը մտնենք, մեր գլուխ պահենք.
Երկաթեայ դռները կապանքներով փակենք,
Դոցենք, չուտ արա, մեր վերայ ամրացնենք։

***

Ղարաթաժտին լսեց ինչ էր պատահած,
Ննկներուն հարուածեց, մեծ ցաւով ասաց.
—Մէրն ու Բաքօն ուր պիտի փախնին,
Մկան ծակը մտնեն, չպիտի ազատին։
Մէրն ու Բաքօն Բերդ ապաւինեցան,
Կանացի զգեստով պատսպարուեցան։
Երեք եղբայրներ բերդը չրջապատեցին,
Ցարձակում դործեցին, պարիսպը քանդեցին։
Մէը ներքնաբերդն էր մտած, ամրացած՝
Երկաթեայ դռներն էր փակած, կղպած։
Տեսաւ վտանգը հետզհետէ կը մօտենար,
Իրեն ու գերդաստանին մահ կսպառնար։
Աղաչեց պատուաւոր ժողովականներէն,
Որ Ղարա Թաժտինէն ներում խնդրեն։
Որչափ դատաւոր, դեմպետ կար, դիմաւորեցին,
Թաժտինի առաջ եկան, ներում խնդրեցին։
Թաժտին ներեց եկող պատգամաւորներուն,
Երկրի մէջ գտնուող մեծամեծներուն.
Ասաց.—Ձեր խնդիրքը ընդունուած է, գնացէք,
Մամէիս ու Զինէիս եռանէն մարդ ճամբեցէք,
Ուսերու վերայ բարձէք, գերեզմանի գլուխ բերէք.
Երկուսի գերեզմանը մի տեղ փորեցէք,
Երկու սիրահարներու կռնակը իրար դարձուցէք,
Դրախտի հարսն ու փեսան հողով ծածկեցէք։

***

Ութ օր անցաւ, Թաժտին ասաց.
—Դնանք, տեսնենք, ինչ ևն եղած.
Կռնակնին թէ երեսներն են իրար տուած,
Դրկախառնած են թէ իրար թողած։
Բաքօն լսեց, դիչերով վեր կացաւ,
Ուղղակի գնաց, դերեզմանը բացաւ,
Տեսաւ երկու սիրելիները մուշ-մուշ,
Կարծես քնած են անուշ-անուշ։
Տեսաւ երես առ երես են դարձուցած,
Կայլակնաձև քրտինքի մէջ են ընկղմած,
Ուրախ-ուրախ Բաքօն հասաւ Թաժտինի,
Ասաց.—Թաժտին, իմ աւետիս քեզի,
Մամ ու Զին ողջ, առողջ իրար են դարձած,
Ոլոռ-ոլոռ քրտանց մէջ են ընկղմած։
Աւաւօտ վաղ քնէ զարթեցան, ելան
Ձանապարհ ընկան, գնացին դերեզման.
Բաքօն ևս իրենց հետ վերուցին, բերին.
Դերեզմանը բացին, նորա ասացին.
—Ա՛յ անիրաւ, Բաքօյի Ավան,
Դու վատաբարոյ սուտասան,
Ո՞ւր են Մամէն ու Զինէն,
Չէ, կատէիր թէ ողջ ևն։
Բաքօն դէպի դերեզմանը կեռաւ որ չոչափէը,
Թաժտին թրի երախակալը բռնած կը պահէր.
Թուրը յանկարծ մերկացուց, ուժով չարժեց,
Բաքօյի վզին մի սաստիկ հարուած տուեց։
Իսկոյն գլուխն այս, մարմինն այն կողմ ընկաւ
Հառաչեց, թպրտաց, չանսատակ եղաւ։
Թաժտինի թուրը զայն քսաներեակ պրծուց,
Բաքօյի սուանի հոգին դժոխքը ուրախացուց։
Բաքօյի վզէն մի կաթիլ արիւն ցատկեց,
Երկու սերեվինները մէջտեղ կաթեց,
Այդ արիւնը չինչան փուշ դարձաւ,
Երկու ողորմածներու մէջ բուսաւ.
Ողորմած հոգիները երկու վարդ դարձան,
Երկու կողմէն բուսան, վեր բարձրացան։
Կանաչեցան, բոյլք ու բողբոջ արձակեցին,
Ճիւղեր տարածեցին, արին որ իրար փաթաթուին.
Իսկ չինչանը—այն անպիտան փուշ,
Չթողեց զիրար փարին, գրկեն անուշ։

Բարձրացաւ երկուսի մէջ, բաժանեց.
Երկու սիրականները իրար կարօտ թողեց։
Այն չիչխաններըը թոյլ չեն տար իրար հանգին,
Յաւիտեան հեռաբկուած են այդ վիճակին։
Ամեն տարի կահին, կը զօրանան,
Չիչխան փուչն արգելք կը դառնայ։
Հարան ու փեսան դրախտ գնացին։
Քու Բաքօն դժոխքի կրակի մէջ վառի,
Նորա մարմինը գերեզմանի մէջ չդադարի։

22

ԵԶՏԻ ԴԵՐՎԻՇԻ ԱՎԴԻ*

Ավտի աղի աղէն կըսի Դերվիշ. Շատըրևանցի աղգից կըլի։ Դերվիշի աչքը կընկնի Զօր Թեմիր փայլի աղջկան, աղջիկն էլ ընդրա կը սիրէ։

Զօր Թեմիր փայլի տան մէ դօսախմ կըսի, կասայ.—Էդի մէ Եզտի ըսի, դու մէ միւսլիւմաճ ըսիս. էն էլ Զօր Թեմիր փայլէն. քու ղըյրէթ ինչպէս կը տանէ որ Եզտու լամկու աչք ընկնի քու աղջկայ վրէն։

—Ըպա ինչի անեմ, ըսդըրա գլօխ ինչ օյին խանեմ. ասաց փայլէն։

—Ըսդըրա սըպանել տուր, դու փաշայ իս, էնի եզտի ա։

—Ըսդըրա չատ ղոչաղութին կասեն. ինչի անենք։

—Ղանչայ, խարցըրայ, քանի մարդի պարա ղոչաղութին ունի.

Զօր Թեմիր փայլէն կը ղանչայ, բերայ ուր դիւան. պատիւ կանէ. կը խարցնէ.—Դինաս, ընչի եմ կանչէր։—Փայլէն սաղ ըսի, ես քու ղուլլուխին եկեր էմ։—Օղորթն ասա. դու քանի մարդի խետ կանաս կռիւ անիս։—Է՛, ինչ հղաբտութին անեմ. ես էլ մէ մարդ էմ։

—Չէ, դու ըսիս, իմ խաց, օղորթն ասա։

—Դոն չիւնի խաց ասիր, Աստուծոյ իզնով երկու խարիր ձիաւոր ըսնի, իմ առջև մէ ճանճի նման ա, ըսկի չի գինամ ինչ ա։

Փայլէն ըսդըրա պատիւ էրաց. խարցրից.—Դերվիշի Ավտի,

* Պատմած է Մամազին պատմող Օնբաշի Եզտի Մհօն։

եվ պտի էթաս տուն։—Աստուած որ յաջողայ, փաչէն իմ ըռուխսաք տայ. լուսուն կերթամ։—Գեզի իզիճ ա, գնա։

Ջօր Թեմիր փաչէն բաsարիճ կանէ. խինդ խարիր ձիաւոր խըլուսուն կողոքվէչ, կասայ.—Գացէք, Դերվիշի Ավտուն սպանէք։

Դերվիշի Ավտուն էրկու ձիաւոր կըլլէ, ինքն էլ բանից խապար չունի. կը խնծնի, կիրթայ, խինդ խարիր ձիաւորի ըռասս կգայ, որ Ղարադաղայ սար պահուած էն։ Դերվիշի Ավտին խասաւ Կրէ կաւկաւէն. ձիաւորտանք էլան առջևը, կռիւ արին։ էրկու բարաճէն իրար վրայ կրակ թափին։ Դերվիշի Ավտու ճօճարները փախան. էդի դանչեց ընդոնց.—«Մրրըն ճայեա, ըռա գօ ուաճ ճեա»։ (մեռնիլ կալ, փախնիլ չկայ)։ Դերվիշի Ավտին Աստուած դանչեց, ընկաւ մէջնէրը. էս տեղէն ջարդեց, էն տեղէն էլաւ դուս. էն տեղից ջարդեց, էս տեղ էլաւ դուս. էն տեղից ջարդեց. էն մէկէլ տեղից էլաւ դուս. բամամ երեք խարիր խոզի ջարդեց չուր իրիկուան գախին։ էրկու խարիր խոզին փախան, կայնան, ջուղաբ տուեցին.—Մենք Թեմիր փաչի մարդիկն էնք. ախր մեզի ջարդեցիր. էս նամուս քեզի բօլ ա, մնացողն բաօխայ։

—Բախշեցի Աստըծուն, դը, գնացէք, ձեր փաչին խապար տարէք, իմացէք որ աշխարք էդպէսդ մարդ էլ կայ։

Ընդոնք յօրդուամ արեցին որ էլ կռիւ չանէն, ինքն էլ յօրդուամ արաց։ Ըսդըրան արխայիճ էցգեցին, էտևից զարկեցին, սըպանեցին։

Ջաւաբ տարան, գլուխ լէ առան, տարան Ջօր Թեմիր փաչին. էլած ջարդը ասացին։ Թեմիր փաչի աղջիկն Մէյրան, լսեց Դերվիշի Ավտու սըպանուիլը. ինչ դար զուսկ, ոսկի, արծաթ կայ, կը կըռայ, կը թափայ, սև չոր կը խաղնի. կուլայ ու խաղ կասայ։ Աղջկայ խէբ մարդ կորողկի մօտ, կասայ.—Դու ինչու էդենց կանես, էդի մէ Եզտի լամուկ էր. մեր ճամուս ափսոս էր։ մեզի էսքան մարդ սըպանեց, ափսոս չես գալըմ. ընդոր էս ափսոս գալըմ։ Մէյրան չուր էն վախտ չէր դիտում սըպանուած ա, որ հասատատուաւ, խելքը թռցրեց։

Փաչի ճկեաբն էր, էսի որ տեսաւ, չոքերուն զարկեց.—Վայ վաւելէր, ես չգինէնք, ասաց. որ իմ աղջիկ էդքան սիրով էր. էդպէսդ կտրիճ սըպանել արժան չէր, էդոր ոօչաղութեն մէ երկրի բարա էր։

Մարդ օրողկեց աղջկայ կուշտ, ասաց.—Արի, ծուռ-ծուռ մեղնի, մարդ ա, սըպանուէր գացեր ա։

—Խինդ խազար մարդ էղնի, ընձի պէտք չէ, այքիս չերևար, ասաց Մէյրան։

Ծո՛ւռ, գլուխը խելք չի մնաց, խօր խետ առաջ չէր խօսար.

մկայ կը խօսայ, չատ գախ մուննջ-անխօս կենայ. էս գախուն կընկնի խաղ ասել.

—Ջուլանիկ, խօշ Ջուլանիկ.
Ասոսկ խրաթ բլկա գրկ Գեաւ-գաւանիկ
Սալ հայկա դունզկեհ մահ ա.
Ըժ չարդեան չուրհան խալի ան բկա.

Բրյա սունդկ մհրկա բկար բրբկա.

Բրյա ֆես սկար մհամբրկ մրն շահ-ևարկա.
Գհօշդկա պազհևնհեր յր մրն հհարամ բկա.
Կհազկի խո ևկ ըռաշ, հակը սը-պի վակըրմ, դիզ բր սաֆիևրմ.
Զօր մհա դիւան կ, դիւանիկ բրժի,
Ասոսկ խրաթ կրա դիւանիկ բաւկ մրն

Մրսհնհա դահվհա սկար ակրհա դարաւ.
Թրլի, բհնիկ հա Մհյրհամի դրֆհա-լրժի մարմուն աղի.
Ղահվհա րհժրյա սկար արայհա Բասրայհա.
Էազր հառրմ, ֆրհդակի ֆրհբրմ.
Սհաս ու սի զհոր յժ սկարի խո ժրկրմ
Հհաշ դհի կհարի սարուն կ արախգի

Ժր վոյարն Հհամմայի, Հհազգայի ժր բազարհ
Արա հրյհևրմ սկար Ժրարե բհրայհ

Ֆրարյրևրն մր սհիզ կհա, սարուն ժր մրն խյաս բու
Ջաւհ մրն մհահուզ բու, արա բր ֆհյՃա դյհ մրն նա բու.
Բրուակ մհայհ մհա շհխաւ ու փհ-րան.

Ջուլանէն հիանալի վայր է,
Աստուած աւեր դարձնէ մեծ բլուրը.
Տալի որ կայ, տասներկու ամիս է.
Գողէն ու աւազակէն երբէք պա-կաս չէ.
Թող առաջի մարդոց երդում լինի.
Թող մէկը իմ տներնքներու վրայ չուրախանայ,
Արտ ոչխարի միսը իմ համար արգելուած լինի.
Իմ ծամերու մէկ սպիտակ, մէկ սև հիւսեմ, աղջիկ մնամ.
Գնացի առեանը, առեանը լիք.
Ասոսւած քանդէ իմ հօր ա-տեանը

Սուրճի ամանը կրակի վրայէն վերցուց,
Մէյրամի ձեռք ու եղունգ կը նմանի ինչպէս մերդէ մամ
Սուրճը թափեցաւ Բասրայի ա-բալի վրայ.
Ես էրթամ, մի վարձկան վարձեմ
Հարիւր եռեսուն ոսկի էլ իմ գլխէն կտրեմ.
Տասնը ութը կտոր ըռաղի օճառ. (գնեմ.)

Համայի, Հադայի երկրի չու-կանեցիէն
